

ՀՐԱԶԵՔՈՉԱՐ

ՎՐԵՄՉԱՆ  
ՌԻՒՏ



ՀԱՅՊԵՑԴՐԱՏ



891.99

D-82

# Հրաշնիուս

ԱՄՓՈԽՎԱՆ Է 1881 թ.

## Արքազնի ՈՒԽԱ

8846  
A 30255

ՊԱՏՄԱԾՐԵՐ  
ԱԿՆԱՐԿՆԵՐ



ՀԱՅՈՒՏԵՐԱՏ  
ԵՐԵՎԱՆ  
1946

Р. КОЧАР  
**СВЯЩЕННЫЙ ОБЕТ**  
(На армянском языке)  
Армгиз, Ереван, 1946



## ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՎԱԾՔ

Զինվորական թղթակից Խվան Դավիդովի հետ միասին վերադառնում էինք կրակի առաջավոր գծից: Իրիկնադեմ էր: Արել պազ հայացքով մեզ էր նայում հորիզոնի ծայրից և շտապում հանգչել ձյունադաշտերի վրա:

— Արագացնենք մեր քայլերը, որ գիշերը վրա շնասնի, — փութացնում էր իմ ուղեկիցը, — թե որ մոլորվեցինք, դժվար կլինի այնուհետև մինչև լուսաբաց գտնել ճանապարհը:

Հասանք ծանոթ անտառին, երբ արևն արդեն տափաստանին էր բալում: Քիչ հետո հորիզոնի մյուս ծայրից, տատղերն արդեն մեր աշբերի մեջ էին գցում իրենց փայլվլանքը:

Սկսվում էր երեկոյան պարզկան: Գնում էինք, գնում անտառի նզրով և նա չեր վերջանում: Անտառն ուրեմն մեր ծանոթը չէր: Նմանությունը խաբեց: Փոված էր դեպի արևմուտք անծայր տափաստանը: Ճնշող լոռիթյուն էր տիրում, թվում էր թե ամեն կյանք մեռել է սառնամանիքից, միայն ձյան խշխշոցն էինք լսում սեփական քայլերից:

Ո՞վ է տեսել ձեզնից սուսական ձմեռը:

Տաք շորերի վրա նաև կաշվե բրդուտ մուշտակ ես հագնում, ձեռքերիդ՝ այծի մորթուց ձեռնոցներ, գլխիդ՝ ականջավոր տաք գլխարկ, բաց են միայն այտերդ ու աշբերդ, բայց էլի շոմշտ սառցակալում է սունդերիդ մեջ, ծանրացնում սրտիդ զարկերը, աշբերիցդ սառը քամին դլորում է արտասուբներ, որ սպիտակ հուլոնքաշարի նման մնում են այտերիդ վրաւ:

Անտառն արդեն խորթանում էր, ինչպես այն գեղեցկուհին, որ հեռվից ծանոթ է երկում քեզ, ժպտում ես, պատրաստվում եռ բարեկու, բայց երբ մոտենում ես, ցուց է տալիս անծանոթի իր մութ հայացքը:

— Պարզ է, որ մոլորդիկ ենք,—անհանգստանում է ընկերու,—ոչ մի ծանոթ կետ չի երկում:

— Այս՝ սխալ ենք եկել,—համաձայնում եմ ես:

Դուքս գալով անտառից, մի պահ լուռ կանգնում ենք երկուս էլ, զնուում տափաստանը:

Առաջին անգամը չէ գա: Մենք վազուց վարժվել ենք այդպիսի անակնակաների: Դա մեր առօրյան է: Զինվորական թղթակիցը պիտի փնտի հայրենական պատերազմի հերոսներին, տեսնի նրանց, լսի նրանց պատմությունները: Իսկ հերոսը լինում է մարտի մեջ, կրակի գծում: Նրան գտնելու համար պետք է լինում հաճախ փորձությունների միջով անցնել, սովալ թշնամու կրակի տակով մինչև դիրքերը, իսկ այնտեղ նրա հետ պաշտպանվել թշնամու հարձակումից, զնալ գրոհի հերսոնի հետ միասին, բաժանել հաղթանակի խնդությունն ու ձախորդության դառն զգացմունքը: Քիչ չի պատահում, որ արագ փոխվում է զրությունը և նա չկարողանալով գտնել իր փնտրածը՝ մոլորդում է անծանոթ տարածությունների մեջ: Այդ դեպքում պիտի հույսը զնի իր հետախուզական ընդունակությունների վրա, որ ձեռք է բերել կորիներում և ձգտի նմանվել այն մարդկանց, որոնց գործերն է փառաշանուում...

Բայց սա չէր իմ ասելիքը: Շեղեցի պատմությունիցս: Ես պիտի պատմեի, թե ինչպես այդ օրը սկիզբ առավ մի գեղեցիկ բարեկամություն: Առհասարակ այն զգացմունքը, որ ծնվում է փորձությունների մեջ, մեծ գործերի օրերին, երբեք չի մեռնում:

Գիշերը կես էր եկել արգեն: Եվ ոչ մի ծանոթ նշան չէր բռնուում մեր հայացքի առաջ: Միայն գիտեինք, որ ճիշտ է մեր բըռնած ուղղությունը: Դա ասում էր մեղ աստղագարդ երկինքը, Հարդագովի ճամբան՝ Ծիր Կաթինը: Հաստատ գիտեինք մի բան, որ պիտի գտնենք «մեր» փոքրիկ խուսորը, և այնտեղ բարի պառավ Յուլիանե Իվանովնայի տնակը: Նա սպասում է մեղ գիշերվա այս ուշ ժամին և անհանգստանում է մեղ համար, անհանգստանում է հարազատ մոր, սիրող դայակի պես: Ես ինքնաբերաբառ արտասանում եմ:

Подруга дней моих суровых,  
Голубка, дряхлая моя...

Դավիդովը կանգ է առնում, դարձյալ ականջ դնում: Շուրջը  
լուսված է տիրում: Նա հարցնում է.

— Ո՞ւմ կարող ենք հանդիպել այս գիշեր, բարեկամի՞՝, թէ՞  
թշնամու:

— Բարեկամի՞՝, — ասում եմ ևս, — եթե ընկել ենք թշնամու  
գրաված գոտին, ապա գիշերվա այս ժամին անտառի տերը ու  
թե նրանք կլինեն, այլ պարտիզան Շշ-ն, իսկ նրան հանդիպելն  
այսօրվա մեր արկածների ամենագեղեցիկ վերջարանը կլինի...  
գուցե հենց նրան հանդիպենք...

— Տեսնում եմ, բարեկա՞մ, որ ուզում ես նրա խմբի կոմի-  
սարը դառնալ, — երգիծում է Դավիդովը:

— Ա շո-ջ! վատ չէր լինի...

Ու սկսում ենք խոսել պարտիզան Շշ-ի մասին: Նա անանուն  
շրջանի պարտիական կոմիտեի քարտուղարն է և քաջ պարտիզա-  
նի անուն է Հաննել: Նրա խումբն սպառնալիք է դարձել հափշտա-  
կիշների. Համար: Շշ-ն գարնան ամպի պես դուռամ է թշնամու  
վրա ձմռան այս օրերին և ահ ու սարսափ տարածում, հայտնը-  
վում է այնանդ, ուր երբեք թշնամին նրան չէր սպասում, մաս է  
տանում նրանց անակնկալ, ինչպես եթե պարզ երկնքից կայծա-  
կը հանկարծ խփի ու անհետանա տափաստանի մեց:

Մենք խոսում ենք Շշ-ի մասին ու լույլով երազում: Տեսնում  
ենք նրան մեր աշքերի առաջ, մտնում նրա խումբը, հարձակ-  
վում թշնամու վրա, ջարդում արյունաբերուների ցեղի մարդկանց,  
շրջապատում շտաբներ, գերի վերցնում գեներալների: Ի՞նչ ձամ-  
րաներով ասես չի անցնում մարդու երևակայությունը:

Բայց ո՞ւր ենք գնում: Ահա շան հաջոց է լսվում: Ուրեմն մո-  
տերքում գյուղ կա: Գնում ենք հաջոցի ուղղությամբ, թվում է թե  
մոտ է, բայց ինչքան գնում ենք, հաջոցն այնքան թուլանում է ու  
հեռանում: Դուրս է եկել լուսնյակը, լուսավորել է դաշտը: Հան-  
կարծ մեր աշքերի առաջ երկում են տնակների կոնտուրներ: Ու-  
րախանում ենք: Դա մեր խուտորն է: Ահա և մեր բարի Յովիանե  
իվանովնայի տունը: Մեծում ենք: Լուսված է տիրում: Զէ՞ որ նա  
անմիջապես բացում էր ուրիշ անգամ: Մեծում ենք կրկին:

— Ո՞վ է, — հարցնում է ներսից ծանոթ, սիրելի ձայնը:

— Մենք ենք, մայրիկ, բաց արեք դուռը:

— Ա՛, զո՞ւք եք...

Բացում է, ներս ենք մտնում:

— Այսօր ուրիշ հյուր էլ ունեմ,—ասում է նա մեղ միջանցքում:

Ներսում, ուստական վառարանի վրա նստած, երկար միրուքավոր մի մարդ ճամբորդական պարկ է կարում: Նա պատասխանում է մեր բարեկին և շարունակում իր գործը:

Եկվում են «մեր գայակի» գուրգուրանքներն ու փայփայանքը: Մոռանում ես այդպիսի ժամանակ ամեն ձախորդություն, քեզ զգում ես տանը, հարազատ մորդ մոտ:

Խոսում, ծիծաղում ենք:

— Հեռվի՞ց եք գալիս,—հարցնում է միրուքավորը մի պահընդհատելով աշխատանքը և մանրիկ աշքերը հառելով մեղ վրա:

— Այստեղից, ուր որ զնացել էինք,—պատասխանում է Դավիթովը:

— Իսկ չի՞ կարելի իմանալ, ուր էիք զնացել.—կրկին հարցնում է նա:

— Մեր սիրուհիների մոտ,—պատասխանում եմ այս անգամ ես:

Միրուքավորը ժպտում է մի ժպտով, որ զժվար է ասել, ինչ ուներ իր մեջ, լուսմ և զլուխը կախելով՝ շարունակում է իր աշխատանքը:

Դավիդովը թղթի կտորի վրա գրում է ինձ. «Ի՞նչ մարդ է սա, չե՞ս կասկածում որևէ բան»:—Ես պատասխանում եմ. «Քո այդպիսի հարցից հետո ակամա կասկածել եմ սկսում»...

Իվանովինան գնում է մյուս սենյակը: Նրա ետևից գնում եմ ես էլ, հարցնում թե՝ ինչ մարդ է նրա հյուրը: Նա խորամանկ ժըպտում է.

— Լավ մարդ է, վատ մարդ չի, հարեան գյուղացի է, գործով եկել էր, ուշ էր, շվերադարձավ...

Ու ավելացնում է.

— Ես վատ մարդկանց հյուր չեմ ընդունում...

Ուրիշ ոշինչ...

Ոշինչ շաստատող այդ հանձնարարականները Դավիդովին քնավ չեն բավարարում և նա համառում է, թղթի կտորների վրա

դրելով, թե գերմանացիներն այդպես ցոլակն են լինում, այդպիսի ծնոտ ունեն, այդպիսի ճակատ. «Ապա ուշադիր նայիր դեմքին. մի՞թե կասկածելի չի դրա մոռթը, դրա տերտերական միբուքը: Թե որ ազնիվ մարդ է, ինչու չի գտնվում բանակում, երկար միբուքով թաքցնում է իր հասակը, ևս այլս չեմ կասկածում, որ այդ ծպտյալն «արիացի» է, հակառակը պնդելու հիմք չունիմ»:

Դավիդովի պատճառաբանություններից ոչ մեկն էլ՝ ինձ հիմնավոր շեր թվում, բայց նա այնքան հաստատուն կերպով էր կասկած հայտնում, որ ինձ էլ ներշնչեց: Իվանովնան իհարկե ազնիվ սիրտ ունի, բայց նա կարող է խարվել, միամտորեն կարող է սխալվելով, օձ սնուցել իր տաք ծոցում:

Ու ես սկսում եմ հարց ու փորձ, առանց տոնի մասին մտածելու:

— Ի՞նչ եք անում դուք կես-գիշերով այստեղ:

Նա հանդիսա պատասխանում է.

— Ճամբորդական տոպրակ եմ կարում:

— Իսկ ի՞նչ մարդ եք, ի՞նչ ճամբորդության եք պատրաստվում:

— Գնալու եմ այնտեղ, ուր պիտի գնամ...

«Իրոնիայից զուրկ չէ», — մտածում եմ ես և որոշում ինքս էլ այդ ձևով խոսել.

— Ինչո՞ւ համար է ձեր այդ միբուքը. նա օգնո՞ւմ է ձեզ որևէ բանում...

— Բայց ձեզ էլ չի խանգարում կարծեմ:

— Եր գեղեցկությամբ ուշադրություն է գրավում:

Նա կշտամբանքով գլուխը թափահարում է:

— Ե՛, կովկասցի՛, կովկասցի՛, չե՞ս կարող հարդանքով խոսել օտարական մարդու հետ, ինչո՞վ է նա արժանի քո ծաղրանքին:

— Ո՞վ ասաց թե ես կովկասցի եմ:

— Մի՞թե ես չեմ ճանաշում մարդկանց. ճանաշում եմ ես և չեմ ծաղրում...

— Ես էլ չեմ ծաղրում, հետաքրքրվում եմ, թե ինչո՞ւ երիտասարդ մի տղամարդ ցանկացել է իր ջահելությունը ծածկել քոյարական այդ փառահեղ միբուքով...

— Բոյարակա՞ն... շինի՞ մկրատ եք ինտոռում միրուքս կարե-  
լու, ինչպես Պետրոս առաջինն էր կտրում բոյարների միրուք-  
ները...

Ու ծիծաղեց լիաթոք, առողջ ծիծաղով, որը, շգփտեմ ինչու,  
դուք եկավ ինձ, բայց ընկերոջս հավանորեն գրգռեց, որովհետե-  
նա դիմեց ավելի սուր լեզվի.

— Դա նպատակահարմար կլիներ, —ասաց, —այն ժամանակ  
կերևայիք դուք ձեր իսկական դեմքով...

Օտարականը առանց նրան նայելու՝ շարունակեց խոսակ-  
ցութունն ինձ հետ:

— Ճա! Տեսնում եմ, որ իմ դեմքը դուք է եկել ձեզ, իսկ իմ  
ուշադրությունն էլ, ճիշտն ասած, ձեր ոտքերը գրավեցին. Հետ-  
մրսում սապոգներով՝ առանց վալենկաների, այսօր 35 աստիճան  
ցուրտ էր դրսում...

«Խորամանկն է, չի բռնվում», —մտածում եմ ես: Երեսում է,  
որ ավելի ամրացել են Դավիդովի կասկածները: Նա ներվալին-  
շարժումներ է անում՝ տեսնելով, որ ես սկսեցի կատակով և այդ-  
պես էլ շարունակում եմ:

Միրուքավորն ասում է.

— Եթե ընդունեք իմ օգնությունը՝ ես կարող եմ առաջարկել  
այն ձեզ...

Որոշում եմ թույլ տալ, որ նա ինքը խոսակցությունը վարի,  
տեսնենք ի՞նչ է դուրս գալիս:

— Իսկ ինչո՞վ եք ուզում օգնել, —հարցնում եմ ես...

— Ինչով որ կարող եմ, դուք կովկասցի եք, ինչպես տես-  
նում եմ, դեռ մեր ցրտից ձեր աշքը վախեցած չէ, բայց ձմեռն-  
այստեղ կատակ չի անում, կարող եք ցրտահարվել, այն ժամա-  
նակ ոչ մի օգուտ չեք բերի ոչ որի...

— Զեմ բացառում այդպիսի հնարավորություն:

— Ի՞լ! տեսնում եք... եթե թույլ եք տալիս, ես վաղ առա-  
վոտյան կփնտեմ, ձեզ համար թաղիքի կտոր կճարեմ, ամուր-  
բրեզենտ և իվանովնայի հետ միասին ձեր սապոգների համար  
տաք շեխոլներ կկարենք... եղա՞վ... այլ դա դործ կլինի, ձեզ  
ոտքերն այլևս չեն մրսի, թե չէ, որ դուք իմ միրուքը ծաղրեք, ես  
էլ ձեր սապոգները (որոնցով կարող եք լավ լեզվինկա պարել,  
բայց սառնամանիքին դիմանալ, երբեք շեք կարող), բանի նման:

շի լինի... Հետո դուք էլ, ևս էլ կզաքանք, որ այդպիսի լեզվով ենք խոսել իրար հետ...

Ինչ մեղքս թաքցնեմ, նրա խոսքերը հնչում էին այնքան անմիջական, այնքան անբռնազբոսիկ, որ այդ մարդը սիրելի էր դառնում նույնիսկ: Համենայն դեպս պարզ էր, որ նա հետաքրքրական անձնավորություն է՝ օժտված խելքով ու խոսկու շնորհաքով: Նայում եմ նրա գեմքին: Բարի, քրիստոսանման է, խաղաղ, ինչպես սրբապատկեր: Միրուքը լավ զարդ է տղամարդու համար, սիրուն է, երբ մազոտ դեմքի վրա փայլում են գեղեցիկ աշքեր՝ լի կյանքով ու աշխուժով:

Բայց գե՛, այդ բոլորը միայն տպավորություններ են: Դավիդովն արդեն ակնհայտ դժգոհություններ է ցուց տալիս, որ նա դադարեցի կասկածել, որ չեմ ստուգում այդ մարդու ինքնությունը:

— Քնեցեր, ընկերնե՛ր, լուսաբացը մոտ է, — ասում է անձանոթը, — տեսնում եմ, որ շատ եք հոգնած...

— Ծնորհակալություն ձեր հոգատարության համար, — ասում է Դավիդովը:

Ես պառկում եմ քնելու: Անծանոթը մյուս սենյակն է անցնում, պառավ իվանովնայի ննջարանը: Նա այնտեղ պիտի քնի: Նա մեզ բարի գիշեր է մաղթում, ապա դուռը ծածկում իր վրա:

Դավիդովը բոթում է կողքս, փափում, «Հիմնավորում» Ապա կատակում է.

— Ահա արկածների հաջող վերջաբանը, ուզում էիր պարտիզան Շշ-ին հանդիպել ճանապարհին, բայց այս աղվեսին հանդիպեցիր...

Ու էլի լուրջ տոն ընդունելով՝ հարցնում է.

— Բայց մի՞թե դժվար էր փաստաթուղթ հարցնել:

Իրավացի է նա: Եվ գնում, ինքը ծեծում է դուռը:

— Քաղաքացի՝, ցուց տվեք ձեր փաստաթղթերը:

— Ահա թե ինչ, բայց ինչո՞ւ այդքան ուշ եք հարցնում:

— Դա մեր գործն է, — ասում է Դավիդովը:

Անծանոթը գալիս է մեր սենյակը, քանդում ծոցը և ոչ թե Դավիդովին, այլ ինձ է պարզում մի քառածալ թուղթ: Բացում եմ: Զինվորական բժշկական հանձնաժողովի վկայականն է, ո՞ւ հաստատում է, թե՝ նիկոլայ Վասիլեևը Բաբենկոն (այսինչ շրջա-

նի, այսինչ գյուղացի), ազատված է զինվորական ծառայությունից ծանր ոսկրախտի, թոքախտի և կարճատեսության պատճառով, իմանում ենք նաև, որ նա 1900 թվի ծնված է, ազգությամբ ուկրաինացի: Վկացականի վրա նրա լուսանկարն է, նույն կերպարանքով, ինչպես հիմա կանգնած է մեր աշքերի առաջ: Վերադարձնում եմ իրեն:

— Բավարարվա՞ծ էք, — հարցնում է նա:

— Պետք էր նայել, — ասում եմ ես:

— Ճի՞շտ է:

Միջամտում է Յովիանե Իվանովնան:

— Լա՛վ մարդ է Նիկոլայ Վասիլիկչը, լա՛վ, մի՛ կասկածեք, գուր ուրեմն շհավատացի՞ք պառավիս. կարծում եք թե կարող եմ դավանա՞ն էլ դառնալ...

Նորից պառկում ենք: Դավիդովն այլևս ոչինչ չի ասում:

Կարծես նոր էք, որ աշքերս փակել էի, երբ զգացի, որ մեկն ինձ շարժել սկսեց:

— Վե՛ր կացեք, բարեկա՛մ, վե՛ր կացեք...

Աշքերս բացեցի: Նորածանովն էք:

— Վե՛ր կացեք, սկսվել է մարտը...

Ծտապ հագնվեցինք, գուրս եկանք բակը: Լուսանում էք: Խսկում էք հեռվից հետանու որոտը, հորիզոնի վրա սալիտակ փայլով պայթում էին Հրթիռներն ու հանգչում:

— Այդ մերոնք գրո՞ի գնացին, — ասում եմ ես, — գնա՞նք, Դավիդով...

— Ծտապո՞ւմ եք, — հարցնում է Նիկոլայ Վասիլիկչը, — եթե մի ժամ սպասեք, ձեր սապոգների տաք շեխողներն արդեն պատրաստ կլինեն, կարում եմ, համարյա վերջացնելու վրա եմ:

— Երեք ժամ հետո պիտի շարժվենք, — դիմելով ինձ՝ ասում է Դավիդովը, — դեռ հոդվածներ պիտի մշակենք, թողնենք խմբագրությանը...

Ներս ենք գնում: Նիկոլայ Վասիլիկչն արդեն ավարտել է: Չափում է ոտքերիս վրա: Գրկում է կոշիկս, դնում կրծքին, նշանակում ավելն ու պակասը. մեկը մի քիչ նեղ է, մյուսն՝ ընդհակակը: Քանդում է կարածը, կտրատում մկրատով: Կրկին սկսում է կարել:

— Ուզում եմ և՛ հարմար լինի քայլելու համար, և՛ տար, մի քիչ էլ, թեկուզ՝ գեղեցիկ, թղթակիցներ եք, ամոթ է...

Նրան օգնում էր իվանովսան:

Մինչ մենք կավարտեինք հոդվածները, արգեն վալենկաները պատրաստ էին: Հագա, փորձեցի քայլել, լավ էր: Ուրախացա: Զերմ խոսքերով շնորհակալություն հայտնեցի:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ... Մի՞թե ձեզ համար էր իմ աշխատանքը և ոչ թե ինձ համար... էլ ո՞րն է իմ գործը, ինքս չեմ կռվում, ոչինչ չեմ անում, զուք պատերազմի մեջ եք... Օգնելով ձեզ՝ ես օգնեցի ինձ, իմ երեխաներին, պառավ Յուլիանեին, որին զուք էլ եք սիրում, ինչպես տեսնում եմ...

Անկեղծ էր խոսում.

— Իհարկե այդպես է, — ասում եմ ես, — բայց դե մի ուրիշը կարող էր հանձն շառնել այդքան շարշարանք, դիշերով թաղիք ու քրեզենտ շփնարել:

— Բանն էլ հնոց այդ է, որ ես չեի կարող շառնել, — ասում է նա մի բարի ժպիտով:

Նրա մանրիկ աշքերը շողում են ինքնագոհ:

Զերմ մնաս բարով ենք ասում:

— Գուցե երեխէ հանդիպենք, բարեկամնե՛ր, ես ձեզ չեմ մոռանա, զուք էլ աշխատեցեք հիշել ինձ... Գրեցեք ճշմարտությունը, ա'յն, ինչ մարդիկ զգում են իրենց հոգում. լավ ծառայեցեք հայրենիքին...

Ինձ թվաց, թե նա հազիվ է զսպում իր արտասուքները: —

«Եթե կեղծ են այս բոլորը, — մտածում եմ, — ուրեմն այս քրդուն առաջնակարգ մի գերասան է. բայց ինչո՞ւ հավատ շունենալ դեպի մարդը»:

Երկուս էլ քայլում ենք լուս: Երբ արգեն հեռացել էինք, ես հարցնում եմ Դավիդովին:

— Ի՞նչ ես մտածում այդ մարդու մասին:

— Լավ բան չեմ մտածում, — ասում է նա, — դու առհասարակ դյուրահավատ ես, զգայուն, ինչպես բանաստեղծները. իսկ իմ կարծիքով նա կեղծավորի մեկն էր և վարպետորեն խորամանկ... սակրացավ ունեցողն այդպես արագաշարժ չէր լինի, թոքախոտվ հիվանդին էլ աշքերի արտահայտությունից եմ ճանաշում, նա երկաթե կուրծք ուներ և առողջ էր եղան պես. վերջապես մի՞թե

չէիր նկատում, թե ինչպես արագ էր կարում, ինչպես ճարպկորեն էր գործածում բիզն ու ասեղը, կարձատեսն այդպես չէր աշխատի...

— Կույրերն էլ են այդպես արագաշարժ ու ճարպիկ կարում,—առարկեցի ևս:

— Դյուրահավա՛տ ես, դյուրահավա՛տ,—կրկնեց նա:

— Իսկ դու կասկածամիտ ես շափից ավելի. ես չեմ թաքցնում, որ լավ տպավորություն թողեց այդ մարդն ինձ վրա, նույնիսկ ինչ-որ լավ գգացմունք եմ տածում ես դեպի նա:

— Դա նրանից է, որ ոտքերդ հիմի տաք են, չեն մրսում,--սրախոսեց Դավիդովը,—քո ոռմանտիկ վերաբերմունքը դեպի աշխարհը կարող է ցեխին էլ ծիածանի գույներ տալ...

Ինձ մնում էր նույնպես սրամտությամբ պաշտպանվել: Օգնության եկավ ծեր Տուրգենեվը: Հիշեցի նրա խոսքերը.

— Ի սե՞ր աստուծո, Արկադի՛, մի՛ խոսիր այդպես գեղնցիկ...

Այդպիսով մեր վեճը դադարեց:



...Այդ օրվանից անցել էր մի ամսից ավելի, իսկ ամեն օրը ճակատում բերում է տասնյակ նոր դեպքեր և ակամա անցածը մոռանում ես, թարմ, հաճախ ցնցող տպավորությունները գրավում են հնի տեղը: Իսկ ժամանակն անցնում է և դու ուշադրություն չես դարձնում նրան:

Կրկին շարժվում ենք զրամասից-զորպամաս, ստորաբաժանումից—ստորաբաժանում, մեկից հեռանալով՝ մյուսին ենք փընտռում: Կրկին նույն ձմեռը, նույն միօրինակ դաշտերը, ձյունով ծածկված նույն նոճիները, ու եղենիների անտառները՝ հավերժորեն կանաչ, նույն արեք, նույն լուսինը հավասարապես՝ պաղ ու ցուրտ: Չես զգում դու բնության խիստ խաղերը: Մենք սովոր ենք մտածել, որ սառնամանիքը թշնամու համար է միայն: Մենք լավ ենք զգում մեզ, մանավանդ որ մեկ-մեկ ետ ենք շպրտում նրանց և առաջ ենք գնում մեր հարազատ դաշտավայրերով:

Այստեղ, ահա, երեկ նրանք էին Այսօր արդեն հեռու են և մեր զորքերը կրնկակոխ հետեւում են նրանց, զորքերի հետ լուսա-

Նկարիչներ, թղթակիցներ, գրողներ: Ու էլի, ևս և զինվորական թղթակից իվան Դավիդովը: Ազ ու ձախ մեր շուրջը հիտերական ասպատակությունների հետքերն են, աղեխարշ պատկերներ: Թշնամին գլխակորուց փախչում է՝ հրի ու բոցի մատնելով ոռւաքարի, սիրելի մարդկանց տներն ու ընտանիքը, գնդակահարում պառավներին ու ծերերին, սլինահարում պատանիներին ու երեխաներին, փախչում է թողնելով ջարդված տանկեր, մեքենաներ և կանաչավուն ուսադիրներով սառած դիակներ: Ցերեկը երկինք է բարձրանում վառվող գյուղերի ծուխը, գիշերները հրացոլքը լուսավորում է հորիզոնը:

Մի գյուղի մոտ թշնամին ակտիվ դիմադրություն ցուց տվեց: Սուավոտից երեկո տեղի ունեցան ուժեղ կոփիներ: Թվում էր թե ամենուրեք հողի վրա պայմում են ականներ: Որոտում էր մեր ջրետանին՝ աճեղ աղմուկների մեջ խլացնելով թշնամուն: Դիտակետերից կարելի էր տեսնել, թե ինչպես ուազմանյութ կրող գերմանական մեքենաները պայմում են մեր արկերից և դժոխային կրակ ու բոց թափում գաշտերի ու մարդկանց վրա: Իրիկնագեմին թշնամու կրակը թուլացավ, մերոնք, ընդհակառակը, ուժեղացրին: Այսօր էլ կրկին մի խիզախ գրո՞ւ էր պատրաստվում:

— Նայի՛ր, բարեկա՛մ, աճա քո վեպի հերոսը, — կանչեց հանկարծ Դավիդովը թեկցս քաշելով, — նրան բռնել են մերոնք...

Ես նայեցի գեափի ձախութեր կու բանակային առաջներն առած, բերում էին մեր ծանոթին, նրան, որ չեխոլներ կարեց իմ սապոգների համար և իմ ու Դավիդովի վեճի առարկան դարձավ: Նույն շեկ, երկար միրուժն էր, նույն խաղաղ ու անվրդով գեմքը, միայն շորերն էր փոխել: Քայլում էր արագ, թեթև, տասնվեց տարեկան պատանու պես: Եվ ինքնավստահ: Նա մեղ շնկատեց, իսկ մենք զարմացած նայում էինք նրան:

Քոնվածին դեպի շտաբ էին տանում:

— Տեսնում ես, սիրելի՛ս, — ասաց Դավիդովը, — երեսում է, որ քո բարեկամը ոսկրախտով է տառապում, որ կարճատես է... իմ զգացողությունը երբեք ինձ չի խարում, նա գերմանական լըրտես է, կարողացավ քեզ խարել, և ես էլ թույլ գտնվեցի այն ժամանակ, շբանաւարկեցի նրան, ինքներս գրում ենք աշալրջության ու զգոնության մասին և աճա շկարողացանք մեղ հանդիպած թշնամու դիմակը վար առնել...

Ես՝ որևէ բան ասել չեմ կարող: Նա Դիրավացի էր: Զգացի խղճի խալթոցներ, հոգիս լցվեց անախորժ զգացումներով: Ինձ զգում էի մեղավոր այն սուրբ գործի առջև, որի համար պատրաստ էինք կյանքներս տալ:

— Գնանք նրա հետեից, — ասացի Դավիդովին, — նրան շտաբ են տանում:

— Ինչո՞ւ գնանք, տեսել ենք արդեն այդ լրտեսի մռութը:

— Կրկին տեսնենք, չէ՞ որ մենք կարող ենք օգնել, որ շատ բան պարզվի:

— Ճշմարիտ է, — համաձայնեց նա:

Հերձե հասանք շտաբ: Խնդրեցինք զեկուցել, որ պետք մնող ընդունի: Ներս մտանք, բարեկցինք:

— Ի՞նչ է ձեզ պետք, բնկե՛ր թղթակիցներ...

Զինվորական լեզվի հակիրճությամբ զեկուցեցինք եղելությունը:

— Սպասեցեք, — ասաց նա և կարգադրեց ներս բերն ըլոնվածին:

Ներս բերին: Ինձ թվաց, թե շտաբի պետը նրան տեսնելով՝ հանկարծակիի եկավ: Բոնվածի զեմքն էլ փոխվեց, երբ տեսավ մեղ այդտեղ:

Պետը հրամայեց բանակայիններին դուրս գնալ: Եվ երբ նրանք ծածկեցին դուռն իրենց ետեից և երբ մենք գեռ չար հայցքներով մեր ծանոթին էինք նայում, հանկարծ տեղի ունեցավ անսպասելին: Մեր ծանոթն ու շտաբի պետը գրկախառնվեցին տարիներով իրար շտասած երկու եղբոր պես: Նրանք համբուրովում էին շերմ ողջագուրանքով, իսկ մենք շշմած նայում էինք:

— Այս լրտեսի հարցաքննությանն էիք ուզում ներկա լինել, — դարձավ պետը մեղ, — ներկա եղեք, շատ հետաքրքրական բաներ կարող եք լսել:

— Բարեկամնե՛ր, բարեկամնե՛ր, նորի՛ց հանդիպեցինք իրար, — բացականչեց նիկոլայ Վասիլեկչը և մոտեցավ ու սեղմեց մեր ձեռքը: Դավիդովին ասաց, — այս անգա՞մ էլ դուք ինձ լրտեսի տնդ դրիք, ինչպես առաջին օրը. դուք կարծում էիք ես չէ՞ի հասկանում, թե ինչ եք գրում ընկերոջը. «այս մարդը կասկածելի է երևում, լրտես կլինի...»: Էիս դո՞ւ, կողա՛կ...

Հանկարծ նրա հայցքն ընկավ ոտքերիս:

— Ի՞նչ եմ տեսնում, նոր վալենկանե՞ր եք ստացե՞ւ լա՛վ էր լա՛վ, իմ սարքած բաներն ուրեմն պետք չեկա՞ն.

— Ինչպե՞ս չէ, պետք եկան, Նիկոլայ Վասիլեիչ, շա՞տ շնորհաւ կալ եմ...

— Լա՛վ է, լա՛վ—կրկնեց նա:

— Ամենալավն այն է, որ դուք մեր մարդն եք,—ստացի ես—շատ ուրախ ենք, որ սխալվեցինք, Նիկոլայ Վասիլեիչ...

Շտարի պետք ծիծաղեց:

— Նիկոլայ Վասիլեիչ, այդ ի՞նչ անուն ազգանուն է.

— Թող այդպիս ասեն, անո՛մը չի կարևոր...

Պետք պայտապակից հանեց քարտեզն ու թղթեր:

— Դե ուրեմն սկսենք, թղթակիցներն էլ թող լսեն,—ու դարձավ մեզ,—ընկերներ, դուք դործ ունեք հայտնի պարտիզանական խմբի ղեկավար ընկեր ՇՀ-ի հետ...

— Ի՞նչ...—համարյա միասին բացականչեցինք ես ու Դավիդովը:

Եմ մարմինը սրսփաց անակնկալից, ինչպես լինում է արտակարգորեն լավ, ցնցող լուր լսելիս:

— Այո՛...

Նրան ներս բերելը, ողջագուրանքն ու այն ամենը շտեսցին այնքան ժամանակ, ինչքան որ կարող է տևել դրա նկարագրության ընթերցումը:

Պարտիզան ՇՀ-ն սկսեց պատմել: Ուշադիր լսելով նրան՝ ես միաժամանակ ծոցատետրիցս մի կտոր թուղթ պոկեցի ու գրեցի Դավիդովին. «Իմ զգացողությունը երբեք ինձ չի խարում, նա մեր մարդն է, դու անտեղի կասկածեցիր և ես էլ կարճատես դունչեցի, համեստ մարդու մեջ շտեսա իսկական հերոսին»...

Նա պատասխանեց.

— Վրեմիսնդի՛ր եղար...



ՇՀ-ն վերադառնում էր հետախուզությունից: Մի ամիս շաբունակ գործել էր թշնամու թիկունքում, հարձակմել նահանջող ավտոշարանների վրա, ոչնչացրել վաշտեր, խլել զենք ու մթերքներ, աղատել զնդակահարությունից տղամարդկանց, կանանց ու երե-

խաների, փրկել աղնիվ քաղաքացիների կյանքը, ժողովրդական իր արդար ձեռքով պատժել գավաճաններին ու ծախվածներին, զըրկել նրանց կյանքից, ինչպես մարդն իր սեփական մարմնի վրա երևացող թարախած խոցերն է կտրում: Գիշերով մտել է նա գերմանական շտաբներն ու գաղունահարել սպաներից՝ որ հավետքնած մնան, շապանեն ու շթալանեն ալլես և վերցրել է փաստաթղթեր, ուղարկել բանակի հրամանատարությանը...

Մենք լսում էինք այդ պատմությունները՝ և թվում էր թե մեկը քարձրածայն կարդում է մեզ համար արկածային մի վեպ, որի հերոսները գործում են անհավանական քաջություններ, կատարում են սխրագործություններ, որոնք կարող են գրվել գրքերում ու պատմվել հերիաթների մեջ, բայց կյանքում կհամարվեն անհնարին և հավատալի շեն լինի: Նա շտաբի պետին պատմեց թշնամու զորամասերի տեղի, նրանց դասավորության, թվի, ուազմամթերքի շափի, տրանսպորտի մասին: Պատմեց թե ի՞նչ ուժեր ունեն այս դժի վրա մեր զորամասի դևմ պաշտպանվող գերմանացիները, այդ ուժերը ո՞ր կողմից, ի՞նչ բանակով են դասավորված, ի՞նչ զենքեր ունեն:

Ինձ զարմացնում էր, թե ինչպիսի՞ հշկրտությամբ էր նա իմացի այդ ամենը և ինչպե՞ս է մտքում պահել այդքան թվեր ու մանրամասնություններ:

— Ինչպե՞ս եք այդ բոլորը հիշում, — միջամտելով հարցըրի ես:

— Պետք է հիշել, դրա համար ել հիշում եմ, — պատասխանեց նա ինձ ու շարունակեց իր պատմությունը:

Գրսից լսվում էր մեր հրետանու հետզհետե ուժեղացող կրակը: Թշնամու արկերն ստեղծ-ստեղ պայթում էին մեզ մոտիկ տարածությունների վրա: Կողքի սենյակում տիրում էր աշխուցք անցուղարձ, հեռախոսային խոսակցություններ, հրամանների փոխանցում ստորաբաժանումներին: Մի արկ պայթեց մեր խրճիթի մոտ, բեկորներից մեկը ջարգեց լուսամուտը և շառաչումով կպավ դիմացի պատին՝ անցնելով ՇՀ-ի գլխի մոտով:

Ոտքի կանգնեցինք:

— Դուքս գանք, կարող է կրկնվել. — ասաց պետը, ապա դիմեց մեզ, — լուսաբացին գրոհի ենք գնալու, ընկերնե՞ր, եկեք մեզ

Հետ, իսկ այժմ ՇՀ-ի հետ գնում ենք գործով, հետո կհանդիպենք...  
ՇՀ-ն մոտեցավ ինձ:

— Անպայման կհանդիպենք ես ու դու, խոսելու նյութ կը գըտնինք, ես շատ եմ հիշել ձեզ այս ամսվա ընթացքում, հիշում ու ծիծառում էի, թե ինչպես պինդ բռնել էիք միքուքից, բաց չեթք թողնում: Յտեսություն, եթե շհանդիպենք, ողջուններ Կովկասին, կտեսնենք մի օր ձեր Կովկասը, կապենք կտեսնենք, մենք ապրող ժողովուրդ ենք...

Սահնակը թեթև սահեց, ապա թոցրեց նրանց դեպի այն կողմը, որտեղից լսվում էր ուզմի որոտ ու ճարճատյուն:

Պարզկա էր և լուսնիա: Ծովսական հումվարյան երեկո, որ իր գաժանության մեջ անհուն հմայք ունի:

8676  
A 30255  
II

### ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՄՎԱԾՔ

...Մենք հոդվածներ էինք պատրաստում վերջին օրերի դեպքերի մասին: Դուռը ծեծեցին: Տանտիրուհին դուրս եկավ և վերադառնալով ասաց, որ մի հենակավոր մուժիկ ինձ է հարցնում:

Ո՞վ կարող է լինել, որ անուն ազգանունվ ճանաշում է ինձ այս անծանոթ տեղերում, ուր երեկ դեռ գերմանացին էր և մարդիկ նոր են սթափվում դաժան մղձավանշից:

Դուրս եկա:

Դուան շեմի մոտ, մի ուսի ծանրությունը հենակին դրած; մյուս ձեռքով նա իր զապորոժյան բեխերն էր ուլորում: Օ՛, մեր բարեկամն է, մեր ՇՀ-ն: Սիրտս թրթուաց: Զէ՞ որ ես սիրահարվել էի այդ մարդուն, չէ՞ որ սիրում էի նրան, երբ դեռ նույնիսկ չի տեսել, երբ միայն երազում էի նրա մասին:

Պատմեց, որ ոտքը վիրավորվել է իր ուազմական վերջին գործողության ժամանակ, որ հիմա արդեն բժշկվել է, երեք օր հետո նորից գնալու է գործողության: Երբորդ անգամն էր վիրավորվում ու բժշկվում:

— Գնանք ինձ մոտ, — առաջարկեց նա, — ապրում եմ խաղաղ մի տնակում, ոչ ոք չկա տանը:

— Գնա՞նք...

... Նստած ենք դեմ-դիմաց: Նա ինձ չի նայում, նայում է առաստաղին, կարծես ինչ-որ կետ նրա՝ ուշադրությունը գրավել է: Խոսում է ինձ հետ, աշքերի մեջ լոին մի թախիծ:

Ես հարցնում եմ, թե ինչպես է կարողանում ամեն օր մի նոր կերպարանք ստանալ: Այս անգամ միրուքը շկա և դրա փոխարեն ունի ոլորուն հաստ բեխեր, նման այն դյուցազուններին, որ թուրքի սովորականին նամակ են գրում Ռեպինի հայտնի նկարում:

— Հաճելի չի ծպտվելը,—պատասխանում է նա, — ինչո՞ւ պիտի հարկադրված լինենք մեզ անձանաշելի դարձնել, շքայլել ազատ և սեփական մորթով... Բայց դա էլ պետք է և դրա համար էլ դժվար չե... գեղեցիկ էր մեր հայրենիքը. Չատ վայելքներ ճաշակեցինք, կյանք է, միշտ խաղաղ ու երջանիկ աշխատանքի մեջ չես լինի... ճաշակեցինք հաշտության ու համերաշխության քաղցրությունն ազգերի ու մարդկանց մեջ, դարձանք եղբայրներ մեկս մեկու համար, հարազատներ, կառուցեցինք մեր գեղեցիկ աշխարհը... և դեռ ինչե՞ր չեինք անի: Ու ահա այսպես... դժվար չե՞տ ասում եք, ինձ համար... նույն հարցը կարող եմ ես ձեզ տալ... Ամեն մեկը կարծում է, թե իր արածը սովորական է, այդպես էլ պետք է լիներ... դժվար բան շկա, երբ պարզ է նպատակը, երբ գիտես ինքու ո՞վ ես, որտեղից եկար, ո՞ւր ես գտնվում և ո՞րտեղ պիտի գնաս...

Լոեց նա: Երկար լոեց: Ապա նայեց ինձ, ձեռքը փաթաթեց մեջքիս.

— Գիտեք, ձեզ շատ էր սիրում պառավ Յովիանեն, պատմել էր ինձ նախքան ձեր գալը այն երեկո և ես էլ սիրեցի ձեզ... Զեր մեջ զգացի հարգանք դեպի մարդը, համարյա սեր, դուք սիրում եք կյանքը...

— Ինչո՞ւ եք այդ բոլորն ասում, ի՞մ բարեկամ...

— Զգիտեմ. թեթևանում է սիտս, երբ ժամանակ է լինում շաղակրատել մտերիմ մարդու հետ, ցանկանում եմ քննուշ խոսքեր ասել, գրել, համբուրել.

Ես տեսնում էի, որ Շշ-ն այս անգամ առաջին օրվա մարդը չէ, համգիստ իրոնիայով խոսող այն առեղծվածային անծանոթը:

Ինդրեցի որ պատմի իր կյանքը:

— Ի՞նչ կարող եմ պատմել, մեր կյանքը մեր ուղղուցիան էր

և այսօրն է, տարբեր տեղերում, բայց ապրել ենք մենք բոլորս էլ միևնույն խորհուրդն ունեցող կյանքը...

Խոսքերը գուրս էին գալիս ծանրությամբ, կցկառուր: Հուզմունքը խանգարում էր:

... Տասը տարեկան գեղջուկ մի տղա էր նա, ծնվել էր այնպիսի խրճիթներից մեկում, որոնց պես հազարներ եմ տեսել ես և որոնք իրար այնպե՛ս նման են թվում անծանօթ մարդու աշքին:

Վաղ մանկության օրերին զրկվեց ծնողներից: Մեռան նրանք, թողնելով նրա հետ փոքրիկ, շատ փոքրիկ քրոջը: Նա ինքն աշխատեց ուրիշների մոտ, կերակրեց ու մեծացրեց քրոջը, նույնիսկ կրթության տվեց, ժամանակ շգտավ ամուսնանալու, բայց քրոջն ամուսնացրեց և սիրեց նրա ընտանիքն ու երեխաներին:

... Ու նրանք, ահա, աղևս չկան: Նրանց բռնեցին գերմանացիները, տանջեցին, խոշտանգեցին, ստիպելով, որ քույրն իր եղբարը մատնի, հայտնի նրա տեղը: Երիտասարդ կինը հերոսարար դատարկեց փորձության բաժակը և մեռավ հերոսունու մահով: Արհամարհանքով գերմանական սպային նա ասաց.

— Միհնույն է, ձեր ձեռքը նրան չի հասնի...

Ասաց ու ընկալի իր աղջկա հետ միասին գնդացիրի կրակից: Փոքրիկի ձեռքն ընկել էր մոր գեմքին, իսկ գեմքը սառուցի վրա, շիկավուն մազերը թափվել էին արյունով ներկված ձյուներին...

Նույն գիշերը հողմի նման գյուղ հասավ ծշ-ի խումբը...

— Դուք հարցուրապատիկ վրեժ եք լուծել, — ասացի ես, — դա պետք է ձեզ հանգստացնի...

— Ես հանգստ եմ, թանկագի՞նս, — ասաց նա, — դա՝ չե բաւնքը: Եթե միայն իմ քույրը լիներ... Մի՞թե մինչեւ այդ օրն սպանվածները իմ քույրերը չեին, այսօր և վաղը նահատակվողները նույնպես հարազատներ չե՞ն մեղ... Ինձ ասում են, թե քո շրջանն արդեն ազատագրվել է, պիտի մնաս շրջանում աշխատելու, բավական է, ամեն պարտիզան, ասում են, պիտի իր շրջանում գործի...«

... Չէ՛, եղբա՛յր, ներեցե՞ք, ես փոքրիկ մի շրջանի բնակիչ շեմ, այլ Ռուբախնական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի քաղաքացի, ոչ էլ այդպես, ես զավակն եմ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության, քանի ազատ չէ Միությունն ամբողջովին, ինչո՞ւ պիտի վտանգի մեջ լինեն ուրիշները, իսկ ես թիկոնքում...

Ծանր շնչեց: Լոեց: Ծխամորձը գլխիվայր բռնելով՝ խփեց սեղանին, որ մոխիրը թափվի: Հանեց գրպանից մախորկայի տոպրակը, ծխամորձը լցրեց, սեղմեց բութ մատով, լուցկին վառեց, բայց կպցրեց: Դարձավ ինձ:

— Բայց ծանր է այնուամենայնիվ. նրանից ոչ մի հիշատակ չի մնացել մոտս, նույնիսկ նրա և երեխայի լուսանկարը... ամեն ինչ տանն էր, ամեն ինչ մոխիր դարձավ...

Լուցկին վառեց մատերը: Անտարբերությամբ դեն գցեց, վառեց նորը, ծխամորձը կպցրեց:

— Ծուսով այս բոլորը կանցնի, կոչնչանա թշնամին, կիրնտոենք, կգտնենք իրար... այն ժամանակ ինձ հյուր կգաս, կիմանասթե ի՞նչ բան է Ռմբախնան... Ես զյուղացի եմ ոչ միայն, այսպես ասած, սոցիալական դրությամբ, այլև հոգով: Ես հողի ու դաշտի մարդ եմ... կգաս ինձ մոտ պատերազմից հետո. ի՞նչ գեղեցիկ կլինի ամեն ինչ, որ պատկերացնել չես կարող... Դուքս ես գալիս դաշտ, քամուց խշշում են ցորենի ծաղկած արտերը, այիքները գնում են մինչև հորիզոնի ծայրը: Քայլում ես, քայլում և թվում է թե ողջ աշխարհը կանաչ ցորենով է ծածկված և վերջ ու ծայր չկա... Օ՛խ, գեղեցիկ է... կգաս այն ժամանակ, երբ ծաղկեն խընդորենին ու բալենին, երբ բուրի գարունը Ռմբախնայում...

Ծշ-ի աշքերը վառվում էին կրակով: Նա երազում էր կարծես ինքն իր հետ: Ինձ թվում էր թե բնութենապաշտ բանաստեղծ և խոսում կողքիս նստած, ցնորուն հայացքը լի միրով ու ոսմանտիկայով, ագգային զգացմոնքներով մի բանաստեղծ՝ Տարասի նըման, զապրոֆցու կերպարանքով:

— Զգիտեմ, կարո՞ղ է որեև մարդ երկրագործի նման երջանիկ լինել, — շարունակեց նա, — զիտնականն ու զյուտարարն իրենց բատեղծածից գո՞ն էն մնում, բայց ասում են, թե երեմն էլ տանջվում են, որ զրել են այսինչ-այնինչ զիրքը, որովհետև մարդը փոխվում, զարգանում է, իսկ զիրքը նույնն է մնում, ինչպես տըպվել էր... Մեր ստեղծածից մենք գո՞ն ենք մնում միշտ, մեր կյանքի բոլոր շրջաններում: Անցնում ես ահա, տեսնում կարմրող ինձորը ծառի վրա, ունենում ես հաճելի զգացում, որ դու ես այդ ծարք տնկել — խնամել, հիշում ես, որ տարիներ առաջ նա գալար էի

շիվ էր միայն, անցնում ես քո մշակած փթթող դաշտերով, հոգին փառավորվում է... ինչքա՞ն աշխատում էի ես, ինչքա՞ն աշխատում... իմ սերն էր ինձ դեպի դաշտերը մղում, ոչ թե պարտականությունը, որին նկատմամբ նույնպես միշտ ակնածանք եմ ունեցել, մոռանում էի ինքս ինձ, երեկոյան դալիս անկողին էի մանում հոգնած մարմնով, բայց խղճով ու հոգով խաղաղ ու հանգիստ, ինձ արժանի դարձրին կենինի շքանշանի, գովեցին թերթնում, շատ շատերը դալիս էին ինձ մոտ, որ բացատրեմ հողի լեզուն: Իսկ երբ ինձ տարան շրջանի պարտիական կոմիտեում աշխատելու, անկեղծ եմ ասում, տիսրեցի... բայց էլի դաշտերից չէի կտրվում... Ասում են կա նիկունիկ Տոլսոոյը հանգստացնում էր իր հոգին դրերից ու փիլիսոփայություններից՝ երկրագործության մեջ, ծառեր էր տնկում ու խնամում, անխոնչ հնձվոր էր, թափառում էր դաշտերում, ճանաշում էր խոտերի ու ծաղիկների բոլոր տեսակները...

Կրկին լոեց, որ քիչ հետո շարունակի:

— Շատ են գովում կովկասը, մեր Հայրենիքի մարդարիան է..., ափսոսում եմ, որ չեմ տեսել, ցանկանում էի գալ, այնպես էլ հաջողվեց...

Հանեց գրպանից ժամացույցը, նայեց:

— Ուշ է, պիտի բաժանվենք, գրեցեք իմ հնարավոր հասցեները, թողեք ձեր տան և զինվորական հասցեն... թողեք ինձ որևէ հիշատակ, եթե ունեք...

Ռտրի կանգնեցինք:

Ինչ կարող էի թողնել ես նրան: Ուզում էի ամեն ինչ տալ այդ մարդուն: Ոչինչ չկար մոտս:

Մի միտք ծագեց մեջս հանկարծ:

Հանեցի ծոցից կնոջս և իմ դստեր լուսանկարը, ինձ համար ամենաթանկագին հիշատակները ռազմաճակատում:

— Ահա քեզ հիշատակ, սիրելի՛ Շշ.—այնպես կարծիր, թե սա քո քրոջ լուսանկարն է իր փոքրիկ աղջկա հետ...

Արագ ձեռքից փախցրեց: Նայեց: Այտի մկանները թրթուացին: Մանրիկ աշքերում շողաց արտասուրը... Մոտեցավ, մի ձեռքով ամուր գրկեց ինձ, մյուսով լուսանկարը պահելով հայացքի աւարտ:

— Եղբարի'կ իմ, Եղբայրի'կ... Սա ամենասուրբ նվերն է ինձ, մեռ բարեկամության նվիրական նշանը... Դու հառկացար ինձ, շնորհակալ եմ... կազմատագրվի մեր հայրենիքը և ես կդամ ձեզ մոտ և նա ինձ կընդունի հարադար քրոջ պես, հավատացած նմ... Չէ, դուք կդաք միասին ինձ մոտ, ես ցուց կտամ ձնզ Ուկրաինան, մեր հայրենի հողը... այս', հողը... իսկ հիմա, եղբայրի'կ, բաժանվենք... Հարցրու իմ մասին: Չեմ սիրում ես պարապ նստել, երբ լսես՝ որ մի բան եմ արել, իմացիր, որ գա կլինի համերժացումն մեր այս բարեկամության ուխտի... Մնա՛ս բարով... Ողջույններ քրոջս ու երեխային, ես ինքս էլ կգրեմ նրան... Մնաս բարով:

### ՎԵՐՋԱԲԱՆ

Երեկ Իվան Դավիդովն ինձ մոտ վագեց ու ավետեց, որ ՇՀ-ի պարտիզանական խմբի քաջերից մեկն այս բոպեին մեր շտաբումըն է: Փութացինք տեսնել: Բայց նա արդեն չկար, անմիջապես վերադարձել էր: Շտաբում պատմեցին այն հերոսական գործերը, որ պարտիզանների պիտ ՇՀ-ն կատարել է վերջին օրերս թշնամութիկունքում, դժվարին, ահավոր գործեր, որ հավիտենական փառքի լուսապատճեն կարող են զարդարել նրա ճակատը և ժողովրդական երգ ու առասպելի նյութ դառնալ: Ես լսում էի այդ պատմությունները խորին հուզմունքով և թվում էր, թե ինձ է պատկանում այդ փառքի կեսը, թե հարազատ եղբորս սիրագործություններն են պատմում ինձ.. Աշքերիս առաջ էր նրա բարի, անմոռաց կեմքը, բարի ու խաղաղ, ինչպես սրբանկար, և սիրով ու կրակով լի, երբ երազում էր իր հր հայրենիքի վաղվա մասին: Ես ապրում էի հպարտության ու երջանկության զգացմունքներ մեր բարեկամության համար, չէի մոռանում, որ նա իր հերոսական գործերի վայրկաններին իր ծոցում, իր սրտի վրա է ունեցել իմ փոքրիկ դըստեր լուսանկարը... Բարեկամություն... Այս', այն զգացմունքը, որ ծնվում է փորձությունների մեջ, մեծ և սուրբ գործերի օրերին, երբեք չի մեռնում...

Երեկ ողջ օրը հուզված էի ես և որոշեցի գրել մեր բարեկամության այս պատմությունը:

Հունվարի 30. 1942.

Գործօղ Բանակ

## ՄԻ Կ'ՆՈՀ ՊԱՏՄԱԺԻՅ

1.

Երբորդ օրն էր, որ թշնամին համառ կերպով դիմադրում էր: Դիմացը՝ հարազատ դաշտանկարն էր, ոռւսական տափաստանը, չայն ու անսահման, ինչպես իր ժողովրդի սիրտը: Հումվարի առաջին օրերն էին: Խնճնակոչ հյուգերն անարգելով ու անպատվելով տանտերերին՝ խցկվել էին ներս, վախենալով սառնամանիքին դուրս գալ: Հասարակ աշքով, պարզ ու մեկին երեսում էին լոփի գյուղերը՝ ծածկված սառած ձյուների տակ, թշնամու թաթի ծանրությունից լուս ու պապանձված: Նայում ես ահա ծանոթ հորիզոնին, երկրի վրա կամարած կապույտ երկնքին, դիտում ես ահա պարզկա երեկոն, որ լուսավորվում է հազար հրթիռներով ու լցվում հազար աղմուկներով, ապրում ես ոռւսական կախարդված գիշերվա ողջ վրդովմունքը և հոգիդ մինչև խոր հատակները լցվում է վրեժի հզոր ուժով, լցվում անսահման ատելությամբ: Եթե կան աշխարհում մարդիկ, որ գարմանում են սովետական զինվորի ինքնամուացության հասնող մոլեռանդության վրա, երբ իրենց հողի համար մղված կոփվների մեջ նրանք խենթությունների են հասնում, եթե կան այդպիսի մարդիկ, ապա նրանք երբեք չեն ապրել իրենց մայր հայրենիքի ուրախություններով և չեն տառապում նրա ճակատագրի համար, չեն հիացել նրա բնության գեղեցկություններով և չեն ցնցվել թշնամու ավերածությունները տեսնելիս: Նրանք անհոգի ու անսահրա մարդիկ են՝ զուրկ արժանապատվությունից ու արիությունից:

Միտքն ու զգացմոմքը խանգարում են ինձ պատմել այն դեպքերը, որ հիմա, այս տողերը գրելիս, հիշելով, փշաքաղվում է մարմինս, աշքերս մինում են և ամբողջ էությունս այրվում է կրակով:

Թշնամու պաշտպանության գիծը ճեղքվեց մի քանի տեղից կուսարացը հաղթանակ էր երկնում։ Եվ այն, ինչ տեսանք մենք, երբեք ք, երբեք ք շնորհ մոռանա:

Հեռվում, ձորակի մեջ տեղավորված գյուղից կույր ահեղ բոպեներին երևացին ծխի սյուներ, հետո սյուներն ամպ դարձան, գորշ ու մութ ամպ, որ դանդաղ երկինք էր բարձրանում՝ շկարվելով ձորաբերանից։

Ի՞նչ էր դա, գիտեինք, որ թշնամին նենդ է և շատ խարդավանքների սովոր։ Բայց ի՞նչ դիվային միջոցի է դիմում նա։ Միքանի բոպե միայն անմեկնելի թվաց երկինք բարձրացող ծովուր Հրամանատարները նայեցին հեռադիտակներով և տեսան թշնամու ոճիրը։

— Այրում են գյուղը…

Նայում էին մարդիկ ահավոր զայրույթով ու ցասումով, լարվելով, կուտակվելով որպես բռունցք։ Ուժեղ կրակի տակ ճնշելով թշնամուն, ճնշելով նրա զենքերի գործողությունը, առաջ էին գրնում վաշտերը։ Շուխը գնալով մեծանում էր, նա ծածկեց աշբից հորիզոնի կեսը։ Երկում էին բոցերն ու սև ծխի մեջ բարձրացող կայծերը, որ փշրվելով հրթիռների նման, թափվում էին ցած։

Ո՞վ կարող էր մտածել այդ բռպեին իր կյանքը խնայելու մասին, եթե նա փոքրոցի ու դավաճան չէր։ Բայց գտնվեց հերոսներից հերոսը, մի անանուն մարտիկ, մի շարքային բանակային, որ ոտքի կանգնեց ու իր կրծքի ողջ ուժով գոռաց։

— Նրանք այրում են մեր հայրենիքը…

Նա մեկ ձեռքով թափահարում էր հրացանը և մյուս ձեռքով ցուց տալիս ծխով ծածկված հորիզոնը։

Դա էլ հենց գրոհի սկիզբը եղավ։ Մեկ մարդու պես ոտքի կանգնեցին ամենքը՝ վրեժի նոր բացականչություններով։ Առաջին մարտահրավերը հնչողն ընկալ թշնամու կրակից, նրա հետ միաժամանակ՝ նաև ուրիշներ։ Հետո դժվար էր որոշել, թի հերոսաբար նահատակվածներից ո՞րն էր առաջինը, որ ոտքի կանգնեց և որոտաց հասարակ ու պարզ խոսքը։ «Նրանք այրում են մեր հայրենիքը»… մի խոսք, որից փշաքալվեցին մարդկանց մարմինները, որը լցրեց մարդկանց հոգին գերմարդկային ուժով։ Ես հաճախեմ մտածել այդ անանուն զինվորի մասին։ Գուցե սեղան ենք նըս-

տեղ նրա հետ միասին, սիրու բաց արել մեկ-մեկու, դուցե վիճել, կովիլ ենք երեկէ ու մի վայրկյան դառնացել իրարից, կամ սփոփել իրար դառն ու ծանր օրերին, ի՞նչ գիտենաս: Ով էլ լիներ նաև սովիտական մարդ էր և դա բավական է հասկանալու համար նրա սխրագործությունը:

... Անցավ մի գիշեր էլ: Մյուս օրը, կեսօր դեռ շէր եղել, որ քշելով թշնամուն՝ հասանք այրվող գյուղին: Մուխն ու խանձահոտն արդեն հասնում էին զրոհողներին: Այդ վայրկյաններին էր, որ հանկարծ ծխի ու կրակի միջից դուրս թռավ մի սև ուրվական ու դեպի մարտիկները վազեց: Ռազմական սովորությամբ մարտիկները հրամայեցին նրան ձեռները վեր բարձրացնել, հրացանների փողը նրա վրա ուղղելով: Նա բարձրացրեց ձեռքերը և կանգնեց մի պահ, ապա հիվանդ ու թեսաթափ թռչունի պես մի կոփնչ արձակելով, մի քիչ էլ առաջ եկավ և ուշաթափ ցած ընկավ գետին, բանակացինների ոտքերի մոտ: Նրան վեր բարձրացրին: Մխահոտք փշում էր հագուստների վրայից: Դեմքն ու ձեռքերը մրոտ էին, կարծես ձյութով ներկված: Մարող աշքերից արտասուրներ է՛տ շէին կաթում: Նա շկարողացավ գրկել այն մարդկանց, որոնց մոտ վազելու համար լարել էր իր վերջին ուժերը: Միայն նշաններով հասկացրեց, որ ծխի մեջ էլի ուրիշներ կան: Մի բանի րոպէ հետո բանակացիններն այրվող տների մոտից հանեցին երկու երեխա: Ուժասպառ մորն ու կիսաուշաթափ երեխաններին սահնակներով թիկունք ուղարկեցին...

Հարձակումը շարունակվում էր: Միսի հետ նստել էր ձորակում ծանր խանձահոտը, շորերի և մարդկացին մարմինների խանձահոտը: Շատ փայտաշեն տներից մնացել էին ուսական վառարանների աղյուսները միայն: Ամեն, ամեն ինչ թաղվել էր ծխի ու մոխիրների տակ: Գարեք շարունակ ապրել էր ավանն իր կյանքով, իր խաղաղ ու բարի ժողովրդով, իր ազգացին ընտանեկան ավանդություններով: Եվ ծխում էին այդ բոլորը թշնամու կրակի տակ և ոչ մի կենդանի մարդ շէր մնացել պատմելու այդ զարհութելի եղեռնագործության մանրամասնությունները, բացի այն սև ուրվականից, որին սահնակը թիկունք տարավ:

Դա հունվարյան օրերին էր: Այսօր մարտն է: Սկսվել է ձընհալը: Հալվում է դաշտերի ձյունը: Առվակներ են հոսում, լսվում

է ջրերի մեղմ կարկաչը, հարթությունները շողշողում են արեկ տակ: Անցել է երկու ու կես ամիս, երկու ու կես ամիս շարունակ նու մտածում էի այն կնոջ մասին, որ մեր առաջ գուրս եկավ կըռ-պի օրը: Ինձ թվում էր թե ողջ մի աշխարհ տարավ նա իր հետ լի սարսափներով ու թշնամու զաժան գործերով: Ես որոնում էի նրան ու չէի գտնում, բայց նախազգացումն առում էր, որ մենք կհանդիպենք մի օր: Եվ հանդիպեցինք...

## 2.

... Նստում է իմ դիմաց երիտասարդ մի կին, տխուր, թախ-ծուտ աշբերով, որ թվում է թե զեռ խոնավ են արտասուրներից: Նրա կողքին՝ իննամյա մի ցոլակն պատանի, որ նույնքան հետաքրքրությամբ լսում է մոր պատմությունները, ինչպես մյուսները:

Երիտասարդ կինը պատմում է ցավով, տառապանքով, պատ-մում է եղելություններ, որ մարդկային երևակայությունը երբեք չէր կարող ստեղծել: Հին, մեծ գյուղը, որից մոխրակուլտեր ու այրված աղյուսներ մնացին միայն, նրա հայրենի գյուղն է: Ինքն ապրում էր մոտիկ քաղաքում, որ գրավեցին աշնանը օտարերկրյա հափշտակիչները: Քաղաքից գուրս եկավ նա մի օր ցնցոտիներ հագած որպես մուրացիկ, բռնած իր որդու ձեռքը և ընկավ հայ-րենի գյուղի ճանապարհը: Թշնամու ասպատակությունների հետ-քերը փռված են ամեն տեղ, և՛ քաղաքներում, և՛ գյուղերում: Ամեն տեղ մա՞ս է, կոտորած: Միայն թե հասնի հայրական օջախը, տեսնի մի անգամ էլ հարազատների դեմքերը և եթե վիճակված է մենք, միատեղ մահը թեթև կլինի: Ճանապարհին գերմանացի-ները շատ անգամ բռնեցին նրան, ծաղրեցին, ծեծեցին: Գեղե-ցիկ կինը տգեղ էր թվում նրանց, նա «քողարկված» էր, այդ պատ-ճառով էլ հնարավոր եղավ կենդանի, որդու հետ միասին գյուղ հասնել: Բայց այնտեղ էլ գերմանացիներն էին: Նրանք վարվում էին այնպես, ինչպես բարբարոս թշնամին կարող է վարվել այն գրաված երկրի ժողովրդի հետ, որի բարոյական ոգին բարձր է իրենից և գրգռում է նրա բիրտ կրթերը:

Ահա պողպատե սաղավարտներով հիտերականները հավա-քում են գյուղի խոճկորները: Գյուղը լցվում է խոխնչներով, մորթ-վող անասունների ձայներով, կրակոցներով, հարբած զինվորների ոռնոցներով ու հայնոյանքներով: Կրակում են խոճերի վրա, հաջող շան վրա, փախչող համերի ետևից, կրակում են անիծող պառավի-

վրա, կրակում են արդար, անաշառ երկնքի վրա... Գյուղը քարանում է սարսափից: Տղամարդ չկա, միայն կանայք և զառամած ծերունիներն ու երեխաներն են մնացել: Ամեն թաղում, երբ հայտնվում են ավտոմատներով՝ զինված ավազակները, երեխաները ճշում են ու ձայնում իրար.

— Գերմանացին եկա՛վ, գերմանացի՛ն...

Ու ներս են փախչում, թաքնվում մահճակալների տակ, վառարանների ետևում, ծածկվում են տան անկյուններում: Զա՞նել աղջիկները շեն լվացվում շաբաթներով, դեմքերին վերեր են բուացնում, հագնում են հին ու կեղտոտ շորեր, անմաքուր թաշկինակներ կապում: Նրանք ցեխոտում են իրենց գեղեցկությունը, որ շցուցագրեն թշնամու լպիրը, ցանկասեր աշքերին: Մայրերը փակում են դռները, ծածկում լուսամուտները: Բայց կանաչ շինելավորները ներս են խուժում, փակ դուռը ջարդվում է նրանց առաջ, տանտիրուհու ատելությամբ լի հայցաքը շի շփոթում նրանց, այլ զրդում է: Ներս են ընկնում խմբով, սպայի հետ, ինչպես քաղցած դաշլի ձագերն իրենց մոր ետևից...

— Օ՛, աստված իմ, ինչե՛ր շեն անում նրանք, ինչե՛ր... ինչ-պե՞ս դուք կարող եք գդալ, հասկանալ առանց տեսնելու...

Երիտասարդ կինը ոսկեգույն մազերով գլուխն առնում է ափերի մեջ և լուս: Մենք միսիթարանքի խոսքեր շենք ասում: Շատ է լսել նա այդպիսի խոսքեր: Թող ինքն իր մտքերի ու զգացմունքների հետ լինի...

Մոր կողքին կանգնած փոքրիկ տղան աշքերը հատակին է հառել: Այդ լուսիթյունը, մոր ու որդու այդ ծանր լուսիթյունը, ավելի շատ բան է ասում, բան կասեր պերճախոս լեզուն: Իմ աշքերի առաջ բացվում է մոխրացած, ծխացող գյուղը... բայց կինը բարձրացնում է գլուխն ու ոչ թե՛ ինձ, այլ տան մի անկյունին հառելով իր կարմրած աշքերը՝ շարունակում է իր պատմությունը.

— Ներս են մտնում և վայրկենական արագությամբ աշքերով խուզարկում տան անկյունները.. կարագով հաց են տեսնում երեխայի ձեռքին, խլում, ուտում են, ոչ մի ուշադրություն շդարձնելով սարսափից ճշացող երեխայի վրա, շաբարամանի մեջ տեսնում են մի կտոր շաբար, գրպաններն են դնում, ամանի մեջ կաթ են տեսնում, վերցնում խմում են... քանդում են բոլոր անկյունները,

գտնում հանում են այնպիսի առարկաներ, որոնց գոյությունը տանտերերը վաղուց մոռացել են... Եվ հավաքում են բոլորը... մոտենում են փակ սնդուկներին ու դիվային ծիծաղով ցույց են տալիս կողպերը... փակել եք հա՞, կարծում եք դժվա՞ր է բացել... Եվ գործիքներ են ճարում, բացում են, կամ վերցնում են կացինն ու ջարդում. և թալանում են... թալանում են ամեն ինչ... վերցնում են ձեռքի սապոն, սապոնաման, հովունքներ, կոճակներ, երեխաների ձեռնոցներ, գոլպաներ, նորածնի համար պատրաստված շապիկն ու վարտիկը... Ինքներդ ասացեք, ինչո՞ւ համար են այդ բոլորը, մի՞թե իրենց երկրում այդպիսի հասարակ բաներ դանել չեն կարող, միթե իրենց Բեռլինում նորածինները տկոր են և պետք էր դրա համար մեր երկիրը գալ, ուստական գյուղերը թալանել... Մտածում ես, մտածում և ինքդ չես հավատում աշքերովդ տեսածներին... Ահա ես ձեզ պատմում եմ և նրանց անամոթ դեմքերը կանգնած են երեկակայությանս առաջ... խուզարկել վերջացրել են տունը, մառանն են մտնում: Հավաքում են ինչ որ կա, վերջին ձուն, վերջին բաժակ կաթը, կշիշոցով լցվում է տունը՝ բռնում են հավերին ու սագերին: Փետուրները ձյան փաթիլների պես խաղում են օդի մեջ ու հատակին նստում: Սիրտդ լցվում է, քունքերդ դողողողում են, վայրկյանը հուսահատական դործողության է մղում, բայց միտքդ զսպում է քեզ. դու ոչինչ անել չես կարող...

— Պա՛ն զինվորներ, հեռ սպա, մի՞թե դուք շփիտեք ինչ բան է խիզճը, մի՞թե ամօթի զգացումն անծանոթ է ձեզ...

Զեանում են թի չեն հասկանում: Ավտոմատն ուզդում են վրադ և ձեռքով իրենց բերանը ծածկում, թի՝ եթե շուս, կըսպանենք: Վախեցնելու համար չեն անում, այլ սպանում են — Բոլշեվիկ... դուշեկի՞կ... դո՛մ, դո՛ւմ... Եվ բոլշեկիկ են համարում յոթանասուն տարեկան պառավ կոչը, որ աստվածածնի անունով մա՞ս է ցանկանում նրանց և հայհոյում են ու՝ դո՛մ, դո՛ւմ, կրակում են նրա խորշոմներով պատաժ դեմքին... է՛, իմ սիրելիներ, ինչպե՞ս, ինչպե՞ս պատմեմ ձեզ... ծանր է հիշել այդ բոլորը... երբ հիշում ես, պատմում, նորից կրկնվում են այդ դժոխային սարսափիները... Հավատացնում էին, որ մեր կառավարության բանը պրծել է, որ Մոսկվան, Լենինգրադը գրավել են արդեն, որ գրավել են Բագում և մերոնց քշել են մինչև Ուրալ: Բայց երեխաներն ան-

տառներից դտնում, բերում էին մեր թոռքիկները: Կարդում ու հույսով սպասում էինք: Այսպես էր անցնում մեր կյանքը, մինչև հասալ այն օրը, որի մասին դուք խնդրում եք պատմել, ամենասարսափելի օրվա մասին...

Երիտասարդ կնոջ գեմքն այրվում էր: Նա ձեռքերով փակեց աշքերը և հանկարծ սկսեց հեկեկալ: Երիտասարդ, բայց վտիտ ուսերը ցնցվում էին: Տանտիրուհին մոտեցավ, գրկեց նրան ու փաղաքշական խոսքեր մրմնջաց.

— Հանգստացի՞ր, աղավնյա՞կս, Եկատերինա Ֆեոդորովնա՛,

խնայի՞ր քեզ, բավական է...

Մորը նայելով, հեկեկալ սկսեց նաև փոքրիկ տղան: Այն ժամանակ կինը գլուխը բարձրացրեց, թաշկինակը վերցրեց աշքերից ու գրկեց որդուն.

— Դու մի՛ լաց եղիր, Սլավի՛կ, գնա դուքս խաղա...

Չէր բաժանվում որդին մորից:

Ինձ նայելով՝ Եկատերինա Ֆեոդորովնան ասաց.

— Մենք գուցե մոռանանք, բայց մեր երեխաները երբեք չեն մոռանաւ. դա նրանց մանկության ամենածանր տպավորությունն է, որ երբեք չի մոռացվի. ամենաուժեղ զգացմունքն ատելությունը կլինի նրանց մեջ դեպի թշնամին... իմ ու ձեր մանկությունը չի տեսել այդպիսի սարսափիներ...

Այդ խոսքերից մի դող է անցնում իմ մարմնով: Ես ոչինչ չեմ ասում նրան: Հիշողությանս մեջ կրկնվում են սարսափիներն իմ մանկության օրերի... Լուսարաց է, մթնշաղ... բարբարոսներն հրացանի կոթերով ծեծում են մեր տան դուռը, շարդում ու վայրենի աղաղակներով տուն մտնում... Հեռավոր այն օրերից իմ ականջին են հասնում լաց, ճիշ, կրակոցներ... Մայրս ինձ գրկած փախչում է փողոցներով... Գոփում են ձիերի սմբակները... լըսվում է խրխինչ... Խորովվող ոչխարների ճենճերահոտը նստել է սարսափից արթնացող գյուղի վրա... Ապա՝ այդ սարսափիներից հեռու, խաղաղ մի անկյունում (շգփտեմ որտեղ է), մայրս իր գրկում օրորելով ինձ՝ պատմում է, թե ինչպես են կոտորել համիդիաները մերոնց... Իմ մանկությո՞նը չի տեսել թշնամու բարբարոսությունները... Ես նայում եմ կապուտաշյա Սլավիկին և թվում է ինձ, թե ես եմ դա, նորից փոքրացած, որ իմ բարի մայրն է այդ կինը և կարծես պատմությունը կրկնվել է...

Եկատերինա Ֆեոդորովնան պատմում է.

...Մի օր էլ մոտիկից լսվեց մերոնց հրետանային կրակը: Գերմանացիների մեջ նկատելի էր տագնապ, արագ իրարանցում: Հույսը շողաց մարդկանց հոգում, բայց նրանք իրենց ժամանեար թաքնում էին թշնամու աշքից: Երկրորդ օրը կրակն ավելի մոտեցավ: Գերմանական զորք էր տեղափոխվում դեպի կրակը: Անհանդատությունն ավելի աշքի ընկավ: Նույն օրը երեկոյան գյուղ մտան գերմանական նոր վաշտեր, կտրեցին բոլոր ճանապարհները և ամեն տուն մտնելով հրամայեցին.

— Տասնհինգ րոպեից հետո ճամբա պիտի ընկնեք գեղիքի թիկունք, կարող եք ձեզ հետ ուտելու բան վերցնել...

— Ինչո՞ւ համար, պան զինվորներ...

Խոսքի փոխարեն ավտոմատն էր պատասխանում: Առաջին րոպեներին սպանեցին մի քանի հոգու և սարսափ տարածեցին գյուղը:

— Սառնամանիք է, հե՛ռ սպա, երեխաները կմեռնեն ճանապարհին:

— Այդ դեպքում թող այստեղ մեռնեն, եթե չեք ուզում մեռնեն ճանապարհին, — պատասխանում է սպան:

Շայրի թաղն արդեն դատարկվում է: Մի կին հանկարծ ճշում է.

— Այրո՞ւմ են գյուղը, դյուզն այրո՞ւմ են...

...Գոռուն գոշունը, լաց ու կոծը, աղաղակը երկինք են հասնում: Այրվում է ծայրի թաղը: Ապա կրակը կամաց-կամաց մոտենում է կենտրոնին: Ավտոմատների հարվածներով հայրական օշախից գուրս արին նաև նկատերինա Ֆեոդորովնային իր քույր Մարիայի և երեխաների հետ: Հետո նրանք տեսան, թե ինչպես հիտերականները շշերով նավթ լցրին տան տախտակե շեմին, փայտաշեն կտուրին ու կրակ ավին: Բոցերը մեղմ, հանդարտ, ապա մեկեն լափեցին տունը, շեկ օղակի մեջ առան, հալեցին կտուրին նստած սառցաշերտերը: Եկատերինան ու Մարիան նայում էին հորենական վառվող տանը՝ քարացած, կարծես անտարձեր:

Դա նշան էր, որ մերոնք գալիս են: Թշնամին ավելի գաղան է դառնում, երբ զգում է իր թուլությունն ու հակառակորդի ուժը: Այրվող գոմերում խոնչում էին խոճկորները, կրակի միջից սրտա-

կեզեք մշակում էին կատունները... Այդպիսի պատկերներ միայն մեծ ոճագործի երևակայությունը կարող էր ստեղծագործելու բաց այն, ինչ տեղի ունեցավ հարևանների հետ, ավելի դիվային էր...

Երկու պառավ կին՝ Մատրիա Տիմոֆեենա Բարաշինսկայան և Մարֆա Միխայլովնա Ռիկովան, պառավ ու հիվանդ կանաքը, վերջին տարինների ընթացքում անշարժ ընկած մահականներին չէին կարող շունչ ու կյանք առնել և դեպի գերմանական թիկունքը քայլել: Հայոյեցին նրանց, անպատվեցին գերմանացիները, բայց անօգուտ էր: Այն ժամանակ, սպայի հրամանով զինվորները պառավ կանանց ոտքերից քարշ տալով հանեցին նրանց իրենց տներից ու դրսում ձյուների վրա թողեցին: Հունվարյան սառնամանիքին մեկ-երկու ժամից ավելի շդիմացան պառավները: Գալարվեցին ցրտի տակ ծերությունից ու հիվանդությունից տանջված նրանց մարմիններն ու շորացան: Կարծես կատարվեց բնության մեջ հասարակ, սովորական մի բան: Ոչ ոք չզարմացավ դրա վրա: Գյուղի բնակիչները շզարմացան, որովհետև նրանք ճանաշում էին արդեն թշնամուն և սպասում էին նրանից ամենինց, ոչ էլ իրենք, այդ բարբարոսությունների հեղինակները զարմացան, որովհետև դա առաջինը չէր, նրանց ոճիրների մեջ անշան մի դեպք էր դա:

Թշնամու դեմ որպես բարոյական վիթխարի մի ուժ, կանգնեց գյուղացի Նիկոլայ Ալեքսեևիշ Կոշկարյովը...

Երբ գերմանացիները նրա խրճիթը մտան ու հրամայեցին, որ դուրս գա՝ նա զիմեց իր ընտանիքի անդամներին և առանձին-առանձին նրանց իր մոտ կանշելով՝ համբուրեց ծերունական դողդողացող շրթունքներով ու ասաց.

— Գնա՞ք բարով, կենդանի մնացեք դուք ու պատմեցեք բոլորին, թե ինչ տեղի ունեցավ մեր գյուղում... իսկ ես կմնամ...

— Դուրս արի, ծերուկ, — գոռացին թշնամիները:

— Ես այստեղից դուրս չե՞մ գա...

— Դուրս չես գա՞՝ ինչպե՞ս թե.

— Սա իմ տունն է, ինքս եմ կառուցել, երբ երիտասարդ էի, որդիներս այստեղ են ծնվել, թոռնիկներս էլ. Հայրս այս տանն է մեռել, ես էլ կմեռնեմ այստեղ...

Խուսերեն խոսող սպան զարմացած լսում էր ծերունուն ու

ուշինչ չէր հասկանում: Ի՞նչ է ցանկանում նա: Ու ասաց նրան  
գերմանացի սպան իրոնիայով:

— Ի՞նչ է, ուզում ես այրվել քո օջախի մեջ...

— Ես շատ կորիզների մեջ եմ եղել և ծանր վիրքեր եմ ունեցել, — ասաց ծերունին:

Սպան ծիծաղեց:

— Լավ, դե մնա՞ քանի որ ուզում ես...

Ու կարգադրեց դուռը փակել նրա վրա:

Բոցերը լափեցին խրճիթը: Սև ծուխը դուրս հորդեց շարդարած լուսամուտներից: Պատուհանի առաջ երեաց ծերունու կերպարանքը: Գլուխը բաց: Գորշ, երկար մազերն ու ալեհներ միրուքը խառնվել էին ծխին: Զեռքերը բռունցք արած՝ նա սպանում ու հայցոյում էր թշնամուն: Սպան ու զինվորները դիտում էին տեսարանը: Բոցերը հասան ծերունուն, լափեցին մազերը... Բայց նա գեռ հայցոյում էր Տարաս Բուլբայի պես... նա ուժի ու վրեժիքներության մի ահավոր խորհրդանշան էր, այդ յոթանասունհինգամյա ռուս գյուղացին, զին զինվորն ու հերոսը... Առաստաղի գերանները փլվեցին և ծուխն ու բոցերը ծածկեցին նրա կերպարանքը...

— Սա առասպել չէ, — շարունակեց Եկատերինա Ֆեոդորովնան, — իրականություն է, մեր շրջանում, մեր հին գավառում ամենքը ճանաշում էին Նիկոլայ Ալեքսեևիշ Կոշկարյովին և արդեն լսել են նրա նահատակությունը... Բայց նա միակը չեղավ... գերմանացիներն իրենց տների մեջ այրեցին նաև ծերունի Կողլով եմելլան Եֆրեմովիշին և Բարադինսկի Վասիլի Իվանովիշին էլ: Եվ գուցե շատ ուրիշներին էլ, բայց այդ իրարանցման, հրի ու բոցի մեջ ես միայն այդքանը տեսա: Երբ թշնամին գուրս վոնդրի մեր երկրից, վերադառնան տարագրությունից մեր համագուլացիները, շատ բան պարզ կդառնա, որ մի մարդու աշքը դիտել չէր կարող...

...Ու այսպես, այրվում էր գյուղը, այրվում էին մարդիկ: Երեկո էր դառնում, իջնում էր մթնշաղը: Մի բանի կիլոմետրի վրա ճակատամարտ էր տեղի ունենում: Եկատերինա Ֆեոդորովնան գարմանում էր, թե ինչպես իրեն թողել են մեխանած իր տեղում: Մոտեցավ նրան մի զինվոր ու գոռաց.

— Ինչո՞ւ ես կանգնել, անմիջապես հեռացիր:

Բայց թվում էր, թե իրեն չեն դիմում։ Սթափվեց նա ծանր մղձավանջից, երբ զգաց գերմանացու բռունքի ծանր հարվածը։ Դիմքը շաղախավեց արյունով։ Լավեց Սլավիկի ճիշը։ Ոչինչ շպատափանեց նա գերմանացուն։ Ուզում էր ապրել, ուզում էր տեսնել ազատ հայրենիքի մարդկանց ու պատմել նրանց, այո, որքան ճիշում է, ոչինչ շպատափանեց։ Բայց ո՞չ, մոռացել է նա, Սլավիկը լավ է ճիշում, որ մայրիկն ասաց. «բանդիտնե՞ր, սրիկանե՞ր»...

...Որդուն գիրկն առնելով, երիտասարդ կինը վազեց գեղի ձորակը, դեպի այրվող տները։ Գերմանացի զինվորը հեռացավ, կարծելով, թե նա գեղի տարադրության ճամբան է վազում։ Եկատերինա Ֆեոդորովնան իրեն նետեց ձորակում կուտակված ծխի մեջ, մոտեցավ այրվող մի տան ու ծածկվեց փոշու ու կայծերի տակ։

Աղջ գիշեր այրվում էր գյուղը։ Իրենց տան մոտից լսում էին Ֆեոդորովնան կովի ծանոթ, ծանր բառաշը... Բացվեց լուսը, բայց նա երեխայի հետ դեռ չէր շարժվում տեղից։ Լուսը բացվեց և նրան թվում էր, թե ծանր մի երազից է արթնանում, դաժան, կոշմարային մի երազից, որ ահա պիտի փարատվի մշողի նման։—Արեք շողում էր երկնքից և գորշ ծխի պալարների միջից շողերը նրան էին հասնում։ Արեկն ու ականները պայթում էին շուրջը և վախի ոչ մի զգացում չուներ նա։ Մերոնց կրակն էր դա, թող շատ կրակեն, շատ կրակեն թշնամու վրա և թող ինքն էլ ընկնի մեր կրակից, միայն պատժվի թշնամին։ Հետո հասան նրան ուստիրեն, հարազատ խոսքեր, լսեց նա հուժկու ուսան, լսեց Ստալին, Հայրենիքի բառերը... և ուժ հավաքելով՝ դուրս եկավ թաքստոցից և ընդառաջ վազեց...

— Ահա՛ այն բոլորը, ինչ տեղի ունեցավ, — ավարտեց իր պատմությունը երիտասարդ կինը, — ի՞նչ կարող են ասել իմ կցկտուր խոսքերը, որ խեղդվում են կոկորդում։ Եվ առհասարակ մի՛թե մարդու լեզուն կարող է նկարագրել այն ահավոր պատկերները, որ տեսնում է նրա աշքը... Դուք տեսաք մեր գյուղը. մեր մեծ, հարուստ գյուղը, որ ուներ 7000 բնակիչ, հիմա փոշի ու մոխիր է դարձել, այրվեցին ու փոշի դարձան ծանոթ ու հարազատ մարդկանց ուսկորները և հազար հազար բազցը, նվիրական հիշատակներ, այրվեցին մեր բոլոր զգացմունքները և միայն վրեժ-

կարնդրության գդացմունքը մնաց ավելի ուժեղացած, ավելի բորբոքված... դա իմ հայրենական Կրուտոյ կող գյուղն էր, ես հետոք քաղաքի բնակչուհի էի դարձել, իմ ընտանիքի օրրանը թելգորոգ քաղաքն էր... Բայց մի՞թե նրա դրությունն էլ նույնը չի թշնամու վայրենություններից...

Լոեց երիտասարդ կինը: Մենք էլ էինք լուս: Ոչ մի հարց տալու պետք չկար: Եթե սիրող գեռ չի դատարկել՝ ինքը կխոսի, կշարունակի իր պատմությունը: Ու ահա, նա կրկին բարձրացնում է գլուխը, այս անգամ նայում ուղիղ իմ աշքերին:

— Դուք կին ու երեխաներ, քույրեր ու մայրեր ունե՞ք...

— Այո, և՛ քույրեր, և՛ կին ու երեխա...

— Իհարկե սիրում եք բոլորին էլ... Ավելորդ է իմ հարցը... ինչպես կարո՞ղ եք շսիրել... սիրում եք և չէիք ցանկանա, որ նրանք էլ տեսնեին այն սարսափները, որ ես տեսա, ոչինչ մի՛ խնայեք թշնամուն ոչնչացնելու համար... Ես միայն ձեզ չեմ ասում դա... բոլորին... Ես ինքս էլ զենք վերցրի և պարտիզանական խմբերի. Հետ պիտի գործեմ թշնամու թիկունքում, ուրիշների, թեկուզ հարազատ եղբոր ձեռքով կատարված վրեժի հատուցումն ինձ քիչ կմխիթարի... կոչնչացնենք թշնամուն և դարձյալ կապրենք մեր ազատ հայրենիքում... Այրվել են մեր տները, ոչինչ, կապրենք մենք մեր պարզ, կապույտ երկնակամարի տակ, ոռասական բաց երկնքի տակ և կվերաշինենք մեր երկիրը...

### 3.

...Քեզ եմ պատմում այս բոլորը, իմ թանկագին, իմ սիրելի՝ հայ ժողովուրդ, իմ ծնո՞ղ մայր, քեզ, որ շատ ես տեսել բռնակալներ ու բարբարոսներ: Իմացի՞ր, որ քո աշխատավոր որդիներին տեղահան անող Շահ Արասը, քո զավակներին սրախողիող անող սովորանները, քո գյուղերում ու քաղաքներում դիակի կույտեր կանգնեցնող ենվրեն ու Թալիխաթը կրկին սուր են բարձրացրել քո եղբայրների ու քեզ վրա, այս անգամ եվրոպացու կուտյումի մեջ ծածկելով իրենց բարբարոսի ժանտ հոգին ու այլանդակ կերպարանքը: Թանկագի՞ն իմ ժողովուրդ, իմ եղբայրնե՞ր ու քույրե՞ր, սովետական հայրենասեր պատանինե՞ր, թող ձեզ հասնեն ոռւա ձեր կանանց՝ Մատրինա Տիմոֆեենա Բարաշինսկայի և Մարֆա Միխայլովնա Ռիկովայի հառաշանքները: Նրանց որդի-

ները վրեժիսնդիր կլինեն իրենց մայրերի համար՝ մենք ենք նրանց որդիները։ Գուցե հենց նա էր որդին այդ մայրերից մեկն ու մեկի, որ այրվող գյուղին նայելով կանչեց։ «Նրանք այրում են մեր հայրենիքը... Վրեժի այդ խոսքերը թող հնշեն բոլորի՝ մեծի ու փոքրի սրտում։ Թանկագի՛ն իմ ժողովուրդ, հայ հերոսակա՛ն ազգ, որ դիմացար դարերի արհավիրքներին, որ ստքի ես կանգնած կրկին քո պատով ու ազատության համար, թող նահատակ նիկուլայ Ալեքսեևիչ Կոչկարյովի ողջակիզվող կերպարանքը՝ ծխի ու բոցերի մեջ կանգնի քո աշքերի առաջ և լցնի քո բոլոր որդիների սիրտն այն հղոր ուժով, որ կոչվում է վեճ»։

...Մարտի վերջին օրերն են։ Հալվում է ձյունը։ Դաշտերն ու անտառները բուրում են գարնան բույրերով...

Հալվող ձյունը առուներ է դառնում ու խոխոչում։ Անտառներում երգում են ճնճղուկները, գեղձանիկներ էլ այսօր հայտնվեցին։ Մի պահ ականջ ևմ դնում նրանց երգին... Դա արթնացող բնությունն է, գարունը... Մոտիկից սրոտում են ականանետերը և ճնճղուկների երգը լուսմ է... պապանձվում է անտառը... Թո՛ղ ուժգին հնչի ռազմի համերգը, բնության ձայներին մենք հետո ականջ կդնենք, թող ավելի լայն բացվի մեր ճամբան դեպի արևմուտք։ Մեր ուղեկիցն է արևը։ Նա էլ է դեպի արևմուտք գնում։ Եվ նույնքան հաստատում է մեր ընթացքը, ինչպես արեգական ճանապարհը դեպի արևմուտք... մեր ուժը տիեզերքի օրենքների մեջ է, մերը՝ մեր հոգու... նրա մեջ եռում է հավիտեական հրահեղուկը, մեր սրտի մեջ՝ վրեժի ուժը։

Մարտ, 1942 թ.

Գործող Քանակ

## ՈՐԴՈՒՄ ՎԵՐԱԴԱՐՁԸ

...Կապույտ Հորիզոնին նկատվեց եկեղեցու ծանոթ գմբեթը և ողջ մանկությունն իր քաղցր պատկերներով եկավ տանկի հրամանատարի աշքերի առաջ, հստակ, պարզ մանրամասնություններով, ինչպես արեկի տակ շողացող դաշտերն աշնան այս առավոտին: Կարծես երեկ էր, որ բարձրանում էր նա այնտեղ աղավնիներին կանչելու, որ պտույտ էին գործում սուր վեղարի շուրջը, կապույտ փետուրներ թողնելով օդի մեջ, թեհրով քնքշորեն խփում նրա դեմքին և հեռանում կրկին, որ էլի ետ գան, երբ որ կանչի նա: Անցել էին այդ օրերից տասը երկար տարիներ... Բայց կարծես երեկ էր, որ գարնան քննություններից հետո մարզային կենտրոնից տուն վերադառնալով ծանոթ դաշտերով, կարոտով ու անհամբերությամբ բլուրի վրա բարձրացավ նայելու հայրենի գյուղաքաղաքին և առաջինը նրան ողջունեց նույն այս գմբեթը, փայլվիկելով Հունիսյան արեկի շողբերից:

Արվարձաններից բարձրանում էր գորշ ծուխն ու ծավալվում քաղաքի վրա, բոցե լնգուները զուրս էին սոզում մեծ շենքերի լուսամուտներից, խամրող կայծեր ցրելով ծիս մութ զանգվածի մեջ: Թվում էր թե վասվում է նրա մանկությունը բոլոր սուրբ ու նվիրական հիշատակներով: Երբեք հարազատ քաղաքն այդքան մոտիկ, միաժամանակ այդքան հեռավոր շեր թվացել: Այնտեղ նա թողել էր իր կյանքի կեսից ավելին, ծեր ծնողներին՝ որոնց դեմքերի սիրելի խորշոմները ծածկվում էին դառը ծխով նրա երեակայության մեջ, սիրելի ընկերուհուն, որ ողջակիզվում էր այդ բոցերի մեջ: Տանկիստ նշանառուն այդ բոլորի համար մեղավոր էր զգում իրեն, նրան թվում էր, թե ինքն է լքել հարազատներին, թողել նրանց թշնամու ձեռքը, դժոխային տանշանքների մեջ:

Տանկն սպասում էր իր թաքստոցում։ Հրետանային կրակը գեռ շարունակվում էր։ Դղրդում էին երկինքն ու երկիրը խացնող աղմուկներով, արձագանքը երկար ու անվերջանալի կրկնվում էր, կարծես գալով հողի խորը ընդերքներից։ Բայց նա ոչինչ չէր լսում։ Բութ մատի արմատով տրորտում էր քունքերը, թեքերով սըրբում ճակատի քրտինքը, աղի քրտինքը, որ հոսում էր նրա աշ-քերի մեջ ու մշուշոտում տեսողությունը, շնչառությունը գնալով ավելի ու ավելի ծանրանում էր, շնայած արձակել էր օժիքի կո-ճակները։

— Ե՞րբ պետք է վերջացնի հրետանին... ինչո՞ւ են այսքան ուշացնում, —խոսում էր նա կարծես ինքն իր հետ, հանգիստ, բայց ներվային, դողացող ձայնով։ Ընկերները գիտեին նրա հուզմունքի պատճառը և այսօր արտակարդ քնքուց էին վարվում նրա հետ։ Փնդացրողն ասաց.

— Ընկեր հրամանատար, մի հուզվեք, հանգիս եղեք, մեր հերթն էլ կգա...

Անցավ երկու ժամ, անսահման մի հավիտենականություն, ծանր ու հոգեմաշ։ Երկու ժամ՝ շարունակ դիտեց նա հայրենի քա-ղաքի այրվելը, ատամներն ամուր իրար սեղմած, անհամբե-րությունից շարունակ ու շարունակ անհանգիստ շարժումներ անելով, մտքով լրացնելով այն դաժան պատկերը, որ կատար-վում էր լույս օրվա մեջ, մտքով տեսնելով մանրամասնություն-ներ քաղաքի տներում ու փողոցներում, որ չէին երևում հեռա-վորությունից։

Հնչեց ազդանշանը։ Հրթիւնները սպիտակ լույս արձակելով փշրվեցին օդի մեջ։ Տանկերը վագրերի նման փնչոցով դուրս ցատկեցին թփուտներից ու առաջ նետվեցին գլխապտույտ արա-գությամբ։ Պայթեցին առաջին ականները խոյացող տանկի առաջ, սուլեցին գնդակները՝ թշնամու հակատանկային գենքերից։

— Դեպի աջ, ուղիղ խրամատների վրա, —հրամայեց նա մե-րենան վարողին։ Տանկը շուռ եկավ և ուղղություն վերցրեց գեպի գերմանական խրամատները։ Տարածությունը կարձանում էր ա-կընթարթերով։ Դիրքերից դուրս եկան մի քանի գերմանացի։ Աշտա-րակի գնդացրողդի գիպուկ համազարկովներնք փուլեցին գետնին, ինչպես փշերը գերանդու հարվածից։ Տանկը շուռ եկավ դիրքերի մեջ, պտույտներ գործեց, տրորելով իր տակ թշնամու գինվորներին,

արյուն, ոսկոր ու հող խառնելով իրար ու կրկին սլացավ առաջ: Ահա քաղաքի առաջին միացող տները: Թնդանոթի նշանառուի աշքի առջեռվ, օպտիկական նշանացույցի տարկով անցնում էին ծխից սեացած պատեր, զարդումված աղյուսներ, կոտրաված ու այրված մահճակալներ՝ մոխիրների մեջ, խափանված տանկեր սև սվաստիկաներով և փոսեր, փոսեր... Գործողության արագությունը նրան մտածելու ու հիշելու ժամանակ չեր տալիս: Տանկը կանգնում էր երբեմն միայն մի վայրկյան, հրամանատարը թնդանոթից կրակում էր փախչող խմբերի մեջ և հրամայում լցնողին.

— Արա՛գ-արա՛գ...

Ապա հրամայում մերենավարին,

— Առա՛ջ, ուղի՛դ...

Ետքից և աջ ու ձախ կողմերից գալիս էին ուրիշ տանկեր: Գնալով ավելի ու ավելի էր խստանում հակառակորդի հրետանու կրակը: Արկերը պայթում էին խմբերով, բեկորները թափում էին տանկի վրա:

Ահա փողոցի սկիզբը: Ռադիստը հայտնում է,

— Փողոցի սկիզբը ականապատված է:

— Ծուռ տուր դեպի ձախ,—հրամայում է տանկի պետը, — այնտեղից ճանապարհ կա նույն այս փողոցը մտնելու:

Տանկը շուռ է գալիս: Ուղիղ դեպի եկեղեցին: Ռադիստը հայտնում է,

— Եկեղեցու գմբեթից ականանետներն ու գնդացիրները կրակով կանփնեցնում են մեր հետեւակին:

— Եկեղեցո՞ւց, —հարցնում է պետն ու հրամայում, —կանգնի՛ր այստեղ, այս պատի տակ: Տանկը կանգ է առնում: Ուղիղ նշանառությամբ հրանոթի կրակն ուղղում է նա գմբեթին: Առաջին և երկրորդ արկերը վրիպում են: Գմբեթը օրորվում է նրա աշքին, երերում ու կրկին մնում է կանգուն: Նա նորից հրամայում է լցնողին.

— Ի՞նչ ես մեռածի նման շարժվում...

Այն հեռու, երազ օրերին նա քարեր էր նետում նույն այս գմբեթի նեղլիկ լուսամուտներին թառած աղավնիների վրա և միշտ լսում մոր հանդիմանություններն այդ շարությունների համար:

— Ինչո՞ւ հանգիստ շես տալիս այդ անմեղ թռչուններին, փուլ տղա, անպիտան...

Այդ ամենն հիշելու ժամանակ շկար: Անմեղ թռչունների տեղում թառել էին այսօր գերմանացիները, հայրենի գյուղերն ու քաղաքներն հրկիզողները...

Հրանոթի փողից դուրս է փշում սպիտակ բոցը, կրակոցը թնդում է ու վայրի հնապես շուռ է գալիս եկեղեցու վեղարը:

— Լցնե՞լ — գոռում է հրամանատարը, — նույն նշանառությունը պահած: — Մեր տանկը չի դավաճանի, լցնե՞լ...

Երկրորդ անգամ դուրս է ժայթքում բոցը տանկի հրափողի բերանից և շուռ է գալիս ողջ գմբեթը, բարձրանում է խիտ դեղին ծուխ և փոշով ծածկվում է շենքը:

Բայց կրակը շարունակում է նա, արկերը մեկը մյուսի ետևից պայթում են փլվող շենքի ծխի ու փոշու մեջ:

— Չեք պատվի ոչ մեկդ այստեղից, շեք աղատվի...

Գլխավոր մուտքից իրար ետևից ծխի ու փոշու միջից դուրս են վազում կուացած կերպարանքներ, Գերմանացիներն են, այո՛, պարզ երեսում է:

— Գնդացրո՞րդ, կրա՞կ սողուններին, երկար համազարկեալով...

Ճարճատում է աշտարակի գնդացիրը՝ շրնդհատվող համադարկերով: Ընկնում են մի քանիսը, մյուսները փախշում են դեպի գլխավոր փողոցը: Ետևից հասնում են մյուս տանկերը:

— Առա՞ջ դեպի ձախ, մտնել գլխավոր փողոցը...

Մեքենան վարողն ակնթարթային արագությամբ կատարում է հրամանը:

Ահա գլխավոր փողոցը... ավերված ու քարուքանդ:

Ահեղ մեքենան հասնում է փախչող գերմանացիների ետևից, իր տակն առնում նրանց ու պտույտ գործում տեղում: Ազ կողմից ձեռքի նամակներ են նետում, որոնք պայթում են տանկի առաջ, մայթերի մոտ ու մանր բեկորներ ցրում: Ավտոմատի գընդակները կպշում են տանկի զրահին ու թափվում շուրջը փղի վրա հարձակվող մեղրաճանճերի նման: Գնդացրի փողը թեքվում է դեպի աջ ու ճարճատելով պատասխանում թշնամուն: Լուսամուտների շրջանակների վրա, աղյուսների վրա առաջանում են

կարմիր կետեր: Ամբություններից փողոց են նետվում գերմանացիների խուճապահար խմբեր և ավտոմատները նետելով, փախչում նրա երկարությամբ:

Մայթերի ու ձանապարհների վրա փովում են դիակներ: Մանոթ փողոց, ծանոթ, հարազատ մայթեր: Կմտածե՞ր տանկիստը երբեմն, որ մի օր թշնամու արյունով պիտի լվա այն մայթերը, որոնցով անցել է սիրային երգեր սովելով մի քանի տարի առաջ ամռան լուսնյակ գիշերներին, երբ արձակուրդ էր եկել հայրենի քաղաքը: Կմտածե՞ր, որ իր ձեռքով թշնամու դիակներ կփռվեն այն եղենու բնի մոտ, որ կանգնում էր Մարիամի հետ այնքան երկա՞ր, երկա՞ր, նրա փոքրիկ փափուկ թաթիկները իր ափերի մեջ առնելով, այն պահերին, երբ խոսք չէր գտնում նրան ասելու և երբ լուսթյունն այնքան հաճելի էր ու այնքան լի մաքուր զգացմունքներով: Եվ ո՞ւր է նա հիմա, Մարիան, արդյոք լի՛ նայում նրան որևէ ներքնահարկի լուսամուտից, սպասո՞ւմ է նա իր գալուն և գիտե՞ արդյոք, որ քաղաք մտած առաջին ազատարար տանկի հրամանատարը Ստյոպան է...

Տանկը աջ ու ձախ կրակ տեղալով անցնում է առաջ, մաքրելով փողոցը: Հանկարծ այդ վտանգավոր վայրկյանին ձանապարհին բուանում է մի պատանի ու ձեռքերը վեր պարզում:

— Կանգնե՞լ, — գոռում է հրամանատարը ցնցվելով:

Պատանին մի քանի քայլ առաջ է վազում՝ այլայլված ու շնչակտուր և կանչում է սուր ձայնով: Նա դիսարաց է, ցրիվ, շեկ մազերով, և գեմքին խիստ սարսափ կա նստած:

— Փողոցի վերջում, աջ անկյունի տան մեջ հակատանկային հրանոթ է զրված...

Հրամանատարը սրբում է ճակատը թեքով և կանչում պատանուն:

— Վասիլեների՞ տանը, Մի՛տկա...

Պատանու աշքերը չովում են անակնկալից ու զարմանքից: Նա շի էլ տեսնում, թե ովէ կանչում իրեն, նա շշմած է, որ իրեն ճանաշում են: Տանկը թրթուռավոր անիվների դղրդոցով առաջ է նետվում թողնելով իր ետևից աղմուկ ու փոշի:

— Թեքվել աջ, և կանգ առնել փողոցի ծայրին, այնտեղից վասիլեների տունը լավ է երկում...

Վասիլիների տունը... ահա նա կանգնած է օպտիկական-նշանացույցի վրա: Տանկի անձնակազմը չի կռահում, որ դա նույնիրենց լեյտենանտի՝ Ստեղան Վասիլիի տունն է, իրենց տանկի հրամանատարի տունը:

Իսկ այդ տնից արդեն թշնամին կրակ էր բացում քաղաքին ընդհուպ մոտեցած մեր հետևակի վրա:

Ընկերները նկատեցին, որ դողում էին նրա ձեռքերը, նկատեցին, որ աշքերը կարմրել էին, բիբերը լայնացել, կուրծքը բարձրանում ու իջնում էր ծանր շնչառությունից, փողոցներն ու տները օրորվում էին հսկայական նավերի պես, որ խարիսխներ են նետել ալեկոծված ծովի վրա: Զնկատեցին ընկերները նաև արտասուրի ծանր կաթիլները, որ գլորվեցին հրամանատարի աշքերից, խառնվելով փոշախառն քրտինքի հետ: Պայթեցին առաջին, երկրորդ, երրորդ կրակոցները և թշնամին լոեց... Փուլ եկավ մանկության օրրանը...

— Առաջ, — հրամայեց լեյտենանտը տենդային դողոցից նվազած ձայնով: Փլված տան շուրջը տանկը պտույտներ գործեց գնդացրի կրակով սանրելով իր ճանապարհը և դուրս եկավ զրւխավոր փողոցի վրա հակառակ ծայրից: Մյուս ծայրին երևացին մյուս տանկերը և նրանց ետևից ավտոմատավոր հետևակայինները:

— Նու, արդեն մերն է քաղաքը...

Բայց հենց այդ բոպեին տեղի ունեցավ այն ողբերգությունը, որի լուրը ցնցեց քաղաքի ողջ մնացած բոլոր բնակիչներին, որի պատմությունը արցունքներ է պոկում նույնիսկ պատերազմի կրակների մեջ կոպտացած, հազարավոր մահեր տեսած մարտիկների աշքերից, որի մասին հիշելիս անդամ՝ արյունդ դողում է երակներիդ մեջ: Ունաց հեռվից եկող թշնամական հեռածիգ թնդանոթի սրբը, սուրեց անապատի թույն կուտակած օձի նման ու պայթեց տանկի աշտարակին: Մեքենան կես պտույտ գործեց ու անշարժացավ խոլական կովի մեջ ճակատից խփված հերոսի նման: Ու ամեն ինչ լոեց մի պահ: Ներքնահարկից դուրս եկան մի քանի ծերունի, կանայք, աղջիկներ ու պատանիներ,

տանկը շրջապատեցին վրա հասած հետևակայինները։ Մի կորամեջք, միրուբավոր ծերունի, հյուծված ու դեղնաղեմ, ձեռքն օղի մեջ թափահարելով, կանչում էր.

— Քաղաքացինե՞ր, բարի մարդիկ, նրանք առաջինը քաղաք-մտան; առաջինը...

Տանկից գուրս բերին նահատակված հերոսների դիախները։ Գնդացրող-ռազիստ իվան Սորոկինը ողջ էր դեռ։ Նա աշքերը բացեց, սառը հայացքով նայեց շուրջն ու շշնչաց.

— Ո՞վ է ճանաշում Ստեպան Վասիլեին, նա այս քաղաքից է, մեր լեյտենանտը...

Միրուբավոր ծերունին փլվեց մեքենայի սառը կողին.

— Ի՞նչ ասացիք, ի՞նչ...

Ամեն ինչ պարզ էր։ Ցույց տվեցին նրան լեյտենանտի դիակը։ Մոտեցավ, անլաց համբուրեց որդու ճակատը, ապա տեսնելով, որ պառավին էլ է գալիս գեղի խմբված բազմությունը, ընդառաջ գնաց նրան, գրկեց և ետ դարձնելով քնքանքով, ասաց.

— Կլավդիա, աղավնյակս, ետ գնանք ներքնահարկ, կարիք չկա որ դու նայես սպանվածներին, գնանք...

Երբ ծերունին՝ Լեվ Վասիլեկը Վասիլեկ կրկին ետ դարձավ զոհված որդու դիակի մոտ, ծերունիների, կանանց ու երեխաների, բուլոր զինվորների ու սպաների աշքերին արտասուբներ տեսավ։ Դողդողացող ձեռքը կրկին օդի մեջ թափահարելով, նա կանչեց.

— Արտասուբներ պիտք չեն, քաղաքացիներ, բարի մարդիկ, նա մեռավ, որպեսզի ապրի Ռուսիան...

Աւ ձեռքը բռունցք շինելով, ներվայնորեն թափահարեց, վերջին անգամ ավելացնելով.

— Ի՞մ որդին տուն վերադարձավ որպես իսկական հերոս...

Նրա մերկացած թերին երեսում էին կապույտ, հաստ երակները։ Շերունին նման էր մի ահեղ արձանի, ահեղ մարմնացում տառապանքի, ուժի ու վրեժինդրության։

Հերոսին թաղեցին զինվորական պատվով։ Լեյտենանտի դադաղի վրա հանգչում էին աշնան դաշտային ծաղիկները։ Հերոս որդու մոտ կանգնել էին Լեվ և Կլավդիա Վասիլեները՝ խորին ակնածությամբ, հպարտ իրենց որդու դյուցազնությամբ և գլուխ-

ները հակած՝ անպարփակ վշտի ծանրության տակ: Իսկ տանկը կանգնած մնաց քաղաքի գլխավոր փողոցի ծայրին, վիրավոր, ջարդված ճակատով, որպես պողպատե հուշարձան ազատագրության մեծ ճակատամարտերի: Եվ հեռավոր գյուղերից ու ավաններից և զինվորական կայազորներից մարդիկ խմբերով գալիս էին նրան նայելու և ծաղիկներ էին դնում նրա պողպատե հեցալի գերեզմանին...

Նոյեմբեր, 1943 թ.

Դարձող Բանակ

## ԿՅԱՆՔԻ ՀԱՂԹԱԾՆԱԿԲ

Նրանք ծնվել էին իրարից հեռու երկնակամարների տակ, հոգով ու մարմնով սնվել էին տարբեր օդ ու ջրով:

Մակայն ճակատագրով նրանց վիճակված էր հանդիպել իրար գեմ առ դեմ:

Դա կյանքի անհրաժեշտությունն էր:

Երբ Ադրբեջանի Եվլախ փոքրիկ քաղաքում ախսախկալ ծերումիներն եկան շնորհավորելու այգեպան Մահմեդին նրա տղա զավակի ծնունդը, ցանկանալով, որ նորածինն աճի, ազնիվ իգիթ դառնա, իսկ պիոներուհիները շողշողալով ուրախությունից, իրար գրկից խլելով նորածնին, խնդրեցին Մինավեր մայրիկին, որ նա տղային կոչի ժողովրդական աղատագրության առաջնորդներից մեկի անունով, նույն այդ ժամանակ Գերմանիայի Լայպցիկ քաղաքում հինգ տարեկան Հայնց Բեյնգրենախին հազցըել էին շագանակագույն բաճկոն՝ ոև արծվի նկարը կրծքի գրպանին, ձեռքը սուր տվել և սովորեցնում էին ճյուղքեր շամփրել, խրտվիլակներ խոցել:

Այդպես սկսվեց կյանքը մեկի և մյուսի համար: Խսկ մի քանի տարի հետո, երբ Եվլախի գեղեցիկ այգիներում խնձորենու և ծիրանիների տակ մանուկ Յակուբն առաջին գիրքն սկսեց կարդալ, Լայպցիկ քաղաքում Հայնցն արդեն ճանաշում էր իր քաղաքի բոլոր փողոցների վրա եղող հասարակաց տները և դավերի մեջ էր մտնում պոռնիկների հետ:

Յակուբի համար կյանքի ամեն օրը կախարդական գրքի մի հետաքրքրական էջ էր: Հայրերի զրույցները, բնության գույները, գարունն իր ծաղիկներով, ամառն իր մրգերով, աշունն իր առատությամբ, հողմը զով լեռներում, տապը հովիտներում,—այդ

ամենը նրա պատանեկան հոգին լցնում էին հետաքրքրությամբ ու սիրով դեպի կյանքն ու բնությունը: Պատանությանն անծանոթ են փիլիսոփայական խորհրդածությունները: Նա աճում ու ծաղկում է, ինչպես ինքը բնությունը: Երջապատը պատանուն թվում էր սրանչելի ու կատարյալ: Նա ոչինչ ավելին չէր երազում, քան այն, որ ստեղծված էր անհայտ ձեռքերով: Բանաստեղծ նիգամու «Գյուլիստանը», «Լելին ու Մեծնունը» և այն բոլոր դեղեցիկ ավանդությունները, որոնց մեջ կային այնքան լավ երգեր սոխակի ու վարդի սիրո մասին, լրացնում էին կյանքի գեղեցկությունը նրա երեակացության մեջ: Նա մտքով երբեմն թափառում էր նաև սորիշ երկրներում՝ իր համար անծանոթ ու անշոշափելի: Նա գիտեր, որ Գերմանիայում եղել է Գյոթի, որը նիգամու պես դյութական ոտանավորներ ունի գրած սիրո մասին, բայց շփտեր, որ եղել է նաև մարդատյաց փիլիսոփա նիցշե, որն արհամարհանը է քարոզել դեպի մարդն ու ժողովուրդները:

Տղան ցանկանում էր շատ բան իմանալ և երեխ հենց դրա համար էլ լուսկյաց ու ինքնամփոփի էր, բայց սիրալիր դեպի ընկերները և ասպետաբար բարի դեպի աղջիկները: Հարեւանները նրա մասին ասում էին. «Ճշնոցի վրա էլ ոտք չի դնում, այնքան քնքուշ սիրո ունի»... Յակուրը մարդկանցից ոչ մի վատ բան չէր սպասում: Նրանք պատկերանում էին իրեն այնպես, ինչպես որ ինքն էր:

Իսկ նույն այդ ժամանակ Լայպցիգում Հայնցն ամեն օր տուր ու դմիոցի մեջ էր լինում, գրանում պահում էր սուր դանակներ, ծեծում էր հասարակաց աղջիկներին «դավաճանության» համար և հաճախ տուն էր գալիս՝ դեմքին ուռուցքներ և կապարձեր:

Յակուրի շրթունքները երբեք սուստ խոսք չէին արտասանում: Նա մեծանում էր քայլելով ազնվության ու ճշմարտության ճամբով: Իսկ Հայնցն ամեն քայլափոխին ստում էր ու խարում, պարծենում մոր առաջ, շողոքորթում հորը, բամբասում դպրոցական ընկերություններին:

«Գյուլիստանը» պատմում էր Յակուրին վսեմ սիրո մասին, անձնագոհության և սրբազան ուխտին հավատարիմ լինելու մասին: Իսկ նիցշեն հավատացնում էր Հայնցին, որ մարդն իր ծննդյան օրից մեղավոր է աշխարհի վրա, որ թուլլը հանցավոր

է կյանքում, և ուժեղը պետք է խորտակի նրան, որ դա նույնիսկ ուժեղ «գերմարդու» պարտքն է:

Դպրոցը, ուսուցիչներն ու գրքերը Յակուբին ասում էին, որ եղել են ու կան բռնակալներ, որոնք խլում են մարդու և ժողովուրդների ազատ աշխատանքը, պատմում էին, որ միայն Սովորական Միության մեջ են ժողովուրդներն ազատ ու իրավահավասար եղբայրներ, որ նրանք պետք է պատրաստ լինեն թշնամական մութ ուժերի ներխուժման դեմ: Նա մտքով ընկալում էր այդ, բայց չէր կարծում, թե այդ օրը կգա այնքան շուտ, որ հենց ինքը պիտի դնենք վերցնի: Նա շատ էր հափշտակված գրերով, բնությամբ և հովվական կյանքով՝ կանաչ լեռներում, սառն աղբյուրների ու ջրվեժների եղերքներին և դրա համար, ել չէր պատրաստվում պատերազմի:

Իսկ այդ ժամանակ Լայպցիկ քաղաքում «նացիոնալ-պոցիալիստական» երիտասարդության ժողովներում Հայնցի ցուցամատը դնում էին Յակուբի հայրենիքի սրտի՝ թարու քաղաքի վրա և ասում էին նրան. «Դու պետք է այս հարուստ նավթահանքերը նվաճես մեծ Գերմանիայի համար»:

Նրբ Յակուբը վերջին առարկայի ավարտական քննությունն էր տալիս դպրոցում, Հայնցն արդեն տանկերի վրա, ձեռքին ավտոմատ, դոփում էր եվրոպական երկրները, սպանում ծերերին ու երեխաներին, առևանգում և բռնաբարում շահել աղջիկներին..դ

Այո՛, նրանք պետք է հանդիպեին: Դա պատմական անհրաժշտություն էր:

Հունիսյան մի երեկո, սրտի թրթիռով ու դողով, որ մի անգամ է մարդ ունենում իր կյանքում, Յակուբը գաղտնի ժամադրության գնաց սիրած աղջկա մոտ: Նա աղջկան ոչ մի գեղիցիկ խոսք շասաց սիրո մասին, հանգիստավոր երդումներ շտվեց նրան: Աղջկա առաջ երդվում է նա, ով վստահ չէ, որ հաստատուն կլինի սիրո մեջ: Յակուբը պոկեց մի վարդ, կարմիր ինչպես արյունը, և տվեց սիրած աղջկան: Դա նրա սիրտն էր, նրա սերն ու խոստովանությունը: Առաջին համբույրը, բալենու այգին, խաղաղ երեկոն ողջ տիեզերքը լցրեցին սիրով, բարությամբ ու գեղեցկությամբ: Աղջ գիշեր նա քնել շկարողացավ իրեն համակած երանությունից: Ա՛վ կարող էր նրանից խլել այդ գգացմունքները, այդ սերն ու այդ երջանկությունը: Նա այդ մասին չէր կարող

մտածել: Լույսը բացվում էր: Լուսամուտներից երեսում էին կապույտ լեռների ուրվագծերը: Հարավի արևի ճառագայթները բոցերի պես թափանցեցին սենյակի ներսը...

Ի՞նչ իմանար նա, որ Լայպցիգ քաղաքի Հայնցը, զինված մինչև ատամները, ուսերին սպայական ուսադիրներ, կրծքին երկաթե խաչ, ներս է խուժել իր Հայրենիքի սահմաններից, որպես գող, հենց այդ առավոտ՝ նույն այն վայրկյաններին, երբ նրա շրթումքների վրա գեռ վառվում էր առաջին համբույրի կրակը...

Եվ Յակուբը, գեռ կանաչ պատանի, գենք առավ ձեռքը ու ուզմի դաշտ մեկնեց, հոգում՝ ծերացած մոր գեմքի խորշումներն ու թխահոն աղջկա պատկերը, աշքերի առաջ՝ Հայրենիքի անձայրածիր դաշտերը:

Պատմել, թե ինչ տառապանքներ կրեց նա, զինվորական դաժան կյանքի ինչ ճանապարհներ անցավ: Ինչի՞ համար: Ամեն մարդ գիտի, թե ի՞նչ բան է պատերազմը: Նա նահանջում էր՝ սրբելով արտասուրները, որպես արևելքցի մարդ՝ շամաշելով իր հպարտ ու վեհ հոգու վայրկենական թուլության համար, շթաքցնելով իր վիշտը: Նա նահանջում էր, և նրան հետեւում էր նույն Հայնցը՝ Գերմանիայի Լայպցիգ քաղաքից:

Հաստատվում էր, որ նրանք պիտի հանդիպեին: Դա անհրաժեշտ էր հանուն կյանքի:

Պատերազմի ամիսներն ու տարիները նրան փորձ էին բերում և լրջախոհություն, հարստացնում էին նրա մտքերը, ցրվում էր սոմանտիկ պատկերացումների վարդագույնը, և կյանքն օրեցօր երևում էր իր դաժան ճշմարտության մեջ, անհուն, խորն ու հասկանալի: Ասում են, թե պատերազմում մարդիկ բթանում են: Ճիշտ չէ: Երբեք մարդկացին միտքն այնպես չի աշխատում, ինչպես մահվան մոտիկության ժամանակ, երբ պատերազմի իմաստը շողում է մարդու մտքի. աշքերի առաջ իր ամբողջ պայծառությամբ, ինչպես ձյունը գագաթների վրա, արևի շողբերի տակ, երբ ճշմարտությունը բոցավառում է մարդու ամբողջ էությունը և թարմություն է լցնում գիտակցության մեջ: Այդ ժամանակ առարկաները հայացքիդ տակ գծագրվում են ավելի ու ավելի հստակ, փարատվում է առեղծվածի մշուշը և հեռունեխն երեսում են թափանցիկ:

Դրանից առաջ նա երբեք չէր մտածել երջանկության մասին, որովհետև երջանիկ էր: Օգնության պետք չէր զգացել, որովհետև չէր հանդիպել դժբախտության: Նպատակ չէր ունեցել բարեկամներ փնտռելու, որովհետև շրջապատված էր եղել նրանցով և փորձության առաջ չէր կանգնել: Չէր մտածել նա մերձավորի սիրաը սփոփելու մասին, որովհետև չէր զգացել կյանքի ողքերդականությունը: Այդ բոլոր զգացմունքներն ու ձգտումները նոր ու նոր էին ծնունդ առնում նրա մեջ և խորանում ու ծավալվում օրեցօր: Դա հենց կյանքի զգացողությունն էր, բանական խղճի զարթոնքն ու ձայնը: Նա ճանաչում էր ինքն իրեն: Նա գտնում էր իր տեղը կյանքում և ամուռ կանգնում նրա վրա:

Մարտերի կրակի ու բոցերի մեջ անփորձ պատանին ձեռք բերեց կյանքի իմաստություն: Նա հասկացավ, որ որպեսզի ինքն ու իր ընկերները ապրեն, ինքը պետք է ուժեղ լինի:

Այն հարյուրավոր քաղաքներն ու ավանները, որ առաջ միայն աշխարհագրական անուններ էին նրա համար, գարձան սուրբ վայրեր, ինչպես հարազատ օջախը: Նրանց պարիսպների տակ ընկան նրա լավագույն ընկերները և նա ինքն էլ, եվլախցի պատանին, արյուն թափեց այդ քաղաքների ու ավանների համար: Որ Սովորական Մեծ Միությունը նրա Հայրենիքն էր՝ դա առողջ, ճշմարիտ ու ազնիվ միտք էր: Բայց այդ միտքը ուղղմանակատում թափանցեց նրա սրտի խորքերը, արյան միջով անցավ նրա բոլոր երակներն ու ողջ կությունը:

Մանր ու երկարատև երթերի ժամանակ, ձմռան սառնամանիքներին, ցուրտ ու խոնավ գետնատնակներում, զինվորի կյանքի վշտի ու խնդության բոլոր բռպեններին նա ձգտում էր հասկանալ կյանքը՝ նրա ողջ խորությամբ, և բմբանելով նրա խորհուրդները, նա ավելի ու ավելի ինքնավստահ և համարձակ էր դառնում: Դա նրա աճող ուժն էր և կամքի գիտակցական համառությունը:

Իսկ այդ ժամանակ Հայնցը, եկած Գերմանիայի Լայսցի գրադարից, փիլիսոփայում էր իր օրագրերի տետրակում: «Կյանքը հասկանալ պետք չէ, պետք է ուժով խլել այն...»:

Դա Հայնցի թուլությունն էր: Կյանքն ինքն է խստությամբ պատժում այն մարդուն, որը չի ցանկանում հասկանալ նրան:

Կինը միշտ պատկերանում էր Յակուբին իր մոր պատկերով, դեմքին՝ տարիների խորշոմները, բարի ու հոգատար, սիրելի,

ինչպես ինքը Հայրենիքը, կամ սիրած աղջկա պատկերով, զահել ու գեղեցիկ, սիրող ու հավատարիմ: Իր հանդիպած կանանց նա վերաբերվում էր արևելյան ամոթիսած հարգանքով ու երկյուղածությամբ: Իսկ նույն այդ ժամանակ լայպցիգցի Հայնցը շփացած իր հաջողություններից ու գոռոզամիտ, իր օրագրերում գրում էր. «Իսկ կնոջը ոչ թե հարգել է պետք, այլ տիրել ու վայելել»....

Եվ պառավ Եվգոնիի հվանովնան, որ լվանում էր նրա գուղպաներն ու սպիտակեղենը և մանկահասակ այն աղջկը Մարիա անունով, որ կարկատեց նրա իրերի տոպրակը և ասեղնագործ թաշկինակ նվիրեց որպես հիշատակ, Յակուբի համար նույնպիսի սիրելի, հարազատ մարդիկ էին դառնում, ինչպես Մինավեր մայրը, ինչպես Խաջիջա քույրը: Իսկ լայպցիգցի Հայնցը, հետապնդելով Յակուբին, հասավ, անպատճեց Եվգոնիի հվանովնայի ծերությունը, պղծեց Մարիայի կուսական պատիվը և մերկացնելով նրան, զուրս քշեց իր տանից պարզկա գիշերին, շար զվարձության համար: Հայնցն սպանում էր, կոխակտում այն ամենը, ինչ որ սուրբ էր Յակուբի համար, իր սովորական հողի վրա:

Ինչպես կարող էր պատահել, որ նրանք շնանդիպեին, դա գեմ կլիներ կյանքին ու բնությանը:

Յակուբի համար շկար այլ կին, բացի իր սիրեցյալից: Իսկ Հայնցի համար կային բոլորը և շկար ոչ մեկը: Մի գերմանուհու լքել էր ինքը, մյուսն ինքն էր լքել նրան, և նա աղաշում էր այդ կնոջը իր նամակում. «Քո որոշումը դաժան է: Լավ մտածիր, չէ՞ որ իմ բոլոր հույսերը քեզ են ուղղված, դու իմ կյանքի միակ հենարանն ես....»:

Հայնցը, հավատարիմ ինքն իրեն, ստում էր այս անգամ էլ: Նա ոչ մի հենարան չուներ, նա ցանկանում էր հենվել ամենքի վրա և իր վրա շվերցնել ոչ մի ծանրություն:

Յակուբն իր սիրած աղջկան գրած նամակներից մեկում հիշել էր իրանական բանաստեղծ Օմար Խայամի խոսքերը կյանքի ու սիրո մասին և նրանից ստացել նույնպիսի զերմ նամակներ լի սիրով ու քնքությամբ, որոնք որպես հմայիչ արձագանքներ, կը կնում էին այն բոլոր հնչյունները, որ գալիս էին իր հոգու խորքերից, իսկ Հայնցի այն խորհրդին, թե պետք է նիցշեի գրածները կարդալ, որպես պատասխան նրա սիրուհիներից մեկը գրում էր.

«Փորձեցի նիցշե կարդալ. գլուխս չի մտնում, մի ուրիշ գիրք եմ կարդում, նա ավելի թեթև է...»

Մենք Հայնցի նամակագրություններից գիտենք, որ նա ոչ որի չեր պատկանում: Բայց նրա մոտ եղած հինգ լուսանկարներից ամեն մեկի հետևում կարդում էինք տարբեր գերմանութիւնների ձեռագրեր. «Իմ միակ Հայնցին»... Զէ՞ որ գերմանունի այդ հիմարիկներից և ոչ մեկը միակը չեր Հայնցի համար և Հայնցն էլ միակը չեր նրանցից յուրաքանչյուրի համար:

Այսպիսի տարբեր մարդիկ էին կանգնած մեծ պատերազմի լայնատարած ճակատների այս ու այն կողմերում: Նրանք նման չեին իրար, և չեր կարող նրանց միջև նմանություն լինել: Բույսը հյութեր, բույր կամ թույն է հավաքում հողից, ջրից ու օդից, իսկ մարդը՝ իր շրջապատից, իր ժամանակից ու բարքերից: Յակուբի հոգին լի էր այն առաքինություններով, որոնցով օժտված էին նրա ժամանակն ու նրա սերունդը: Իսկ Հայնցը ուներ միայն այն, որ ավել էին նրան նրա երկիրն ու նրա շրջապատի հոգով աղքատ մարդիկ:

Եկան նոր ժամանակներ:

Արդեն Յակուբն ինքն էր հետապնդում Հայնցին: Իսկ Յակուբը այլևս այն չեր: Նա առնականացել էր փորձությունների մեջ, հասել փառքի, շրջապատված էր հարցուրավոր բարեկամներով, որոնք պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել նրա համար: Ե՛վ լեյտենանտ Չայկան, և' սնայպեր Պավել Կիսելյովը, և' Յակով Բոգդանովը Յակուբի համար փոխարինել էին այն մարդկանց, որոնց հետ մեծացել էր մի հարկի տակ: Յակուբն իր մեջ զգում էր բոլոր հրամանատարների ու շարքայինների ուժը, բոլոր վետերանների և նոր ուղղմիկների ուժը, իր ամբողջ բանակի ուժը, և իր հոգում շնորհակալ էր մարդկանցից ու հայրենիքից, շնորհակալ էր կյանքից, որը պահում էր նրան իր ձեռքերի վրա բարձր ու բարձր և հողից, որ անխախտ կանգնած էր նրա ոտքերի տակ, այն հողից, որի վրայով քայլում էր նա նրա ճշմարիտ տիրոջ ինքնավտահությամբ:

Իսկ այդ ժամանակ նույն հողը, զայրացած, սրբազն սուսական հողը վառվում էր լայպցիցի Հայնցի ոտքերի տակ: Այդ ժամանակ Հայնցը, որին լքել էին արդեն սուս փառքն ու գողի

անկայուն բախտը, իր օրագրում դրում էր. «Մարդն ամեն տեղ  
ու ամենուրեք մինակ է...»:

Հազարավոր կիլոմետրերով հետապնդելով թշնամուն,  
Յակու-  
րը նորից ու նորից տեսնում էր այրվող գյուղերի ու քաղաքների  
մոխիրը, տանջանքների ու շարշարանքների ենթարկված բնակիչ-  
ներին, տեսնում էր վիթխարի հրացոլքերը Ռուսիայի հորիզոնների  
վրա և նրա սրտի ծանր ցավը ուժ էր տալիս նրան, իսկ թափիծը  
բորբոքում էր նրա սերն ու կարուտը դեպի Հայրենիքն ու կյանքը:  
Նա հաղթահարում էր իր հոգնածությունը, քայլում էր՝ գլուխը  
հպարտորեն բարձր պահելով: Նա շանում էր հասնել Հայնցի՝  
այդ բոլոր շարագործությունների հեղինակի ետևից:

Նահանջելով, Հայնցը սպանում ու քանդում էր ամեն ինչ իր  
արյունոտ ճանապարհին, կրծտացնելով ատամներն այն գալի  
նման, որը շկարողանալով ոշինչ խելել հովվից, խեղդում է գառ-  
ներին ու փախշում՝ պոշը ետևի ոտքերի մեջ սեղմած:

Եվ այսպիսով հասել էր նրանց հանդիպման ժամը:

Դա կյանքի հրամանն էր, որ չէր կարող անկատար մնալ:

Եվ նրանք հանդիպեցին: Հանդիպեցին այն քաղաքում, որն  
առաջ հայտնի չէր նույնիսկ որպես աշխարհագրական անուն ո՛չ  
Հայնցին, որ ցանկանում էր նվաճել այն, ո՛չ Յակուբին, որ գործ  
էր եկել պաշտպանելու այդ քաղաքը: Մեծ է մեր Հայրենիքը:  
Ունի նա հազարավոր քաղաքներ: Բոլորը շես հիշի:

Օպոչկա...

Յակուբը երբեք չի մոռանա փոքրիկ այդ քաղաքը Վելիկայա  
գետի վրա: Իսկ Հայնցն այլևս ոշինչ չի կարող հիշել...

Զորամասի մարտիկները Օպոչկա քաղաքի մատուցների  
մոտ ետ մղեցին մի քանի կատաղի հակագրուն: Սնայպեր-  
ների ու ավտոմատավորների մի խմբի խնդիր տրվեց՝ կտրել ճա-  
նապարհներից մեկը, զրկել թշնամուն ետ քաշվելու հնարավորու-  
թյունից: Այդ խմբի մեջ էր նաև Գվարդիայի սերժանտ եվլախցի  
Յակուբ Աբրագիմովը:

Ամեն անգամ, երբ թշնամու սպաներն ու զինվորները փոր-  
ձում էին դուրս գալ խրամատներից, ետ սողալու համար, սովում  
էին մեր սնայպերական գնդակները, և գերմանացիները մնում  
էին հողի այն պատառների վրա, որոնց վրա մազցյում էին: Այդ

մարտը երկար տևեց քայլայելով գերմանական «գերմարդու չղերը»:

Եվ ահա այդտեղ էլ տեղի ունեցավ այն, ինչ որ բնականորեն պիտի կատարվեր:

Խրամատից գուրս եկավ գերմանական սպան և կանգնելով ամբողջ հասակով՝ բռունքով սկսեց սպառնալ՝ մեր անտեսանելի սնայփերների ուղղությամբ:

— Խելագարվել է, ի՞նչ է,— ցույց տալով գերմանացուն՝ ասաց ազրբեջանցի Յակովը իր ուստ ընկեր Յակով Բոգդանովին:

— Ճիշտ որ, խելքը թոցրել է,— պատասխանեց Յակովը:

Նրանց առաջ կանգնած էր ոչ այլ ոք, քան նույն ինքը Հայնցը, գերմանական Լայպցիգ քաղաքից: Դա նրա մահամերձի վերջին հիստերիկան էր: Հուսահատությունից ու վախից գերմանական սպան կորցրել էր հավասարակշռությունը:

Հսկեց սովորական մի կրակոց: Լայպցիգից Հայնց Բեյնգրենտը շուռ եկավ, պտտվեց տեղում, երերաց և դեմքով ընկավ գետնին...

Եվ այս դեպքը կատարվեց 0պոչկա քաղաքի մոտ, 1944 թվականի հունիսի 14-ին:

Դա կյանքի հաղթանակն էր մահվան դեմ, ազնվության ու մաքրության հաղթանակը՝ խարեւթյան ու աղտեղության դեմ, լույսի հաղթանակը խավարի դեմ: Մի փոքրիկ դեպք էր դա մեծիմաստ խորհրդով...

Եվ այդ գերմանացին թողեց մեզ իր նամակներն ու օրագրերը, նյութ տալով մեզ գրելու այս պատմությունը, պատմելու, թե ով ում է սպանում և առհասարակ, թե ով պիտի հաղթանակի:

Այո՛, նրանք պիտի հանդիպեին: Դա կյանքի պահանջն էր, որ կատարվեց:

Հունիս, 1944 թ.

Գործող Բանակ

## ԽՈՀԵՐ ԵՎ ԵՐԵԶՄՆՔՆԵՐ\*)

Կիսափակ աշքերով պառկած է նա մեջքի վրա, նրա կրծքին ընկած են «Կրասնօարմեց» ամսագիրը և ճակատային լրագիրը: Առաստաղից՝ ուղիղ նրա մահճակալի վրա կախված լապտերն աղոտ, դեղին լույսով լուսավորում էր վիրավորի գունատ դեմքը: — Ահա, դա նա՛ է, — ասում է Հյուրին ուղեկցող աղջիկը, — կարծես արթուն է, — սերժա՛նտ, դուք կառավարական երե՛ք պարգև ուներ:

— Այո՛, ի՞նչ կա:

— Կամենում են ձեզ հետ խոսել:

Վիրավորը հետաքրքրված նայում է սպային:

— Ինչ որ տեղ ես ձեզ տեսել եմ, բայց որտեղ, չեմ մտաբերում, — շշնջում է նա:

— Մենք հայրենակիցներ ենք, մոտ ժամանակներս ես եղել եմ Երևանում, ձեզ բարեներ եմ բերել:

Թույլ ժպիտն անմիջապես լուսավորում է վիրավորի դեմքը: Նա ամուր սեղմում է Հյուրի ձեռքը և երկար ժամանակ բաց շիթողնում այն:

— Պատմեցե՛ք, պատմեցե՛ք — շորբող տարին է, որ շեմ եղել այնտեղ...

Նա հարցնում է հարազատ քաղաքի յուրաքանչյուր փողոցի, յուրաքանչյուր նրբանցքի մասին, քաղաքային այգիների, ակումբների մասին, այն ամենի մասին, ինչ որ այնքան թանգ է այդ վայրերից վաղուց բաժանված գինվորի համար: Նրա աշքերը

\*) Այս և հաջորդ երկու գործը հեղինակը գրել է ուսուերեն լեզվով, ռազմականացնելու մեջ համար: Թարգմանությունը կատարել է ընկ. Հր. Մուրադյանը:

փալում են, երբ նա լսում է, որ Զանդիի վրա կառուցված է հսկայական կամուրջ, հին հայկական զարդանկարներով, որ առաջվապես գիշեր ու ցերեկ քաղաքի բուլվարներում զարկում են կայծկըլտով շատրվանները, որ Արարատյան դաշտը կրկին հեղեղված է էլեքտրական լուսերով, որ շրջաններից անբնդհատ դեպի մայրաքաղաք են ձգվում սալերի քարավաններ՝ բեռնավորված հացով, դինով, մասով, շոր մրգերով, որ նախկին եռանդով շաշում են հին, ինչպես և պատերազմի ժամանակամիջոցում ստեղծված գործարանների շշակները:

— Ինչպես գեղեցիկ է այդ ամենը, ինչպես լավ, — կրկնում է վիրավորը: Կտեսնե՞մ, ես այդ բոլո՞րը կտեսնեմ...

— Չեր վերը շատ է ցավում, — հարցնում է հյուրը:

Վիրավորը ձեռքը թափահարում է:

— Այդ կարեոր չի, — պատասխանում է նա, — կարեոր է ահա թե ինը, — ցույց է տալիս լրագիրը, — մերոնք արդեն համարյա թե Բեղլինի արվարձանների մոտ են: Իսկ վերը — կանցին: Առաջին օրերին, երբ ոտքս գիպսի մեջ էին դրել, գժվար էր: Ոտքս քարացել էր և ես ոշինչ չէի զգում: Բայց այդ կարեոր չի, կանցնի... Մտածելով աշխարհում կատարված բաների մասին, ցավերը և տառապանքները մոռանում են: Յանկանում ես վեր թռչել մահճակալից, դրկել և համբուրել ամենքին: Չէ՝ որ մեզնից յուրաքանչյուրն այս օրերը ձեռք բերեց իր կյանքի գնով:

— Ավելի լավ է պատմեցեք ձեր մասին, պատերազմի մասին կխոսենք հետո:

Սերժանտը կրկին ժպտում է:

— Պատմել իմ մասին, կնշանակի պատմել կրկին պատերազմի մասին: Այսպես պառկած վերհիշում եմ իմ անցած մարտական ուղին: Իսկ ես անցել եմ Մոզզոկից մինչև Բալթիկ ծովը: Երեք անդամ վիրավորվել եմ: Ռուսիս ծանր էր: Ինչպիսի տառապանքներ ասես չեմ ապրել: Դրանք անհետեանք չեն անցել: Դրանք տվել են ինձ այնպիսի մտքեր, որ ոչ ոք չէր կարող տալ, այնպիսի զգացմունքներ, որ ոչ ոք չէր կարող ներշընչել: Կյանքը մեզ համար հանդիսացավ լավագույն դպրոցը, լավագույն համալսարանը: Մենք միշտ էլ խոսում ենք պատերազմի ավերածությունների մասին: Այդ իհարկե, մենք երեք շենք մոռանա: Քանի մենք կենդանի ենք, մեր սրտերում պիտի վառ-

զի վշտի և թշնամու հանդեպ ատելության մշտավառ կրակը: Մենք այն չենք, ինչպես որ էինք պատերազմից առաջ: Բայց մեր հոգին լի է նաև այնպիսի գանձերով, որ ոչ ոք չի կարող մեղնից խլել: Պատմեմ՝ ձեզ մի փոքրիկ պատմություն:

Հաճախ ես հիշում էի 1914—18 թվականների առաջին համաշխարհային պատերազմի ժամանակվա մեր հայ ժողովրդի տառապանքների մասին: Մեր փոքրիկ Վ. քաղաքը շրջապատված էր թշնամու զորքերով: Մինչև ոռուների գալը, ժողովրդն էր պաշտպանում իր քաղաքը: Հրացանը ձեռքին կովում էր նաև մի հայուհի, որին Ազգիտա էին կոչում: Նա ծանր վիրավորվեց: Նրան վրկեց մի կողակ, որ իր ձիռ վրա նրան հասցրեց զինվորական բժշկի մոտ: Դա իմ մայրն էր: Այժմ էլ նա հիշում է այդ կողակին և յուրաքանչյուր անգամ օրհնում այն ժամը, երբ ոռուս ոտք դրեց մեր հոգի վրա, աղատություն տվեց մեզ:

Իմ մայրը ուղեկցեց ինձ գեղի պատերազմ, առանց արտասուրների և խրատական խոսքերի: Իմ հիշողության մեջ միշտ թարմ է նրա կյանքի պատմությունը... Մի անգամ մենք թշնամու թիկունքում էինք: Յոթն օր մենք անցանք ճահճուտներով և գետերի հունով մինչև կրծքներս շրի մեջ: Իմ ոտքերը տկարացան: Տղաները զնացին, որպեսզի շտապ տեղեկություն բերեն թշնամու մասին: Իսկ կարմիրբանակային Վասիլիյ Սեմիսինովը մնաց ինձ մոտ: Երեք օր նա ինձ քաշ տվեց իր ուսերին: Հաճախ թագցնելով թիկունքների մեջ, նա տրորում էր ոտքերս: Եվ այդպես, վտանգի հնթարկելով իր կյանքը, նա իմ կյանքը փրկեց: Ես նրա մասին գրեցի մորս: —Գուցե նա, իմ ընկեր Վասիլին է, այն կողակի որդին, որը 27 տարի առաջ օգնության հասավ իմ հարագուատներին: Ով է իմանում կյանքի հանելուկները: Իսկ մայրս գրում է. «այսուհետեւ ես ունեմ երկու որդի՝ Վասիլին և դու»: «Ո՛չ, մայր, մենք ոչ թե երկուս ենք, մենք շատ ենք: Պատերազմում ես ձեռք եմ բերել հարյուրավոր այնպիսի եղբայրներ, ինչպիսին Վասիլին է: Եվ հենց որ վերադառնանք, դու պիտի նրանց բոլորին հյուրասիրես»: Հենց այդ էլ իմ հարստությունն է, որով ես պարծենում եմ, որը տվեց ինձ պատերազմը:

Նա ընդհատում է իր պատմությունը: Լուսմ է: Լրագրի թըղթից ծխամորճ է պատրաստում, —ծխել չե՞ք կամենում: Հրացակի մախորկա է, խնդրեմ, վերցրեք:

Երազանքով նայելով առաստաղին, բաց թողնելով ծխի կապույտ քուլաները, նա շարունակում է.

— Հաճախ բարեկամներս ասում են, որ նրանք մինչ են լուծում գերմանացիներից՝ իրենց ավերված քաղաքների և գյուղերի համար, իրենց հարազատների տանջանքների համար։ Իսկ մեր երեան քաղաքը, ինչպես դուք եք ասում, շեն է, հարազատներա ողջ և առողջ են։ Սակայն, ո՞վ ասաց, որ ավերված սովետական քաղաքները իմը չեն, որ ինձ համար հարազատ չեն նրանք, որոնք ոչնչացան ոճրագործ գերմանացիների ձեռքով։ Այդ քաղաքների տակ ես կռվել եմ, այնտեղ, որտեղ թափվել է իմ և իմ ընկերների արյունը, այսօր բուժնում են կարմիր կակաչներ—գարնանաշինտ ծաղիկներ։

Այդ քաղաքները նույնպես թանգ են ինձ, ինչպես այն վայրերը, ուր հանգչում են իմ նախնիների աճյունները։ Երբեմն պատահում եմ նովորոսիյսկուց, Ռոստովից, կամ Ստարայա Ռուսայից եկած մարտիկի։—Մենք հայրենակիցներ ենք, ասում եմ ես նրան. դա նաև իմ հարազատ քաղաքն է։ Ես եմ ազատել այն։ Եվ մարտիկն ինձ հասկանում է։ Եվ մենք գրկախառնվում ենք որպես հարազատներ։ Ես ունեմ յոթն այդպիսի հարազատ քաղաք։ Եվ ես պարծենում եմ իմ այդ հարազատի մաքր և։ Այդ մեկ, երկրորդն այն է, որ Կարմիր Բանակը թույլ շտվեց գերմանական բանակին մոտենալու մեր Հայաստանին։ Հանուն դրա՝ շնորհակալության զգացումը իմ ընկերների հանդեպ, մեր Բանակի հանդեպ, Առաջնորդի հանդեպ, ինձ պարտավորեցնում է գերմանացիների նկատմամբ լինելու կրկնակի անողոք։ Եվ մի՛թե Ռւբալից, Հեռավոր Արևելքից, Սարատովից, Գորկուց, Բագվից եկած տղաները, որոնց ընտանիքներին չհասավ գերմանացիների արյունոտ թաթը, գերմանացիներին չեն հարվածում այնպես, ինչպես Սմոլենսկուց և Օրյոլից եկած տղաները։ Չէ որ մենք բոլորս մի մեծ ընտանիքի զավակներ ենք։

Ուժեղ հազը խանգարում է նրան շարունակել իր պատմությունը։

— Սա ծխելուց է,—ասում է նա, շոշափելով գիպսի մեջ դրած ոտքը,—ծխել սովորեցի պատերազմի ժամանակ, պիտի թողնեմ...,—Դուայա, Բանկագին, ուղղիր ոտքս, անհարմար վիճակում է...

Եվ դառնալով իր հայրենակցին, բացատրում է.

— Առանձնապես ուժեղ չի ցավում, սակայն, ծանրացել է ինչպես մետաղը: Բժիշկներն ասում են, որ ամեն ինչ կարգին է, նույնիսկ չեմ կազա, ինքը հոսպիտալի պետք նույնպես նայեց... Ընդհանրապես լավ ժողովուրդ են, հոգատար: Էլ ինչպիսի մարդկանց հետ ասես մենք շմտերմացանք ուղղմանակատում: Ունեինք բատալիոնի հրամանատար Մակարով ազգանունով: Ահա մարդ: Շատ են այնպիսիները, որոնց զեմքերն ընդմիշտ մնալու են հոգուդ մեջ: Մինչև պատերազմը ես միշտ ապրել եմ մի քաղաքում, չեմ ճանաշել ուրիշ երկրներ, ուրիշ մարդկանց, բացի իմ հայրենակիցներից: Հաճախ երազում էի ճանապարհորդել Սովետական Միության քաղաքներում: Զէ որ զրանք բոլորը նույնպես իմն էին, անհրաժեշտ է սեփական աշքերով տեսնել, թե ինչով եռ հարուստ: Բայց միշտ հետաձգում էի—պետք էր ավարտել ինստիտուտը, դիպլոմ ստանալ: Մտածում էի, որ կյանքս գեռ առջև է, կհասցնեմ: Խոկ երբ ինստիտուտը ավարտեցի, սկսվեց պատերազմը: Եվ ահա պատերազմի մեջ ճանաչեցի մոսկվացիներին և սիրիցիներին, ուկրաինցիներին, և մարտիկների, որոնք եկել են Մինսկուց, Ալմա-Աթայից, Արխանգելսկուց: Նրանց հետ միատեղ քնում էինք մի զեմլյանկայում և միատեղ գնում գրոհի: Իմ մեջ եղած լավ հատկությունների մեծ մասը ստացել եմ նրանցից: Այդ նույնպես գանձ է, որ ես ձեռք եմ բերել պատերազմում: Եղբայրություն, պատիվ, հայրենիք, կյանքի սեր, ատելություն թշնամու հանգեպ,—այս խոսքերն ու զգացումները մեզ համար դարձել են զենք: Այդ զենքի շնորհիվ մենք միշտ անխոցելի կլինենք:

Մոտենում է աղջիկը, ուղղում բարձը և վիրավորին սուրճ է առաջարկում:

— Լավ քույր է,—ասում է վիրավորը,—զարմանալի կերպով նման է օրեւանի իմ ծանոթ աղջիկներից՝ մեկին, միայն մազերը շիկավուն են, զուցե և մայրս էլ այդպես էր, երբ կռվում էր 1915 թվին... Գիտեք, մայրս այնպիսի ագիտատոր է: Այսօր նամակ եմ ստացել: Նա գրում է, որ մարշալ Փուկովը գերմանացիներին ջախջախեց Մոսկվայի տակ, այնպես էլ կջախջախի Բեռլինում: Պարծենում եմ, գրում է,—որ որդիս էլ հերոսների մեջ է: Այո՛, լավ ժամանակներ եկան:

— Առավել գեղեցիկ կլինի կյանքը, հաղթահակից հետո: Լավ լլինի ապրելը,—ասում է նրա զրուցակիցը:

— Ի՞շարկե, հաստատում է վիրավորը,—ամբողջ գիշերներով ևս այդ մասին եմ երազում: Քույրերը նախատում են, որ գիշեր-ները չեմ քնում: Չեմ կարող քնել: Եթզանիկ եմ ևս իմ խոհերով: Կմտնենք Բենլին, կոչնչացնեմք ֆաշիստական կարգերը: Բոլոր մեր քաղաքները կո՛զդունեն մեր հաղթանակը: Հաղթանակից հետո ևս կլինեմ մեր կապույտ երկնքի տակ, կապրեմ և կաշխատեմ Աշտարակում, Արագածի ստորոտին: Ես սիրում եմ լեռնային բնությունը: Կաշխատեմ շա՛տ և շա՛տ... Որրա՞ն շիրականացված երազանքներ ունի մեզնից յուրաքանչյուրը: Երեխաներին կուվորեցնեմ օտար լեզուներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում, նրանք խոսել կարողանան և բարեկամների, և թշնամիների հետ: Չէ որ ևս ավարտել եմ օտար լեզուների ինստիտուտը: Իմ գպրոցի մոտ խաղողի այգի կցցեմ և ինքս կապարաստեմ բարեկամներիս համար կարմիր զինի... Ի՞նչպիս ենք մենք կարուել ստեղծագործ աշխատանքի, ի՞նչպիս ենք կարուել: Իմ կարծիքով շուտով կգա, այդ օրը, շա՛տ շուտով, ի՞նչ եք կարծում...

Աջ ձեռքի ափով նա ծածկում է աշբերը: Մոտը նստած նրա հայրենակիցը ալլես հարցեր շի տալիս: Թող սերժանտը քնի, թող հանգստանա: Սակայն, վիրավորը հանկարծ բարձրացնում է գլուխը, նայում ուղիղ նրա աշբերին:

— Մի կարծեք թե ևս մենակյացի կյանք եմ երազում: Ո՛չ ևս կուսակրոն չեմ: Ընդհակառակը, ևս առանց մարդկանց հետ լայն շփում ունենալու չեմ կարող ապրել: Ես կլինեմ նաև մեծ քաղաքներում և մայրաքաղաքներում, աշխատանքը, հավանաբար այդ կպահանջի, և յուրաքանչյուր տարի իմ արձակուրդը ևս կանցկացնեմ իմ ազատագրած քաղաքներից մեկում, որպիս այդ քաղաքի ծնունդ, նրա սիրահարը: Ամենուրեք բարեկամներս կդիմավորեն ինձ, որպիս հարազատի և նույնիսկ շատ տարիներ անց, քաղաքացիական զգեստ հագած, լայնեզր գլխարկով արդին հասակավոր մարդու մեջ նրանք կճանաշեն իրենց ընկերոջը, հետախուզ սերժանտ Գառնիկ Արամի Զաքարյանին... Ամեն տեղ ևս կգտնեմ ինձ համար մոտիկ ու թանգ մարդկանց, ամեն տեղ կգտնեմ ինձ համար հարազատ տուն: Իմ տունը ամբողջ սովետական երկիրն է: Կհանդիպեմ բարեկամներիս հետ նովորոսիյակում, կամ Ռոս-

տովում, Մոսկվայում, կտմ Ռիգայում... Եվ ընկերներս ինձ մոռ  
կդան, սեղանին կդնենք այն, ինչ որ մեր աշխատանքը մեզ կտա  
և կհիշենք անցած օրերը:

Ներս է մտնում բժշկուհին՝ ակնոցավոր մի կին և հոգատար  
մոր խստությամբ նկատում.

— Բավական է, Զաքարյան, դուք շատ եք խոսում և շատ էլ  
կարդում եք, այդ պատճառով էլ դանդաղ եք կազդուրվում, այդ-  
պես չի կարելի:

— Ընդհակառակը, բժշկուհի, առարկում է նա, մայրական  
շինձու խստությունից շվախեցող որդու կատակով, — ընդհակառա-  
կը, Անառնինա Աֆանասևնա, զրանից վիճակս թեթևանում է: Խո-  
հերի ու երազանքների մեջ մոռանում եմ ցավերը, իսկ լրագրերը՝  
Գերագույն Գլխավոր Հրամանատարի հրամաններով՝ մեր հաղթա-  
նակների մասին, լավագույն դեղերն են վիրավոր զինվորի հա-  
մար: Իմ կարծիքով այդպես է, որքան որ բժշկությունից ես բան եմ  
հասկանում:

Փետրվար, 1945 թ.

Գործող Բանակ

## ԵՐԿՈՒ ՏԵՐԻ ՀԵՏՈ

Շարքով, մարտական լրիվ պատրաստությամբ, հակառան-կացինները կանգնել էին անտառում, նախօրյակին դուրս գալով մարտից, նրանք կարգի էին թերել իրենց և այսօր հավաքվել էին հանդեսի: Շարքի առաջ դրվեց թարմ ծառից շտապ կերպով շին-ված սեղանը, վրան կարմիր կտոր, ամբողջությամբ պատած թա-նաքի բծերով: Սառնամանիք էր: Տիրում էր կատարյալ լուսություն: Մարդկանց շնչառությունից գլխարկները ծածկվում էին եղյամով: Գետնատնակների խողովակներից բարձրացող ծուխը տարած-վում էր գետնին: Մարդիկ սպասում էին հանդիսավոր բոպեին:

Մոտիկ գետնափնակից, իր շքախմբով դուրս եկավ գեներալը: Զորամասը գեներալի ողջունին պատասխանեց որոտով: Ինձ թվաց, թե օդի ցնցումից եղնիներից ձյուն թափվեց: Մատիտը ձեռքիս ևս սկսեցի գրի առնել գեներալի ողջունի խոսքերը:

Շտաբի պետը կարդաց հերթական ազգանունը:

— Սերժանտ Շապոշնիկով իվան Անդրեևիչ...

Ցածրահասակ մի երիտասարդ մարտիկ, դուրս եկավ շար-քից և մոտենալով գեներալին հանգիստ և հարթ ձայնով հաղոր-դեց իր մասին: Ե՛վ նրա քայլվածքում, և՝ ձայնի մեջ, հատկապես նրա կապույտ աշքերի երիտասարդական փայլի մեջ, կար ինչ որ-սիրելի, հաճելի և չափազանց ծանոթ մի բան: Նույնիսկ, ինձ թվաց, որ ևս ինչ որ տեղ նրան տեսել եմ:

— Ընորհավորում եմ,—ասաց գեներալը, ցրտից կարմրած ձեռքը դնելով սերժանտի ուսին,—ուրեմն վեցերորդ պարզեն է:

Պարզենի հանձնումից հետո, երեկոյան սերժանտի հետ մենք նստած էինք նրա գետնատնակում: Նա մանրամասն պատմեց, թե

Հնչալես կես ժամվա մեջ, իր թնդանոթը ոշնչացրեց գերմանական հինգ տանկ:

Բայց ինչպիսի՞ զգացում ուներ նա այն պահին, երբ գերմանական 20 տանկ դղրդյունով շարժվում էին իր ուղղությամբ, երբ ակնթարթի վրիպումը կարող էր բերել պարտություն և մահ: Ես նրան հարցրի այս մասին.

— Զե՞մ հիշում...բայց ի՞նչ զգացում: Պետք էր նրանց ոշնչացնել, թույլ շտալ մոտենալու մեջ և ուրիշ ոշինչ..., պատասխանեց նա:

Նա իրեն որքան երջանիկ է զգացել, երբ մարտից հետո, կենդանի մնալով, նայել է թշնամու ծխացող տանկերին: Ես նաև այդ մասին հարցրի:

— Երբ ոշնչացրի հինգերորդ տանկը, կոնտուզիա ստացա...

Այդպիս էլ ինձ չհաջողվեց, նրանից գուրս հանել այն, ինչ ինձ հարկավոր էր, ոշինչ բացի հմայիլ ժպիտից:

— Այո՛, — ասացի ես, մտազբաղ, մեքենայաբար մատիտով քորելով ունքս, — այնուամենայնիվ, ինչպե՞ս է, որ երեք տարվա ընթացքում գուր չեք վիրավորվել:

— Բախտու է պահպանել... պատասխանեց Շապոշնիկովը: Մայրս գրում է, թե ինչ որ սպա նրան ասել է, որ ես երջանիկ աստղի տակ եմ ծնված և կվերադառնամ ողջ և անվնաս:

— Սակայն — գուր կարո՞ղ ես ասել, թե ի՞նչ ուժ է քեզ փորձություններից պահպանել և կոփել քո հոգին:

Ես նորից լսեցի լակոնիկ պատասխան.

— Ես հաստատապես գիտեի, որ մենք կհաղթենք...

Դրանով էլ ավարտվեց մեր զրույցը մարտական գործերի մասին...

Ճրագի լույսն աղոտացավ: Վառարանի կրակի ցոլքերը ընկան հողե խոնավ հատակին: Կիսամթնի մեջ Շապոշնիկովի զեմքը չեր երևում, իսկ նրա ձայնն արդեն սովորական էր դարձել:



Ես գուրս եկա գեմլյանկայից: Գիշերը ցուրտ էր, լուսնիա: Լուսարձակները որպես հսկայական սրեր, թրատում էին երկինքը: Թդում լսվում էր՝ քաղցած գաղանի ձայնը հիշեցնող՝ թշնամական

օդանավերի աղմուկը: Ներս գալով, ևս հանեցի վալենկաներս, դրի վառարանի մոտ չորանալու, բարձրացա և պառկեցի որմաթախտին: ճրագը մարեց: Խավար էր: Քնել շէի կարողանում, ինչպես այդ պատահում է անծանոթ շքան ընկած մարդու հետ: Դեպքերով հարուստ պատերազմական տարիները, հիշողության մեջ, անցնում էին մեկը մյուսի հետեւից:

Զգիտես ինչու, այն երեկո դժվար էր հասկանալ, հիշողությանս մեջ կենդանացան մի պառավ կեռոշ և նրա տասներկուամյա աղջկա՝ թափանցիկ կապույտ աշքերով Մաշայի պատկերները: Նրանց մոտ ևս ապրում էի 1943 թվի գարնանը, երբ ծառայում էր գվարդիական զորամասերից մեկում: Սրբապատկերի տակ կախված էր տանտիրուուս պատանի որդու լուսանկարը: Մայրը յուրաքանչյուր առավոտ մաքրում էր նրա փոշին և սիրով գնում իր տեղը: Երբ գերմանացիները 1941 թվին մոտեցան նրանց մարզին, 16-ամյա պատանին վերցրեց ծանր վիրավոր մի մարտիկի հրացանն ու գնաց նահանջող զորամասերի հետ:

— Ասում եմ՝ ուր ևս գնում, ստահակ, — պատմում էր մայրը, — գնում եմ, ասում է, կովելու, հո ևս փոքր շեմ, — մտել եմ տասնյոթը, աղջիկ շեմ, որ տանը նստեմ, աղջիկներն էլ բանակ են գնում... Այ քեզ պատմություն: Գու ի՞նչ զինվոր ես, ասում եմ, առաջին իսկ օրը կկորչես, քեզ պես երեխաները շեն կանգնեցնի այդ կատաղի շներին — գերմանացիներին: — Հանգի՛ստ եղիր, մայրիկ, շեմ կորչի, լավ է, ասում է, մերոնց մոտ ոչնչանակ, քան գերմանացիների մոտ մնալ, չե՞ որ ևս ուս եմ... Եվ համբուրում է Մաշային ու ինձ: Այդպես էլ գնաց: Իսկ մենք լաց ենք լինում Մաշայի հետ: Սպասեցինք մի կես տարի: Թագնվում էինք անտառում, ուրիշների տներում: Իսկ այժմ արդեն 1943 թվականն է: Բանակը վերադարձավ, ու իմ որդին գեռ շկա...

— Որդիդ կվերադառնա, անպատճառ կվերադառնա, մի հուսահատմիր, մայրիկ, — մխիթարում եմ ևս:

— Ամենքն են ասում, — պատասխանում է պառավը, — և գնչունին է գուշակել, — կդա ասում է, քո բազեն, կվերադառնա անվնաս և մեծ փառքով...

Այդ օրվանից մենք բարեկամացանք:

Պատահում էր ևս զնում էի առաջավոր գիծը, որ այդ գյուղից 15—20 կիլոմետրի վրա էր գտնվում: Մայր ու աղջիկ տագնա-

պովի ինձ էին սպասում: Եվ յուրաքանչյուր անգամ, երբ զերապառնում էի, հյուրասիրում էին ինձ խմբեղիններով, տապակում էին կարաօֆիլ, և սեղանին էլ միշտ սառը կաթ էր լինում զրված:

— Կերե՛ք, կերե՛ք, կրկնում է պառավը,—գուցե իմ հվանն էլ օտար վայրերում իր համար ուրիշ մայր է կտել: Նա ախարփոք էր, նրանից ի՞նչ զինվոր դուրս կդա, շգիտեմ...

— Էավ, քաջ զինվոր,—հավատացնում եմ ես:

Պառավը ժպտում է արցունքի միջից:

— Նա սիրում էլ էր հրացան: Հայրը, երբ նա դեռ կենդանի էր, ասում էր. «մեր որդին հոգին կտա հրացանի համար»: Իսկապես որ դպրոցում նա բոլորից լավ էր կրակում: Դրա համար նշան էր ստացել:

Մի անգամ, մարագում, նա ցույց տվեց ինձ մի նավակ և թիեր:

— Վանիայի նավակն է, թիերն էլ են նրանք: Պահպանում եմ, կվերադառնա, աղջիկներին զբոսանքի կտանի: Սիրում էր նա նավակով զբոսնել, ձուկ որսալ...

Ես նայում էի պառավին ճշմարիտ հիացմունքով: Լսելով նրա պատմածները, ես վերցնում էի ձեռքս անծանոթ պատանու լուսանկարը և երկար, երկար նայում: Բարի դեմք ուներ: Աշքերը և շրթունքները նույնն էին, ինչ որ Մաշայինը: Հիբավի, ուր է նեւ տել բախտն այս պատանուն, —հարցնում էի ինքս ինձ:

Ճակատը հեռացավ: Պառավին և նրա աղջկան հրաժեշտ տվի: Ինչպես իմ հարազատներին:

— Գուցե դու տեսնես վանյուշկային, —ասաց պառավը, —կյանքում ամեն բան լինում է: Այն ժամանակ հաղորդիր մեր ողջույնը և ինքդ ես մեզ մի մոռացիր: Նամակ գրիր: Մաշաս դրագետ է, կկարգա, կպատմի:

Ես երկար ժամանակ նամակագրություն ունեի այս ընտանիքի հետ: Պատասխան-նամակները Մաշան էր գրում: Ես այդ նամակներից իմացա, որ որդուց տեղեկությունն է եկել՝ ճակատից, որ իրենք լավ են ապրում, որ հաճախ հիշում են ինձ, որ պայտավին աղոթում է նաև ինձ համար:

...Մութ գետնատնակում որմաթախտին պառկած, հիշելով այս ամենը, ես ինձ հարցնում էի. ապրում է արդյոք բարի պառավի որդին և այժմ որտեղ է նա կովում:

Հարեաններս վաղուց էին քնել խորը քնով։ Ես լսում էի նրանց ծանր շնչառությունը։ Կապավոր Գապոնովը քնի մեջ մի քանի անգամ ուրախ ծիծաղեց, ինչ որ քրթմնջաց և սկսեց խը-ռըմփացնել։

\*\*\*

Երբ ես արթնացա, գետնատնակում լույս էր։

— Ես երկա՞ր եմ քնել։ Ժամը քանի՞սն է։

— Այս՝, բավական քնեցիք, — պատասխանեց Շապոշնիկովը, — ժամը տասն է։ Լավ հրաման կա։ Երեկ մեր զորքերը ամբողջումին տիրել են Բուգապեշտին։ Լավ է ստացվել, Զրիմի կոնֆե-րանսից անմիջապես հետո։ Մեծ թվով գերիներ են վեցըրել։ Նրանց հրամանատարին էլ են վեցըրել, ստորերկրյա խողովա-կում։

Հիշելով նախորդ օրվա իմ զրույցը Շապոշնիկովի հետ, ես ինձնից գոհ չեի։ Հակատանկայինի պատմածները տպավորություն չեին թողել։ Այնուամենայնիվ ես որոշեցի նրան լուսանկարել։ Սերժանտը սափրվեց, թեև նա բոլորովին էլ մորուք շուներ, եր-կար նայեց հայելուն, երկար սանրվեց։

— Զեր Կուրսիի մարզը ինձ ծանոթ է, — ստացի ես անտար-բեր տոնով։ Գեղեցիկ, լավ մարզ է։ Մանավանդ գարնանը, երբ յուրաքանչյուր թփուտի վրա սոխակներ են երգում։ Այդտեղ մի լավ գյուղ կար, Օլշանկա անունով, Զերնյանսկու շրջանում։ Եր-կու ամիս ապրել եմ ես այդ Օլշանկայում։

— Ո՞ր Օլշանկայում եր ապրել, — հարցրեց սերժանտը իր քնուց թափշյա ձայնով։ — Այստեղ կա երեք Օլշանկա։

— Ճիշտ է, երեք Վերին, Ներփին և Միջին։ Ես ապրել եմ Միջինում՝ գետի ափին, բլուրի վրա։ Դա մի բարի պառավիք խրճիթ էր, նա ապրում էր իր աղջկա՝ Մաշա անունով մի լավ աղջկա հետ։

— Դուք եղել եք մերոնց մոտ, մորս մոտ։ Մաշան իմ քույրն է, — համարյա թե ճշաց Շապոշնիկովը։

Ես նայեցի նրան։ Սերժանտի աշքերը փայլեցին՝ նրանք թվա-ցին շափականց ծանոթ։ Եվ հանկարծ իմ առջև կանգնեց փոքրիկ Մաշայի կերպարանքը։

— Իվա՞ն, ուրեմն այդ գո՞ւ ես, իմ տանտիրությունը որդին:

— Ճի՞շտ այլպես:

Ես նրան դրկեցի, ինչպես եղբորս, երկարատև անջատումից հետո:

— Ի՞նչպես ես քեզ շնանաշեցի: Զէ՞ որ դրանք Մաշենկայի աշքերն են...

Եվ ես սերժանտին սկսեցի պատմել այն ամենը, ինչ որ հիշում էի նրա մոր, քրոջ և հարիանների մասին:

Շապոշնիկովը լսում էր, շունչը պահած: Նա ինձ ցույց տվեց Մաշայի նամակը: Նա գրում էր. «Մայրիկը շատ է ցանկանում քեզ տեսնել: Ասում է, երկի այնպես է մեծացել, որ մենք չենք ճանաշի: Քո նավակը անվնաս է Վանյա, թիերն էլ են պահպանվել: Ե՞կ, մեզ ման կածես: Սպասում ենք քեզ...»

Դա ինձ ծանոթ, մեծ-մեծ տառերով աշակերտական նույն ձեռագիրն էր, որ արդեն ձևավորվել էր, դարձել հաստատուի, գեղեցիկ: Երկար, երկար մենք հիշեցինք Կուրսկու մարզը, խոսեցինք և սոխակների, և այդինքների, և գարնան, և Կուրսկու անընդգրկելի ծաղկի ու բուրմունքի մեջ կորած տափաստանների մասին: Ապա Շապոշնիկովը ցույց տվեց իր թնդանոթը: Այդ նշանավոր թնդանոթը բաց է թողնված N գործարանում այն ժամանակ, երբ Կարմիր Բանակն սկսեց կիրառել ուղիղ նշանառության տակտիկան, —բացատրում էր Շապոշնիկովը, —այնտեղ է նա ստացել այդ թնդանոթը և նրա հետ անցել իր մարտական ամրող փառավոր ուղին, սկսած Ստալինգրադից: Ես ձեռքով շոշափեցի թնդանոթի խողովակը, փակադակը և հիացմունքից շիմանալով ինչ ասել, արտասանեցի:

— Լա՞վ թնդանոթ է:

Շապոշնիկովն ինձ ծանոթացրեց նշանառու Լեմեշեկի հետ, երկրորդ համարի՝ Կակունինի հետ: Ես սեղմեցի նրանց ձեռքը և սեղմեցի Լեռնային Պարաբազցի հայ մեքենավար՝ Արմենակ Պետրոսյանի ձեռքը:

— Այդ նա է մեր թնդանոթները տանում ուղիղ նշանառության, —բացատրում է Շապոշնիկովը, —մեզ մոտ կա այսպիսի առած: ասում են՝ որտեղից չի անցնի եղնիկը, այնտեղից կանցնի Պետրոսյանի մեքենան:

Ես ունեցա այնպիսի զգացումներ, ինչպիսի զգացումներ որ

ունենում են հնագետները երկարատև պեղումներից հետո կատարած հայտնագործության ժամանակ: Կարծեք թե մի ամբողջ աշխարհ էի հայտնագործել: Սերժանտ Շապոշնիկովի կյանքի բոլոր մարտական էպիզոդները, որ ինձ սովորական էին թվում, — կենդանացան, ստացան իմաստ և ջերմություն: Իսկ իվան Անդրեևիշ Շապոշնիկովը, ինձ համար դարձավ Վանյուշկա, թեև նա միայն հեռավոր կերպով էր հիշեցնում Վանյուշկայի նկարին, որի վրա ես նայել էի երկու տարի առաջ, նրա մոր մոտ: Նրան փոխել էին և՛ հասակը, և՛ բնությունը, և՛ մանավանդ պատերազմը: Ինձ թվում էր, որ Վանյուշան ծնվել է, մեծացել և առնականացել ահեղ պատերազմի ընթացքում իմ աշքերի առաջ, որ ես ինքս եմ հետևել այդ երկար գործողությանը և ոչինչ չի մնացել ինձնից գաղտնի: Տղամարդ դարձած այդ պատանյակի մեջ ես տեսնում էի մեծ պատերազմի ողջ պատմությունը, մեր Բանակի ուժը և այն անհաղթահարելի ուժը, որ կոչվում է հայրենասիրություն:

— Ուրեմն ես քեզ գտա, Վանյուշկա, գտա երկու տարի հետո, — կրկնում էի ես: Չէ որ ես մորդ ասում էի, որ ամեն ինչ լավ կլինի: Տեսնում ես, բոլորը կատարվեց. նշանակում է շխաբեցի: Այժմ նամակ կդրենք. կուրախացնենք պառավին և Մաշային...

Փետրվար 1945 թ.

Գործող Բանակ

## ԴՆԱՅ.ՔՈՒՄ

Թեթև ցնցումից հետո զնացքը կանգ առավ փոքրիկ մի կիւսակայարանում: Վաղ առավոտ էր, բայց ճամբորդները գեռ չեն արթնացել կուպեում: Վերեի տեղում ողջ գիշեր անհանդիւտ ծխող ծերունին էլ էր քնել թեթև խոմփոցներ արձակելով: Արթուր էր միայն երիտասարդ լեյտենանտը: Հենակը թեր տակ առնելով, մոտեցավ նա լուսամուտին, տենդից ալրիդ ճակատը հպեց պաղ ապակուն: Արթնացել էր քնությունը կոռու ձորում իր բոլոր գեղացկություններով: Գիմացի բարձունքից ցած էր թափվում ձյունի պես սպիտակ լեռնային փոքրիկ ջրվեժը, սարերի կատարներին խաղում էին արեի առաջին ցոլքերը: Կիսակայարանում մարդ չկար, բայց հերթապահից, որ գունավոր զրոշակը սեղմած թեր տակ, կանգնել էր լուս, երեկ բոպեներն էր հաշվում՝ զնացքն ուղարկելու: Հարեան վագոնից իջան երկու բանակային, պարկեարով ու թարմ տախտակից շինած շիմոգաններով:

«Երեի վերադառնում են տուն».—մտածեց լեյտենանտը:

Թեթև տոպրակն ուսին, գյուղացի մի կին դանդաղ ու անվըստահ մոտենում էր զինվորներին, ապա հանկարծակի կանք առավ: Նրա տառապած դեմքի վրա կար և՛ զարմանք, և՛ երկյուղը Ռւ կատարվեց այն, ինչ որ շատ անգամ էր աեսել լեյտենանտը իր երկար ճանապարհի փոքր ու մեծ կայարաններում: Կինը հանկարծ թոշունի կոփնչի նման սուր մի ճիշ արձակեց, տոպրակն ուսից ցած նետեց ու վազեց գեպի եկվորները: Նրանք պրկահանովեցին:

«Երեի մայրն է»,—մտածեց լեյտենանտը: Նա զգաց ուրախություն՝ ուրիշի ուրախության համար և միաժամանակ՝ խորը թախիծ, դառը տիրություն:

Նախանձո՞ւմ էր նա արդյուք ուրիշների երջանկությանը: Հա-

զի՞վ թե: Նախանձը փոքրիկ ու կույր դպացմունք է: Կյանքի ու մահվան փորձությունների միջով անցած մարդու հոգին երբեք չի փոքրանում:

Շոգեքարշը սուլեց ու գնացքը շարունակեց գալարվել կոռու ձորով: Լանջերը ողողվում էին արևի ճաճանչներով, հասուն կանաչի վրա փայլում էր վաղորդյան շաղը, սպիտակ ամպերի պատառիկների նման դեպի բարձունքներն էին սողում ոչխարների փոքրիկ հոտերը, պատանի հովիվները՝ մահակներին հենվելով, անտարբեր նայում էին անցնող գնացքին:

Այդ ամենն իրականություն էր, առարկայական, հստակ իրականություն: Ե'վ թափիշ խոտը, և' կապուցտ, մերկ ժայռերը, և' օձապտույտ գալարվող գետը, որ մեկ գնացքի աջ, մեկ ձախ կողմն էր անցնում ուրախ խաղով ու աղմուկով, իրականություն էին: Իսկ այն երկար ու անվերջանալի թվացաղ տարիները, որ եկել ու անցել էին արկերի շառաչներով, վառողի գորշ ծխով, գնդացիրների համազարկերով, դիակների, վիրավլորների արյան վրայով, թվում էին ծանր, երկար ու մղձավանշային մի երազ: Միայն ոտքի ցալը, որ մշտական կըսկիծի նման չէր հեռանում նրա մարմնի միջնց, վերադարձնում էր լեյտենանտին դեպի այն աշխարհը, ուր չէր ուղում վերադառնալ նա այդ պահին, կյանքի այս հմայող պատկերները դիտելիս:

— Գեղեցիկ է մեր կոռին,— շշնչաց մեկը նրա ետեից: Եիշտենանտը շուր եկավ: Հարևան ծերունին էր, որի դեմքը չէր տեսել նա երեկ մութ կուպեում: Նրանց հայցը ըներն իրար հանդիպեցին: Ակնոցների գոգավոր ապակիների տակից ծերունու տշքերն անսովոր խոշոր էին երեսում, ուռած ու ցալագար:

Մերունին աջ ձեռքի ցուցամատը տարավ ձախ աշքի առակու տակ՝ բիբը տրորելու:

Կուպեում արթնացել էին նաև նրբորդ ու շորրորդ ուսէելիցները, մի պառավ կին, որ քնել էր կապոցն ամուր գլխի տակ դրած և մի երիտասարդ կին իր փոքրիկ տղայի հետ:

— Ես առաջին անգամն եմ տեսնում այս բոլորը, — կարծէս ամաշելով, ասաց լեյտենանտը:

— Ո՞րտեղացի եք գուք, — հարցրեց ծերունին իր խոշորացած աշքերով նրան զննելով:

— Ծնվել եմ Հյուսիսիային Կովկասում. առաջին անգամ եմ Հայաստան գալիս...

— Դուք կարծեմ թրիլիսիից նստեցիք:

— Այո. բայց գալիս եմ ևս հեռվից. մի ընկեր ունեի, որի հետ միասին էինք եղել ռազմաճակատում, հասցեն հիշում էի, մի օրով իջա փնտուիլու, գտա ծնողներին, պարզվեց, որ նրանից տեղեկություն չկա, բաժանվել էինք մենք քառասուն շորս թվականի հարձակման ժամանակ:

— Հիմա ո՞ւ եք գնում,—հարցրեց ծերունին:

— Ծիշտն ասած՝ զգիտեմ... Հայաստան, առայժմ գեղի երեւման... հետո կտեսնեմ թի ուր...

— Որտե՞ղ է ձեր ընտանիքը:

— Զգիտեմ,—պատասխանեց լեյտենանտը թախծուտ ժպիտով,—ապրում էին Ռուսովում, հայրս, մայրս ու փոքրիկ քույրս, հիմա հետքերը չեմ գտնում... ոմանք ասում են, թե սպանել են գերմանացիները երկրորդ անգամ քաղաքը դրավելու ժամանակ... ոչինչ հաստատ զգիտեմ...

Պառակ ուղեկցուհին ուշադրություն դարձած կարեկցությամբ լսում էր լեյտենանտին:

— Բա ո՞վ է մնացել, բալա շան,—միշտամտեց նա էլ,—ազգական-բարեկամ...

— Ունեմ ընկերներ, ծանոթներ...

Երիտասարդ ուղեկցուհու փոքրիկ երեխան սկսեց լաց լինել:

— Սուս կաց, վալոդ, դյագյան բան է պատմում,—սաստեց մայրը, մի ձեռքով ներկելով շրթունքները, մյուս ձեռքով զեմքի առաջ բռնելով փոքրիկ, կլոր հայելին: Լեյտենանտը լոեց: Նա չէր ուզում որ խղճան իրեն, չէր ցանկանում կարեկցություն հայցել ուրիշներից, ցանկանում էր միայն, որ մարդիկ մասնակցություն բերեն այն վշտին, որից ո՞չ հրաժարվել էր ուզում նա, ո՞չ էլ ձնշվել այդ վշտի ծանրության տակ:

Կյանքում երկար ապրած մարդու փորձառությամբ ծերունին կարծես թի հասկանում էր երիտասարդ զինվորականի տանջվող հոգին:

— Իմ կարծիքով ավելի թեթև չէ ծնողների զրությունը,—ասաց նա, —ողջ կյանքս հաշվապահական սեղանի մոտ անցավ, երկու տղա աճեցրի: Մեկը քառասուն երեք թվին զոհվեց Արմավիրի մոտ... այնտեղից եմ գալիս. մայրն ստիպեց, որ գնամ գե-

ըեղմանը տեսնեմ... իսկ ավագից մինչև հիմա տեղեկություն չունեմ... մայրը մինչև հիմա էլ հույսով սպասում է...

Սերունին բութ մատով սեղմում էր թութունը ծխամորձի մեջ: Տիրեց երկար լուսություն: Հետո գնացքը կանգ առավ Կիրովական կայարանում:

Լեյտենանտը մոտեցավ լուսամուտին, նրա հետեւից՝ ծերունին էլ:

— Այստեղ խաղող լինո՞ւմ է,—հարցրեց լեյտենանտը:

— Զէ, բերում են,—պատասխանեց ծերունին և մի վայրկան մտածելով, ցած իջավ:

Երիտասարդ ուղեկցութին նոր կոշիկը ձեռքում բռնած, փնթփնթում էր ինքն իրեն.

— Սատկի կարողը, ահապին փող վերցրեց էս հասարակ տուֆինների համար, ոտս արդեն մոզոլ է դառել, ուզում էի իջնել, հուար է տալիս...

Սերունին ետ եկավ վագոն թղթե մեծ տոպրակը խաղողով լցրած ու հրավիրեց լեյտենանտին:

— Խաղող ուտենք...

Երիտասարդ զինվորականը կարմրեց:

— Շնորհակա՞լ եմ...

Աւ ծերունին մոտեցավ նրան, իր կարճ ու հաստլիկ ձեռքերով գրկեց երիտասարդի մեջքը:

— Մոտեցեք...

Պառավ ուղեկցութին էլ սեղանի վրա բացեց իր ուտելիքի դոգնոցը.

— Մի քիչ էլ իմ ունեցածից համ արեք, թագա լավաշ է...

Լեյտենանտը նայեց եփած համի կտորներին, կեղեների մեջ տափակված ձվերին, կանաչեղենին ու էլի շշնչաց. «Շնորհակալ եմ...

Երիտասարդ կինը սեղանին մոտենալուց հրաժարվեց և տղային էլ իր մոտ կանչեց: Սերունին խաղողի մի մեծ ողկույզ առաջարկեց երեխային: Երեխան նայեց մորն ու հանդիպելով նրա մեղմ հայացքին, վստահորեն ձեռք պարզեց ողկույզին:

— Ի՞նչ պիտի ասել պապիկին,—հարցրեց մայրը մանկավարժի շինծու խստությամբ:

— Շնորհակալություն,—արագ պատասխանեց տղան ու ադահությամբ սկսեց ուտել խաղողը:

Օրն անցնում էր հաճելիի: Լեյտենանտը դո՛հ էր իր ուղեկից և ներից: Նրանք թվում էին անշափ բարի և իրենց սեփական վըշտով հասկանում էին նրան: Լեյտենանտին թվում էր, թե ահա հենց դա էլ Հայաստանն է, որ ընդունում է նրան այդպես բարի, իր հայրերի երկիրը, որ ինքը չի եղել ոչ մի անգամ:

Երբ Լենինականն էլ արդեն մնացել էր հետևում և երիտասարդ զինվորականը հոգնել էր լուսամուտի առաջ կանգնելուց, ծերունին առաջարկեց նրան հանգստանալ: Լեյտենանտը պառկեց ու անմիջապես քունը տարավ: Երբ արթնացավ, մոտեցավ լուսամուտին, դիմացը, ամպերի մեջ տեսավ լեռնագագաթը:

— Սա երեխ, Արարա՞տն է:

— Այո:

— Կարծես երկնքի մեջ է մտել... այս բոլորը հեքիաթ է ինձ համար, հայրս էր պատմում, նա էլ էր ուզում Հայաստան վերադառնալ...

— Ո՞րտեղ եք իշնելու երևանում,—հարցրեց ծերունին:

Լեյտենանտն անմիջապես շպատախանեց: Քունքերն առնելով աջ ձեռքի ափի մեջ, նա մի պահ հետո շշաց:

— Չգիտեմ... գուցե տեղ ունենամ, եթե գտնեմ իմ մի բարեկամին... եթե նա ինձ ճանաչի...

— Ո՞վ է ձեր բարեկամը...

Լեյտենանտը վերստին լոեց: Նա ինքն էլ էր պահանջ զգում պատմել այն բոլորը, ինչ որ հուզում էր նրան: Բարի ծերունին ու պառավը նրան վստահություն էին ներշնչում, բայց չէր կարողանում նա խոսքեր գտնել, հասակների տարբերությունը, այնուամենայնիվ, զսպում էր երիտասարդ զինվորականին:

— Գնում եմ մեկի մոտ, որին չեմ տեսել երեք,—ասաց նա, ուժ դորժ դնելով ինքն իր վրա, —և շգիտեմ կընդունի՝ նա ինձ... Չէ՞ որ պատերազմից դալիս եմ ևս հաշմանդամ դարձած... այլանդակված դեմքով...

— Առաջինը, իմ կարծիքով, ձեր գեմքն այլանդակ չէ,—ասաց ծերունին,—սպիները զարդարում են հերոսին, երկրորդը՝ ձեր բարեկամի համար նշանակություն ունի՝ դա:

— Կուզենայի շունենալ այդ գարդարանքները,—պատասխանեց լեյտենանտը և նրա դալուկ այտերին կրկին կարմրություն

իջավ, —իմ ծանոթի համար դա կարող է նշանակություն ունենալ. մի աղջիկ է նա, որի հետ ծանոթացել ենք նամակով: Թառասուն-երկու թվին Հայաստանից նվերներ էինք ստացել ուղմաճակատում: Ինձ բաժին ընկավ մի զույգ ձեռնոց ու մի նախշած թաշ-կինակ՝ ուղարկողի նամակի հետ միասին: Պատասխանեցի: Նա էլ ինձ գրեց: Սկզբում գրում էինք Հայրենիքի մասին, հավատարմորեն նրան ծառայելու մասին, ամբողջ տարի շարունակ գրում էինք իրար ընկերական-բարեկամական նամակներ, հետո սկսվեցին սիրային բացարարությունները և այդպիս, կապվեցինք իրար: Նամակներում նա խնդրում էր, որ պատերազմից հետո ես իր մոտ գնամ, ես էլ խոստանում էի, իսկ երբ երրորդ անգամ ծանր վիրավորվեցի, երբ պարզվեց, որ հաշմանդամ եմ մնալու, համբայան քայլելու եմ ձախ ոտի պրոտեզով, և երբ հայելու մեջ ինք տեսա իմ փոխված դեմքը, դադարեցի գրել... Նա իմացել էր հասցես զորամասի պետից ու նամակով նախատում էր ինձ լուս-թյանս համար: Ես առանց թաքցնելու գրեցի նրան ամբողջ ճշգ-մարտությունը իմ մասին ու ստացա նրա նոր, կշտամբող նամա-կը, որի մեջ կրկնում էր նա իր հարավը... Եվ ահա գնում եմ և չգիտեմ, ճիշտ եմ վարդում արդյոք... Զե՞մ ճնշի նրան իմ վիշ-ճակով...

— Թող մատաղդ էլ լինի նա, — միջամտեց պառավը, — դուք բան լինի թող էք զոշիդ նշաններին էլ ու ինքը խնդրի, ի՞նչ իրաւ վոմք ունի շրնդունի...

Լեյտենանտը ամոթխած ժպտաց:

— Դուք այդպիս եք. ասում, մայրիկ, իսկ ես գիտեմ, որ նույնիսկ օրինական կանայք եղան, որոնք հրաժարվեցին իրենց ամուսիններից. իմ ծանոթ աղջկան ո՞վ կարող է մեղադրել, նա մի անգամ էլ գոնե ինձ չի տեսել...

— Նրանք ստոր կանայք են, նրանք շպիտի օրինակ լինեն նոր սերնդի համար, — ասաց ծերունին զայրանալով:

— Գետինը մտնեն այդպիսի կանայք, — հաստատեց պառավը:

— Ինչո՞ւ եք մեղադրում, — միջամտեց երիտասարդ կինը, — պայմաններն են մեղավոր, բոլորին չի կարելի մեղադրել...

Սերունին, պառավն ու լեյտենանտը մեկեն նայեցին նրան: Մի վայրկյան տիրեց տհաճ լուսթյուն:

— Ինչպի՞սի պայմաններ են պետք ձեզ՝ Հավատարիմ կին լինելու համար, — հարցրեց ծերունին ակնհայտ երդիմանքով:

— При чем тут *ես*, — պատասխանեց երիտասարդ կինը, — համենայն զեպս, բոլորին չի կարելի մեղադրել: Պայմաններն են երբեմն ստիպում...

— Թաղեմ նրանց իրենց պայմանների հետ, — բարկացավ պառավը, — բա սրանք լավ պայմաններ էին տեսնում էնտեղ կրակի մեջ, — ցուց տվեց նա լեյտենանտին:

Վեճի նոր ընթացքը անհաճու էր լեյտենանտի համար:

— Տեսնում եք, հայրիկ, բոլորը շեն մտածում այնպես, ինչ-պես դուք, — ասաց նա դիմելով ծերունուն:

— Իմ կարծիքով շպիտի զարմանաք, — պատասխանեց նա աշքերից ակնոցներն իջեցնելով, — շոգ է... ու — սկսեց թաշկինակի ծայրով սրբել ապակիները, — զաստիարակության հարց է դա... ես, օրինակ, իմ աղջկան տուն չէի ընդունի, եթե նա լրեր պատերազմ դնացած ամուսնուն... նայած թե ով ինչ ընտանիքում է մեծացել...

— При чем тут ընտանիքը, — վիրավորվեց կրկին երիտասարդ կինը:

— Ես ձեր մասին շեմ խոսում, — ասաց ծերունին ակնոցները քթին զնելով, որից էլի անսովոր կերպով մեծացան նրա աշքերը, — իսկ ինչ վերաբերում է ձեր ծանոթ աղջկան, դուք, փառքաստծո, խելոք, ես կասեի առողջ երիտասարդ եք, հոգով գեղեցիկ, իմ կարծիքով հիմար կլինի այն աղջկը, որ պիտի հրաժարվի ձեզանից, միայն նրա համար, որ մի ոտքից պիտի կազաք և ձեր գեմքին սպիներ կան, հիմարի մերժումի համար էլ շարժի տանջվել, դուք, իմ կարծիքով, ավելի մեծ բաներ եք կորցրել...

— Թող դեռ ինքը քեզ խնդրի, — կրկնեց էլի պառավը, — երանի շեր գերզս գար, թող երկու ոտն էլ լիներ, միայն տեսնեի երեխայիս, էն քաղցր ձենը լսեի...

Կուպեռում ծանր տապ էր: Լեյտենանտը փորձում էր աշքերք փակել, մոռանալ մի վայրկյան ինքն իրեն, հաշվում էր անխվների պտույտները, նայում դիմացի լուսամուտից երեացող լեռնաշարքերին և կրկին տարվում էր մտքերով:

— Մոտենում ենք ծրանին, — ասաց ծերունին:

Լեյտենանտը հուզված փորձեց վեր կենալ:

— Զեր գալու մասին դիտե՞ն:

— Հեռագրել եմ, — ասաց երիտասարդը, — և ճիշտն ասած՝ ժողմանել... գուցե պետք չէր... պատահաբար կհանդիպեինք, այն ժամանակ ամեն ինչ կպարզվիր...

— Ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար, — կրկնեց ծերունին, հարմար խոսք զգտնելով նկատելիորեն հուզված երիտասարդին հանգըստացնելու, սփոփելու կյանքում մենակ մնացած մարդու ճըմըլող սիրտը:

— Որ տեսնեք կճանաշե՞ք:

— Չգիտեմ... լուսանկարն ունեմ... նա էլ իմ հին նկարն ուներ...

— Կարելի՞ է տեսնենք, — խնդրեց պառավ ուղեկցուհին:

Լեյտենանտը անխոս՝ ծոցի գրպանից հանեց մի լուսանկար ու պարզեց պառավ կնոջը:

— Լավ աղջիկ է երեսում, — որոշեց նա երկար նայելուց հետո, ձեռքից բաց թողնելով նկարը, որ երիտասարդ կինը զեալի իրեն էր ձգում:

— Լավիկն է, — ասաց նա էլ, — ծանոթ է երեսում, բայց չեմ ճիշտում, թե որտեղ եմ տեսել...

Հերթը հասավ ծերունուն:

Լեյտենանտը սպասում էր բոլորի դատապատանին, հաղիվ հազ զսպելով հուզմունքը: Աղջիկը կընգումի իրեն, թե չէ, կհասկանան նրանք իրար, թե չէ, միմնույն է, միայն թե թող լավ տպավորություն գործի նա մարդկանց վրա, նա, որի մեջ էին նրա բոլոր հույսերը, որն առայժմ միակ հարազատն էր նրա համար, որի նամակների ամեն մի խոսքը կյանք էր ներշնչում նրան, որին ճանաշում էր նա կարծես թե մանկությունից:

Երբ ծերունին վերցրեց աղջկա լուսանկարը, մոտեցրեց աշքերին, թվաց թե տեսնում: Ակնոցները հանեց, սրբեց ապակիները, կրկին դրեց աշքերին, ու էլի նայելով լուսանկարին, դողողացող ձեռքերով պատկերը վերադարձրեց լեյտենանտին:

— Իմ կարծիքով այդ աղջիկը... եթե կանչել է ձեզ... հավատարիմ կլինի իր երդման...

Ծերունուն՝ վստահությամբ լի խոսքերը, մանավանդ նրանց հաստատուն եղանակը մեղմացրին երիտասարդի հուզմունքը:

— Ինչպես կարելի է լուսանկարով որոշել, — ասաց երիտասարդ կինը:

Ծերունին նրան շպատասխանեց ու դարձավ լեյտենանտին.

— Ինչպես է ձեր ազգանո՞ւնը:

— Աշոտ Ալիսաղյան:

— Ալիսաղյան Աշո՞տ...

Վերջին անգամ երկար ու հնչեղ սուլեց շոգեմեքնան: Գնացքը մտնում էր Երևան կայարանը:

Լեյտենանտն ու ծերունին իրար կողքի կանգնած նայում էին բաց լուսամուտից, տեսնում էին այն իրարանցումը, լսում այն ձիշերն ու բացականշությունները, որ սովորական են հարավի քոլոր մեծ քաղաքների կայարաններում գնացքներին դիմավորելու ժամանակ: Այդ ընդհանուր իրարանցման մեջ լեյտենանտի հայացքի տակով շողացող ու անցնող բոլոր դեմքերի մեջ ոչ մեկը ծանոթ չէր նրան: Նա տիրությամբ մի վայրկյան շուռ եկավ զուսամուտից և հենց այդ վայրկյանին էլ ծերունին կանչեց.

— Այստեղ եկեք, բարձրացեք այս վագոնը...

Ու թերվելով դեպի լեյտենանտն՝ ասաց.

— Մերոնք գալիս են... իսկ գուք միք հուղվի, հանդիսանդիք...

Ներս վազեց բարեձև, թուխ գանգուրներն ուսին թափված երիտասարդ մի աղջիկ:

— Հա՛յրիկ...

Հայրը գրկեց նրան, համբուրեց ճակատը և շուռ տալով նրան դեպի լեյտենանտը, հարցրեց.

— Ճանաշո՞ւմ ես, Արևիկ... իմ կարծիքով... քո փեսացունէ...

— Աշո՞տ, — ճաց աղջիկն ու շնորհած անակնկալից՝ կանգնած մնաց արտաքինով գրեթե անծանոթ դինվորականի դիմաց, որը նույնպես շփոթված էր ու կարծես թե չէր ըմբռնում, թե ինչ է կատարվում:

— Հայրիկ, նա... լավ տղա է... աղնի՛վ խոսք, — շփոթմունքի մեջ շնորհում էր աղջիկը:

Ծերունին ճախ թերվ գրկելով նրա իրանը, դիմեց լեյտենանտին.

— Այս, ձեր հարսնացուն իմ աղջիկն է եղել...

Ներս մտավ ծերունու կինն էլ՝ արտասուբներն աչքերին,  
ապա բարեկամներ, ծանոթներ, տղամարդիկ, երեխաներ, կա-  
նայք:

— Լաց մի լինի, Շուշանիկ, ահա քո նոր տղան...

Ուղեկից պառավը հիացմունքով նայում էր այդ տեսարա-  
նին: Երիտասարդ կինն իր տղայի հետ միասին արդեն հեռացել  
էին կուպեից:

— Դե, գնանք տուն,—ասաց ծերունին, բռնելով երիտասար-  
դի հենակից ազատ թևը, որ հաստատուն քայլի նա...

Հունվար 1945

Թբիլիսի

## ԳԵՆԵՐԱԼԻ ՔՈՒՅՐԸ

Երբ գեներալի՝ անցյալներում համեստ անունը լայն ժողովրդականություն ստացավ. պատերազմի տարիներին, բախտի գաժան խաղով աշխարհովը մեկ ցրված պանդուխտ հայերից նամակների անվերջ հեղեղ էր հոսում դեպի նա:

Մի անգամ էլ սովորականի պես համհարզը բերեց օրվա փոստը: Հանդարտ ու անշտապ, գեներալը բացում էր ծրարները, կարդում ու մի կողմ էր դնում: Դուստրը, որ այդ ժամանակ հյուր էր եկել հոր մոտ, հանկարծ նկատեց նրա զուսպ հուզմունքը, երբ խորասովզած՝ գեներալը կարդում էր կանացի մանր ձեռագրով գրված երկար մի նամակ:

Ավարտելով ընթերցումը, գեներալը լուր քայլում էր սենյակում, ապա մոտեցավ աղջկան.

— Դու էլ կարդա այս նամակը, Մարգարիտ...

«Հարգելի հայրենակից, բարեկա՞մ, թե եղբա՞յր: Զգիտեմ ինչպես դիմեմ ձեզ»...

Այսպես էր սկսվում այդ նամակը:

...«Դուք ինձ շեք ճանաշում, թեև վաղոց է, որ հարազատ մարդ եք դարձել ինձ համար: Դուք իմ գոյության մասին էլ ուինչ շգիտեք, իսկ ես, սկսած այն օրից, երբ լսել եմ ձեր անունը, ապրում եմ երանելի երազների ու պատրանքների մեջ: Կարծես թե իմ հոգում հարություն է առել վաղոց կորած մի ողջ աշխարհ, կարծես թե գիշերվա թանձրացյալ խավարի մեջ շողաց հանկարծ արկը՝ երջանիկ ու փառավոր ճաճանչներով ողողելով աշխարհն ու իմ էռությունը: Մի տարոց ավել է, որ ես փորձում եմ գրել ձեզ այս նամակը և շեմ կարողանում: Վախենում եմ փշրել ինքս իմ ձեռքով այն երազանքները, որոնցով լցվել է հո-

դիս այնպես անսպասելիորեն: Ես նման եմ այն զեռատի աղջը-կան, որը սրտի թրթռումով իր ձեռքին պահում է բյուրեղյա ծալդկամանը, սքանչանում է նրա ծիածանային փայլվանքներով և վախենում է զնել սեղանին, որ շիշրվի հանկարծ: Ավելի լավ էր ապրեի իմ երջանիկ պատրանքների աշխարհում, քան գառը հիասթափության հանդիպեի: Այսպես էի մտածում ես: Բայց ոչ, չեմ հիասթափիվելու ես: Ճակատագիրն իրավունք չունի անվերջ շարունակելու իր քմահաճ խաղերը... Մի՛թե կյանքում կարող են լինել այդքան երջանիկ զուգագիպություններ, այդքան զարմանալի պատահականություններ: Չի կարող այդպես լինել, ես հավատում եմ, որ այդպես չի լինի և զրա համար էլ երկարատև ու տանջալից վարանումներից հետո որոշեցի զրել ձեզ այս նամակը: Ինչ էլ որ լինի, զուք պետք է ճանաչեք ինձ, ես շպիտի մնամ ձեզ համար անհայտ ու անծանոթ մի կին, զուք պետք է իմանաք իմ գոյության մասին:

Ո՞վ եմ ես և ի՞նչն է հուզում ինձ: Օ, քիչ է, եթե ասեմ, որ ես ամերիկացի հայուհի եմ, որը սիրում է Սովետական Հայաստանը, որը Սովետական Միության բարեկամն է, աղսթում է Ստալինի կյանքի համար և ձեր բոլորի, նրա բարեկամների համար: Դա պանդիստության մեջ ապրող ամեն ճշմարիտ հայի և ամեն գիտակից հայուհու պարտքն է: Դա շատ քիչ բան կասի ձեզ իմ մասին: Ես կցանկանայի, որ դուք իմանագիք իմ տիսուք կյանքի պատմությունը: Խոսքեր շեմ գտնում զբելու: Զերքերս դողում են, բառերը խառնվում:

...Ծնվել եմ ես Վանա ծովի ափին ընկած փոքրիկ մի գյուղում: Բոլորը, բոլորը հիշում եմ ես, ինչպես այսօրվա պայծառ առավոտը, և մեր կապույտ լեռները, ձորերը, մեր զրախտային պարտեզները և մեր գեղեցիկ լիճը և Սխիթամարա վանքը՝ կը դադու վրա, ուր ամեն տարի ուխտ էինք գնում մեծ ու փոքր միասին: Կա՞ աշխարհում մի ուրիշ շքնաղ երկիր, ինչպես որ մերն էր, որից զրկեց մեզ այնքան դաժան ու անողորմ և այնքան անհեթեթ բախտը: Հիշո՞ւմ եք զուք այդ ամենը, հիշո՞ւմ եք, թե ինչպիսի աննման բարձրաքանդակներով էր զարդարված Սխիթամարա վանքը... Զգիտեմ, կարո՞ղ եք զուք հիշել:

Երեսուն տարի է անցել այդ օրերից: Ես այն ժամանակ յոթ տարեկան էի: Բայց կարծես երեկ էր դա...

Հսում եմ ես հիմա էլ կրակոցները մեր գյուղի փողոցներում, սև ծովսը պատռում է աշքերս և զգում եմ վառողի հոտը, տեսնում եմ իմ վիթխարահասակ հորը, որ բռունցքները սեղմած, օրորվելով ընկավ թշնամու գնդակից արնաշաղախ զեմքով, տեսնում եմ արյան լճի մեջ փոված իմ մոր մազերը: Այս հուշերը սարսափելի են: Նրանք, իմ ծնող հայրն ու մայրս շարունակ աշքիս առաջ ընկած են եղել արյան մեջ՝ սուրբ նահապետների պես:

Այդ օրը ես ճշալով փախա հայրենական տնից գեպի աղատ ու բաց դաշտը: Այս ժամանակ չեմ հասկանում, թե ինչու են մեզ սպանում: Այնքանը գիտեի, որ հայ քրիստոնյաներ ենք մենք և զրա համար էլ կարող են մեզ սպանել: Թուրքերի սրից ընկավ մեր ողջ նահապետական ընտանիքը, ամբողջ գյուղը: Փրկվեցինք ևս և յոթ եղբայրներիցս մեկը միայն, որ ինձնից մեծ էր ութը տարրով: Թագնվեցինք մենք քարայրներում: Գիշերները փոքրիկ գաղանների նման դուրս էինք գալիս մեր թագստոցներից և թափառում էինք գյուղերում ուտելիթ որոնելու, անցնում էինք մեր հարազատների դիակների միջով: Հիշում եմ այդ ամառային գիշերները... ոչ մի կենդանի շոմչ շկար գյուղերում, բացի անտում կատուններից, որ տիտուր ու խեղճ մլավում էին խոտով ծածկված հողե կտուրների վրա... երկու ամսից ավելի մենք ցերեկն ապրում էինք քարանձավներում, գիշերները թափառում էինք մեռելների աշխարհում: Ոչնչի չէինք սպասում ու չէինք որոնում ոչ մի ձանապարհ: Եվ ահա մի օր հանկարծ հայտնվեց ոռւսական բանակը: Եղբայրս դուրս եկավ նրանց դիմավորելու: Կողակները վերցրին մեզ իրենց թամբերի վրա, ման ածեցին, հաց ու շաքար տվին: Տեսանք մենք ուրախ դեմքեր, կենդանի ծիծաղ լսեցինք: Այդ օրերին ես սովորեցի ոռակերեն առաջին բառերը. «իմեր, բրատ»... Ինչքան կյանք կար այդ բառերի մեջ մեր մանկական հոգիների համար:

Չեմ հիշում միայն, թե որքան տեսեց մեր երջանկությունը: Սկսվեց նահանջը, շարդերից փրկվածների գաղթը: Իմ ականջներում մինչև հիմա էլ հնչում են բազմությունների ճիշերը, նրանց ողբն ու կոծը, լսում եմ ձանապարհների վրա մեռնողների աղոթքի մրմունջները: Ուր էին շարժվում այդ հալածական մարդիկ, մայր ու մանուկ, ծեր ու պատանի, մի ողջ տեղահան ժողովուրդ, ինչո՞ւ էին թողել իրենց դաշտերն ու հանդերը, ձորերն ու լեռնեւ-

քը, իրենց այգիներն ու պարտեզները, թողել էին ցորենով լի իրենց ամբարներն ու մեռում էին քաղցից օտար ճամբաների վրա: Կեպի Ռուսակայաստան... բոլո՞ր ճանապարհները տանում էին դեպի Ռուսակայաստան, գեպի փրկություն... եվ երկար ու անվերջ էին թվում այդ ճանապարհները: Ես հոգնում էի. ոտքերս տուել էին ու խոցերով պատել: Եղբայրս շալակում էր ինձ ու քայլում հենվելով փայտին: Խեղանք իմ եղբայր, ինչքան տառապանքներ կրեցիր զու ինձ համար: Այդ բոլորը հիշում եմ ևս այսօր, բոլորը, ոչինչ չի կորնչել իմ մտքից... Մենք անցանք գեղեցիկ, կանանց մի հովհատով, ուր շատ քարաշեն եկեղեցիներ կային՝ սիրուն գմբեթներով: Եղբայրս ասաց, որ դա Ալաշկերտն է, որտեղ ծնվել է մեր մայրիկը: Հասանք մեծ մի քաղաքի քարե պարիսպներին: «Սա Ղարսն է», — ասաց եղբայրս: Իմ թափառ կյանքի ընթացքին, իմ հասուն տարիներին շատ քաղաքներում եմ եղել ես, շատ եմ ճանապարհորդել: Շուտ են ջնջվում բոլոր թե վառ, թե մոռալ տպավորությունները, մանկության տարիներն են միայն անմոռաց մնում: Ղարսում գաղթականները կանգ տռան հանգստանալու: Դա արդեն Ռուսակայաստանն էր: Ուրեմն ոչ որ այլևս չէր հալածելու մեզ: Բայց թշնամին հասավ նաև այդ քաղաքին և եղբայրս հրացան վերցրեց գնաց կովելու: Այնուհետև այլևս երեք շտեսա նրան: Կորցնելով եղբորս, ես զդացի ինձ ամբողջովով որբ ու անպաշտապան: Փախչում էի անծանոթ մարդկանց խմբերի հետ, որոնում նրանց մեջ եղբորս ու շէի գտնում:

Կոփը գաղաքեց: Մերկ ու բոկոտն, երկու տարի թափառեցի գյուղամիջյան ճանապարհներով, ողորմություն էի խնդրում, շամաշէլով իմ մերկությունից, շամաշէլով մի կտոր սև հաց վերցնել ինձ պարզված ձեռքից: Ամերիկան այս մեծ քաղաքում, որտեղից գրում եմ ձեղ այս նամակը, ինձ շրջապատող բարեկամներից ոչ որ զգիտի իմ կյանքի այդ մանրամանությունները: Եվ իմ որդին էլ զգիտի, որ իր մայրիկը մանկության տարիներին մուրացիկ է եղել...

Թափառում էի ես գյուղամիջյան ճանապարհներով և սպասում, որ հանկարծ լեռնային կածաններում իմ առաջ ենի իմ եղբայրը, առնականացած, հորս նման հսկա դարձած, հրացանը ուսին: Բայց նա չերեաց: Ես վստահ էի, որ կգտնեմ նրան, որ

նա կդառնա մեծ զորավար և ինքս էլ նրա հետ միասին կգնամ վրեժ լուծելու մեր ծնողների արյան համար:

Արդյոք ոշինչ շեն ասում ձեզ իմ այս հիշողությունները: Ոշինչ: Ուզում էի տեսնել ձեզ, տեսնել հեռվից ձեզ այն պահին, երբ դուք կարդում եք այս տողերը... Այն ժամանակ ես ձեր դեմքի վրա կտեսնեի ամեն բան և հասկանայի ամեն ինչ...

...Ամերիկացիները ինձ վերցրին որբանոց, հազցրին և այրենարան տվին ձեռքս ու այնուշետև բերեցին այստեղ: Անցան տարիներ: Անցավ մանկությունս: Շատ բան, որ ծածկված էր առեղծվածի մշտչով, հասկանալի դարձավ: Ես իմացա, որ նորից ուսուները օգնության ձեռք են մեկնել մեր մեռնող ժողովրդին, ռարի կանգնեցրել մեր բայրայված Հայաստանը, որ մենք ունենք Հայրենիք, որի կյանքն ու ապագան փրկված են: Նա մեր հույսն է, մեր բոլորիս, դժբախտ տարադիրներիս հույսը: Ես հետաքրքրություն եմ այն բոլորով, ինչով ապրում է մեր երկիրը: Քուն թե արթուն Հայրենիքը միշտ կանգնած է եղել իմ աշքերի առաջ, տեսել եմ բիբլիական Արարատյան դաշտավայրը, ալեհեր Մասիսի հպարտ դագաթը, արծաթյա ալիքները Արաքս գետի, որն սկսվում է Բինգյուլյան լեռների ազդյուրներից: Ես գիտեմ, թե որքան դպրոց, ինստիտուտ ու թատրոն կա Սովետական Հայաստանում, գիտեմ Հարազատ հայրենի երկրի արտիստներին, գրողներին, գիտնականներին, գիտեմ անունները մեր նոր նախարարների, որոնք հավատով ու ճշմարտությամբ ծառայում են Հայրենիքին:

Ամերիկացում ես գտա հայրենակիցների: Ամուսնացա հայի հետ. իմ որդուա վրա դրի իմ եղբար անունը, հույս ունենալով, որ երբեք կդանեմ նրան: Ինչե՞ր ասես շեն լինում կյանքում:

Եվ ահա սկսվեց այս նոր, սարսափելի պատերազմը: Ինձ թվում էր, թե իմ հայրենիքի երեխաների համար կրկնվում են իմ սկ մանկության սարսափները: Ես, իմ ընտանիքի մայրը, այլևս չեմ կարող տանը նստել: Հեռավոր Ռուսաստանից ինձ էին հասնում թշվառների ճիշերը, գերմանական գազանի ճիրաններում տանջողների հառաջանքները: Կարմիր Բանակի և մարտերում գոհված սովետական ռազմիկների երեխաների համար նվի-

բեցի իմ մանյակը, ոսկե մատանին, այն բոլորը, ինչ որ ունեի, և աղօթում էի, որ սև ուժերը շրվեն իմ հեռավոր Հայրենիքից: Իմ խնայողությունները նվիրեցի «Սասունցի Դավիթ» էսկադրիլիակառուցելու ֆոնդի օգտին:

Պատերազմի առաջին տարիներին շունչս կտրվում էր, կարծես թե սիրտս դադարում էր բարախելուց, պայծառ օրը ծածկվել էր խավարով: Աղատ շունչ քաշեցի այն օրը միայն, երբ ուստիոն հաղորդեց Ստալինգրադում Կարմիր Բանակի տարած մեծ հաղթանակի մասին: Ռադիո՝ մարդու պքանչելի ստեղծագործություն... Ռադիոյով առաջին անգամ ես լսեցի քո անունը, իմ հեռավոր եղբայր, իմ հարազատ... Զե՞ս հիշում դու ինձ, քո փոքրիկ, դժբախտ քրոջը, Անահիտին, որին դու թողիր Հարսում պառավ Հոփիսիմեի մոտ և գնացիր կովելու... նրա ամուսինն ինձ ասաց, որ այնուհետև քեզ տեսել են Սարդարաբատի կովի օրերին... Պատասխան տուք, մի լոիր: Մի՞թե դու չէիր դա... Ոչ, ներեցեք, ներեցեք, թերևս ես շտապում եմ, թերևս կյանքում իրոք լինում են այդպիսի զուգագիպություններ... Մեր ազգանունները նույնն են և իմ եղբոր անունն էլ Հովհաննես էր... Մի՞թե դուք իմ եղբայրը չեք: Անհնարին է, որ այդպիս շինի, չի կարող պատահել, որ շիրականանան իմ երազները: Ահա թե ինչու ես վախենում էի գրելու ձեզ այս նամակը, վախենում էի փշորել իմ պատրանքների բյուրեղյա ծաղկամանը...

Իմ գլխավերեսում կախված է ձեր պատկերը, ամեն օր ես նայում եմ ձեզ և թվում է, որ դուք ժապասիմ եք և այնպէս հարազատ է ձեր ժապիտը: Այդպիս ժապում են միայն քրոջը: Թվում է, որ դուք ճանաշում եք ինձ և շոյում ինձ ձեր եղբայրական նույր հայացքով, որպեսզի սփոփեք ձեր քրոջ սիրությունը: Օրենքս ինձ մոտ եկավ իմ ընկերուհին, ամերիկյան մի նկարչուհի: Նա նայեց ձեր նկարին ու բացականշեց.

— Ոչ, աստված իմ, այս մարդը որքան նման է ձեր որդուն, Հովհաննեսին: Ձեր ազգականներ է...

Եվ, դառնալով ինձ, նա զարմացավ:

— Ինչո՞ւ այդպիս գունատվեցիք, Անահիտ, ի՞նչ պատահեց...

Դրանից հետո ևս հաստատ որոշեցի գրել ձեզ այս նամակը։ Պատասխանեցեք ինձ, թեկուզ երկու բառով։ Ես երջանիկ եմ, որ դուք գոյություն ունեք աշխարհում, որ կա մեր նահապետական տոհմի ազգանունը կրող զորավար Հովհաննես։ Եթե նույնիսկ դուք իմ եղբայրը չեք, եթե միենույն մայրը չի ծնել մեզ, դուք այնուամենայնիվ, իմ եղբայրն եք։ Իմ եղբայրն իմ ճակատագրի համար չեր կարող ավելին անել, քան դուք եք արել։ Թող բնությունը ձեզ երկար կյանք պարզեի և թող ապրի մեր ժողովուրդը, մեր սիրելի Սովորական Հայաստանը՝ բոլոր պանդուստ հայերիս հույսի անմար փարոսը... Եվ թող երկար, երկար ապրի Մեծ Միության առաջնորդ Ստալինը։

Թույլ տվեք ստորագրել այսպիս՝ ձեր քույր՝ Անահիտ»։

Երբ գեներալի աղջիկը կարդաց հեռավոր Ամերիկայից նրա հորն ուղարկած անձանոթ կնոջ նամակը, հայրը մտածելու, պատուհանից դուքս էր նայում Բալթիկ ծովի սպիտակ ափերին։ Մայրամուտի ճառագայթները լուսավորում էին նրա թուխ, եռանդուն դեմքը։ Նա կանգնած էր լուռ և անշարժ։ Դուստրը բոլոր մանրամասնություններով գիտեր հոր կյանքի ուզին և ոչ մի հանելուկ չկար նրա համար։ Նա ակնածանքով մոտեցավ հորը, գլուխը գրեց նրա կրծքին։

— Հայրիկ գրիր, որ դու նրա եղբայրն ես...

Գեներալը շոյեց աղջկա մազերը, խորհեց և կարձատե լուսթյունից հետո ասաց.

— Ու, Մարդարիտ, այդպիսի կնոջ չի կարելի խաբել, զրենք նրան ճշմարտությունը։ Բայց զուգագիպություններն ավելի են, քան նա ենթադրում է։ Ես հիշում եմ այդ բոլոր իրադարձությունները, ես նույնպես եղել եմ Ղարսի ու Սարդարարատի կոիվներին։ Թյուքբերն այն ժամանակ մոտեցան համարյա էջմիածնի վանքին։ Ժողովուրդը նրան ետ շպրտեց Սարդարարատի ճակատամարտում... Թետք է պատասխանել, զրենք նրան միասին։

Աղջկան իր կողքին նստեցնելով, գեներալը վերցրեց գրիշն ու սկսեց գրել։

«Թանկագին քույրս։ Զեր նամակը շատ հուզեց մեզ։ Ես

ծնվել եմ ոչ թէ Թյուրքահայաստանում, այլ Կովկասում և մինչեւ  
այսօր Անահիտ անունով քույր չունեի: Դուք կարող եք ինձ ձեր  
հարազատ եղբայրը համարել: Մեզ մի մայր չի ծնել, բայց ծնել  
է մեզ մի ժողովորդ և օժտել ընդհանուր զգացմունքներով:  
Այսօրվանից ես՝ ուրեմն քույր ունեմ հեռավոր օվկիանոսից այն  
կողմ... և պարտք ոմնեմ նրա առաջ:

Չեր եղբայր՝ Հովհաննես»...

Նոյեմբեր 1945 թ.

Մարիկա

## ՍՐԲԱՀԱՆ ՈՒԽՏ

Առավոտից մինչև կեսօր շրջում էինք Արևելյան Պրուսիայի Տիլզիտ քաղաքի ավերակների մեջ, անցնելով թաղից-թաղ, փռադոցից-փռզոց։ Հոգնած ու ձանձրացած ճնշող այն տպավորությունից, որ ունենում է մարդ ամայացած տեղերում ահավոր մեռելության մեջ թափառելիս, ուր մի ձայնի ես սպասում շարունակ ու շնուրում, ուր ժխորը վայրկյանի մեջ քարացել է ու դատապարտվել համբարենական անշարժության, — ծանր տրամադրությամբ դուրս եկանք մենք լայն ու կանաչ մի հրապարակ։ Անծանոթ քաղաքի փլատակների մեջ դժվար էր որոշել պատմական վայրերի անունները։ Նեման գետի ափին ընկած այդ քաղաքը պատմության մեջ նշանավորվել էր գոռոզացած կորսիկացու և ոուս երիտասարդ թագավոր Ալեքսանդր Ա.-ի հանդիպումով, որի թատրոնական մանրամասնություններին այնքան անմոռանալի էջեր է նվիրել «Պատերազմ և խաղաղություն» դյուցազներգության անմահ հեղինակը։ Անկարելի էր որևէ հիշատակ գտնել անցած գնացած օրերից։ Բոլոր հետքերը ջնջվել-կորել էին։ Ավերակների մեջ արդեն բուսել էր վայրի կանաչը, քար, աղյուս և տնային այրված կահկարասինները ծածկվել էին դառը թփերով, թլում էր, թե կյանքն այստեղ կանգ էր առել դարեր առաջ, թե ավերակ էր գարձել այս քաղաքն անհիշելի ժամանակներից։

Հրապարակը, որի վրա դուրս եկանք, վայրկենապես ինչ-որ զվարթ տրամադրություն հաղորդեց մեզ։ Նրանից էր, որ այստեղ օդն ավելի մաքուր էր, չեր զգացվում այն անախորժ խանձանութը, որ կար փողոցներում, թե՝ պարզապես ընդարձակ, կանաչ ու ծառապատ տարածության հաճելի տեսքից էր, մեղմ գեփյու-

սի՞ց, կամ գուցե քաղաքացիական նուրբ զգեստներով զբունող ռուս աղջիկների երևա՞լն էր պատճառը: Ո՞րտեղից հայտնվեցին այստեղ ռուս աղջիկները:

Հրապարակին մենք տվինք «Բրոնզե եղ» անունը, որովհետեւ նրա վերջում կանգնած էր վայրի եղան բրոնզե մեծ արձան, ծակծկված գնդակներից ու կոտրված եղջյուրով:

Աղջիկները ծաղկեփնչեր էին դրել հրապարակում թաղված զինվորների անանուն գերեզմաններին ու մեզմ երգելով զբունում էին: Սանոթացանք: Ասացին, որ եկել են Ուրալից այստեղի նոր բացված գործարանում աշխատելու, սպասում են նորերի գալուն, ձանձրանում են, ամեն օր այցելում են ընկած հերոսների գերեզմաններին ու զբունում այս հրապարակում: Հենված քարե ցանկապատին, մենք զբուցում էինք աղջիկների հետ, հարցնում երկրից, ժողովրդի կյանքից, նրանք հաճույքով պատասխանելով մեզ, իրենք էլ ուղարձակատի գործերի մասին էին հարց ու փորձ անում. ո՞ր գեներալն է գրավել այս քաղաքը, կովկանք մենք արդյոք այստեղ, շե՞նք ճանաշում հրապարակում թաղված այս հերոսներին:

— Եղբայրս սպանվել է ուղարձակատում, իսկ թե ո՞րտեղ, չգիտե՞մ;—տիրությամբ ասաց նրանցից մեկը, որին ընկերութիւները վերա էին կոշում,—ծանուցումն ստացանք երկու ամիս առաջ, մայրս խնդրեց հետաքրքրվեմ, ո՞վ դիտե, —ասում է, — գուցե գերեզմանը գտնես...

— Իմ էլ հայրն է սպանվել, —ասաց Մարիա անունով մյուս աղջիկը, —ո՞րտեղից կարող ես իմանալ, թե ուր է թաղված...

Աւ տիրուր հայացքն անորոշ տարածության հառելով, երկար լուսիոնից հետո ավելացրեց.

— Վերայի հետ որոշեցինք, թե դաել ենք մեր հարազատների շիրիմները, այն մեկն ահա՝ նրա եղբայրն ենք համարում, նրա կողքինն էլ իմ հոր գերեզմանն է, մեր ընկերութիւները թես դոհված ազգականներ շունեն, բայց նրանցից ամեն մեկը նույնապես մի գերեզման է ընտրել, գալիս ենք ամեն օր, թարմ դաշտային ծաղիկներ զնում նրանց վրա... եվ մեզ հետ թաշկինակներով հող էինք բերել հայրենի հողից, լցուինք նրանց գերեզմաններին... ծերունիների խորհուրդն էր. կթեթևանա, ասում են, օտար հողի ծանրությունը մերոնց վրա...

Մենք նայում էինք երիտասարդ, խարտեշավարս, խաժակն աղջիկներին, որոնք գեղեցիկ էին իրենց առաքինություններով և այն ավանդություններով, որ բերել էին այստեղ Հայրենիքի մի բուռ հողի հետ: Այդպիսի պահերին դժվարանում ես խոսք զըտնել հայտնելու այն խոհն ու զգացմունքը, որ վեհացնում ին մարդու հոգին և շեղավորվում բառերի մեջ:

Ի՞նչ ասել նրանց, ի՞նչպես շնորհակալ լինել մեր զոհված քնկերների փոխարեն, նրանց անունից, նրանց համար, որոնց անանուն գերեզմաններին բերել են նրանք հայրենի հողը, մեզ համար, որ կանք, շնչում ու ապրում ենք, զգում ու մտածում...

Քարե ցածր պարիսպների մոտ, մեր կողքին հանկարծ կանգ առավ բեռնատար մի մեծ ավտոմեքենա: Բոլորս մեկեն շուրջ եկանք: Մեքենան լցված էր կարմիր ու սև ժապավեններով զարդարված պսակներով և թարմ փայտերից շինած ողորկ հուշատախտակներով: Առաջինը ցած նետվեց միջահասակ, հաղթ ուսերով, բեխավոր մի սերժանտ, նրան հետեւցին մյուսները, մի ամբողջ ջոկատ: Նրանք ներս թռան պարսպի վրայով, բարեկցին մեզ ու լուս մոտեցան հողաթմբերին:

— Թարմ ծաղիկներ կան, — ասաց բնիսավոր սերժանտն առանց որևէ մեկի զիմենու, — հետո նայեց մեր խմբին, — աղջիկներն են բերել երկի... Շնորհակալ ենք, եթե իմանայիք, թե ի՞նչ հերոսների եք հարգանք մատուցել...

Տեսանք մենք, թե ինչպես շիկնեցին վերան, Մարիան ու նրանց մյուս երեք ընկերուհիները:

— Գիտենք, — ասաց Մարիան երկշոտ ու անվստահ:

— Հազիվ թե, — խոսեց սերժանտն ինքն իրեն, — շես իմանա, թե որ հողաթումբն ինչ պատմություն ունի, այդ նրանց ընկերուները միայն կարող են ասել...

Քիչ հետո պսակները հերթով իջան ու դրվեցին գերեզմանների վրա: Աղջիկներից ամեն մեկը մոտենում էր իմանալու այն հահատակի անունը, որին իր հարազատն էր համարել. Տյուրումտակ Շարիլ, հլաշենկո իվան, Տարասով իվան, Ստարիկով Ֆեոդոր, Կուտուզով Կոնստանտին...

Մարիան երկյուղածությամբ մոտեցավ վերջին հուշատախտակին, որ նրա հոր գերեզմանի վրա էին դնում ու շնչյունով արտասահնեց.

— Կուտուղով Կոնստանտին Պետրովիչ, ծնվել է 1925 թվին... իմ հասակակիցն է...

Եվ կռացավ պսակն ու ծաղիկներն ուղղելու հողաթումբի վրա:

Վերջին հուշատախտակն իջեցրին եղրի հողաթմբին զնելու, որի մոտ կանգնել էր Վերան առեղծվածի սպասողի լայն բացված բիբերով:

— Միհիթարյան Նահապետ Սարգսի..., — արտասանեց նա դողացող ձայնով:

Մոտեցած ես էլ, ջանալով դսպել հուզմունքս: Փոքր ժողովորդ ենք, բայց ամեն տեղ, ամենուրեք, և՛ հերոսների, և՛ նահատակների մեջ կան մեր ազգակիցների անունները:

— Դուք լա՞վ էիք ճանաշում նրան, — հարցրի բեխավոր սերժանտին, ցույց տալով վերջին հուշատախտակը:

Նա նայեց ինձ զննող հայացքով, կարծես մտածում էր, որ հիշի, թվաց, թե ոշինչ շունի ասելու ինձ պրուսական երկնքի տակ, պրուսական կոտրված եղջյուղով բրոնզե եղան այս հրապարակում հանգող իմ հայրենակցի մասին:

Ինձ պատասխանելու փոխարեն նա հարցրեց.

— Դուք հա՞յ եք:

— Այո:

— Այդպես էլ իմացա... նա դեմքով նման էր ձեզ, բայց կարճահասակ էք: Իմ ամենամտերիմ ընկերն էր Միհիթարյանը, ինչպես շճանաշեմ... Երբեք չես մոռանա նրա նմաններին...

Վերան, Ուրալից եկած աղջիկը, որ հարազատ եղբոր գերեզմանն էր փնտռել, նույնպես ինձ էր նայում հետաքրքիր հայցքով:

— Մենք բոլորս էլ ճանաշում ենք նրան, ով շի ճանաշում, — միջամտեց բանակայիններից մեկը, — և գնդի պատմության մեջ էլ են գրել...

...Ուրիշի խնդիրքով չէ, որ մարդ սկսում է պատմել այն ծանր փորձությունների մասին, որոնց միջով անցել է: Ներքին մի պահանջ է այդ: Թվում է թե բաժանում ես լսողների հետ քո սրտի բոլոր դառնությունները և սիրտդ թեթևանում է, բաժանում ես նրանց հետ քո բոլոր ուրախությունները և գոհ: Ես մնում ինքո քեզանից՝ ուրախության ցոլքեր տեսնելով նաև ուրիշների

աշքերի մեջ: Նրեսնիվայր պառկած կանաչի վրա, մենք լսում էինք բեխավոր, հաղթ ուսերով սերժանտին: Նա այն մարդկանցից էր, որոնք երբեք չեն զգում, թե բնությունն իրենց տվել է այնպիսի ձիրք ու շնորհք, որին ուրիշները ողջ կյանքում ձգտում են ու չեն հասնում՝ պատմելու ու պատկերելու շնորհքը: Նրանք խոսքն արվեստ չեն համարում ու չեն ձգտում գեղեցկացնել խոսքը և դրանից էլ շահում է ճշմարտությունը...

— Այդպիսի ընկերոջը, եղբայր, երբեք չես մոռանա, — կրկնեց նա իր արգեն ասած խոսքն ու լոեց, ապա ինքն իրեն հարցրեց. «Հիշո՞ւմ եմ Մխիթարյանին, Նահապետ Արդիսովիշին» — ու ինքն էլ պատասխանեց. «Եատ լավ եմ հիշում, սկզբից մինչև վերջը մի գումարտակում ենք եղել, բաժանել ենք աղն ու հացը, մի խրամատում ենք պառկել ցեխի մեջ ու անձրեի տակ և գուրք հարցնում եք, հիշո՞ւմ եմ...»:

Աւ այնուհետև հյուսվեց նրա պատմությունն առանց շանքի, ինքն իրեն, ինչպես հոսող ջուրն է իր համար ճանապարհներ բացում: Լսում էինք մենք նրան արգեն առանց ընդհատելու:

...«Երբ առաջին օրերին նա մեր վաշտն եկավ, քաշվող ու հանդարտ տղա էր, երբեք չէր խոսում, եթե չխոսեցնեիր, առանձնաւ նում էր ու միշտ մենակ էր, ընկեր շուներ և չէր որոնում, կատակներ չէր սիրում ու հեռու էր պահում իրեն կատակողներից: Սիրում էր ուշադիր լսել, ճիշտ է, թե ինչ են խոսում զինվորները, ինչեր են պատմում իրենց կյանքից, բայց ինքը երբեք չէր պատմում իր մասին և վիճերի մեջ էլ չէր մտնում: Դժվար է այդպիսի մարդու համար աղմկոտ զինվորների մեջ ապրելը: Սատանայի նման հենց այդպիսի մարդուց էլ կպշում էին զվարանասերները, մանավանդ նրանք, որ գիտակից չեն ու սիրում են անտեղի մարդկանց սրտին կպչել: Բոլոր մարդիկ մի տեսակ բնավորություն չեն ունենա, տարբեր տեսակի մարդիկ են լինում, դու մի բան ես սիրում, մյուսը՝ մի ուրիշ բան, ուրեմն մի խանգարիր նրան և մի ծիծաղիր ավելորդ տեղը: Բոլորը խոմ չեն հասկանում դա: Ու հակառակի նման, տղաները միշտ նրանից էին կպշում, որ բարկացնեն, առանց պատճառի, հենց զվարճության համար: Նա լուսմ էր, բարեսիրտ ժամանում, կամ բարկանում էր ինքն իր մեջ ու էլի չէր պատասխանում: Իսկ

Նրբ պատահում էր, մեկն ու մեկը սահմանն անցնում էր, նա շատ ու շատ լուրջ եղանակով ասում էր.

— Թանկագին ընկեր, բավական է, խնդրում եմ, հերիք է...

Աւ այս խոսքերն ասում էր այնքան հետաքրքիր արտասահմությամբ, այնպես անկեղծ, որ զինաթափ էր անում կատակասերներին: Ոչ նախատինք կար նրա այդ խոսքերի մեջ, ոչ խնդրանք և ոչ էլ հրաման, չեմ կարող ասել, թե ինչպես էր արտասանում նա, պարզապես խոսքերը սրտից ու հոգուց էին դուրս գալիս: Ինչո՞ւ էր Մխիթարյանն այդպես, դժվար է ձեզ բացատրել: Ասես, թե հայերն են առհասարակ այդպես—միշտ չի լինի: Այնպիսի ուրախ հայերի եմ ճանաչում, որ խոսել սկսի, փորդ պիտի բռնես, և կռվարարների ու կոպիտների էլ եմ տեսել ձեր հայրենակիցներից»...

Այստեղ նա դիմեց ինձ ու պառկած տեղից շուռ գալով կողքի վրա շարունակեց... «Այդպիսիներ էլ կան, միք առարկի, ամեն տեսակ մարդիկ կան աշխարհում: Մեր Մխիթարյանն այդպես չեր: Ամենակարգապահ ու ամենահանդարա բանակայինն էր մեր վաշտում: Բայց մի անգամ այնպես պատահեց, որ առաջինը Հենց նա անկարգի անուն վաստակեց պետերի մոտ, որոնք նրան դեռ չեին ճանաչում: Մի զինվոր կար, մեծամիտ ու շարալեզու, որ համբերությունից հանեց նրան և այն է, պիտի Մխիթարյանն ասեր բոլորին ծանոթ իր խոսքերը, այդ տղան ինքը նրան նմանեցնելով ծաղրելու համար կրկնեց.

— Թանկագին ընկեր, խնդրում եմ...

Աւ հռուպալով ծիծաղեց նրա դեմքին: Հենց այդ ժամանակ, ես էլ շիմացա թե ինչպես, ապակի շրիկոց լսվեց: Ինչպիսի ապտակ էր, հիմա էլ կարծես լսում եմ... Մի լավ քաղղեկ ունեինք, նրա մասին էլ կպատմեմ: Նա ու ես ուզում էինք արդարացնել Մխիթարյանին, բան դուրս չեկավ: Հանար շի, Կարմիր թանակում ապտակում ես ընկերոջդ: Մխիթարյանս մի քանի անգամ դրա համար հերթից դուրս ժամապահ կանգնեց: Դրանից հետո տղաների կատակները դադարեցին, իսկ նա էլի նույն լուակյացն ու հանգարտն էր: Երբ մեր զորամասը ուազմաճակատ եկավ ու սկսեցինք կռվել, նա աշքի չեր ընկնում առերին որերին ոչ քաջությամբ, ոչ էլ իհարկե վախկոտ էր: Այնպես, միշակ: Ինչ որ հրամայում էին, կատարում էր: Վաշտի հրամանատարն

ու քաղղէկը վերցրել էին նրան իրենց մոտ որպես կապավոր: Գժվար տեղեր էր գնում, դժվար հանձնարարություններ էր կատարում, պատահում էր գնդակների տակ սողում. էր գեղի դասակները, գեղի գունդը, բայց ետ դալիս լուռ ու հանդարտ էր խաղաղ օրերի պես, ոչինչ չէր ասում, չէր պատմում: Միշտ չի երևում կովում, թե ով ի՞նչ է անում և ի՞նչպես է անում, պիտի որիէ մեկը պատմի:

Նահանջի օրերին նրա մի ուրիշ հատկությունն էլ ճանաչեցինք: Ինքը ոչ ծխող էր, ոչ էլ օղի էր խմում: Բարի էր, ունեցածը բաժանում էր ընկերներին: Բայց բարի էր էլի յուրովի: Երբ ծխախոտ էինք ստանում, իր բաժինը պահում էր տոպրակում, ակզրում ոչ ոքի չէր տալիս, բանի դեռ բոլորն էլ ունեին: Հենց որ զինվորների քսակները դատարկվում էին, պարկի միջից հանում էր փոքրիկ տոպրակն ու հավասար բաժանում բոլորին: Խոստովանում էմ, որ ինձ երբեմն ավելի էր տաշիս: Շատ փափուկ սիրտ ուներ, չէր դիմանում, երբ ծանոթ զինվորի, կամ սպայի դիակ էր տեսնում, կանգնում ու լաց էր լինում: Սկզբում, իշարկեն, բոլորս էլ այդպես էինք, հետո սովորեցինք, վարժվեցինք: Պատերազմ է, ոչինչ չես կարող անել, իսկ նա մինչև վերջն էլ ընտելացավ: Անցնում ենք քանդված ու ավերված գյուղերով, փողոցներում սպանված երեխաների դիակներ են պատահում, մենք նայում ենք, վիշտը սեղմում է կոկորդդ, բայց առաջ ես գնում, իսկ նա կանգնում նայում է ու էլի աշքերը թրջվում են, երբեմն էլ ուշանում է, ինքն իր ձեռքով թաղում սպանված երեխաներին ու դալիս հասնում է մեղ: Մի անգամ մեկը նրա մասին ասաց, թե թույլ հոգի ունի, պատերազմում չի կարելի աղջկա պես լաց լինել... Ու վեճ բացվեց մեր մեջ: Քաղղեկն էլ խառնվեց այդ վեճին:

— Իսկ դուք, ասում է, գիտե՞ք նրա կյանքի պատմությունը, ով է եղել նա, ինչպես է աճել: Ծնվել է նա, ասում է, Տաճկաստանում, հազարավոր հայերի, ասում է, այնտեղ թյուրքերը կոտորել են, որովհետև հայերն ոռուների կողմն են պահել: Քանի թվին, ասում է, երբ վեց տարեկան է եղել նա, ամբողջ ընտանիքին, քույրերին ու եղբայրներին սպանել են թյուրքերը նրա աշքերի առաջ, նա թաքնված է եղել խոտի գեղի մեջ ու բոլորը տեսել է: Դրա համար էլ, ասում է, այդպես լուակյաց ու մռայլ

է մնացել, ու դրա համար էլ այդպես զգայում է: Բայց աղնիկը ու գիտակից զինվոր է և ոչ մեկիցդ ետ չի մնում...

Քաղղեկը շատ էր սիրում նրան, նա էլ՝ նրան: Զնայած հասակակից էին, բայց քաղղեկը նրան «Ընօռ» էր կոչում... Այս անգամ սվինամարտի ժամանակ, երբ նրանք կողք-կողքի էին, գերմանացին քիչ էր մնում, որ դանակի հարվածը քաղղեկի կրծքին իջեցնի, Մխիթարյանն առաջ է գալիս, հարվածն իր ուսին առնում ու բահով փշում է գերմանացու դանդը: Վերթը թշթի էր, շուտ անցավ: Դրանից հետո էր, որ սկսեցին խոսել նրա քաջության մասին...

— Ինձ մի ծխախոտ փաթաթիր վասյա,—ընդհատելով պատմությունը, դիմեց նա բանակայիններից մեկին,—տեսնում ես, որ զրադված եմ, պատմում եմ,—ու գրանից բռով թամբաքոս հանեց, —առ...

...Երբ քաղղեկը ծանր վիրավորվեց 1942 թվի մայիսին, ամբողջ գիշերը Մխիթարյանը սանիտարական գումարտակում նրա մահճակալի մոտ նստած էր եղել, լուսաբացին քաղղեկը վախճանվել էր, նա թաղել էր նրան իր ձեռքով և եկավ մեզ մոտ... Գետնատնակի կողքին ես տեսա նրան լուս ու տիսուր նստած, ծխում էր: Այդ օրն առաջին անգամ նա սկսեց ծխել և առաջին անգամն էլ իր բաժին օղին շառաջարկեց ինձ, բաժակն իմ բաժակին խփելով ասաց. «Քաղղեկի հիշատակին»... Ու խմեց մինչև վերջին կաթիլը, հետո էլի ասաց, —«Կոլյա, դու լավ տղա ես, միշտ միասին լինենք, շրաժանվենք իրարից...»:

Դրանից հետո էլի երեք տարի մենք միենույն գնդումն էինք նրա հետ, ընկերների շրջանում էլի նա նույնն էր մնացել, երբեք չկոպտացավ ու ընկերների հետ վեճ ու կոփվ շունեցավ, բայց մարտերի ժամանակ միշտ էլ քաջ էր: Մարտական դրվագներ պատմեմ: Ի՞նչ կարիք կա: Ո՞ր ճակատայինի կյանքը լի չէ գեղեցրով: Երեք անգամ վիրավորվեց նա, ուզարկվեց թիկունք բժշկվելու: Հարյուրավոր կիլոմետրերով առաջ էր շարժվում ուղմանակատը, բայց ամեն անգամ գալիս գտնում էր նա մեզ, իր ընկերներին, իր գունդը...

Բոլոր պետերը նրան սիրում էին ու վերցնում իրենց հաւաքած շատ համեստ էր, երբեք հովանավոր չէր փնտում, բայց միշտ էլ հովանավորներ էին գտնվում՝ մեկ վաշտի հրամանա-

ռուսը, մեկ գումարտակի, մեկ գնդի, գյուղերումն էլ կանայք ու աղջիկները հարգում ու սիրում էին նրան, բոլորն էլ տեսնում էին, որ ազնիվ մարդ է: Երբ անցյալ տարի աշնանը հասանք մեր պետական սահմանին, գրկեց ինձ, համբուրեց ու աշբերից արտասուրներ եկան, Կոլյա, ասում է, հիմա որ սպանվեմ, շեմ ափսոսա, խիզն հանգիստ է... Մյուս օրը հարցնում է, ի՞նչ ես կարծում, ասում է, այստեղ երկա՞ր ժամանակ պիտի նոր հարձակման սպասենք: Երկի երկար, օդից այդպիսի հոտ է գալիս.— պատասխանում եմ ես:— Ես էլ եմ այդպես կարծում, — ասում է նա:— Եվ իսկապես, այդպես էր: Գաղտնիքները, ճիշտ է, զններալների մոտ են լինում, բայց զինվորն էլ օդը հոտոտնով է զլխի ընկնում, թե որտեղ ինչքան պիտի պաշտպանություն պահենք, թե երբ պիտի սկսվի հարձակումը... Մյուս օրը դիմում է մեր Մխիթարյանը գնդի հրամանատարին, որ արձակուրդ տան իրեն... Բոլորս զարմանում ենք, ոչ ոք չէր սպասում. ո՞վ է մեզանից արձակուրդ խնդրում, թշնամու հողն ենք մտնում, ի՞նչ արձակուրդի ժամանակ է: Բայց նա շատ ու շատ խնդրում է, աղաշում:— Մինչև հարձակումն սկսվի, — ասում է, ես կգամ, կհասնեմ: Սիրում էին, շմերժեցին, ո՞վ գիտե, գուցե մի դժբախտություն կա, չի ասում: Իսկ երբ շտարում փաստաթղթեր էին գրում, խնդրում է գրեն, որ արձակուրդ է գնում ոչ թե Հայաստան, այլ Բուղյոննովկա, Կուրսկի մարզի Շերեկինի շրջանում այդպիսի մի գյուղ կա, մենք այնտեղ կովել ենք: Դա արդեն հանելուկ էր: Ինչո՞ւ է գնում Բուղյոնովկա, ոչ ոք չկարողացավ բացատրել, ինքն էլ ոշինչ չի ասում:

— Նահապետ, երկի սիրուհի՝ ունես, ինձանից թաքցրե՞լ ես, — ասում եմ ես:

— Ամոթ քեզ, որ այդպես բան ես մտածում, Կոլյա, — պատասխանում է ինձ ու էլի ոշինչ չի ասում: Գնդում բոլորն էլ ինձ պես էին մտածում: Գնաց, վերադարձավ, տրամադրությունը լավ է: Ու մեկ էլ տեսնում ենք իրար ետևից նամակներ է ստանում Բուղյոննովկայից, ծրարի վրա էլ ետ-հասցեն՝ Եկատերինա Մասլովա... է, ախաղերս, մտածում եմ, մախաթը պարկում շես թաքցնի: Բայց նա էլի ու էլի վիրավորվում է, երբ ասում ես ու կրկնում է էլի—ամոթ քեզ, Կոլյա, որ այդպիս ես մտածում իմ մասին...

Ինչ մարդէ, մտածում եմ, ոշխնչ չի խոստովանում... Մի անգամ  
էլ ծանրոց ուղարկեց այդ հասցեով: Լավ, ասում եմ, պատերազմը  
կվերջանա, կգնանք, հարսնացուիդ կտեսնենք, կպարենք հարսմ-  
նիքիդ: Այս խոսքիս վրա նա մտածում է, մտածում ու անում,—  
լավ չի, Կոլյա, որ դու մարդու չես հավատում...

Երբ մտանք թշնամու հողը, կովում էր իսկական հերոսի  
պես: Գրոհների ժամանակ առաջինն էր բարձրանում, մյուաները  
զնում էին իր հտեկից: Գրավված քաղաքներում չէր խոսում հա-  
սակավոր գերմանացիների հետ, եթե ոռուսներն իմացողներ էլ  
էին լինում, էլի դեմքը շուտ էր տալիս, բայց երեխաներին հաց  
ու շաքար էր բաժանում, գլուխները շոյում: Երեխաներին խղճա-  
լը, մենք էլ էինք խղճում, բայց նա շատ էր երես տալիս: Մի  
անգամ ես նրան այսպիսի մի խոսք ասացի,—Դու, ասացի, բա-  
րի քրիստոնյայի հոգի ունես, ոռւս երեխաների համար լաց էիր  
լինում, գերմանացի երեխաների էլ գլուխն ես շոյում, ո՛չ մի  
տարբերություն... Նա նայեց ինձ շատ վիրավորված դեմքով: Ես,  
նրան այդպես չէի տեսել, ու բարկացած ասաց:—Դու հիմար ես  
Կոլյա... Ու երեք օր հետո շխոսեց: Հետո իհարկե հաշտվեցինք,  
երբ ես հանձնեցի նրան Բուլյոննովկայից եկած հերթական նա-  
մակը ու սկսեցի սովորականի պես կատակել. և դու ընկերս ես  
ու գաղտնիքներդ ինձ չես ասում, չկա, ասում եմ, մեր Կարմիր  
Բանակում քեզ պես ծածկամիտ մի ուրիշ զինվոր... Նա ժպտա-  
լով գրկեց ինձ ու այդ անգամ էլ լոեց: Այդ գաղտնիքն իմացանք  
շատ ուշ... Գրոհում էինք Տիլզիտը: Հենց այս բրոնզի եղան ար-  
ձանի տակ ես ու նա պառկած, ավտոմատներով կրակում էինք:  
Մի օր հետո գնդի հրամանատարն ինձ ուղարկեց նրա մոտ:  
Ինքն էր կանչել: Երբ հասա, մեռնում էր արդեն: Ինձ տեսավլ  
հանաչեց: Զեռքս բռնեց ու ամուր սեղմելով ասաց. «Ներիր,  
Կոլյա, որ քեզ հիմար ասացի մի անգամ, ինդրում եմ ներես...»:  
Դատարկ բաներ ես ասում, ասում եմ, ես երեք էլ շեմ վիրա-  
վորմել քեզանից: Նա էլի կրկնում է. «Ես ոշ մի վատ բան չեմ  
արել կյանքումս, ասում է, ոշ մի մեղք չեմ գործել»... Ու աշքե-  
րում շողում են արտասուբները: Ես հանգստացնում եմ: Մի հու-  
սահատվիր, ասում եմ, կառողջանաս, միասին կալարտենք պա-  
տերազմը, հայրենիք կվերադառնանք... Նա բացասարար շար-

ժում է դլուխն ու ասում. «Ինչու Հուսահատվեմ, գիտեմ, որ մեռնում եմ, մեռնելուց շեմ վախենում»... Հետո, խնդրում է բարեկել ընկերներին, շարշարանքով հիշում ու շարշարանքով արտասանում է մի քանի տասնյակ անուն, Գրիբովին, Բարտենովին, Վասիլչովին, Ալիքին, Կոտուզովին, Կոպբակին, Դեկանակին, Կովալեկին... Համարյա ամբողջ վաշտի ցուցակը, մեծ ճիպ գործ դնելով գողացող շրթունքներով ամեն անուն արտաբերելու համար. Ու վերջում ասում է.

— Գրիբ Եկատերինա Մասլովային, որ գերեզմանին լավ նայի, որ ծաղիկներ...

Ի՞նչ գերեզման, ի՞նչ ծաղիկներ: Ես նույն օրը գրեցի և շուտով պատասխան ստացա: Պարզվեց, որ անտեղի էին իմ բոլոր կատակները, որ նա, այդ Եկատերինան վաթսուն տարեկան մի ուսուցչուհի է: Այս նրա նամակը, կարող եք կարդալ: Այս նամակը մեր գնդի պատմության մեջ է մտել...

Ի՞նկերս կարդաց ուսուցչուհու նամակը բարձրածայն.

...Գուրք հարցնում եք, թե ո՞վ եմ ես, երբվանից եմ ճանաչում ձեր ընկերոջը, և ինչ գերեզմանի մասին հոգալու համար է նա խնդրել ինձ մահվանից առաջ: Օ, դա տիսուր, շատ տիսուր պատմություն է, թանկագին զավակներս: Լսեցեք ուրեմն այդ պատմությունն ազնիվ այն հոգիների մասին, որոնց հավանորնն դուք լավ եք ճանաշել, քան ես: Այս գյուղի ուսուցչուհին եմ ես, վաթսուն տարեկան ծերացած մի կին եմ: Էվակուացիայից հայրենիք վերադառնալով, հաճախ այցելում էի մեր գյուղի մոտ զոհված հերոսների գերեզմաններին ու ծաղիկներ դնում նրանց վրա: Ոչ մեկին չէի ճանաշում ես ու չէի տեսել, բայց գիտեի, որ ինձ նման մայր է ծնել նրանցից ամեն մեկին: Սգավոր մայրեր: Ինչքան վիշտ ու ցավ տեսանք մենք և ինչպես դիմանում ենք այդ ամենին... Մի անգամ էլ, երբ կրկին գերեզմանոց էի գնում, հեռվից նկատեցի, որ հողաթմբի մոտ նստած է մի զինվոր: Մոտեցա, տեսքից երևում էր, որ կովկասցի էր: Ինչքան թափիծ, ինչքան տիսուրթյուն կար այդ երիտասարդ մարդու դեմքին, նրա թուխ աշքերում, վիշտը կարծես ծանրությամբ նըստած էր նաև նրա հոգնած ուսերին, նրա մեջքին և դրանից էլ գլուխը հակել էր նա հողաթմբի վրա... Հետո խոսել սկսեցի, ուղինչ շասաց իր մասին: Հրավիրեցի ինձ մոտ ու պահեցի գիշեալու համար:

քելու: Այնուհետև մենք իրար հասկացանք: Պատմեց նա ինձ իր կյանքը, որ շատ ողբերգական է եղել... Թող անիծված լինեն շարագործները, որ միշտ եղել են ու կան, գերմանացի լինի նրանց անունը, թուրք, թե այլ բան... Պատմեց ինձ այն բոլոր դասնությունները, որ ապրել է ուազմաճակատում: Յուրչենկո անունով մի քաղջեկ է ունեցել, որի հետ միասին շարունակ նահանջել են ժիտոմիրից, Կիեվից մինչև մեր գյուղը: 1942 թվի մայիսին վիրավորվել է Յուրչենկոն ու մեռել նրա ձեռքերի վրա, ինպես ուղարկվել ու եթե ազատագրվի մեր երկիրը, եթե մեր պետական սահմանին հասնի Կարմիր Բանակը և Մխիթարյանը ողջ մնացած լինի, դա նրա գերեզմանի վրա, կանչի նրան, ձայն տա, ասի, որ Սովորական Մխիթարյան հողը ծայրից ծայր ազատ է: «Ես կլսեմ քո ձայնը,—ասել է նա,—և հանգիստ կզգամ ինձ հողի տակ»: Թաղելով Յուրչենկոյին, Մխիթարյանը երդվել է, որ եթե ողջ մնա, սրբությամբ կատարի իր բարեկամի խնդիրքը... Ահա թե ինչու համար էր արձակուրդ վերցրել նա մեր գյուղը գալու, երբ դուք սահմանին էիք հասել: Եկել էր իր սրբազն ուժամբ կատարելու, եկել էր Յուրչենկոյին հաղորդելու հաղթանակի լուրը... Մի շաբաթ շարունակ գնում էր նա նստում իր բարեկամի գերեզմանի մոտ ու երեկոյան տուն վերագասնում: Մեր գյուղում բոլորը սիրեցին նրան, սփոփեց նա մեր բոլոր մայրերի վշտացյալ սիրտն իր ազնիվ վարքով... Քանի դեռ կենդանի եմ ես, կկատարեմ նրա խնդիրքը, Յուրչենկոյի գերեզմանին միշտ թարմ ծաղիկներ կլինեն...

Նամակի ընթերցումից հետո իրար էինք նայում մենք և լուս էինք:

— Ազնիվ հոգի է եղել,—ասաց ընկերու, բայց ինչո՞ւ է բարցրել այդ պատմությունն իր ընկերներից:

— Նա սուրբ մարդ էր,—ավելացրեց բեխավոր սերժանտը, —ընավորությունն էր այդպիս, չէր սիրում ամեն ինչ պատմել, թեկուզ ընկերներին, տարրներ տեսակի մարդիկ են լինում... և դուք ասում եք, ճանաչո՞ւմ եմ նահապետ Մխիթարյանին...

Վերան խոնարհվել էր Մխիթարյանի հողաթմբի վրա, որ իր եղբոր գերեզմանն էր համարել նա, որի վրա լցրել էր մոր թաշ-կինակով հայրենիքից բերած հողը...

Մարիան, որ լուս կանգնել էր նրա կողքին, ասաց.

— Այս պատմությունը կգրեմ ևս քրոջս...

Բեխավոր սերժանտը նայեց արևմուտին:

— Ժամանակն է, տղերք, որ վերադառնանք... իսկ դուք, աղջիկներ, խնամեցեք մեր ընկերներին...

Այդ ասելով, ցույց տվեց նա գերեզմանները, կարծես կեն՝ դանի մարդկանց մասին էր խոսում, խնդրելով, որ աղջիկները փայփայեն նրանց:

Նստած տեղից ոտքի կանգնեց Վերան ու դողացող ձայնով դիմեց սերժանտին.

— Հարազատս, սպասեցեք մի բոպե...

— Ի՞նչ է:

— Ո՞րտեղացի էր այդ քաղցեկ Յուրշենկոն:

— Սիբիրցի, — պատասխանեց սերժանտն իր մեքենայի կարինը մտնելով:

— Իսկ ինչպես էր անունը:

— Յուրշենկո Վլադիմիր Յակովլեմիշ:

Աղջիկը ցնցվեց, նրա բիբերը լայնացան, ծնկները ծալվեցին ու նստեց նա գերեզմանի հուշատախտակի կողքին:

— Նա իմ եղբայրն է եղել... մեր Վալոգիան...

Բեխավոր սերժանտի մեքենան սլացավ ու մի ակնթարթում անհետացավ տեսողությունից:

Փարվելով նահապետ Միհիթարյանի գերեզմանին, զրկելով նրա հողը, հեկեկաց նահատակ հային անծանոթ աղջիկը.

— Թանկագինս, չէ որ սիրել ես դու Վալոգիային, նա իմ եղբայրն է եղել... կգրեմ մայրիկին... և քո մասին էլ կգրեմ... եկ այդ բարի ուսուցչուհուն նույնպես նամակ կդրեմ... ախ հա՛, հասցե՞ն շվերցրի...

Ընկերոջս հետ նստեցինք մեր «Վիլիսը» հեռանալու մոայլ ու ամայի Տիլդիտից:

Բութ հայացքով հրապարակից նայում էր մեզ գնդակներով ծեծված, կոտրված եղջուրով պրուսական բրոնզե եզր:

Մեր մեքենան սուրում էր ավերված փողոցներով, փլատակների և այրված շենքերի կմախքների միջով։ Վերջալույսի տակ արնագույն էին երևում նեման գետի ալիքները, որի կամուրջի վրա մի օր հանդիպել էին նապոլեոնն ու Ռուսատանի թագավոր Ալեքսանդր Ա-ն։ Պրուսական հողը մեր ոտքերի տակ էր։

Ժպտում էր պարզ երկինքը։ Մեր գլխավերեռվ անցնում էին կունկների երամները։ Սուբում էր մեր մեքենան ու հս վերջալույսի դաշտերին նայելով, մտածում էի, որ կյանքի ծանրությունը երբեք մարդուն չի ճնշի, երբ նրա հոգին լի է մեծ ու վեհառքինություններով։ Դեռ ինչքա՞ն տարիների մեջ, ինչքա՞ն ժամանակների մեջ ապրող սերունդները ստեղծագործական ներշընչումներ պիտի ստանան մեր օրերի մարդկանց կյանքից ու դործերից։

Մայիս, 1946 թ.

Նըւան

## Ճ Ա Ր Ա Վ

Ա.

...Աշքերը դանդաղ բացվեցին ու նրա պաղ հայացքն ընկալ աշխարհի վրա, բայց դեռ մեռած էին և՝ կամքը, և՝ հիշողությունը, չկար նաև սեփական մարմնի զգացողությունը, լսողությանն էլ դեռ չէին հասնում ամենի աղմուկն ու որոտը, որոնց խուզ արձագանքները կրկնվում էին եղենու անտառներում... Առաջին անգամ այդ օրը կանգնած ջրերի վրա պսպղում էր ապակու պես թափանցիկ սառցի բարակ կեղեր: Դաշտերի շորացած խոտը, արևածաղիկների ցողուններն ու ծառերի սաղարթները ծածկվել էին սպիտակ եղյամով: Երկրի վրա փոսի էր ձմեռնամուտի շոմնը:

Արևի շողերն ընկան բիրերի մեջ թեթև, շատ թեթև ցավ սղգաց ծոծրակում ու քունքերում: Աշքերը փակեց: Աստիճանաբար աշխարհն ամբողջանում և անհայտությունից, համակ խավարից վերածնվում էր: Նորից ու մտնում նրա սեփական աշխարհը: Ահա դիմացի տունը՝ կոնաձև տանիքով, դիմացի ըլուրից գոլորշի և բարձրանում, կանգնած են ծառերը, խմբերով, մենավոր ծառերը: Բայց ինչո՞ւ սպիտակ են նրանց սաղարթները... Արթնանում էր նաև լսողությունը, որ մեռյալ անշարժության ու լսության մեջ որսաց սկզբում հեռավոր, խուզ մի աղմուկ, ապա մոտիկ, շատ մոտիկ տան շեմի վրա լսեց կաշաղակի կշկշոցը... Բնադդակական շարժումով փորձեց նա փոխել դիրքը և կարծես թե փլաց խախուտ շենքի նման, թվաց թե մարմնից պոկվում էին ուսերը,

Հոգերը ճարճատում էին... Դա փրկարար նշան էր, որ կա ինքը, դոյցություն ունի... Եվ արթնանում էին նաև հիշողությունն ու միտքը. Հիշեց, որ իր անունը Միքայել է... Ու սկսեց կրկնել սեփական անունը՝ «Միքայել, Միքայել, Միքայել»... Թվաց, թե անտառի աղմուկների մեջ էլ լսվում է իր անունը՝ Միքայել, Միքայել...

Փարատվում էր մշուշը, օրն հստականում, արևը բարձրանում էր դեպի վեր՝ շարշարանքով ու տառապանքով ու շեշտակի նայում նրա աշքերի մեջ: Զգում էր նա արդեն և՛ ինքն իրեն, և՛ աշխարհը և ժամանակն ու լսում էր բոլոր աղմուկները, հրանոթների որոտն ու գնդացիրների մոտիկ ճարճատյունը... Ինչքա՞ն ժամանակ է, որ ինքն ընկած է այստեղ, ինչքա՞ն ժամանակ է անցել այն րոպեից, երբ նա վառեց պատրույգալարը, պայթեցնելու համար ուազմանյութերի պահեստը, այն ակնթարթից, երբ դժոխային որոտից ցնցվեց երկիրը, իր աշքերի առաջ մութ ամպեր երևացին և ամեն ինչ թաղվեց խավարի ու անհայտության մեջ... Հեռավոր, անթափանց մշուշից զատվեցին ու կենդանացան նրա հիշողության մեջ ընկերների դիմագծերը, կանգնեց նրա մաքի աշքերի առաջ գեներալի ծանոթ, շատ ծանոթ կերպարանքը, որը գրկեց նրան ու հաջողություն մաղթեց...

Մեծ ճիգով շուռ եկավ նա երեսնիվայր ու խորը շունչ քաշելով. սկսեց սողակ դեպի այն կողմը, որտեղից ծագեց արկեր: Գլուխը պատույտ էր գալիս, ոտքերն ավելի ու ավելի ծանրանում էին, հաճախ հանգստանում էր խոտերի ու ցամաքած առուների մեջ, ականջ դնում համազարկերին, փոխում ուղղությունը և կամ շարունակում սողակ: Առաջնորդում էին արդեն գիտակցությունը, իամբն ու փրկության հույսը:

Թափառեց այդպես մի օր ու գիշեր, շարունակ սողալով, երբեմն շորեքթաթ մոտենալով մեկ փրկության եզրին, մեկ հեռանալով նրանից: Երրորդ օրը առավոտյան հանդիպեց մեր դեմքերին:

— Տարեք ինձ գեներալ Պանֆիլովի մոտ...

Եշնջաց և ուշաթափիվեց:

Կրկին կորավ ժամանակի ու տեղի զգացողությունը:

Մարտիկներն ուժով հեռացնում էին նրա ծնոտներն իրարից և օդի լցնում բերանը: Ողելից հեղուկը հաճելի շերմություն էր տարածում նրա երակներում, կենդանություն և ուժ ներարկում: Վերստին հարյավ ու վերադարձավ երկրորդ անդամ կորած աշխարհը: Նրա բերանը զրին սև հացի մի կտոր: Ատամները սեղմեց նրա վրա և թուլություն, անհաղթահարելի թուլթյուն զգաց...

Ու ահա երևացին կրկին ծանոթ գեմքեր նրա աշքերի առաջ, այս անդամ ոչ թե քնի, հոգնած, ընդարձացած երևակայության, այլ պարզ ու մեկին իրականության մեջ, առարկայտկան, կենդանի:

— Տիխո՞ն...

Ճշաց նա և ինքն էլ փշաքաղվեց իր սուր ձայնից: Հետո իր ճակատին զգաց մեկի տաք ձեռքը: Ո՛չ, երազ չէ, տենդի մեջ չէ նա այլևս, նա ինքն է, գեներալ Պանֆիլովը...

— Հանգստացիր որդիս, հանգստացիր...

Նույն ծանոթ հայրական ձայնն էր, որ երկու, թե երեք օքառաջ ասաց. «Գնա», մենք հավատում ենք քեզ... |||

Գեներալը բարձրաձայն հրամայեց.

— Մի բաժակ էլ օդի տվեք...

Այս անդամ նա ինքն իր ձեռքով խմեց օդին և դադարկ բաժակը պարզեց գեներալի կողքին լուն ու անխոս կանդնած զինվորին:

— Մենք կարծում էինք, թե դու զոհվել ես,—ասաց գեներալը, —քիչ առաջ միտինգ եղավ քո հիշատակին... Եվ ահա եկար դու, բոլորիս ամաշեցրիր...

Զարմացած նայում էր նա գեներալին, հրամանատարներին ու մարտիկներին, որ շրջապատել էին իրեն և արդեն կուհում էր նրանց խոսքերը, նրանց զարմանքի և ուրախ ժպիտների իմաստը: Բոլորը սիրելի էին, և՝ մարդիկ, և՝ ուշ աշնան թփուտները, և՝ կյանքը, որը դեռ ամենուրեք վառողի ծխով էր պատաժ: Կան խոսքեր, որ մարդու սրտից են պոկվում ու չեն ուշանում հարկավոր բռպեից: Նա շնչաց.

— Ինչո՞ւ մեռնել, ես ուզում եմ ապրել դեռ...

— Ճիշտ է, — ասաց գեներալը, — մեռնել միշտ էլ կարելի է, մեռնելը հեշտ է...

Միտքն աշխատում էր, շրջապատը պարզվում:

— Ես ուզում եմ մեռնել այն օրը, երբ կսկսվի մեր հարձակումը, տեսնենք թշնամու նահանջը... Այդ օրը թող թշնամու գնդակն իմ կրծքին դիպչի, կմեռնեմ հանգիստ խղճով... Ավելին չեմ երազում:

Գեներալն ուրախ ծիծառեց ու դարձավ իր կողքին կանգնած ոլինվորին.

— Վկա եղիր, Տիխոն, այդ օրը կզա, այն ժամանակ կստուգենք Պետրոսյանի խոսքերը... Իսկ հիմա տարեք թող հանգըստանա...

1941 թվականի հոկտեմբեր ամիսն էր:

Դաշտերում զգրդում էր Հրետանու որոտը:

## Բ.

Անցնում էին օրեր ու շաբաթներ: Դաշտերը պատում էին դիակներով, զոհվեց գեներալ Պանֆիլովը, մայրաքաղաքի մոտ հերոսացան նշանավոր 28 պանֆիլովականները, որ Միքայիլ Պետրոսյանի ընկերներն էին: Անցավ ցրտաշունչ ձմեռը, հալվող ձյունը ծծվեց դաշտերի սևահողում, լվաց անցյալ տարվա արյունը: Եկավ գարունը, ծաղկեցին դաշտերն ու անտառները, մեռածների գերեզմանները կանաչ խոտով պատեցին: Եկավ ամառը և կրկին սկսվեց նոր նահանջ: Դալարվում էր թշնամին դեպի հարավ, դեպի արևելք, հասավ նա Պոն գետին, անցավ Պոնն ու շարժվեց դեպի Վոլգա, հասավ Կովկասյան լեռներին: Ողջ մնացածների սրտից արյուն էր կաթում:

Միքայիլ Պետրոսյանն ահագին վիշտը կրծքում սեղմած, նահանջում էր արևելքի պայմանների միջով, ընկնում ու ոտքի կանգնում, գրոհի էր գնում ու ետ սովում թշնամու ուժի առաջ:

Անցավ մի աշուն էլ: Սկսվեց կրկին հյուսիսի դաժան ձմեռը: Բարձր էր, թե չի եղել սկիզբ և չկա վախճան, թվում էր, թե ձնվել են մարդիկ կրակոցների տակ, վառողի գորշ ծխի մեջ

չկա ու չի եղել այլ մի կյանք... Ու կատարվեց հրաշքը: Սկսվեց երազած հարձակումը, որ այլևս կանգ չէր առնելու... Շողաց հույսի առաջին շողքը զինվորի հոգում և նրա մարմինն էլ աշխալույթ առավ: Օրվա ու գիշերվա սահմանները ջնջում էին, ժամանակը՝ աղմուկով ու դղիբրդներով, մահով ու կյանքով լի, և ծնում էր մարդկանց մեջ նոր միտք ու խոհ և խլում մեկեն այն ամենը, ինչ որ տրված էր մարդուն:

Մաղկեց անծայրածիր դաշտերում նոր գարունը և դեռ հարձակումը շարունակվում էր: Չէր նկատվում Միքայելը միլիոնների մեջ, բայց առաջին մարտերից հետո զինվորն այնուշետև միշտ էլ գտնում է իր տեղը փոթորիկներում ու տարերքում: Ողջ ուազմական կյանքը տեղից շարժվել ու տենդագին արագությամբ գալիս անցնում էր առաջ, հեղեղի պես իր ալիքների մեջ առնելով նաև նրան ու իր ընկերներին: Հայացքի տակով շարժվում էին հազարավոր, հարյուր հազարավոր դեմքեր ու բոլորն էլ կարծես ծանոթ էին. խարտյաշ մազեր, շեկ սլավոնական կերպարանքներ, մոնղոլական նեղ աշրեր ու հաստ ծոծրակներ, կովկասյան մեծ ու ցցուն քթեր, թավ և թուխ հոնքեր: Կարծես միշտ, իր ծննդյան օրից եղել էր նրան այդ հազարների հետ, նրանց մեջ ու միշտ պիտի անբաժան լինի: Բաժանման կարճատկ օրերը երազի էին նման: Երեկ գնու թվում էր, թե կորցրել է նա այդ հարազատ աշխարհը և այսօր ահա, ինչպես միշտ, գտել է կըրկին... Յոթ օր շարունակ երեքով թշնամու թիկունքում անցնում էին անտառների արահետներով, թաքնվում թփուտներում, ժամերով անշարժանում խոտերի մեջ, գիշերներին վերադարձի ճանապարհ փնտրում: Երրորդ ընկերը վիրավորվեց: Հերթով նրան շալակելով, անցնում էին նրանք ճահիճների միջով: Լուսավորվում էր գիշերը հրթիռներից, գնդակոծման տակ էր տարածության ամեն մի քայլը: Եվ երբ անցնում էին նրանք կյանքի ու մահլան գիծը, որ զինվորական լեզվով հակառակորդի պաշտպանության առաջավոր եղր էր կոշվում, վիրավորվեց նա ոտքից: Ավելի ու ավելի էր զգալի գառնում ընկերոց մարմնի ծանրությունն իր մեջքի վրա ու փայտանում էր աշ ոտքը շրի մեջ: Հետո ճահիճը խորացավ, չուրը հասնում էր կործքը, թվում էր, թե

միջատներ են շրջում մարմնի վրա, իսկ կրակն ուժեղանում էր, շուրջը կացների պես փշրվում էին պայթող գնդակները։ Զգաց արյան ջերմություն իր ծոծրակի վրա, անցավ մահվան գոտին, ցած դրեց ընկերոջ մարմինը։ Նոր վերք ստանալով ճանապարհին, նրա մեջքի վրա ընկերը մեռել էր... Դա երեկ էր, իսկ այսօր ահա անցնում էին նրանք կանաչ մարգագետնով։ Շուրջը բուրում էր բնությունը։ Երեկվա թեթև վերքից կաղում էր Միքայելն ու Հենքել էր Տիխոնի ուսին։ Խոնարհվում էր խոտը ոտքերի տակ, Հորիզոնը պարզ էր և շկար ամպի ոչ մի պատառ լուրթ-կապույտ երկրների վրա։

Տիխոն Նիկոլաևը մտածեց և ինչ-որ բան Հիշելով ասաց.

— Դու երազում էիր այսօր մեռնել, Հիշո՞ւմ ես, գններավին ասացիր... ահա և երազածդ օրը...

— Մեռնել... Զէ, մեռնել զես չեմ ուզում... զես կես Հանապարհին ենք... Չտեսնե՞մ ուրեմն երկրի ազատությունը... Բող հասնենք մեր սահմանին, ետ նայենք այստեղից ազատազրկում մեր դաշտերին ու քաղաքներին և թող այդ օրը դիպչի ինձ Բրշնամու գնդակը... Կմեռնեմ այն ժամանակ Հանգիստ խղճով, ավելին չեմ ցանկանա...

#### Գ.

Շարունակվում էին ճակատամարտերը։ Անցավ զարունք, արտերում աճած վայրի ցորենն Հասկակալում ու Հյութավորվում էր։ Շանոթ գետերը հոսում էին Հանգարտած ալիքներով ու կանդ չեր առնում ժամանակը։ Չորրորդ ամառն էր, Ճանապաշտների փոշին նստում էր մարդկանց զեմքերին, Հրացանների ու թնդանոթների վրա, տանկերի ու սալլերի վրա, ծինքի բաշերին ու ծառերի սաղարթներին։ Արկերի պայթյունից հողն էլի շատրվանի պես բարձրանում էր վեր, օդային մարտերից թափվում էին ցած արկերի բեկորները։ Տնքում էր կրկին երկիրը ծանր ցավից։ Ճանապարհների եզրերին, գյուղերում ու քաղաքներում և դաշտերով շարժվող զորքերի ետևից մնում էին զոհվածների թարմ հողաթմբեր։ Կիզում էր ուազմական ամառվա-

շոգը: Հետո սկսվեցին անձրևները, անվերջ ու միալար մազու անձրևները: Եկավ էլի աշունը, սկսվեց նոր տերեւաթափ... Ու բորբոքվեցին նոր մարտեր՝ ճեղքելու թշնամու պաշտպանության նոր գիծը, բացելու կրկին օպերատիվ ազատ տարածություն: Փոքրիկ մի տնակից մի անգամ Միքայելն հրետանային կրակի ուղղությունն էր ճշտում: Գերմանացիները հակագրո՞նի եկան: Տարածությունը գնալով կարճանում էր. այն ժամանակ դիմեց նա վերջին միջոցին, երբ վայրկյանի մեջ մարդ որոշում է ինքն իր ճակատագիրը և հրաժեշտ է տալիս աշխարհին, ուրիշ ոչ մի ելք շտեսնելով այլևս, երբ մարդ զգում է ակնթարթը կյանքի ու մահվան սահմանի վրա և կատարում է իր խղճի վերջին հրաժանությունը: Միքայելը խնդրեց կրակն ուղղել այն տնակին, որի մեջ նստած էր նա, որովհետեւ թշնամու գրոհող շարքերն արդեն հասնում էին իրեն: Տեսավ նա առաջին արկի պայթյունը, զորշ ծուխն իր աշքերի առաջ, թվաց թե բարձրացավ տնակն իր տեղից ու գահավեժ գնում է դեպի անդունդ... Հետո նա չէր հիշում, թե երբ և ովքեր են հանել իրեն փլատակների տակից: Առաջին զգացումն այն էր, թե ինքը խմել է ինչ-որ խիստ դառը, սիրտ խառնող հեղուկ, որից գլուխը պտույտ է գալիս և թուզացել են մարմնի անդամները: Մի ձայն կամացովկ ասաց. «Բախտացն այս անգամ էլ բերեց, ողջ է, ոչ մի վերբ չունի»...

Իսկ նույն այդ օրը իրիկնադիմին միենույն ակնթարժին որոտացին բոլոր թնդանոթները՝ փողերը դեպի արևմուտք և զեպի երկինք ուղղած: Աշխարհի բոլոր լեզուներով մարդիկ հաղորդում էին իրար երկը երկիր, որ Կարմիր Բանակը բոլոս տեղերում պետական սահմանն է հասել:

Զինվորները գրկում ու համբուրում էին միմյանց ուաղմանակատում: Նրանք տարան տառապանքներ, ցավ ու վերք և լավագույն ընկերների կորստցան ծանր վիշտը...

— Այս անգամ էլ ազատվեցիր մահից, բայց այժմ պետք է, որ ցանկանաս մեռնել, — ասաց Տիխոն Նիկոլաևը Միքայելին, — Հիշշիր քո խոսքը...

Նրանք պառկած էին իրար կողքի, խոնավ իրամասամ, մաղում էր բարակ անձրև: Միքայելը շերմորեն գրկեց ընկերությունը.

— Զէ, սիրելիս... ուզում եմ դեռ ապրել... Չտեսնե՞մ ուզեմըն հաղթանակը, ուզում եմ դեռ թշնամու հողը մտնել, տեսնել հատուցումը և մեռնել հաղթանակի օրը... Թող այդ օրն ընկնեմ թշնամու զնդակից, այն ժամանակ հանգիստ կլինի միտքս... Դրանից ավելին չեմ երազում...

Դ.

Ելի անցավ մի աշուն ու մի ձմեռ ու ելի եկավ գաբունը: Իր վաշտի ու իր զնդի շարքերում մարտիկն անցնում էր թշնամու գյուղերով ու քաղաքներով՝ իր հոգում՝ անցած տարիների տառապանքներն ու երազները, ոտքերի վրա՝ օտար հողի փոշին, գլխավերեկում՝ անձանոթ երկինքն ու հայացքի առաջ՝ նոր հորիզոններ: Զնծաղիկից հետո դաշտերում բուրում էր խոտի մեջ թաքնված մանուշակը, վարդի թիֆերի վրա մեծանում էին կոկոնները, բայց դեռ որոտում էր հրետանին և դեռ աշխարհի բարու ծայրերում տենդային սպասումով՝ մարդիկ ականջը պատերազմի ձայներին էին պահում: Զինվորի աշքերի առաջ՝ շողում էր զարունք, շողում էր արդեն հաղթանակի փայլն, ինչպիս կամակոր սիրուհու առաջին ժամկետը երկարատես տանջագին սիրուց հետո:

Վերջին օրը Պոտոդամ քաղաքի իշխանական մի շքնզ տաճ մեջ պառկած էր Միքայելը Հիվանդանոցային՝ մահմակալի վրա: Արթնացել էր նա անզգայական ծանր վիճակից, երկարատես անպիսի բնից, որից հետո մարդու մատների ծայրերից մինչեւ մազերը, ողջ մարմինը տնիքում է ծանր ցավերից: Կրկին երևաց իր աշքերի առաջ մահը, աներեսովթ, անմարմին, բայց զգալի ու շոշափելի, մեկ խավարի խտության մեջ, մեկ սենյակն հորդող առատ լույսի շողքերում: Գլխավերեկում մետաղի փայլով շոշաց վիրահատի մեծ ճակատը և քանինբորդ անդամ լինելով կորան շրջապատը, մարդիկ ու ողջ աշխարհը նրա համար: Սուր, փայլուն գանակները կտրում էին նրա կրծքավանդակը, վիրահատի սուր աշքերը փնտրում էին մետաղի փոքրիկ մի բեկոր նրա թոքերի մոտ, գերմանական ատրճանակի փոքրիկ մի զընդակ, բացելով մարմնի ծալքերն ու թաղանթները: Խսկ նա ոչինչ

շէր զգում, ոշինչ շէր մտածում: Նա շկար այդ ժամանակ, կար միտյն մարմինը՝ անզգա մեկնված սեղանի վրա, հոգին քնած էր մահվան քնով, շկար ոչ սարսափի, ոչ երանության, և ոչ էլ վշտի ու երջանկության գիտակցությունը: Երբ կրկին վիրահատները կյանք տիմին նրան, երբ զգաց առաջին շորջոփն ու դողը, վերադարձան էլի սուր ցավերն ապրող մարմնի մեջ: Բացել էր նա աշքերն ու սառն հայացքով ինչ-որ բան էր որոնում շուրջը: Բժշկական բույրը մեզմ ու քնքուշ շշնչաց նրա ականջին. «Մի-քայել, դու փրկված ես»...

Ու այս անգամ էլ կրկնեց նա մտքում ինքն իր անունը. «Միքայել, Միքայել...» Կա ուրեմն ինքը, գոյություն ունի կրկին: Այդ օրը մի անգամ էլ մահվան աշխարհից կյանք վերադարձ նա:

Այդ օրը սպասում էին հաղթանակի հրավառություններին: Լուսամուտների փեղկերի վրա մարեց մայիսյան վերջալուսը: — Մոտեցրեք իմ մահճակալը պատուհանին, — խնդրեց Միքայել Պետրոսյանը:

Վիրավորի մահճակալը դրին լուսամուտի մոտ, որ նրա աշքին երեսն հեռուները:

Երեկոյան պրուսական իշխանական տան պատուհանից նայում էր Միքայելը թեղինի հրացողքին, գիտում հաղթանակի համազարկերը, որ լուսավորում էին օտար երկրի գիշերը... Հեռու, շատ հեռու էին Գուգարաց աշխարհը, կանաչ լեռներն ու անդրնդախոր ձորերը, որ անցել էր նրա մանկությունը հրաշապատում ավանդությունների ու կախարդական բնության մեջ, հեռու էր Մոսկվան, որի պարիսպների տակ նա կատարեց իր առաջին սիրագործությունը, հաղարավոր կիլոմետրով հեռացել էր նա այն մարդու գերեզմանից, որն հավատում ու սիրում էր նրան:

Առավոտյան այցելեց նրան Տիխոն Նիկոլաեր և ողջագուրգելով ասաց.

— Ի՞շարկե, պետք է ապաքինվես, գիտեմ, որ շէիր ցանկանա մեռնել...

Ժպտաց նա ինքն իրենով ու աշխարհով բավարարված մարդու երջանիկ ժպիտով...

— Ի՞շա՛րկե շէ... Չեմ ուզում մեռնել... դեռ պետք է Հայրենիք վերադառնանք... Ինչքա՞ն շատ բան դեռ պիտի լինի

կյանքում, որ ուզում եմ տեսնել... Երբեք այլես չեմ ցանկանա  
մեռնել, ծարավ մարդու պես եմ ու սիրու չեմ հովանում ապրե-  
լոց... Կուղենայի անմահ լինել...

— Մի՞թե կարծում ես միայն դու ես այդպես,—ասաց Տի-  
խոն Նիկոլաևը,—կովում էինք բոլորս էլ, մեռնում էինք բոլորս  
էլ, եղբայր իմ, որ ապրենք...

Նայեց Միքայելն իր ընկեր Տիխոնին: Նրա աշքերում վառ-  
վում էին նույն կարոտն ու երազանքը, ինչ որ զգում էր ինքն իր  
հոգում:

1945 թիւ մայիս ամիսն էր:

Դադարել էր ռազմի ռրոտը և փոփել էր խաղաղությունն  
աշխարհի վրա:

Հունիս, 1946 թ  
Երևան

## ԹԱԿՆԱԳԻՒՆ ԱՎԱՐ

Ինական Գիտությունների թևկնածու Սիմոն Նարինյանը երջանիկ էր զգում իրեն բույսերի ու ծաղիկների աշխարհում և հավաքակվելով իր գործով, մոռանում էր հաճախ այն ամենը, ինչ որ կապ շուներ այդ աշխարհի հետ։ Հանդարտ, ինքնամփոփ մարդ էր։ Օրերով ու շաբաթներով քննելով իր հավաքածուները՝ տերեւ ու ծաղիկ, ցողուն ու արմատներ, ծառերի կեղեններ ու բների կտրվածքներ, բավարարված ինքն իր աշխատանքով, կամ հուզված, որ ցանկալի արդյունքների մի հասել, նա անկողին էր մտնում երբեմն լուսաբացին, այն էլ բարի ու հոգատար մօր թախանձանքներից հետո միայն։ Ոշինչ շկար նրա համար ավելի սիրելի, քան իր գիտությունը։ Քաղցր էին նույնիսկ աշխատանքի տառապանքներն էլ, որից հետո է միշտ երջանկությունը կատարյալ լինում։ Իմական գիտնական էր նա, բնավորության այն ծիծաղելի գծերով, որ ունենում են նրա նման մարդիկ՝ առօրյայի մեջ։

Առաջին տարիներին մայրը ժպտում էր որդու ցրվածության մրա, հետո սկսեց անհանդատանալ, հետեւելով նրա ամեն քայլին ու շարժումին, ինչպես հետեւում են դեռևս անշափահաս երեխային, մինչդեռ մեր գիտնականն ուներ արգեն և՛ կին, և՛ երեխա։

Այսպես անցնում էին ամիսներն ու տարիները հոգսերի ու աշխատանքի մեջ։ Եթե պատերազմն սկսվեց, աշխարհի ֆլորան կարծես թե կորցրեց Սիմոն Նարինյանի աշքին իր հրամույրները։ Երիտասարդ գիտնականը թվում էր, թե սիրահարի

վիճակի մեջ չի այլևս: Նույնիսկ Սոֆի մայրիկը, որ ուրիշ զեպ-քերում ուրախանում էր, երբ Սիմոնը մեկ-երկու օրով կարգում էր աշխատանքից, հիմա ստիպում էր, որ նա գործի կալչի:

— Ի՞նչ պատահեց, ծաղիկներդ ախար շորանում են, քեզ մատաղ...

Բոլորն էլ, իհարկե, հասկանում էին, որ երիտասարդ բնագետին հուզում է երկրի ու ժողովրդի ճակատագիրը, որ նա չի կարողանում առաջլաւ հանդարտությամբ աշխատանքի նստել, երբ ամեն օր հեռագրերը հաղորդում են բանակի անհաջողությունների մասին: Ոչ Սոֆի մայրիկը, ոչ էլ կինը՝ Մարգարիտը շրնդդիմացան նրա ցանկությանը:

— Գնա, քեզ մատաղ, որ ուզում ես ի՞նչ անենք,—համաձայնեց մայրը տագնապով ու թախծալի հուզմունքով:

Երբ հարեւան կանայք կարեկցությամբ ասել էին, թե ի՞նչ կարող է անել ուազմաճակատում համեստ ու անշար գիտնական Սիմոնը, զարաբաղցի կինը վիրավորվել էր.

— Զարաբաղցի է իմ տղեն, քեզ մատաղ... նրա ոչ հօրական, ոչ էլ մորական ցեղի միջին վախկոտ մարդ ժողովուրդը չ'տեսել, Սիմոնիս պապի գոշին կորիս Մելիքովն ինքն իր ձեռքով է մեղալ կպցրել...

Մի տարի հետո հանկարծ դադարեցին Սիմոնի նամակները: Չկորցնելով հույսն ու հավատը, Սոփի մայրիկը ջաճել հարսն հետ իրար մխիթարելով, ուազմաճակատից վերադարձողներին հարց ու փորձ էին անում. նրանց մեջ լինում էին մարդիկ, որ տեսել էին Սիմոնին, պատմում էին իրենց հանդիպումների մանրամասնությունները, հուսագրում, բայց այնուամենայնիվ, ոչ ոք նրանցից որոշակի բան չէր ասում և տուն էին դառնում հարս ու կեսուր ամեն անգամ կոտրված սրտով...

Ամիսներն անցնում էին իրար ետևից: Անցավ մի ամբողջ տարի, երկրորդ, երրորդ տարին, չորրորդ տարին էլ էր անցնում: Պատերազմն էլ ավարտվեց: Իրար հետևից հայտնվում էին անհետ կորածները, ողջ-առողջ տուն էին վերադառնում նույնիսկ նրանք, որ սպանված էին համարվում:

Սիմոնն էլի չկար ու չկար: Թախծալ հարսին նայելով, Սոփի

մայրիկը զսպելով՝ իր՝ հոգում սեփական արտասուբները, սփոփում էր նրան.

— Ինչ անենք, քե մատաղ, բալքի մեր բախտն էլ էս էր...

Գարունն էլ անցավ, ամառն էլ: Սկսվեց աշունը, ծառերից թափվում էին դեղին տերևները, ծածկում փողոց ու մայթ: Ընկերներն արգեն ընտելացել էին բնագետ Սիմոն Նարինյանի կորուստին, դադարել էին հարցնել՝ կա՞, թե՝ չկա որևէ տեղեկություն, Սոֆի մայրիկին հանդիպելիս էլ աշխատում էին ուրիշ բանի մասին խոսել:

Եվ ահա մի օր թեթև ու ընդհատ հարվածներով Սոֆի մայրիկի դուռը ծեծեցին: Սոֆի մայրիկն անտարբեր ու հանդարտ քայլերով մոտեցավ ու ձայն տվեց:

— Ո՞վ է:

— Բաց արեք, եթե կարելի է, —խնդրեցին դրսից:

Անծանոթ, տղամարդու թավ ձայն էր: Սոֆի մայրիկը գողդոջուն ձեռքերով բացեց դուռը: Շեմի վրա կանգնեց բարձրահասակ մի տղամարդ կաշվե կարմիր բաճկոնով, թուխ դեմքով, մեծ ու կրակոտ աշքերով, որոնց մեջ ծեր կինը նկատեց մտերմական մեղմ ժպիտ:

— Սա Սոֆի մայրիկի տունն է, Սոֆի Նարինյանի, —հարցրեց անծանոթ տղամարդը:

Մեր կնոջ սիրտն սկսեց արագ բարախել:

— Ես եմ Սոֆի մայրիկը, քե՛ մատաղ, նե՛րս արի...

Անծանոթ տղամարդը ներս մտավ, առանց հրավիրելու նըստեց սեղանի մոտ, սենյակի կենտրոնում:

— Եկել եմ, մայրիկ, ձեղանից մի բաժակ սառը ջուր խընդրելու, երևանի ջրին կարուտել եմ, կարելի՞ է...

Սոֆի մայրիկը տարակուսանքով նպյեց հսկային, նրա բարի ժպտացող աշքերին ու 22նշաց.

— Կարելի է, ինչո՞ւ չի կարելի...

Իւ լուռ գնաց, ափսեի մեջ դրած բաժակով սառը ջուր բիրեց: Տարօրինակ հյուրը խմեց բաժակի ջուրը մինչև վերջին կաթիլը ու բաժակն ափսեով սեղանին դնելով, ասաց.

— Դրախտի ջուր է...

— Մե՛կ էլ բերեմ,—առաջարկեց Սոֆի մայրիկը:

— Զէ, շատ շնորհակալ եմ...

— Ինքու որտեղացի ես, քե մատաղ...

— Ես էլ եմ երևանցի,—պատասխանեց անծանոթն ու ավելի լայն մի ժամանակակից նրա աշքերում, ողողեց ամբողջ զեմքը:

— Մայրիկ, դու Սիմոն անունով մի տղա ունեիր, ո՞րտեղ է նա հիմա,—հարցրեց Հյուրն անփույթ եղանակով:

Սոֆի մայրիկի հիվանդ, ծեր սիրտը կարծես դուքս թռավ տեղից:

— Թե որ մի բան գիտես, քե մատաղ, ասա, մի ուշացնի...

— Ես նրա ընկերն եմ մայրիկ, մոտիցն եմ եկել, իմ անունը Բարթուլ Պետրոսյան է...

Քիչ հետո տամբ լցվեց հարեւանուհիներով: Լուրք թաղում կայծակի արագությամբ տնից տուն էր անցնում: Հերթն իրարից խլում էին՝ անծանոթին զանազան հարցեր տալու: Հրաշքը հավասարապես հիացրել էր բոլոր մտերիմ ու հեռավոր հարեւաններին:

Սիմոն նարինյանը ծանր վիրավորված, գերի է ընկնում թշնամու ձեռքը, նրան տեղափոխում են Ֆրանսիա: Այստեղ փախչում է նա գերիների ճամբարից ու միանում հայկական պարտիզանական գնդին: Այդ գնդի հետ կոմիլ է Հարավային Ֆրանսիայում, մասնակցել բազմաթիվ քաղաքների ազատագրությանը:

Հաղթամարմին Հյուրը մոտեցավ պատից կախված մեծ քարտեզին:

— Ահա այստեղ էինք կովում... ա՞յս, այս քաղաքներն ենք ազատել մենք գերմանացիներից, հինգ քաղաք. Ֆլորակ, Ալես, Գրանկոմ, Վելիֆորտ, Նիմ...

Սոֆի մայրիկն հիացմունքով ու խանդաղատանքով էր նայում այդ բարի և քաշառող տղամարդուն: Նրան թվում էր, թե Հերթաթային հեռավոր ու անծանոթ մի աշխարհից է եկել նա ու անպարտելի մի հսկա է, որի հետ եղել է և իր տղան: Սիմոնի մասին Հյուրն ասաց, որ շատ լավ էր կովում նա, որ պարզեացրվել է ֆրանսիական խաշերով ու մեղալով և մի շաբաթ հե-

այստեղ կլինի, հետը բերելով հարուստ ու մեծ ավար չորս  
մեծ արկղներով:

— Ի՞նչ ենք անում, քե մատաղ, փառք է, որ Սիմոնս ողջ-  
առողջ գալու է, մի շոփ էլ պետք չի մեզ...

— Աչինչ, մայրիկ,—ժատաց հյուրը,—Սիմոնը ամենահա-  
րուստ մարդը կլինի իր բոլոր ընկերների մեջ:

— Ի՞նչ ենք անում, ուրիշի ապրանքն հարամ է, քե մա-  
տաղ...

Ինչքան էլ ստիպեցին, անծանոթն հրաժարվեց հյուրասիրու-  
թյունից, կրկին մի բաժակ սառը ջուր խմեց ու պատրաստվեց  
գուրս գալու:

— Աստված քեզ երկար կյանք տա, անփորձ մնաս Բար-  
թուղ ջան, ինչպես որ գու մեզ կյանք տվիր...

Երբ բարի լրաբեր Բարթուղ Պետրոսյանը դուրս գնաց, Սոֆի  
մայրիկը նրան ճամբու դնելով, վերադարձավ սենյակ և երջան-  
կության փայլն աշքերում, ասաց.

— Որ էդպես մարդու հետ է եղել Սիմոնս, անփորձ ու ան-  
վնաս տուն կտար...

Մի քանի օր շարունակ գալիս էին շնորհավորելու բոլոր  
բարեկամներն ու ծանոթները, նաև նրանք, որ վաղուց մոռացել  
էին Սիմոնին: Արկղների պատմությունն հայտնի էր դարձել բո-  
լորին:

— Համ ինքն է գալիս, համ էլ այդքան հարստություն է  
քերում, ել ի՞նչ ես ուզում, Սոֆի մայրիկ,—կրկնում էին համա-  
րյա բոլորը:

— Աչինչ էլ շեմ ուզում, քե մատաղ, էն բերածն էլ շեմ  
ուզում, հավատալս էլ չի գալիս, որ Սիմոնս ապրանք հավաքի բե-  
րի հետը...

— Հավատա, Սոֆի մայրիկ, հավատա,—նախանձով, բայց  
ուրախ ու բարեմիտ կրկնում էին հարևանուհիները:

Մի շաբաթ հետո արկղներն ստացվեցին, չորս մեծ արկղ,  
որ մեքենայով փոխադրեցին տուն:

— Երջանիկ պառակ, տղան եկավ ու այդքան էլ ապրանք

է բերել, տասը տարի հագնեն շի վերջանա, — ասում էին հարեւ-  
վանները:

Մի շաբաթ հետո էլ եկավ Սիմոն Նարինյանը, ճանապար-  
հորդական պայուսակն ուսին, առանց իրերի:

Ցնծության, երջանկության արտասուբներ, լաց, ծիծաղ:

Բնագետը գեմքով նույնն էր մնացել, միայն զլսի ու քում-  
քերի խիտ մազերը սպիտակել էին:

— Արկղներն ստացել եք, — հարցրեց նա անհանգստացած  
հենց առաջին բոպեներին, որզագուրաններից հետո, — նրանց  
պատճառով ճանապարհին հագուստներս էլ կորցրի...

Բնագիտական գիտությունների թիկնածուն ոգևորությամբ  
պատմում էր ընկերներին, որ եղել է ինքն աշխարհի նշանավոր  
բուսաբանական ինստիտուտում, Մոնտպիլիեր քաղաքում, ծա-  
նոթացել է հոչակավոր բուսաբան Բրաուն Բլանկեի հետ. պա-  
յուսակից հանելով, ցույց տվեց նրա գիրքը, որ հեղինակը մա-  
կագրությամբ նվիրել է նրան. «Հարգելի պրոֆեսոր Սիմոն Նա-  
րինյանին, սովորական գիտնականին, որը կովել է Ֆրանսիայի  
ազատության համար», ցույց տվեց ուրիշ գրքեր էլ՝ «Միջերկրա-  
ծովյան բուսականությունը», «Ֆրանսիայի բուսականությունը»:

Սոփի մայրիկը խոհանոցում զրադված էր: Երբ ներս եկավ,  
Սիմոնն ընկերներին ցույց էր տալիս արկղները:

— Այսքան հարստություն եմ բերել հետս...

Մյուս օրն առավոտյան մայրն ու կինը սկսեցին լվանաւ  
նրա շորերը: Ոչինչ չուներ բացի իր հագի սպիտակեղենից:

— Եդ յաշխիները բաց արա, — քե մատաղ, — խնդրեց Սոփի  
մայրիկը, — տեսնենք ի՞նչ կա մեջը, էդպես տկլոր ման գալու  
շես...

Գիտնական որդին քննուշ ժպիտով նայեց մորը:

— Բացենք մայրիկ, մի ուրագ ճարեք, որ մեխերը պոկենք...

Բացեցին առաջին արկղի կափարիչը:

Սոփի մայրիկը զարմացած նայում էր ու աշքերին չէր հա-  
վատում... շերտ-շերտ դարսված էին տերեներ, բույսեր, ծառերի  
ճյուղեր ու բների կտրվածքներ, շորացրած ծաղիկներ, հողով

լի, խնամքով փաթաթած ծաղկամաններ, որոնց մեջ բույսեզը կարծես հոգնած տեսք ունեին:

Մյուս երեք արկղների բովանդակությունն էլ նույնն էր: Տեսնելով մոր զարմանքը, որդին ասաց.

— Սա Ֆրանսիայի ֆլորան է, մայրիկ, այնպիսի բույսեր եմ բերել, որ մեզ մոտ չեն աճում...

Մայրը ժպտում էր այնպիսի ժպտով, որ դժվար էր որոշ շել, հավանություն է տալիս որդու ոգևորությանը, թե հիասթափված է նրա բերած ավարից:

— Գիդում էի ես, քե մատաղ, որ իմ տղեն ապրանք բերող չե... ուր էլ լինես, ֆլորայիցդ ձեռք չես քաշի...

— Ամենաթանկագին ավարն է սա, մայրիկ,—ասաց բուսաբանը ուրախ գրկելով մորը:

Ամբողջ թաղով տնե-տուն անցավ նոր լուրը: Ոմանք հիանում էին երիտասարդ գիտնականի վարքով, ոմանք էլ քմծիծաղով ասում.

— Զի փոխվել. ողջ աշխարհը ման եկավ էլի նույն մարդն է...

Այնուհետեւ բնական գիտությունների թեկնածու Սիմոն Նազ րինյանի համար սկսվեց սովետական առօրյան: Կարծես երեկ էր ընդհատել իր պարապմունքները և այսօր պիտի շարունակեր:

Աշխարհի ֆլորան կրկին բացեց նրան իր բոլոր հրաշպույրները:

Հուլիս, 1946 թ.

Երևան

## Ե Պ Բ Ա Յ Թ Ն Ե Բ

Մեկ ամիս առաջ ավագ լեյտենանտ Ալեքսանդր Կուրդամուսովը, քսանամյա մի քաջ պատանի, որ մարտական մի գումաշտակի հրամանատար է, ինձ ծանոթացրեց իր ստորաբաժանման մեջ իրենց ուսազմի գործերով հայտնի Շումկո Եղբայրների՝ Առեպանի և Մաքսիմի հետ: Ուկրաինացիներ են նրանք՝ լի վրեժ: Խընդությամբ իրենց ավերված Ուկրաինայի համար, մայրական դառն արտասուրների և իրենց առևանգված ու խոշտանգված քույրերի պատվի համար: Մի գումարտակում իրար հանդիպելով՝ նրանք սկսանույզ կերպով ողջագուրվեցին, այս դասնագին սրտով պատմեցին իրար հայրենիքի կրած տառապանքները և ուխտ արին՝ երկու եղբայրներով շխնայել իրենց երիտասարդ թանկագին կյանքը՝ թշնամու դեմ մղված կովում: Սրբազն ուխտ էր դա, որին հավատարիմ են զապորոժյան նախնիների զարմից սիրված սովորական դյուցազումները:

Շարքային մարտիկներ էին երկուսն էլ իրար հանդիպելիս:

Քանի՞ քանի անգամ հանդուզն գրոհների ժամանակ թշնամու վրա են խոյացել կրակի ու բոցի միջով՝ արհամարհելով վտանգ ու մահ: Պատահել է, որ սինամարտի բռնվճիս, պհաք է եղել նույնիսկ գործի դնել առնական բազուկները, մատներով սկզբել հիտլերականի կոկորդը: Ամենազոր է ատելության պոռթկումը մարդու մեջ:

Հեքյաթներում միշտ ասվել է՝ քաջը կրտսերն է լինում: Երեսի կա մի ճշմարիտ իմաստություն ժողովրդական այդ մտածողության մեջ: Համենայն դեպս, այս անգամ էլ կատարվեց դրա

նման մի բան։ Ավագը՝ Մաքսիմը երբեք շդրժեց իր երդումը, միշտ կոփվների մեջ մնաց քաջ ու անպարտելի, բայց կրտսերը՝ Ստեղանը գերազանցեց նրան։

Ստեղանի հրամանատարության տակ դրվեց ամբողջ մի դասակ, իսկ Մաքսիմին մի չոկ տվեցին զեկավարելու։ Այն ժամանակ Ստեղանը խնդրեց հրամանատարությանը, որ եղբորը փոխադրեն իր դասակը՝ կռվելու որպես չոկի հրամանատար։ Հարգեցին այդ խնդրանքը։ Շումկո ավագը կրտսերին ներկաւացավ.

— Ընկե՛ր դասակի հրամանատար, չոկի հրամանատար Մաքսիմ Շումկոն ներկայանում է ձեզ...

Առանց ժպիտի, կարծիս թե անծանոթներ էին։ Կրտսերն ասաց.

— Ահա մենք միասին ենք կռվելու, ինձ համար թանկ է քո կյանքը, քեզ համար էլ, իմը, բայց ժողովրդի պատիվն ու ազատությունը ամեն ինչից բարձր պիտի լինի երկուակս համար էլ։ Այս գիշեր, ահա՛, քո չոկով պիտի հետախուզության գնաս թշշնամու թիկունք...

Ռւշադիր լսելուց հետո՝ Մաքսիմ Շումկոն ձգվեց Ստեղան Շումկոյի առաջ և ասաց.

— Հսում եմ, ընկե՛ր հրամանատար, պատրաստ եմ մարտական հանձնարարությունը կատարելու...

Ու սեղմեցին եղբայրներն իրար ձեռքերը ու դրկեցին մի՛մյանց։

Դրանից հետո նորանոր սխրագործություններով նրանք փառքով պսակեցին իրենց ազգանունը և եղբայրությունը դարձրին ավելի սուրբ հասկացողություն ու զգացմունք...

— Ահա այդպես պիտի լինի եղբայրությունը, — ասաց ինձ ավագ լեյտենանտ՝ Ալեքսանդր Կուրդոմոսովը։

Հայրենիքի համար, արդար կռվի մեջ ավելի ազնվանում է մարդը։ Եվ մի՛թե Շումկոների օրինակը բացառիկ է, մի՛թե միայն մի մոր ծնած որդիներն են դաժան մարտերի մեջ անդարտ եղբայրությամբ կապվում իրար։ Լի է իմ հիշողությունը անդավաւ-

Ճան եղբայրության տասնյակ, հարյուրավոր սքանչելի օրինակ-ներով:

Երբ Ավագ քաղղեկ Կյուրեղ Գրիգորյանը ծանր վիրավորվեց և թշնամու կրակի օղակի մեջ մնաց, կոմիսար Սիտնիկովը դիմեց մարտիկներին.

— Ո՞վ է ուզում այն քաջը լինել, որ պիտի փրկի ավագ քաղղեկի կյանքը:

— Ե՞ս,—առաջինը բացականշեց ուսւ բանակային Զերնովը: Ու սողալով զնաց: Բոլորը հետեւում էին քաջի գոռծողությանը: Թշնամին գլխի էր ընկել, որ վիրավորը Շրամանատար է և թույլ չէր տալիս նրան մոտենալ: Զերնովը հերոսի մահով նահատակվեց: Այն ժամանակ կոմիսարին դիմեց ուկրաինացի մարտիկ Բոնդարենկոն.

— Այժմ իմ հերթն է, ընկե՛ր կոմիսար...

Ծառ կրակ տեղաց նրա վրա մի քանի ժամ շարունակ, բայց խիղախը մնաց անվնաս ու փրկեց իր քաղղեկ Գրիգորյանի կյանքը:

Ի՞նչն էր մղում նրանց գեղի կրակ ու մահ.—Եղբայրությունը, որն ուժեղ է մահու սարսափից և կովի մեջ միշտ հաղթում է նրան, այն անքակտելի կապը, որ կապում է մեղ իրար հետ և որն ավելի ամրացավ, ավելի կոփելոց հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից սկսած:

...Տեղի էր ունենում ահեղ, դաժան ճակատամարտ: Առավոտից երեկո արճին ու պողպատ էր թափվում մարդկանց վրա: Օդը լցվում էր ծխով: Դաշտն իր տեսքը փոխել էր ականների, արկերի ու ոռութերի պայթյուններից: Ամեն վայրկյան մարդիկ էին հերոսանում այդ կովի օրը: Գործում էր նաև սանիտար աղբեջանցի Մնհատի Սուլբանովը: Իրար ետեից կրակի գոտուց նա դուրս էր բերում ծանր վիրավորներին ու սանիտարական կետերն ուղարկում: Վիրավորները տեսնելով իրենց մոտեցող ծանոթ աղբեջանցուն՝ ասում էին.

— Կարդա՛շ, փրկի՛ր, գեռ պետք կդանք իրար...

Կարդա՛շ... Դա առաջին բառն էր, որ սովորել էին սովետական սլավոն ժողովուրդների որդիներն աղբեջանցիների հիմ

Չփվելիս: Ինչըա՞ն սեր ու մտերմություն կար այդ միակ քառի մեջ...

Հետո Մեհտին ինձ պատմում էր.

— Երբ կովի մեջ առաջին վիրավոր ոռւան ինձ իմ մայրենի լեզվով կարգաշ ասաց, սիրու դողաց, մարմինս փշաքաղվեց. պատերազմից առաջ էլ ոռւս ընկերներն ինձ այդ խոսքով էին դիմում, բայց այն ժամանակ մեր կարդաշ խոսքն այդպես քաղցրը չէր ինձ համար...

Վիրավորին Սովորանովը հանգստացրեց:

— Մի՛ ընկճվիր, բրա՛թ, կամ երկուս, էլ կմեռնենք միամին, կամ կփրկվենք...

Միայն այդ կովի ընթացքում հայրենասեր աղքարեցանցին տասնինն անդամ կրակի փոթորկի մեջ մտավ ու զուրս եկավ այնտեղից հերոսաբար: Անդավաճան մնաց եղբայրության սրբազան ուխտին:

Զինվորական բուժակ Ասրյանի հետ էլ տեղի ունեցավ այդպիսի սրտացունց մի դեպք: Շատ շատերին էր նա մահվանից աղատել, փրկել շատերի կյանքը, բայց այդ դեպքն ավելի խոր տպավորություն գործեց նրա վրա և ողջ կյանքում կմնա անմոռաց:

Դա դեռ աշնան մեր ծանր ապրումների օրերին էր: Մեր զռամացը մի քանի օր շարունակ ետ շպրտելով թշնամու գրոհները, հրաման ստացավ քաշվել նոր դիրքեր: Բայց զրահավորված թշնամին դալիս էր ետևից: Կրակով նրան զսպելով ետ էինք գալիս մենք: Այդ մարտի ժամանակ զինվորական բուժակն իր ստորաբաժանման հետ էր՝ կրակի գծում: Նա նկատեց, որ ճահճի ափին գալարվում է մի վիրավոր մարտիկ: Տեսնես ո՞վ է, — հարցրեց նա ինքն իրեն մի պահ: Բայց ինչ կարեռ էր, թե ո՞վ է, բավական էր, որ յուրային է: Թշնամու ավտոմատավորներն ու ականաձիգները խիստ կրակի տակ էին պահում դեպի ճահճն ընկած շերտը: Առանց դանդաղելով՝ զինվորական բուժակը նետվեց դեպի վիրավորը: Նա արդեն հուսահատ ընկել էր դեմքի վրա ու ծւնդ շնչում էր: Ասրյանը շուր տվեց նրան, նաև դեմքին:

— Պանչո՞ւ...

Վիրավորն աշքերը բացեց, վայրկենապես սթափվեց.

— Ասրյա՞ն, թանկագի՞ն, դու եկել ես ինձ փրկելո՞ւ...

Թշնամին համազարկ տվեց: Նրանք պառկեցին խոտերի մեջ:

— Հիշի՞ր, ախափեր ջան,—շնչում էր Պանչուկը, —որ մենք բաժակ բաժակի ենք խփել, միասին Դամարլովի գինու գավաթով՝ բարեկամության խոսքեր ենք ասել իրար, համբուրվել ենք... Մի թողնիր ինձ այստեղ, պիտի կենդանի մնանք, պիտի կրկին Հայաստան գնանք...

Ու վիրավորը փորձեց երգել զորամասի ջազի հայտնի երգը.

— Եյ ջա՞ն Երևան, родина моя!...

Նա արդեն տենդի մեջ էր: Ասրյանը հանեց նրան կրակեցակից, կապեց վերքերը: Երբ ապահով անտառում Պանչուկն ուշքի եկավ, առաջին արտասանած խոսքը, որով դիմեց նա իր ընկերոջը, հայերն էր.

— Ախափեր ջա՞ն..., —ու ավելացրեց ուսւերենով, —«մենք կրկին միասի՞ն ենք քեզ հետ»...

Ահա մի հերոսական դեպք էլ, որ տեղի ունեցավ մի քանի օր առաջ, որ վերհիշել տվեց ինձ այս ակնարկում շարադրված մյուս եղբայրությունները:

...Գրոհից առաջ ուրիշների հետ միասին բաշկիր բանակացին Եմիլովն էլ հանդիսավոր խոստում տվեց սրբությամբ կատարել Հայրենիքին տված երդումը: Երբ ջոկերն ու դասակը դուրս եկան կրակի գիծը և պատրաստվեցին գրոհի, թշնամին բացեց փոթորկալի ականանետային ու հրետանային կրակ: Մի արկ պայմեց Եմիլովի մոտ: Նա ցնցումից ուշաթափ ընկավ գետնին: Մարտիկի բերնից արյուն էր հոսում, նա կոնտուզիայի էր հնաթարկվել: Սանիտարները վերցրին նրան ու տեղափոխեցին ապահով տեղ: Թուավ հրթիռը՝ գրոհն սկսելու նշանը: Թշնամին սկսեց ետ-ետ սողակ՝ թողնելով գիակներ: Մերունք ներս խուժեցին ավանն ու դիմեցին սվինամարտի:

Կոփվը բորբոքվում էր: Այստեղ չէր միայն բաշկիր՝ Եմիլովը: Նա սթափվեց երկու ժամ հետո և հիշեց բոլորը: Սանիտարները հաղորդեցին մնացյալը: Ու նա վերցրեց նոնակները և գիմեց դեպի կոփի վայրը: Հրամանատարական կետում հանդիպեց կոմիսարին, որը գարմանքով նայեց մարտիկին ու հարցրեց:

— Ո՞ւր, Եմիլո՛վ:

— Այնտեղ, ընկե՛ր կոմիսար:

— Բայց ես հրամայել էի, որ քեզ սանիտարական պունկտ

տեղափոխեն:

Եմիլովի գեմքը գունատ էր, հիվանդագին, շրթունքներին դեռ մնացել էին արյան շրացած հետքեր:

— Թույլ տվեք ինձ գնամ,—առարկեց բաշկիր մարտիկը,— իմ եղբայրներն այնտեղ կուլում են...

Կոմիսար Մալիշերը ուսերը թոթվեց, որ նշանակում էր թե՝ ռառարկել շեմ կարող, եթե այդքան ուզում ես...

Մի քանի ըոսք հետո Եմիլովը կովի մեջ էր:

Մարտի մեջ նա մոռացավ և՛ հոգնածություն և՛ ծանր գիտա-

ցավը:

Եղբայրուրյան ազնիվ դգացմունքը նրան մարտ ուղարկեց, տվեց ուժ, եռանդ և անթառամ փառք բերեց:

Շումկու ուկրաինացի եղբայրների պես հերոսական կարմիր բանակում միլիոններն են եղբայրության կապով կապված իրար, ուսւներ ևս նրանք, հայեր, աղբբեշանցիներ, ուկրաինացիներ, վրացիներ, բելոռուսներ... Մի մայր է ծնել նրանց, սովորական վրացիներ՝ անդաման լինել, լինել եղբայրներ՝ աշխատանքի ու կովի մեջ:

Եվ նրա որդիները բարձր են պահում եղբայրության դրոշը՝ սրբությամբ են կատարում հարազատ մոր ավանդը:

Ապրիլ, 1942 թ.

Գործող Բանակ

## ՎԵՐԱԴՐԵՐ 2

Նիծենակը բույն էր շինում,  
Նվ շինում էր և երգում...

Դ. ԱՂԱՅԱՆ

Աշնան մոայլ մի օր, երբ մենք հետ էինք քաշվում, վերջին  
անգամ հայացքով գրկելով. Ուկրաինական դաշտանկարը, ձորա-  
բերաններին փոված երեմնի խաղաղ գյուղերին ու բարդիներին  
տիրապին հրաժեշտ տալով, ընկերս իմ ուշազրությունը հրավի-  
րեց մի խորհրդավոր երևոյթի վրա:

— Նայիր, բարեկամ, թռչուններն էլ են նահանջում մեզ  
հետ...

Սեափետուր թռչունների երամները դեպի հարավ-արեւելք  
էին թռչում... Դա սովորական աշնան չու չէր: Նրանց սրտակե-  
զեր կանչերն ասում էին, որ բնության այդ ազատ որդիններն էլ  
են անհանգստացած այն ամենով, ինչ տեղի է ունենում երկրի  
վրա: Արոտներից դղրդում էին դաշտ ու ձոր: Եվ այդ ազմուկնե-  
րի մեջ ինչպե՞ս էին կանչում նրանք...

Դրանից հետո ձախորդության ու տառապանքների շատ օրեր  
տեսանք մենք: Հետո եկան հաջողությունների ու արդար հա-  
տուցման օրեր, մեր հոգին թեթևացավ ծանը հիշողություններեց,  
բայց երեք չեինք մոռանում մենք աշնան այն օրը, լսում էինք  
միշտ սպավոր թռչունների հուսափատ կոփնչը...

Աւ այսօրվա մեծ դեպքերի մեջ, երբ ուազմի աղմուկներին  
վերստին խառնվում են բնության ձայները, կրկին սիմվոլիկ են  
թվում ինձ նրանք:

Մեր առջև փոված է վերադարձի ճանապարհը: Վերադարձ...

Ինչքա՞ն զերմություն կա այս մեկ բառի մեջ, ինչքան հույս ու կարոտ: Մենք պիտի գնանք այն գյուղերով, որ թողեցինք աշնանք, ողջունենք այն նվիրական վայրերը, որ պիտի ծաղկեն մեռ վերադարձին՝ դարնան երփներանդ գույներով:

Երբ արելք գեռ զենիթին չեր հասել, ճեղքվեց թշնամու պաշտպանության գոտին, և կրկին մենք ոտք դրինք գերությունից ազատազրված մեր սեփական հողի վրա: Անցանք Դոնեց գետը, որի ափերին արդեն բուրում էր դաղձը:

Թիկունքային ստորաբաժանումների հետևից իրենց ազատագրված գյուղերն էին վերադառնում կանաչը և աղջիկներ, ծերեր ու երեխաներ: Նրանց դեմքերը փայլում էին երջանկությունից, բոլորը տոնական ցնծության մեջ էին:

Գարունը, կարծես, բացվեց հենց այսօր...

Բեռնատար մեքենաները կրակի գծից բերում են գերի ու վիրավոր գերմանացիներին: Բնակչությունը նայում է նրանց վրա և՝ զայրութով և՛ հետաքրքրությամբ, ինչպես նայում են անտառներից բերված, մարդու կամքին հնագանդեցված գազաններին: Կազանը վախենում է մարդու աշքերին նայել, նա խեղճացած է և դողում է վախից: Նա շարիք է պատճառել բոլորին, հոշոտել ու պատռուտել է, արյուն է հեղել ու հափշտակել է և այսօր գտնվում է նրանց իշխանության տակ, ում վրա կրծտացնում էր իր ժանիքները:

Թարգմանիչի միջոցով գրուցում ենք նրանցից երեքի հետ: Երկուսը գերմանացի են, մեկը՝ ավստրիացի: Գերմանացիներից մեկը վիրավոր է, շնայած թեթև, բայց ձեւցնում է, թե այնքան ծանր է, որ խոսել չի կարողանում: Մյուսը, ընդհակառակը, շատախոս է, հաճոյանալու համար ասում է ավելին, քան ուզում ես լսել: Մատանին, ահա, որ նա կրում է մատին, իր ֆրառի հիշատակն է, այս, սա էլ լուսանկարը: Գերմանուհին ծաղկեփունչ նվիրելով հիտլերական բանակի զինվորին, համբուցով հաջողություն է մաղթում, որ իր էրեկը կողոպտի ուրիշ ժողովուրդների կանանց ու երեխաներին: Բայց սա հավատացնում է,

որ այդպես չէ, որ իբնը ատում է Հիտլերին, որ նա արդեն կապուտ, որ ոռաը լավն է, նա չի ծեծում ու չի սպանում գերին ներին... Ու նա բռունցքով սպանում է ֆյուրերի հասցեին:

Ավստրիացին ժպտում է նայելով գերմանացու պաթետիկ շարժ ու ձերին, և երբ մենք դիմում ենք իրեն, նա մեր հարցերին պատասխանում է համեստ զսպվածությամբ: Նա ինքն է գերի հանձնվել, ինչպես շատ շատերը: Երբ հարցնում ենք, թե կարդացե՞լ է Ստալինի հրամանը, մեր հարցին պատասխանում է հարցով.

— № 55 հրամանը... Այո, կարդացել եմ, ահա...

Ու ծոցից հանում, ցույց է տալիս հրամանը՝ գերմաներեն լեզվով: Նա այդ կարգացել է մի շաբաթ առաջ, իրեն հանձնել է մի ուրիշ ավստրիացի զինվոր, որ հետախուզությունից վերադառնալով, իր հետ բերել է սովետական թուցիկներ ու Ստալինի հրամանը: Կարգացել էին նրանք ու սպասում էին հարմար առիթի գերի հանձնվելու, վերջնականապես համոզվելով արդեն, որ Հիտլերի համար մեռնելը հիմարությունից էլ վատ է:

Իերում են գերիների մի ուրիշ խումբ: Դրանցից տասներկու հոգի անձնատուր են եղել ինքնակամ: Նրանք հանգիստ են և որպես նշան խոնարհության՝ քայլում են զույգ ձեռքը հտեւում իրար խաչած: Նրանց դեմքերին նայելիս, տեսնում ես մի դադարած լարվածություն: Պատերազմն, այսպիսով, վերջացրին նրանք իրենց համար: Այդպես չեն գերի բռնվածները, որոնք դիմադրում էին մինչև վերջին բոպեն, բայց գերի ընկան, հուսահատ ոռուցներով ու գալարումներով, ինչպես փորձված որսորդից ցանցն ընկած գագանը: Նրանցից մեկին հարցնում ենք.

— Դու նացիոնալ-սոցիալիստ ես...

Վախեցած ժխտում է նա ծամածուելով դեմքի մկաններց՝ դիմելով շարժուձեկի օգնությանը:

— Ես աշխատավոր մարդ եմ,—ասում է նա:

— Իսկ ինչո՞ւ համար էիր կռվում...

— Ինձ հրամայում էին, ես զինվոր եմ:

— Ինչո՞ւ անձնատուր շեղար, ինչպես մյուսները:

— Վախենում էի... սխալվեցի... դիտե՞ք, ես ունեմ կիսք երեք երեխ...  
...

— Եվս սիրո՞ւմ ես կնոջդ ու երեխաներիդ...

Չի պատասխանում ուղղակի, այլ ասում է:

— Նրանք սպասում են ինձ... եթե չվերադառնամ՝ կմեռնեն  
դժբախտության մեջ...

Հարցնում ենք.

— Միայն քո՞ երեխաներին է այդպիսի բախտ սպասում...

— Ու, շատերի...

— Ցավալի՞ է, որ այդպես է:

— Այո՛, շատ ցավալի՞ է...

— Այդպես մտածո՞ւմ էիք գուք, երբ ավերում էիք մեր  
գյուղերը, երբ սպանում էիք կանանց ու երեխաներին, երբ այ-  
րում, փոշի ու մոխիր էիք դարձնում տները, սառնամանիքների  
օրերին դուրս քշելով բնակիչներին...

Արդարանում է:

— Այն ժամանակ ես ֆրանսիայումն էի:

— Իսկ այնտեղ մի՞թե նույնը չէիք անում...

Լոռում է, մտածում.

— Վատ է այդ բոլորը...

Առ ավելացնում է վախով.

— Բայց ես նացիոնալ-սոցիալիստ շեմ, ես ատում եմ  
ֆյուրերին... երեք երեխա ունիմ ես...

Եվ գրպանից հանելով, ցույց է տալիս № 55 հրամանը:  
Կարդացել է, ասում է, և որոշել էր գերի հանձնվել:

— Բայց չէ՞ որ շարունակեցիր կրակել մինչև վերջ...

Ասում է, որ մեր հանկարծակի հարձակումը իրեն շփոթեց...  
Սիմպոմիկ է. ֆաշիստն էլ դիտե, որ կա սկ օր և թուցիկ-ան-  
ցագիր է պահում իր գրպանում:

Վախով, ողորմելի, որ ոշխար ես դարձել այսօր, երբ գերի  
ես, իսկ երեկ հերո՞ս էիր: Վախենում ես դու քո չնշին կաշվի  
համար: Բայց կա մեզ մոտ բարձր օրենք. երբ արգեն մեր  
ձեռքումն եք դուք ու դինաթափ, մենք փամփուշտը ձեր եղբայր-  
ների համար ենք պահում:

Մեր հետեւակն առաջ է շարժվում: Ահա առաջին գյուղը, որ  
վաղ առավոտյան գրավեցին մեր զորքերը: Դա գեղատեսիլ Ա.

դյուզն է: Բայց անձանաշելի, այլանդակված: Շատ տներ ու շենքեր չկան: Նրանց փոխարեն մնացել են մոխիր և թրծված կարմիր աղյուսներ: Ամբողջ փողոցներ փլատակաների են վճռածված:

Վերադարձող բնակիչները գրկախառնվում են այնտեղ մնացածների հետ: Ժպիտ, ծիծաղն ու արտասուբք միասին ցոլում են աղջիկների ու կանանց դեմքերի վրա, լացն ու ուրախ բացականշությունները խառնվել են իրար:

— Վիշտ... դժբախտություն... դժբախտություն..., մրմբնչում են պառավներն ու խանգաղատանքով նայում զինվորականներին,—փրկիչներ, դուք մեր փրկիչներ... այսուհետեւ որ մեռնքնք էլ, հոգ չէ, տեսանք մերոնց, մեր հարազատներին, մեր աղողակիցներին... իսկ նրանք ասում էին, որ ոռւա զինվոր այլևս չկա, որ Կարմիր Բանակ չկա, իսկ դուք, ա՞յ, ինչքան շատ եք, թող աստված ուժ տա ձեզ, պահապան լինի...

Ա. զյուլը... այստեղով անցանք մենք աշնան անձրեստ օրեւրին: Գյուղի մյուս եզրին թշնամին հարյուրավոր դիակներ թռվեց, դաշտում տնկելով փայտե խաչեր ու սև սվաստիկաներ նրանց վրա: Այդ ամէնի համար նա կատահօւթյունը թափեց գյուղի բնակիչների վրա: Ահա կախաղանի սյուները: Մենք մոտենում ենք ու լուս կանգնում: Լացով ու արտասուբքով կանայք պատմում են, թե ում որտեղ են կախել, պատմում են, թե ինչպես գերի վիրաբույժը կախաղան բարձրանալով իր կնոջ հետ միասին, բացականչեց.

— Ես ու իմ կինը մեռնում ենք որպես ոռու մարդիկ, սիրեցեք մեր հայրենիքը և գնացեք Ստալինի հետեւից...

Կանայք իրենք են խորտակում բռնության այդ սյունը:

Մենք վնասում ենք այն խրճիթը, ուր հյուրընկալեցին մեզ մի ծանր գիշեր: Այստեղ տանտիրուհին հյուրասիրեց մեզ կովի կաթով ու հատակի վրա խոտ փռեց, որ հանգստանանք գիշերը: Տունը չկա, ... Մոխիր, փլատակներ ու մշահոտ... Հարեւան տան ավերակների մեջ նստել է ջահել մի կին, մանկահասակ դեմքով: Նա նոր է լվացել դեմքը, սանրում է մազերը: Տարօրինակ է թվում նա: Տարօրինակ է նրա արարքը: Ժամանակ է գտել տուա-

լետով զբաղվելու: Մոտենամ, Հարց ու փորձ ենք անում: Ժըպչտում է տխուր ժպիտով:

— Մեկ ամիս է շէի լվացվել, ես ներքնահարկումն էի... Մերոնց դիմավորել եմ ուզում վայել կերպով...

Ա. գյուղը... Այստեղ գերմանացիներն ամբողջ ձմեռը կառուցիլ էին ամրություններ, պաշտպանության ամուր դիծ, որ անցնում էր գյուղի եզրով: Իջնում ենք այդ ամրություններն ու նայում: Տախտակի վրա գրել են առաջին գծի անունը. «Զիդ-ֆրիդ»...

— «Զիդֆրիդ» մեջ թողել են այն ամենը, ինչ որ ունեցել են իրենց մոտ... փամփուշտներ, պայուսակներ, իրենց ֆրառուների նամակները, լուսանկարներ, օրագրեր...

Օրագրեր... Նրանք ցույց են տալիս այն ճանապարհները, որոնցով բռնակալները մինչև այստեղ են հասել: Ծանոթ անուններ են մեզ համար, ծանոթ վայրեր: Հիմա արդեն վերադառնում են նրանք, ետ-մարշրուտը ներկելով սեփական սև արյունով: «Զիդֆրիդ» քար ու քանդ է եղել մեր օդային ոմբակոծությունից ու արկերից, ինչպես նաև նրա հարևան «Ազուֆ Հիտլեր» դիծը: Վերջինի հենց մակագրության տախտակի մոտ ընկած է ֆաշիստական մի վեպ գոթական շրիֆտով, որի հեղինակը, երեսի փշոցների վարպետ Գերելսի սաներից մեկը, տիտղոսաթերթի վրա գովասանական խոսքեր մակագրելով, ուղարկել է վեպը ճակատում կռվող իր բարեկամ գերմանական «քաջ» սպային... բայց «քաջը» ժամանակ չի ունեցել այդ նվիրն հիշելու, կամ ընկել է մեր գնդակներից: Վեպի կողքին թափված են գրքույկներ՝ պոռնոգրաֆիական նկարներով: Գրքույկի վրա՝ «Սուվենիր զը Փարի» մակագրությունը: Սրանք էլ են եկել, ուրեմն, Փարիզից, ահա «սուվենիրը», ահա այն «բարձր գաղափարները» որոնցով Գերելսը սնում է իր ռազմաճակատը: Ի՞նչ կարող է վերցնել Հիտլերականը քաղաքակիրթ մարդկության երեմնի մայրաքաղաքից՝ Փարիզից, որպես սուվենիր,—այն, ինչ վերցրել է՝ պոռնոգրաֆիա: Նա շէր կարող հետաքրքրվել կուլորով ու Սորբոնով...

Նույն այդ գրքույկի մյուս շապկաթերթի վրա գրված է՝ «Գերմանիան ամենից բարձր»... Հարմար տեղ, Հարմար լողունգ...

Պրոտում է հեռվում մեր Հրետանին, հազիվ են լսվում գընչ-  
դացիրների համազարկերը: Մերոնք շարժվում են դեպի արե-  
մուտք:



### Երկրորդ օրը Ա. գյուղում:

Բնակիչները փորում են իրենց այրված տները: Այնտեղ  
նրանցից շատերը հորել են իրենց վերջին ունեցածը, հափշտա-  
կությունից փրկելու համար: Կիսաքանդ տների տերերը շարում  
են ու կանգնեցնում բանդված պատը: Շատ շատերը բահեր  
առած, փորում են պարտեզները: Կանաչների մեջ սևին է տա-  
վիս բարերեր սևահողը: Մի պառավ, ուղղելով լուսամուտի շրջա-  
նակները, երգում է: Ինձ թվում է, թե երգում է, բայց նա չի եր-  
գում, նա լաց է լինում: Թշնամին նրա հարսներին ու թոռնիկ-  
ներին իր թիկունքն է քշել: Նույն տան պատշգամբի քիվում ծի-  
ծինակն իր բունն է նորոգում ու ճովուղում է: Նա ուրախ է եր-  
գում, բայց եմ զգում ևս այդ ճովոյունի մեջ էլ: Թվում է,  
թե կյանքը հոսում է առանց խորհուրդների, երբ չես նայում ու  
դիտում: Բայց այդպես չէ: Ուկրաինացի պառավն ու ծիծինակը  
միասին են վերադարձել այսօր... Եվ երկուն էլ նորոգելով  
իրենց բույնը, երգում են իրենց սրտի երգը.

...Նա հիշում էր անցած տարին,

իր սնուցած ձագերին.

Որոնց ճամբին հափշտակեց,

Արյունարբու թշնամին...

Ուրախ ճովոյում է ծիծինակը և ևս հիշում եմ աշնան այն  
օրը, երբ այնպես կանչում էին սգավոր թոշունները:

Վերադարձ... Տեսնում է ուստի զինվորն իր տունն ու բույնը,  
իր հայրենիքը, որ երեկ դեռ թշնամու ոտի տակ էր: Բայց բո-  
լորն այնպես չէ, ինչպես թողել էր: Ուրախությունն ու վիշտը  
հավասար ուժով տիրապետում են սիրտդ, ծնունդ է առնում ավե-  
լի խանդավառ սեր քո հայրենիքի նկատմամբ և հավերժական  
ատելություն՝ թշնամու դեմ...

Մարգարետինում արածում է ձիերի երամակը և կովերի նախիրը: Զիու խրխինչն ու կովի բառաշը տարածվում է գյուղի վրա և արձագանքում նրան կպած անտառում:

Ծովար խաղաղ երկինք է բարձրանում: Ցնդել է մղձավանջը, ինչպես մշուշը՝ գարնան ջերմ արևի ծագելուց հետո:

Կանդ շենք առնում մենք այստեղ: Վերադարձի ճամբան այստեղ շի վերջանում:

Մայիս, 1942 թ.

Գարծող Բանակ

## ԱՐԻՍ ՄԵՐԴԻԱԽ ՏԱՒՆԲ...

Արշալույսը գեռ շշառագունած, մեր հրետանին դժոխային կրակի տակ առավ թշնամու առափնյա ամբությունները։ Հրետանավորներին ձայնակցեցին ականաձիգները, դաշտնածեւ կայծակ թափելով գլուխը իր պատյանի մեջ քաշած հակառակորդի վրա։ Գաշտերն ու անտառները դղրդում էին որպահից ու շառաշներից։ Ծուսով երկինքն էլ լցվեց հոնդրուններով։ Համադրծակցության եկան օդային արծիվներն էլ։ Հողը ցնցվում էր մարդկանց ոտքերի տակ, կարծես օրորվում, ինչպես նաևի վրա կանդնածդ ժամանակ։

Բացվում էր գարնանային առավոտը ռազմի աղմուկներով։

Հետեակը հրետանու և ավիացիայի գործողության ժամանակ անցավ Դոնեց գետը և ամուր ու հաստատուն կերպով ոտք զրեց մյուս ամիբին։

Այդ պահը մարտիկներից ոչ մեկը երբեք չի մոռանա իր կյանքում, ինչքան էլ երկար ապրի և լավ օրեր գան։ Թվում է, թե այս ամիբին ավելի քաղցր է բուրում հայրենի հողը... Զգում ևս քեզ հպարտ, ուժեղ, շնչում ևս այդ մանկուց ծանոթ բուրմունքը, զեմքդ բուռմ կանաչներին ու խոտերին և թվում է քեզ, թե հարազատ բնության մեջ էլ լսում ես զու տանշագին ձայներ։ Դա կուցե քո մայրերի ու քույրերի հեծկլատանքներն են, որ մատադ կանաչը պահել ու քեզ է տալիս, թե՝ սիրածդ աղջկա շշունչներն են սփովի ծաղիկների մեջ, որ սիրտդ լցնեն կորովի զգացմունքներով, բռնակալի մետաղե կրունկի տակ ձնշված հայրենի բնության տնքոցներն ես լսում դու, թե քո սիրական

սրտի ձեզներն են զրանք՝ բազմախորհուրդ ու բազմիմաստ, որ միանալով իրար, մտքիդ ու հոգուդ շարունակ կրկնում են մի բան միայն, «առաջ չ, տռաջ»...

Եվ սովոր ես զու զեպի մահը, որ նա փախչի քո կամքի առաջ, որ հաղթանակի կյանքը, պատրաստ ես քեզ զգում անցնելու կրակների ու փոխրիկների միջով, որ գա խաղաղություն այս դաշտերի վրա, որ աղատորեն ունկնդիր լինես բնության երգին ու շնչես նրա բուցերը...

Բայց իրականությունն այս դաժան պահերին զեղումների ժամանակ չի տալիս:

Սկսվեց զրոհը, ինչպես դաշտով հոսող զու հեղեղը, որ շփառես թե պարզ օրին որտեղից փրփից, բայց ալիք է տալիս ու սրբում իր ճանապարհին ամեն խութ ու անջրափետ: Մի քանի ժամ հետո զետափի Ստարայա Տավալժանկա զյուղն արդեն զրավլած էր, իսկ կեսօրից հետո կրակի դիմք զյուղից հեռացել էր զեպի արհմուտք և որոսներն արձագանքում էին միայն մոտիկ անտառում: Գյուղի ընակիցների համար երազի պես հանկարծ և երազի պես արագ եղավ այդ ամենը: Վերջին անդամ լացեցին նր ոնք զոհների արյան համար, որ ընկել էին իրենց աղատարարների շարքերից ու սթափվելով վշտից, բահեր վերցրին և իրենց պարտեզները մտան խոպան մնացած հոգը փորելու:

...Կեղեցիկ է եվել այս գյուղը: Նրա մի եզրից փովում է թափ անտառը, որ կպած է տներին, իսկ արևելքից՝ երկարությամբ ձգված խրճիթների շարքերին զուգահեռ հոսում է Դոնից գետը, վերջալույսի ժամերին իր մեջ արտացոլելով բնության զույների ամբողջ զամման, կանաչներով պատած բլուրները, սպիտակ խրճիթներն ու շարարի գործարանի երկնարեր ծխնելույզը: Մյուս կողմերից տարածվում են փարթամ մարգագետիններ ու եղեգնուտներ, որ արածել են ցեղական կովերինախներն ու ձիերի երամակները: Խաղաղ ժամանակների զարնան այս օրերին Դոնիցի այս կանաչավետ ափերին երեկոյան զրոսանքի ժամանակ մինչև ուշ գիշեր երգել են զարմոշկան ու գիթառը: Երգի ու նվազի տակ պարել են պատանի աղջիկները զյուղի տղաների հետ լուսնյակի շողերի մեջ և երեկոն ավարտել հոմայությներով ու սիրո երգումներով...

Այսօր, սակայն, պատկերն այդպիս չէ:

Քայլում ես զյուղի փողոցներով և շուրջը տեսնում միայն փլատակներ ու միացող տներ, թափթփված, ջարդութված իրեր և կտրտված ու ավերված պարտեզներ: Թշնամու ձեռքն համտաւարձ ավերածություն է փոել ամեն կողմ:

Բայց նրան ժամանակ շմարաց մինչև վերջը հասցնելու իր ոճիրը: Զարագործը շնացրեց ավերել ծաղկուն գյուղը մինչև վերջին տնակը, փլատակների մեջ մնացել են հատ ու կենտ անվնաս խրճիթներ:

Ահա նրանցից մեկը կանգնել է իմ հայացքի առաջ: Զարգված լուսամուտներից երեսում է, որ ոչ ոք չկա ներսում: Հատակին ցրված են թղթեր, իրեր, պատառութված հագուստներ ու գործիքներ, ջարդութված կահ-կարասի: Ես բակի կողմից փրնում եմ մուտքը և կանգ առնում քանդված շնմի վրա: Լուսթյուն է տիրում, ճնշող լուսթյուն: Միակ կենդանի շունչը կատան էր, որ վախեցած մլավլունով թռավ լուսամուտին, նայեց ինձ մի վայրկյան, ապա փողոց նետեց իրեն:

Մի պահ վարանումն ինձ մեխած է պահում շեմին: Վերադառնա՞լ, թե ներս մտնել: Միևնույն է, այնտեղ ոչ ոք ոչինչ չի պատմի ինձ, իրերը լեզու չունեն, գրքերն ու թղթերն ել ոչինչ շնու հաղորդի քեզ այս տան բնակիչների ճակատագրի մասին: Այնուամենայնիվ ակամա ուտքերս ինձ ներս են տանում: Ես կանգնած եմ առաջին սենյակի մեջտեղում և փորձում եմ հայացքով բնկալել ողջ պատկերը: Առաջին իրերը, որ զատվում են ընդհանուրից և գրավում իմ ուշադրությունը, շորացած լիմոնի ձյուղերն են և ֆիգուսի դեղնած, սմբած տերեները, որ թափվել են հատակին գրքերի ու պատառութված հագուստների վրա: Ամանները, որոնց մեջ ամել ու սնվել են սենյակի ծառերը: Չարդվել են, նրանց մեջ կաղապարված հողը ծարավից ճաքճքել է և ծառերի արմատները՝ շորացած ու մերկ՝ ցած են կախվել աթոռակներից... Ուր է նրանց խնամող ձեռքը: Ես փակում եմ աշքերս ու երեակայությամբ տեսնում կանացի այդ բնքույշ ձեռքը, որ ամեն առավոտ ջրում էր սենյակի ծաղկիկներն ու ծառերը, լվանում նրանց կանաչ տերեները, որոնք շողում են լու-

սամուներից ընկած շողբերի տակ: Ո՞ւր է նա և ինչ է մտածում  
ու զգում այս բոպեին... Ո՞վ կասի ինձ այդ բանը...

Անկյունում դրված մահճակալի երկու ոտքը պակվել են  
իրենց հօգերից և նա փլվել է մի կողի վրա: Սահել, մահճակալից  
ցած է թափվել անկողինը, շաղախված կարմիր արյան լերգերով:  
Բարձր գզզված է և արյունով ներկված փետուրները ծածկել են  
այն ամեն անկարգությունը, ինչ որ տեղ է բռնել այս փակ տա-  
րածության մեջ:

Պատից գլխիվայր կախված է մի նկար: Բնկել են նրա վերի  
մեխերը և նկարը ծածկել է ինքն իրեն: Մոտենում եմ պատին,  
բացում նկարը: Նա ծածկված է գնդակներից, բայց ծանոթ նկար  
է, պարզ երկում է, դա Ռեպինի Հայտնի «Իվան Առևի» ընդօրի-  
նակությունն է: Թշնամիները կրակել են դարեր ուսաշ ապրած  
ուսւ թագավորի անխոս պատկերի վրա: Ինչո՞ւ, — հարցնում եմ  
ինքս ինձ: Թվում է, թե պատասխան չկա այդ «ինչու»-ին: Երա-  
կում եմ նկարը, ամբացնում պատին՝ և կրկին նայում շուգչու:  
Ազա ուզում եմ զննել բոլոր թղթերն ու իրերը: Թող մի անգամ  
մոռանամ ես իմ ժամանակը, ընդունեմ, թե ես Մարսից եմ  
Հանկարծ այսահեղ ընկել և այս անձանոթ աշխարհը ճանաշելու  
համար ինձ տրված է քննելու այս երկու սենյակը, այս իրերն ու  
թղթերը և ուրիշ ոչինչ:

Առ սկսում եմ քննությունը: Եփոթի միջից վերցնում եմ մի  
լուսանկար: Նորապսակներ են: Փեսան՝ նեղ հաղուստով, գլխին  
կարտուզավոր գլխարկ և կրծքին՝ շատ կոճակներ: Հարսը՝ ոտից  
դուփս սպիտակ շղարշի մեջ է, կարծես ճերմակ փրփուրի միջից  
են Հանել նրան ու՝ դրել իր ընկերոջ կողքին: Նրանք իրար չեն  
նայում, այլ երկուսն ել՝ քեզ: Ծուռ եմ տալիս նկարը: Հակառակ  
կողմում ունի կարճ մակագրություն:

«Վասիլի Դավիդով և Տատյանա Դավիդովա, Հարսանիքի  
նախօրյակին, 1892 թիվ, Ս. Տ. դյուլ»:

Թափ եմ տալիս փոշին և լուսանկարը դնում պատուհանին:  
Երկրորդ լուսանկարը կարմիրանակայինի պատկեր է, 1940  
թվականին Հանված, զարմանալի նման վասիլի Դավիդովին:  
Նույնպես ունի մակագրություն.

«Եմ սիրելի ծնողներին, Գրիգորի և Մարիա Դավիդսիներին,  
որդի՝ Սաշա»:

Ուրիշն՝ բանակայինը նրա որդին չէ: Ի՞նչն է հապա: Կը-  
պարզեմ ես քիչ հետո: Սովոր եմ ես վավերագրերի լեզվին: Ու-  
շոկում եմ լուսանկարներն առանձին, թղթերն ու գրքերն՝ առան-  
ձին: Դա աւելում է մի քանի ժամ և պրավումներից մեջքդ ցա-  
վում է: Եսկը գրառում ուժեղանում է որսան ու երկնքում սկսում են  
ճարճատել գնդացիրները: Հանգստանում եմ մի պահ ու շարու-  
նակում ուսումնասիրությունը: Լուսանկարները դասավորում եմ  
ժամանակագրական կարգով: Նորապսակի Դավիդսիներից հետո  
ըստ ժամանակի երկրորդ պատկերը 1896 թվականին է վերաբե-  
րում: Նույն ծանոթ գեմքերն են, տարբեր տարազով, նույն Վա-  
սիլի և Տատյանա Դավիդսիներն իրենց որդի Գրիշայի հետ: Դա  
դուցե հենց Գրիգորի Դավիդովն է, կարմիրբանակայինի հայրը:  
Բայց սա գեռ հիպոթեզ է, որ պիտի հաստատել... Նոյում եմ  
1903 թվականին հանված մի ընտանեկան խմբանկարի: Տատն է,  
պապը, որոնց անունները չի հիշված, մեզ արդեն ծանոթ Վասիլին  
ու Տատյանան և Գրիշան, որ արդեն 7—8 տարեկան է, դանդրա-  
ռներ, սիրուն մի մասուկ: Տատի գրկում կա փոքրիկ մի ազդիկ:  
Նորածին, երեխ մի քանի ամսական: Նրա անունն Աննա է, Գրի-  
շայի փոքրիկ քույրն է դա...

Գրիշային—Գրիգորի Վասիլիից Դավիդսին ես հանդիպում  
եմ 1916 թվականին և շեմ ճանաշում: Փոխվել է, առնական տղա-  
մարդ է դարձել, սպացի ուսադիրներով է: Բարեձև, գեղեցիկ մի  
երիտասարդ է, նորածիլ, բարակ բեղիկներով: Տակը գրմած է.

«Տատին, պապին և իմ ծնողներ՝ Վասիլի ու Տատյանա Դա-  
վիդսիներին ու իմ քույր Աննային»:

Նույն թիւն նկարվել է Աննան իր ընկերութիւների հետ:  
Երեք գիմնազիստականեր են, մակագրությունը.

«Երեք անբաժան ընկերութիւներ—ես, Ռոզան ու Մարիան»:

Կա միենույն տարվա երրորդ լուսանկարն էլ: Երեք անբա-  
ժան ընկերութիւներն են, նկարված երիտասարդ սպալի և երկու  
բրդուտ շան հետ, որոնք հոտուում են մարդագետնի կանաչները:

Սպայի ձեռքին՝ որսի հրացան։ Աղջկները ծղոտե լայնեղը գրւ-  
խարկներով են։ Պատկերը բացատրված է։

«1916 թվի ամառը, երբ Գրիշան դործող բանակի գերմանա-  
կան ճակատից մեկ ամսով արձակուրդ եկավ—Աննա»։

1923 թվականն էլ երկու լուսանկար է թողել այս ընտանիքի  
պատմության հիշատակին։ Գրիգորի Դավիդովը նկարվել է մի մեծ  
խմբի հետ։ Տակը գրված է։

«Շաքարի դործարանի գրասենյակի աշխատակիցները»։  
Երկրորդ անգամ նկարվել է իր կնոջ՝ Մարիայի ու որդու՝ Սաշայի  
հետ։ Սաշան նման է մանուկ Գրիշային, որին մենք տեսանք  
1896, 1903 թվականներին։ Խակ մայրը, Մարիան՝ նույնպես ծա-  
նոթ է մեզ, նա Աննայի գիմնազիստ ընկերուհին է, որ նրա  
կղզոր կինն է դարձել։ Ե՞րբ է արթնացել սերը նրանց մեջ, գոյց  
այն ժամանակ, երբ երիտասարդ սպան արձակուրդ էր եկել  
հայրենի գլուզը և զրունում էր ազգիկների հետ մարդագետնում։  
Ոչ մի լուսանկար չի ասի ինձ այդ բանը։ Կյանքի բոլոր գաղտ-  
նիքները չեն, որ հիշատակ են թողնում պատմությանը։

...Յո գիմնում եմ թղթներին ու գրքերին։ Ահա մի գրքույի՝  
«Խնձորենու ծաղկումն ու պաղակալումը»։ Երկրորդ՝ ոմն պրոֆե-  
սոր Խաչարյանի հեղինակությունն է, հրատարակված Թիֆլի-  
սում, որ այստեղ է հասել ու կոչվում է։ «Տասներկու խորհուրդ  
հիվանդ սիրա ունեցողներին»։ Հետաքրքրական վերտառություն  
ունի երրորդ գրքույկը։ «Խնչպիսի պարտեղ պիտի մշակել, որ սո-  
խակը միշտ քեզ մոտ երգի»։ Շապկի վրա նկարված է վարդենու  
թուփ։ Ապա կրկին հանդիպում ենք պրոֆեսոր Խաչարյանի հե-  
ղինակությանը։ «Խնչպես պիտի հետեւ սրտի առողջությանը» և  
զրույկներ՝ կաղամբի մշակության մասին, բալենու ու խնձորե-  
նու խնամքը, «Բույսի կյանքը», մի գրքույկ, թե որ օքերն են  
հարմար որսի գնալու։ Ահա վեպերի շարք «Նիվա» հանդիսի  
հրատարակության սերիայից և նեկրասովի «Սովորեմեննիկի»  
երեք համար...

Բաց եմ անում քառածալ մի թուղթ։ Դա Աննա Դավիդովա-  
յի 1913 թվականին ստացած գովասանագիրն է, Ռոմանովների  
տան երեք-հարյուրամյակի առթիվ, թագավորների ու թագուհինե-

բի նկարներով շրջանակված, ահա Պետրոսը, ուստ պետականության աստվածը, նրանից հետո՝ իր արժանավոր դուստրն է, ելիզավետան, որի թագավորության ժամանակ Ռուսիայի զորքները թշելով թշնամուն՝ նրա մայրաբազաք Բեռլինն է մաել.., Այդ պատմությունն անում է պրոֆեսոր Պլատոնովի գիրքը՝ «Դասագիրք ուստ պատմության», 1913 թիվ: Թերթում նմ գիրքը: Նա պատմում է, թե ինչ անհիշելի ժամանակներից են այս հարթությունների վրա եղել սլավոնական աշխատասեր ու ռազմիկ ցեղերը, երբ են միացել ու կազմել իրենց ազգային կառավարման առաջին մարմինները, ջարդել ու ետ մզել թշնամական ազգերի գրուները, ընդունել իրենց նոր կրօնը Հեթանոսությունից հետո և վանքեր կառուցել ու գրեն գրել, ծնել առաջնորդներ ու պետական ղեկավարներ: Անուններ, անուններ՝ Ռյուրիկ, Օլեգ, Վլադիմիր իշխան, իշխան Յարոսլավ իմաստուն, իշխան Ալեքսանդր Նևսկի, Գմիտարի Իվանովիչ Գոնսկոյ, Իվան Ահեղ թագավորն իր մեծագործություններով, Ֆեոդոր Իվանովիչ արքան, իշխաններ Մինինի և Պոժարսկու դյուցազնական պատմությունները, Դիմացել է ժողովուրդը մեծամեծ փորձությունների, նրա իվան Ֆեոդորովին ստեղծել է տպագրությունը, ժողովրդյան ուժն ու իմաստությունը միացընել են իրար և քանդակել նոր ժամանակների պատմության մեջ Պետրոս Մեծի ու Պուշկինի հավերժական պատկերները...

Պատմաբանն իր գիրքն ավարտում է դեպքերն հասցնելու մինչև Ալեքսանդր 3-րդի ժամանակները:

Յանկից հետո գրքի բաց մնացած էջում 1914 թվականի մայիսին Վասիլի Դամիլովը գրել է.

«Գրիշա, սա քո ազգի պատմությունն է, շատ անդամ կարդա ու մտածիր: Մեր նախահայրերը պահել են ուստ պետականությունը հերոսությամբ և արյունով: Կարդա և թող նրանց ոգին քեզ անցնի: Դու Ռուսիայի զավակն ես, հպարտ եղիք դրանով, և մի մոռացիր երբեք քո կյանքում, որ ուստ մարդ ես ուստ Քահայր՝ Վասիլի, 1914 թ. Ս. գյուղ»...

Այդ կտակի տակ, 1938 թվականին Գրիգորի Դամիլովն էլ իր խոսքն է ասել, դիմելով իր Ալեքսանդր որդուն, կարմիր զինվոր Մաշային.

«Հայրիկը 24 տարի առաջ դրել է ինձ այս կտակը, այն ժամանակ ես քո այսօրվա տարիքին երիտասարդ էի: Այժմ էլ իմ պարտքն է քեզ ասել իմ հայրական խոսքը: Դու գիտես այսպատճության շարունակությունը, դու ինձնից լավ ես իմանում, թե վերջին Ռումանովից հետո ինչ հրաշքներ գործնց Ռուսիան: Նա ծնեց Լենինին և դա նրա հանճարի ամենամեծ փայլատակումն էր, իսկ Լենինը սկիզբ դրեց Ռուսիայի նոր պատմությանը, ճշմարիտ դրոշ տալով: Հաստատուն երթով գեպի գումբը քայլող ժողովուրդների ձեռքը: Հավատարիմ մնա այդ դրոշին: Քո հայր՝ Գրիգորի Դավիդով, 1938 թ. Ս. գյուղ»...

...Զեռքս է ընկնում աշակերտական մի տեսրակ: 1941 թվականի տեսրակ է, սկսված ապրիլ ամսից: Պատկանում է Ա. Տ. գյուղի միջնակարգ դպրոցի յոթերորդ դասարանի աշակերտունքի Տատյանա Գալիբիգովային: Նա երգեր է զրել այնտեղ և պարզ մտքեր ու ափորիզմներ՝ դիմելով ընկերունեներին ու ընկերներին, վերջիններս էլ իրենց հերթին փիլիսոփային են ընկերունու տեսրակի էջերում, պարզունակ ու անկեղծ, ինչպես միայն կարող է պատանին փիլիսոփային: Տեսրը վերջանում է սովորական բանաստեղծի ոտանավորի արտադրությամբ, որի միայն վերնագիրը կա և երկու տունը, թերթը պատոված է: Աշակերտունքի Տատյանան ոչ թե զրել, այլ նկարել է ոտանավորի վերնագիրը. «Я русский человек».

Բնդշատում եմ ևս իմ հետազոտաթյունը և փորձում ի մի հավաքել տպավորություններս, մի միաբ ու իմաստ տեսնել այս բոլորի միջ, գդալ ու շոշափել բոլոր վավերապերի ընդհանուր կապը: Այդ կապը տեսնում եմ ևս մտքով, ինչպես տեսողությամբ՝ լուսամուտից ներս ընկած արեի շողքը...

Անցնում եմ մյուս սենյակը։ Զարդումված պահարաններից ինձ են նայում ճենապակյա դատարկ ամանները, փշրված գավաթների մողայիկ բնկորներն ու զանազան սրվակներ։ Պահարաններից մեկի մոտ դրված է կանացի արդ ու զարդի սեղան։ պուրացի դատարկ տուփը վրան։ Նրա կողքին՝ մի կոտրված սանր, որի ատամների մեջ մնացել են աղջկա երկու շիկավուն, երկար մազ, պատին ամրացած է մնացել չարդված հայելու

ուախտակը... ոշինչ ոշինչ չեն ասում ինձ այս հիշատակներն էլ, լուռ են, ինչպես՝ բոլոր իրերն ու առարկանները: Բայց լռությունն էլ իր լեզուն ունի: Այստեղ ամեն օր սանրվել է ոռու կինը, ուղղել է իր խոպանները, կարդի բերել իր հագուստը, հայելու մեջ ստուգել է իր դեմքը, որ դուքս գա գրասանքի...

Նույն այս սենյակի արևելյան անկյունում գլխիվայր կախված է Մարիամ աստվածածնի պատկերը, երկու սրբանկար էլ ընկել են հատակին, աստվածաշնչի կողքին: Վերցնում եմ սպանված թոշունի պես բաց թերով գետնին փռված «սուրբ գիրքը»: Նրա կազմը պատաժ է հալված մոմի շերտով ու արյունով: Թերթերի վրա էլ կան արյան կաթիլներ: Շուռ եմ տալիս հին ու նոր կտակարանները և աշբերս կանգնում են ծանոթ նախադասության մրա:

«Մի վարվիր ուրիշների հետ այնպես, ինչպես չէիր ցանկոնա, որ նրանք քեզ հետ վարվեն»...

Սենյակի հյուսիսային պատին միացած է ոսուական վառարանը, որի վրա դեռ փռված է մնում հնամաշ գորգը: Այստեղ ձմռան երկար գիշերներին պառկել է տատը, քնելուց առաջ ազոթքներ մրմնչալով սրբապատկերների դիմաց, վառ թողնելով մոմը աստվածաշնչի աթոռակի վրա... Որդիներն ու թուները հարգել են նրա հավատմունքն ու խղճմատանքը և թույլ տվիլ, որ ազրի տատն իր կրոնական երեակայության աշխարհի մեջ... Եվ արյունով են ներկվել հավատացյալ պառավի սրբություններն էլ...

Աչ, ես չեմ կարող մոռանալ ինձ ու իմ ժամանակը, ես չեմ կարող գիտնականի սառնասրտությամբ քննել այս անխոս իրերը: Դուքս եմ դալիս բակը: Բայց զուան մոտ առաջս է կանգնում զբքերի կուլար, որի վրա, ներս մտնելիս ուշագրություն չէի դարձրել: Վերցնում եմ առաջին բարակ զբքույկը՝ «Գլխնկայի կյանքն ու ստեղծագործությունը», կուլարի մեջ նկատում եմ Պուշկինի մի հատորյակը, պատուոված թերթերով, ցեխի մեջ շաղախված... Զեռքերս դողում են հուզմունքից, աշբերիս առաջ օրը մինակալում է, երկուզածությամբ ես շուրթերիս եմ մոտեցնում հեղինակի անունը... Զէ՞ որ մեր թումանյանն էլ, մեր աղ-

դային սրբություններն եւ ցեխի մեջ կնետվեին, և թե թշնամին այնտեղ հասներ...

Սթափում եմ: Նայում շուրջու: Նայում ուս մարդու տան շեմին: Թվամ է թե պատկերը ծանոթ է, շատ անգամ եմ տեսել ես այս տիսուր տեսարանը, տեսել եմ ավերված այսպիսի տներ և շիմին թափթիված հաստակազմ զբքեր... Ե՞րբ եմ տեսել, ո՞ր տեղ: Տառապում է միտք և հանդարտվում, հանգստանում է մի վայրկյան: Ո՛չ, կյանքում չէ, այլ Վարդգես Սուրենյանի կտավի վրա է եղել այս պատկերը, որ մնացել է հիշողությանս մեջ, իմ հայրենի քաջարի թանգարանից, որ կախված է արվեստագետի «Կողոպատված եկեղեցին»... Այդպես է վարվել բռնակալն իմ ծնող ժողովրդի հետ էլ: Հեռու անցյալ չէ դա:

Քայլերս ուղղում եմ դեպի պարտեզը: Նրա եզրին դրված է շուր տրված մի հին նավակ: Նստում եմ նավակի վրա ու դիտում պարտեզը: Ռսոխի ձևոքն այստեղ էլ մահ է փռել: Նա ամենուրեք թշնամի է կյանքին: Շառերն ընկել են նրա կացնից, գիւղիների պես պառկել իրար կողքի, իրար վրա: Խնձորենիների նոր բացված բողբոշները խամրել ու կծկվել են, կացնի հարվածներից արյան պես հոսել է ծառերի հյութի ու շրացել վերքերի վրա:

...Փակում եմ աշքերս վերստին, մտքիս մեջ հյուսվում է ոռւսական այս ընտանիքի կյանքի ողբերգությունը, գծվում է մաքերիս աշքերի առաջ նրա բարոյական պատկերը: Ապրել են տան նահապետները խաղաղ կյանքով, աղաներ ու աղջիկներ ծեկել, ուսուցանել նրանց իրենց նախնիների պատմությունը, պատմել նրանց անցյալների գործերը, ազգային հերոսների կյանքը, երկյուղածությամբ են արտասանել Ռուսիայի մեծագործ և իմաստուն զավակների անունը: Ապրել են աշխատանքով ու տքնությամբ, երիտասարդության տարիները նվիրելով ազգային բանակին—պետականության ամրության համար, ծերության օրերին հետեւ են իրենց սրտի առողջությանը, ծառեր տնկել ու պարտեզներ մշակել, նավակներ շինել, որ շահելներն զբուանքի գնան Գ. գետի վրա և կտակներ զբել հետնորդների համար, որ սիրեն նրանք հայրենի երկիրը, պահպանին ազգային առաքինու-

թյունները և հիշեն միշտ, որ իրենք ուսւ են ու հպարտ լինեն ուսւ մարդու անունով...

Բայց թշնամին հասել է այս տանը, սրբագրծել ամեն սեր ու հիշատակ, կրակել Ռուսիայի պետականության վրա, որը այս խրճիթի պատից նայել է նրան Իվան Ահեղի պատկերով, թշնամին ցեսի մեջ է նետել ժողովրդական սրբությունները և այդ ամենը ներկել ուսւ մարդու արյունով...

Նայում եմ ևս գեղի դաշտերը: Վազուց այս լանդշաֆտն ինձ ձանոթ է: Այս մարդագետնում էր ահա, որ Գրիգորի Դամբիդովը նկարվեց ջահել աղջիկների հետ, որսի հրացանը ձեռքին, այդ ծաղիկների մեջ նա իր սերը բացատրեց Մարիային, իր քրոջ բնիկերուհուն...

Խանգարված են մտքերդ: Այսօր երրորդ անգամն է, որ օգանին մարտ՝ է տեղի ունենում: Արկի բեկորներն ընկնում են գյուղի մեջ: Կանաչը ու երեխանները հանգիստ դիտում են երկինքը, ձեռքները ճակատներին դրած: Նրանց գեմքին վախ շկա, վաղուց մոռացել են նրանք սարսափն ու երկյուղը, սովորել են: Ճակատային ժողովուրդ են նրանք:

Մի պառավ գեղի ինձ գալով խոսում է կարծես ինքն իր հետ.

— Այ, մերոնք տուր ավեցին այսօր գարշելիներին... արժանի են, մարդիկ չեն նրանք, գաղաններ են, սովուններ...

Ու ինձ է նայում.

— Այ, թե ինչ արին նրանք...

Յուց է տալիս այրված ու քանդված տները:

— Քանիսին ծեծելով խորքը քշեցին ավաղակները, քանիսին սպանեցին, և պարտեզների ծառերն էլ մինչեւ անգամ կոտորեցին կացիններով, անիծվածներ... այ, հիմա տեղն է, խիսում են մերոնք, օխ, ամուր են խիսում...

Իջնում է կապույտ երեկոն: Դադարում են որոտները: Մոտիկ, շատ մոտիկ անտառում երդում են սոխակները, իրենց փոքրիկ կրծքերից հազար գեղգեղանքներ տալով բնությանը: Այս ծաղկազարդ գավառի սոխակների համբավը ծանոթ է ողջ Բուսիային: Բայց տխուր է թվում նրանց երգը ինձ: Գուցե դա-

վիդովների պարտեզը տապալված տեսնելով, վշտացել են: Սովոր էին երեխ այնտեղ երգել ամեն դարնան այս օրերին: Չե որ տան տերը զիտեր, թե ինչպիսի պարտեղ պիտի մշակես, որ սոխակը միշտ քո բակում երգի...

Կվերագառնան վաղը կրկին սոխակները այս եղնմական պարտեզը: Այս, կվերագառնան: Բանակից հաղթանակով տուն եղաւ Ալեքսանդր Դավիդովը, կծնի նոր սերունդ, կուսուցանի նրանց մայր Երեխի պատմության Հերոսական շրջանը, որին ինքն էլ ժամանակցություն է բերել: Կեառուցի նա ավելի շքնդ տուն, եղարդարի մեծ ժամանակների հիշատակներով, կաճեցնի ու կմշակի նոր պարտեղ, ավելի գեղեցիկ ու կախարդական, ուր կդան երգելու սոխակներն օրն ի բուն: Եվ դա կլինի ուսև մարդու նոր տունը, այս գեղեցիկ մարգագետնի ափին, Դոնեց գետի մոտ, թավ անտառի եզրին:

Աւ ծերության օրերին հայրենական պատերազմի պատմության հատորի վրա Ալեքսանդր Դավիդովն էլ կտակ կդրի իր որդուն:

— Կարդա այս զիրքը և թող մեր մեծ ժամանակների հերոսների ողին անցնի քեզ:

Հաւնիսի 10, 1942 թ.  
Դործող Բանակ

## ՄԵՐ ՔԱԽՑՄԵՐԸ

ԱՐՈՒԵՍՏ

Քո՞ւյր...

Ինչքա՞ն քնքշաւթյուն կա այս մեկ հատիկ բառի մեջ, ինչքա՞ն սեր ու խանդաղատանք, ինչքա՞ն հիշողություն մանկության օրերից: Երկրորդ լովիչ պատկերն է աշխարհում հարազատ քրոջ դեմքը, որ շողում է սիրոց եղբորը տեսնելիս, ինչպես շաղուականաշը՝ արեին, նրա ժագման ժամանակ, շողում է և բաղցր շերմությամբ լցնում սիրոց: Պանդուխար հեռու հորիզոնների տակ մայրական դեմքից հետո բրոջ արցունքուա աշքերն է տեսնում իր կարուտի երազանքների մեջ: Քույրն ամեն ժամանակ հպարտանում է իր եղբորով և երբ նրա անունն է արտասանում, ակնածանքից ու սիրոց գողում են շրթունքները: Քույրը նաև օգնական է կովի դաշտում և ընկերունի: Ժողովրդական զրոյց-առասպելների մեջ նա հոկանների հետ գոտեմարտի է մտնում, գետնով է տալիս թշնամուն, պատժում է երդմնազանց ասպետներին, վրեժինդիր լինում այն ուխտազրուժ տղամարդուն, որ ու սույնը է նետում իր անբասիր պատմի վյա:

Իես վրաց բանաստեղծն է ասել մեղնից շատ առաջ.

Առյուծն առյուծ է միշտ,

Բե էդ, թե արու...

ԱՌ ժողովուրդն է, որ չունի այդպիսի իմաստուն խոսքեր: Հերոսական, ասպետական դարերում միշտ էլ կինը հավասար է եղել տղամարդուն, վերջինն առյուծ է, նա՝ առյուծամայր: Խո-

դաղ ժամանակ նա քնրուց բռւյր է, անհիշաշար ընկերունի—կին, բարի ու վշտակից մայր: Երկու լար ունի նրա սիրաը—սիրո և բարության: Ռազմի ժամին նա փոխվում է, գառնում հերոսունիք, բոցավառվում գիտասապի նման: Ոչ ոք չկ շափել սահմանը սիրո և տակելության: Արդար ատելությունը ճշմարիտ սիրոց է միշտ ուժ առնում: Տղամարդու շորեր հագած դյուցազնունին փայլատակով սուրբ թշնամու դիմին իշեցնելիս, գոռ ու ամենի հոկա է եղել իր ահապին ցասման մեջ, բայց երբ խոնարհվել է վիրավոր եղբոր վրա, գարձել է նույն քնրուց աղջիկը, ինչպես կար փորձությունից առաջ՝ սիրոց զողացող ու աշքով արտասվալից:

Եղյան է եղել ձին ժամանակիներում և այդպես էլ, մեր հերոսական օրերում: Միայն քաղքանիական մտածողությունը նրան հավասարեցրեց կահկարասին, նայելով նրա վրա որպես շքեղ իրի, ելլ ամենից առաջ ինքը, կինը ծառացավ այդ անիրավացիության դեմ և այսօր վերականգնել է արդեն իր իրավունքն ու տեղը կյանքի, պատմության մեջ:

Այս պարզ փաստեր այդ ճշմարտության մասին, եղելություններ առանց զրական զարդարանքների, որ տպագիր խոսքը, չիշտ է, սիրում է երբեմն:

## 1

...Մեր զորամասի սանիտարական զումարուակը կատարած իմ հերթական այցելություններից մեկի ժամանակ ևս ծանոթացամի աղջկա հետ, որի մասին պիտի պատմեմ: Գնացել էի վիրավոր ընկերոջս, ախալքալաքցի հույն Պավել Իվանիդին տեսնելու նստել էի նրա մահճակալի կողին ու զրուցում էինք: Թիկի վիրահատումից հետո Պավել Իվանիդին լավ էր զգում իրեն և ուրախ կատակում էր: Այդ ժամանակ ներս մտավ մի միշահասակ, բարակիրան աղջիկ, մոտ քան տարեկան, ու աշքերով, լայն նույր ուսնգերով, ու մի թիթե հայացք ձգելով ինձ վրա, մոտեցավ ու դիտողություն արեց:

— Այդքան մոտ միք նստի վիրավորին, կարող եք ուրին կոշշել:

— Ես այդ բանը հասկանում եմ, —պատասխանեցի ես, —դուք մի անհանգստանաք, վիրավորն իմ ընկերն է և ես էլ նույնան մտահոգված եմ նրա առողջությամբ:

Աշխնչ շպատասխանեց: Դուքս եկավ:

Քիչ հետո կրկին ներս է մտնում նա զաշտացին մի աթոռակ ձեռքին ու հրավիրում է ինձ.

— Խնդրեմ, նստեցեք այստեղ:

Իսկ ինքը գրավում է իմ տեղը:

— Զգուշացեք, հիվանդի ոտքին շղիպչեք, —զգուշացրի ես էլ իմ հերթին: Նա լուս ժպտաց և պատասխանի խոսք շփնտոնեց: Չեռքն իվանիդի ճակատին դնելով, շշնչաց.

— Արդեն առողջ ես, Պավլիկ, շերմ էլ ամեննին չունես:

— Շնորհակալ եմ, քույրիկ, —պատասխանեց իվանիդին ու դարձավ ինձ.

— Մի քիչ խոսե հետը, տես ինչ խելացի աղջիկ է:

Մեր խոսքը մի քանի րոպեն հետո իր ընական հոնը գտավ: Աննան 18 տարեկան է, թեև երկու երեք տարով մեծ է երևոմ: Պատերազմի առաջին օրերից ճակատ է եկել իր տասնյակ ընկերների ու ընկերուհիների հետ միասին: Նրանք իրար հետ մանկապարտեղ գնացին, երբ փոքրիկ մանուկներ էին, միասին ավարտեցին միջնակարգ դպրոցը, երբ հասուն պատանիներ էին դարձել և դիտեին արդեն, թե ինչ բան է սերն ու մտերմությունը:

Մեր ու մտերմությո՞ւն...

Դա այն կապն էր, որ անբաժան պահեց նրանց մինչև կյանքի մեջ մտնելը և անքակտելի կմնա մինչև գալոց հեռավոր օրերը: Թպրոցն ավարտելուց հետո պետք էր համալսարաններ գնացին, բայց պատերազմի դաշտը մտան: Թշնամին իր գեմ հրավիրեց նրանց: Բանակ գնացին առաջինը՝ տղաները, հրաժեշտ տալով իրենց ընկերուհիներին: Աղջիկներն հավաքվեցին նրանց ճամբու դնելու և կայարանում ցույց տվին իրենց դիմումները.

— Մենք էլ վաղը, մյուս օրը կհետևենք ձեզ, մի՞թե հետ ևնք մնացել ձեզնից ուսման մեջ, կոմերիտական աշխատանքում, տնտեսության մեջ, որ հիմա հետ ընկնենք:

Տղաներից մեկը, երեխ աղջիկներին գրգռելու համար, նկատեց.

— Դե, դուք կարող եք չգալ էլ, դուք աղջիկներ եք...

Ընկերութիւնները մոռացան, որ հրաժեշտի վերջին վայրկյաններն են ու բարկացած վրա տվին.

— Լոիր, խոզուկ, վիրավորական է այդ խոսքը մեզ համար...

Շատ մոռայլ պատկերներ տեսան աղջիկները պատերազմի դաշտում: Գրքային սոմանտիկան փշրվեց հենց առաջին օրերին, տեղի տալով կյանքի ռեալ զգացողությանը: Շատ տարիներ էին պետք կյանքի մարդ դառնալու համար, պատերազմում պետք եղան ամիսներ միայն: Եվ այսօր, հաստատակամ ու հավասարակշիռ, ճակատային առօրյայի մեջ իրենց դիրքերի վրա են կանգնած նրանք: Անցել են առաջին օրերի տագնապն ու անփորձությունը, առաջին օրերի տեխնդային լարվածությունը, երբ անվարժ ալպինիստի նման ուզում ես միանդամից բարձր սարի կատարը հասնել, բայց շռնչդ կտրվում է ու ոտքերդ թուզանում են: Ու փորձը սովորեցնում է քեզ դժվարություններ հաղթահարելու միջոցները, կամք ու համբերություն է բերում, բերում է նաև մտքի արագ հասունություն:

— Թույլ կտա՞ք ձեզ մի հարց էլ տամ,—խնդրում եմ ես:

— Ինչո՞ւ եք այդքան հարցեր տալիս,—ասում է նա ու ծիծաղում:

— Հետաքրքրությունն է մեղավոր. ես ուզում էի հարցնել՝ գուք դիտե՞ք, թե ինչ բան է իսկական սերը...

Կրկին շիկնում է ու ծիծաղում կրկին.

— Այո, դիտեմ, հետո...

— Որտե՞ղ է ձեր սիրած տղան:

— Իհարկե, ճակատում, մեր զորամասում, բայց թե որ ստորաբաժանումում, դա ուզմական գաղտնիք է, Պավլիկը դիտի միայն... Զասես, Պավլիկ, ա՛յ, որ ասե՞լ ես:

— Զեմ ասի, —խոստանում է Պավել Իվանիդին ու դառնում է ինձ հայերին, —մեր քովն է, հոգի տղեմ էլ էնիկ է, արժանի են իրար...

Աննան ձեռքով փակում է նրա շրթունքները:

— Մի՛ ասա, մի ասա՛...

Ինձ թվում էր, թե մեղ հետ նստած է մի կատարյալ երեխա, մի խենթ ու խելառ աղջիկ, որ դեռ պիտի շարություններ աներ տանը, եթե այստեղ շգար, ճակատ գալն էլ երեխ, պատանեկան մի շարություն է եղել նրա համար:

Իմ այդ տպավորությունը խորացավ մանավանդ մեր երկրորդ հանդիպման ժամանակ: Տիսուր կանգնած սանիտարական ստորաբաժանման մոտ, լաց էր լինում նա, թաշկինակով սրբելով արտասուբները:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է եղել,—անհանգստացած հարցրի հա:

Աշխնչ չպատասխանեց: Թաշկինակով ծածկեց աշքերն ու դեմքը, որ իրեն շտեսնեմ: Օդության եկավ ընկերութին.

— Դիմում է տվել, որ կրակի առաջավոր զիծն ուղարկեն իրեն, մերժել են, դրա համար էլ լաց է լինում:

Ես ուժով հեռացրի ձեռքերը զեմքից: Ինչքա՞ն զեղեցիկ էր պատանի աղջիկն այդ անկեղծ արտասուբների մեջ...

— Ամո՞թ, Աննա՛, ամո՞թ, շգիտեի, որ դու լալկան աղջիկ ես, և, դեռ կրակի զիծն ես ուզում գնալ, լալկաններն այնահետ հաջողություն շեն ունենա...

Ամաշելուց ծիծաղեց ու աղատելով ձեռքերը, ներս փախավ: ...Թափառելով գնդից գունդ, ևս մոռացել էի մանկահասակ ուղրախնուժուն, երբ մի օր կրկին, երբորդ անգամ լինելով, հանչ դիպեցի նրան, այս անգամ այլ տեղ և այլ հանգամանքներում: Դեպքի վայրը մեր պաշտպանության զիծն էր: Ստորաբաժանման կոմիսար ընկեր Սլեպցովի հետ միասին զիրքերն էինք մտնում ու զրուցում այն մարտիկների հետ, որոնք իրենց քաջություններով աշքի էին ընկել վերջին ճակատամարտերի ժամանակ:

— Հիմա ես կծանոթացնեմ ձեղ մեր խիզախ աղջիկների հետ,—ասաց Սլեպցովը,—նրանցից հատկապիս թելոստոցկալի մասին անպայման պետք է գրել թերթերում...

Ահա և աղջիկները: Նրանց մեջ հանկարծ տեսնում եմ ես Աննային.

- Դու այստեղ ես արդեն, Աննա:
- Սյո, ինչպես տեսնում եք:
- Հաց լինելով հաջողեցրիր:
- Թող այդպես լինի, — համաձայնում է նա իմ կատակին:
- Իսկ բո ընկերուհիներից ո՞վ է Բելոստոցկայան, ծանութացրու ինձ նրա հետ:

Ծիծաղում է:

- Ինչո՞ւ համար:
- Դա ուզմական գաղտնիք է:
- Դուք Բելոստոցկայացի հետ վազուց ծանոթ եք, կարող եք հայտնել ձեր գաղտնիքը, դա նույն Աննան է, որի հետ խոսեմ եք հիմա...

- Մի՞թե, —ուրախացած բացականշում եմ ևս ու նստեցնում նրան կողքիս, կոճղի վրա, որ ծառայում է ամոռի տեղ, խօնագութեանափրում:

- Ինչպես եղավ, պատմիր բոլորը:
- Ի՞նչ է եղել որ, — հարցնում է նա անկեղծ զարմանքով:
- Ես բացատրում եմ, թե ինչ եմ ցանկանում:

... Շատ անգամ էր նա օգացին ոմբակոծության, հրետանացին ու ականանետային կրակի տակ ընկել, բայց հրացաններից, ավտոմատների ու գնդացիրների համազարկ դեռ չեր տեղացել նրա մրգաւորաւում քեզ իսկական ուազմիկ ես զգում այն ժամանակ, երբ թշնամին հատկապես նշան է բռնում քեզ վրա, կրակում քեզ վրա, կրակում ու վրիպում է, իսկ դու պատասխանում ես, լոեցնում նրան, կամ անպատասխան թողնելով, քո մարտական խնդիրն ես կատարում: Աննա Բելոստոցկայան ճաշակեց այդ զգացմունքներն առաջին ճակատամարտի մեջ մտնելով և զրանից հետո զգում էր իրեն անպարտելի: Շուրջը պայմարում էին ականներ, զիխավերներում ոռնում էին արկերը և ճակայական թնդյունով պայմարում էին անտառում: Անընդհատ, անվերջանալի համազարկերով ճարճատում էին գնդացիրները և, ստեղծատեպ թշնամու սնայպերական գնդակները հողի մեջ էին մեխափում, սուզելով ուղիղ ականցիդ տակնվաճական վաշիս էր, որ համակեց նրան առաջին ժամերին, թե՝ շփոթմունք, որ անփորձությունից է

առաջանում: Բայց դա մի երկու ժամ տևեց միայն, հետո ամեն ինչ դարձավ սովորական, առօրինայի պես հասարակ:

Համատարած այդ կրակի տակ սովում էր առաջ պատանի ուկրաինուհին, գտնում վիրավոր մարտիկներին ու օգնում նրանց միասին ետ սողալու դեպի յուրայինները: Եթե ուժեղանում էր կրակն ավելի ու ավելի, նա քաշում էր վիրավորներին թումբերի տակ և այնտեղ շունչ էին առնում նրանք երկուսով, որ քիչ հետո մահվան օլակի միջով դեպի կյանք գնան: Դժվար, շատ զրծվար ճակատամարտ էր դա: Առաջին վիրավորներին փրկելը տեղի ուներ ժամից ավելի: Եվ եթե նա բերում էր արդեն շորրորդ վիրավորին, իշել էր աղջամուղջը անտառի վրա: Առավոտից երեկո կրակի տակ էր եղել նա, հափշտակված իր մարտական գործով ինքնամուացության աստիճանի:

Չորս մարտիկի կյանք... Հպարտ էր զգում իրեն աղջիկը և իրավունք ուներ... Դեռ պատանի է ինքը, բայց չորս արու զավակ մեծացրած մոր պես կարող է ասել, որ չիրա քաջ զինվոր է տվել ինքը Հայրենիքին: Բայց դա դեռ առաջին մարտական մկրտությունն էր կրակի առաջավոր գծում: Այնուհետեւ շատ եղան այդպիսի օրեր: Դրանցից մեկը չի կարելի շնչել այստեղ:

Ստորաբաժանման առաջխաղացումը դժվարացավ: Թշնամունոր բնագծին մոտեցած մի քանի խիզախներ ընկան հերոսի մահով: Հրամանատարը հեռադիտակով նայելով, տեսավ, որ մենքը նրանցից վիրավոր է: Պետք էր ազատել, ինչ գնով էլ լիներ: Ո՞վ կարող է գնալ: Դա, անշուշտ, ոիսկ կլինի, բայց ոիսկը շատ հաճախ է անհրաժեշտ: Այնուհեղ, արյան մեջ թշնամու կրակի տակ դալարվում է ընկերդ...

— Ես գնամ,—խնդրեց Աննա Բելոստոցկայան:

Հրամանատարը նայեց նրան ու շուր եկավ.

— Ոչ, թող գնա տղաներից մեկը...

Աղջիկն անկեղծորշեն վիրավորվեց, ինչպես պատերազմի առաջին օրը բանակ գնացող դպրոցական ընկերուց խոսքից:

— Ինչո՞ւ անպայման տղաներից, ես խնդրում եմ ձեղ, ընկեր հրամանատար,—համառեց նա:

Ու սողաց առաջ: Ֆաշիստները նկատեցին: Սկսեցին կրակ

տեղալ: Հանդուզն կոմերիտուհին սովում ու սովում էր առաջ: Մի հոգու վրա, մի աղջկա վրա նրանք ականներ էլ էին արձակում գնդացիրների համազարկների հետ միասին:

Հրամանատարը շունչը պահած դիտակետից հետևում էր: Ամեն անգամ, երբ անշարժանում էր աղջիկը, նա մտածում էր, որ սպանվեց, երկար դիտում էր հեռադիտակով և ոչ մի խլրտում չէր նկատում:

— Ափսո՞ս, լավ աղջիկ էր Աննան, — ասում էր նա ինքն իրեն ծանր զգացմունքով, բայց կրկին նկատում էր աղջկա շարժումը, ցնծությամբ բացականշում էր.

— Կենդանի է, բրավո'...

Աննան հասավ վիրավորին: Կրակի սաստկությունն ավելի ուժեղացավ: Քիչ հետո վիրավորի հետ միասին աղջիկը կորավթե հրամանատարի տեսողությունից և թե թշնամու կրակն էլ մեղմացավ, համարյա դադարեց:

Շատ խորամանկություններ բանեցրեց ուկրաինուհին այդօրը: Յոթն անգամ նա սպանված ձեւացավ, յոթն անգամ նա խարեց թշնամուն և նրա կրակի տակից աղատեց բերեց կրտսեր քաղղեկին:

— Սատանա աղջիկ ես դու, Աննա, կատարյալ սատանա, — ասացին նրան ընկերները: Զահել աղջիկը դեռ այդքան հաճելի կոմպլիմենտ չէր լսել: Բայց նա թուլացել էր լարվածությունից: Նրան տղաները ջուր տվեցին խմելու, հրամանատարն առաջարկեց որ պառկի խրամատում փուած խոտի վրա, հանգստանա: Մեջքի վրա պառկած՝ նա հոգնած հայացքով նայում էր երկնքին: Ամպերը փախչում էին քամուց, մեկ ցրվում, մեկ կուտակվում զանազան կերպարանքներ ընդունելով: Հետզհետե բացվում էր կապույտ հորիզոնը: Նա այնքան ծանոթ ու սիրելի էր...

Անցավ մի շաբաթ: Մեկ օր նոր ստացված թերթերն իր ձեռքըն առնելով, նա պարզեատրվածների ցուցակում կարդաց, որ Աննա թելուսոցկայան պարզեատրվել է «Խիզախության համար» մեղալով և կոմսոմոլի բյուրոյի քարտուղար թելուսոցկիին հարցրեց.

— Մի՞թե այդ ես եմ, Միկոլա:

— Դու ես,—պատասխանեց ընկերը, որ արդեն սիրած տղաչէր միայն նրա համար, այլ նաև ամուսին, որի տեղն ու անունն այլիս չէր թաքնում Աննան:

Աղջիկն ասաց.

— Ինչ լավ է, որ միասին ենք, դու ինձ կովկել սովորեցրիր Միկոլա:

Տղան ժպտաց:

— Ես գեռ քաջության մեղալ չունեմ, դու ինձնից առաջ ես, ինչպես կարող եմ քո ուսուցիչը համարվել...

Աննան ծիծաղեց ու համբուրեց իր ընկերուզը:

Աննա Բելոստոցկայային պարտիայի շարքերն ընդունեցին: Ո՞ր կոմունիստը չէր երաշխավորի այդպիսի կրակ-աղջկան: Առաջինը երաշխավորագիր ստորագրեց Պավել Խվանիդին:

Ավրաբինուցին պատանեկական հպարտությամբ ցույց էր տալիս ինձ պարտիթեկնածուական տոմսը: Նրա վրայից նայում էին ինձ այն մանրիկ մանկական աշքերը, որոնց մեջ ամիսներ առաջ մի օր արտասուներ տեսա ես...



Իմ առաջ կանգնած է հիմա պատկերը մի ուրիշ Աննայի, մի ուրախ ու դեղեցիկ աղջկա պատկեր՝ չքնաղ Կիև քաղաքից: Նա ուղմանակատ էր բերել իր զվարթ հայացքն ու թովշական ժպիտները: Մարտերի ժամանակ նա ճարպիկ էր մայր վագրի նման: Կովի թոհ ու բոհի մեջ ուստնում էր թեթև ու հեշտին, անցնում դիրքից դիրք, թմրից թմր, հասնում այնտեղ, ուր պետք կար իր օգնությանը: Շքեղ Կիև քաղաքի Վլադիմիրյան բլուրների վրա, Դնեպրի ափին, զրուանքների ժամանակ կանգ էին առնում երիտասարդների խմբերն ու հիանում ջահել աղջկա դեղեցկությամբ, սիրալիր խոսքեր ասում նրան ամեն քայլին: Բայց ժամանակները փոխվել էին: Նա հայրենիքի ազատության և շբոնագատվող սիրո համար կովի ճակատ էր եկել և կրկին ընդհանուր հիացմունքի առարկան էր իր խիզախ, մարտական գործերի համար: Երբ գեղեցիկ աղջիկը տարբերվում է նաև իր խորն ու նորք խելքով, նրա գեղեցկությունը կրկնապատկվում է: Բայց երբ նրա

այդ երկու առաքինություններին միանում է նաև հոգու շիտակությունն ու համարձակությունը, աղջիկը եռակի գեղեցիկ է դառնում:

Այդպես էր Աննա Սելյուտինան:

Վայրիյաններ են լինում կամի մեջ, երբ թվում է թե քար ու քանդ է լինում ողջ տիեզերքը, պատում ծխով, երկաթի ու պողպատի բեկորներով, վառողի հոտով: Այդպիսի մի մարտ էր ահա, որ տեսակ երեք օր ու գիշեր: Գնդացրորդների, ականաձիգների, ավտոմատավորների ու հրձիգ հետեւակների հետ միասին թշնամու դեմ գործում էին նաև սանիտարներն ու սանիտարուհները, հասնում էին նրանք վիրավորներին, դուրս տանում նրանց կրակի գոտուց, ապահով տեղում կապում նրանց վիրքերն ու կրկին վերադառնում կրակի մեջ: Երեք օրվա ընթացքում մարտի դաշտումն էր Աննա Սելյուտինան, ուկե գանգուրները տված քամուն ու փոթորկին, կրակից այրվող դեմքով խիզախաբար նայելով մահվան աշքերի մեջ: Ոչ մի նկարիչ կտավի վրա չի ստեղծագործել այդպիսի պատկեր, լի վեհությամբ ու տարերքով: Երեք օրվա ահազին բախումների ժամանակ նա մարզիկ աղջկա իր ամուր թիերով գրկելով ուժասպառ վիրավորներին, նրանց հանում էր վտանգի միջից ու կյանք պարզեցում: Քսանինը հագի իրենց երկրորդ կյանքն ստացան գեղեցիկ աղջկա քնքույշ ձեռքերից:

— Ծնորհակալ եմ, քույրիկ...—լսում էր Աննա Սելյուտինան խոսքեր, որ նրան ուժ ու արիություն էին ներշնչում: Մի վիրավոր մարտիկ, մաերիմ, լավ մի ընկեր, որի հետ շատ կռիվների մեջ էր եղել նա, մեռավ Աննայի թիերի վրա: Աղջիկը գրկած պահած մահմերձ վիրավորին, նայում, երկար նայում էր նրա դալկացող դեմքին: Նա տեսավ, թե ինչպես խամրում էր հերոսի աշքերի փայլը, տեսավ վերջին, վերջին ցոլքը նրա հայացքում, որ մարեց, ինչպես արևի վերջին շողքը հորիզոնի տակ... Աննան ցած դրեց նրան խոտերի վրա: Աշքերից արտասուներ գլորվեցին: Քնքուշ սրտից պոկլեցին հառաշանքներ: Բայց մի քանի քոպե հետո նա սթափվեց ու դեպի մարտադաշտ վագեց: Այնտեղ, արյունաքամ, մահվան դեմ են մաքառում վիրավորները և

դուցե իրեն, Աննային են սպասում: Կրկին սուլեցին գնդակները՝ շառաչեցին ականները: Մարտիկները տեսան դեղեցկուհու ծանոթ կերպարանքը, որ ցոլում էր նրանց հայացքի առաջ շողբեր պես:

Հասավ նա վիրավորին:

— Այդ դո՞ւ ես, Աննա, սիրելի քույրիկ, — շշնչաց նա, — և այնքան էլ ծանր չեմ վիրավորվել, ես ինքս սողալով մինչև այս-տեղ հասա... հոգնել եմ միայն... մի քիչ օգնիր...

— Հենվիր ուսիս... այ, այդպես, այստեղից արդեն կարելի է քայլելով գնալ, ձորաբերան է...

— Իսկ շա՞տ են վիրավորները, Աննա:

— Ավելի քիչ, քան կարող էր լինել այսպիսի կովում... հենվիր, հենվիր իմ ուսին, թանկագին, ես հոգնած շեմ...

Այդ վայրկյանին պայթեց ականը: Բեկորներն ընկան նրանց շուրջը: Պառկեցին գետնին վիրավորն ու քույրը: Պայթեցին երկրորդ ու երրորդ ականները: Շարունակեցին առաջ գնալ վիրավորն ու քույրը: Դժվարը ձորաբերանից դուրս գալն էր ու վայրէջքին հասնելը: Պետք էր առավել զգուշություն: Նրանք այդտեղ սկսեցին սողալ: Աղջիկն օգնում էր վիրավորին: Հանգըստանում՝ մի քանի վայրկյան, շումը էին առնում ու կրկին առաջ գնում: Հանկարծ Աննան թեթե, թեթե ճիշ արձակեց ու գեմքի վրա պառկած մնաց: Վիրավորը բարձրացրեց աղջկա գլուխությունից նսկերուհու գլուխն իր ափերի մեջ առած, վիրակուր գինվորը նայում էր նրա փակված թարթիչներին: Մի՛թե շպիտի բացվեն նրանք այլևս, մի՛թե Աննան շպիտի ժամանակակից առյունով: Աշքերը փակ էին... Ընկերուհու գլուխն իր ափերի մեջ առած, վիրակուր գինվորը նայում էր նրա փակված թարթիչներին: Մի՛թե շպիտի բացվեն նրանք այլևս, մի՛թե Աննան շպիտի ժամանակակից առյունով: Հայացքով, կարծես ձգտում էր հիշել, ճանաշել անծանոթ մի դեմք, որ անհայտ տեղից իր առջևն էր կանգնել: Ու ոշինչ չի-շում, ոշինչ չի հասկանում:

— Խոսիր, Աննա, ինչո՞ւ ես այդպես նայում...

Մանոթ ձայնից սթափվեց, թեթե ու տիսուր ժպտաց: Հարց-քեց.

— Վիրավորվել եմ...

— Այս, բայց ծանր չէ վերքդ, այս բոպեին կկապեմ, մի ու սին կգնանք, հիմա էլ իմ հերթն է քեզ օգնելու...

Երբ արդեն ապահով տեղ էին, պառկեցին հանգստանալու, Աննան ասաց.

— Ինչ բարի ես դու, ինչ լավիկը... Բոլորն էլ, բոլոր մեր տղաներն էլ լավն են...

— Իսկ դու, Աննա, ավելի բարի ես, մեր քույրերն ավելի լավն են,—պատասխանեց տղան շոյելով աղջկա ճակատն այնպես քնքշագին, եղբոր նման, ինչպիսի սիրով որ նա էր շոյում վիրավոր ընկերների ճակատը:

— Քո ձեռքի շփումից զովություն եմ զգում,—ասաց Աննան ու հարցրեց,—եղանակը գեղեցիկ է այսօր, այնպես չէ, այ, ինչ լավ, չերժ արև է...

— Գարուն է,—լրացրեց տղան:

— Այս, գարուն է,—հաստատեց Աննան,—և, որ կարևորն է, այսօր լավ կովեցինք: Ես տեսա թշնամու դիակների կույտեալը...

## 2

...Նրա ազգանունը մեր զորամասում հանրածանոթ, ժողովրդական ազգանուն է: Բայց այդ ոչ թե նրա համար, որ միւնույն ժամանակ դա ուկրաինական ազգային հանճարի անունն է: Ծեշենկո՞...

Ո՞վ է երգել զապորոժցիների խոլական ուժն ու ամենի ատելությունը թշնամու դեմ, ո՞ւմ քնարի լարերն են մորմոքացել շահել ուկրաինուհու դժբախտ սերը, ո՞ւմ շուրթերով է ուկրանացի աղջկեց բողոքել օտարի ու բռնակալի լկումների դեմ, ո՞վ է հայրենասիրություն, բարձր ողջախոհ առաքինություններ ներշընչել մայր Ուկրաինայի դուստրերին, երազել տեսնելու նրանց հերոսուհիներ՝ հերոս եղբայրների ու հայրերի կողքին: Տարած Ծեշենկոյի երգերը լսելիս զապորոժցիների զավակները հավատացյալի երկյուղածությամբ հանել են զլխարկներն ու խոնարհել իրենց հայացքները հայրենի հողին, աղջիկները լսել են ուշիմ:

խոնարհությամբ և ողջախոռն բարքերի դասեր առել մեծ մարդարք բանաստեղծից: Նրա պատգամներն ու կտակներն անցել են սերնդե սերունդ: Ամեն ճշմարիտ ուկրաինացի կրում է իր սրբում Բատկի Շեշենկոյի ըմբոստ ու աղատասեր, մեծ ու վեհ ոգին:

Անաստասիա Շեշենկոն՝ նույնպես:

Զորամասում նրան մարտական քույր էին կոչում, հետո հերոսուհի քույր՝ անվանեցին: Ճակատում այդպիսի տիտղոսներ հեշտ չեն տալիս իրաբ: Դա սիրալիր խոսք չէ միայն:

— Քույր, այս կողմ արի, — կանչում է զիրավորը: Եվ Անաստասիան անպայման հասնում է նրան:

— Քույրիկ օգնիր, — լսում է նա մյուսի ձայնը, երբ դեռ մենքին ապահով տեղ չի հասցրել: Աւ հասնում է նրան էլ... իսկ շուրջը պայմում են արկերը, սուլում են գնդակները, զլխալերեվում պտույտներ են գործում սև սվաստիկաներով պողպատե անդղերը:

Անաստասիա Շեշենկոն միայն հոգատար ու օգնական քույր չէ կուփի մեջ: Նա անցնում է զիրքից զիրք վիրավորներին գտնելու և, իր համար հաճախ աննկատելի, դառնում է երբեմն ադիտատոր ու հրամանատար: Հայտնում է մարտիկներին օրվա նորությունները, թարմ թերթեր է թողնում զիրքերում կարդալու, նկատողություն է անում անտեղի եռանդ ցույց տվող գնդացրողին, որը չի խնայում փամփուշտները, դեռ շմոտեցած թշնամու վրա համազարկեր արձակելով:

— Ի՞նչ ես գնդացրով շաղակրատում անընդհատ, երբ պետք չէ...

Կամ՝ մի ուրիշին.

— Դա ի՞նչ քողարկում է, հիմա գլուխոդ կարող ես տալ դրա համար, ծածկվիր անմիջապես թփերի մեջ շո'ւս...

Եվ լսում են նրան, ենթարկվում, որովհետեւ քրոջ խոսքը հատու է, տոնը հրամանատարական, զիտողությունները՝ տեղին ու անհրաժեշտ: Նա ինքը երբեմն կուփի մեջ մոռանում է զգուշությունը, զտանդի է ենթարկում իր կյանքը, բայց երբեք ուրիշնե-

ըի այդ թերությունն աննկատ չի թողնում, երբեք ուրիշներին չի ներում դրա համար:

Սուկայն Անաստասիա Շեշենկոն մարտիկի իսկական անուն ու փառք վաստակեց պաշտպանական մարտերի վերջին օրը: Մտորաբաժանումը ետ էր քաշվել նոր դիրքերի վրա: Նախկին բնագծում մնացել էր՝ մի դասակ միայն, որի հետ նաև նա: Թըշ-նամու կրակն այնքան ուժեղ էր, որ այլև հնարավոր չէր հետ քաշվել, դուրս գալ դիրքերից: Փորքիկ մի շարժման ժամանակ սուլում էր հակառակորդի սնայպերական գնդակը:

Անաստասիան մի քանի անգամ փորձեց դուրս գալ դիրքից:

— Զգո՞ւշ, քույր, կարող ես սպանվել, — ասաց բանակային-ներից մեկը, — գնդակի սուլոցը կոմպլիմենտ չէ աղջկա համար...

Անաստասիան նայեց նրան ու ասաց.

— Ամեն մեկն էլ մեզնից կարող է ընկնել թշնամու դնդա-կից, բայց սպանվելուց առաջ մի բան պիտի անել, մի սխրա-գործություն...

— Ա՛, սխրադործություն եք ուզում կատարել, օրիորդ, հասկացա, — կրկին կատակեց բանակայինն այդ ծանր վայրկա-նին: Աղջիկը բարկացավ ու գոռաց նրա վրա.

— Իսկ դու լոիր, մի շաղակրատիր, ես քեզ ցույց կտամ այդ ավելորդ խոսքերիդ համար...

Վերջին փորձն էլ, դիտել թշնամու շարժումը — խանգարվեց: Բայց հենց այդ ժամանակ նա նկատեց, որ դիրքերի առաջ կու-տակած ավազը գեղնավուն է, ճիշտ իր մազերի գույնին, իսկ զլխարկը, որ ծածկում է ինքը, կարմիր է: Եվ իսկույն էլ եղա-կացությունն ինքն իրեն եկավ: Ուրեմն՝ զլխարկն է մեղավոր, նա նշանակետ է դառնում թշնամու սնայպերի համար: Քանի անգամ կոմիսարն ասել էր՝ փոխիր զլխարկդ, նա քո դինվորա-կան տեսքը փշացնում է: Այ թե ինչ է նշանակում զինվորական կարգապահության մասին մոռանալը:

Անաստասիան դեն նետեց կարմիր զլխարկը և դեղնավուն մազերը թափելով ուսերին, գլուխը դուրս հանեց դիրքից: Նրա պրոֆիլն ընկնում էր դեղին ավազի ֆոնի վրա, միենաւըն գուշնե-րը ձուլվում էին իրար: Այս անգամ ու մի գնդակ շուրջաց աղջկա

դեմքի առջևով: Ուրեմն՝ հաջող քողարկում է, գործը հեշտանում է: Նա դուրս սողաց դիրքից, մյուս խորշին հասավ, կապեց վիրավորների վերքերը, հաշվեց թե ինչ զենք ու դինամիտները կա խրամատում ու սուրաց դեպի հրամանատարը՝ նրա որոշումն իմանալու համար: Երբ հասավ հրամանատարի դիտակետին, տեսավ նրա անշնչացած դիակը: Մի պահ սարսուռ անցավ աղջկա մարմնով: Նա փնտուց հրամանատարի զարկերակը, գուցե դեռ կենդանի՞ է: Զարկերակը չէր խփում: Այն ժամանակ նա սառած ճակատով սկսեց մտածել:

— Ի՞նչ անել:

Մի բանակային հարցրեց.

— Քույր, դու գերմանացի տեսե՞ւ ևս ուրիշ անդամ...

Անաստասիան նայեց նրան:

—Տեսել եմ, ի՞նչ կա որ...

Նայիր այն կողմ, դեպի մեզ է գալիս փոքրիկ մի խումբ, առանց կրակելու, մերոնցից են, թե թշնամին է:

— Թշնամին է,—կանչեց քույրը:

— Ի՞նչ անենք ուրիշն, —հարցրին մարտիկները, —գուցե ե՞տքաշվենք... հրամանատարն էլ սպանվել է, զեկավարող շկա:

— Ոչ մի ետ քաշվել, —հարցայեց Անաստասիան, —զեկավարող կգտնվի, ետքաշվելը մահ է և անպատվություն, թշնամին ուժինչ շի կորցնի դրանից, բացի շահելուց. պետք է դիմավորել նրան կրակով...

Նա գիտեր, որ այդպիսի ժամանակ բռպեի դանդաղումը կործանում կարող է բերել, որ պետք է հրամանատարին փոխարինող ուժեղ մի ձեռք: Ու առանց տատանվելու որոշեց, որ այդ ժանր ու դժվարին պարտականությունը կարող է իր վրա վերցնել: Ուտքի կանգնեց ու գոռաց ամբողջ ձայնով.

— Հրամայում եմ ևս, հանուն հայրենիքի, կրակ...

Գնդացրորդը նայեց ծանոթ աղջկան ու ձգվեց՝ նշանառություն վերցնելու: Գնդացիրը ճարճատեց.

— Տեսական համազարկ, տեսական...

Ազ կողմից եկող թշնամու խումբը փուլեց գետնին ու ետ սողաց:

Առաջին հաջողությունը ոգի ներշնչեց և՝ զինվորներին, և շահել հրամանատարուհուն:

— Ոչ մի փամփուշտ չպետք է աննպատակ կորչի և ոչ մի քայլ էլ ետ չենք գնա, սա է խնդիրը, — հրամայեց կրկին Անաստասիան:

— Գնդացրորդներ, պատրաստ լինել ամեն ակնթարթ, հրաձիգներ, առանց զիպուկ նշանառության՝ ոչ մի գնդակ չարձակել, բոլորի համար էլ թող պատրաստ լինեն ձեռքի նռնակները:

Հետադիտակն աշքերին դրած, հրամանատարուհին հետևում էր թշնամու շարժմանը:

Իրենց պաշտպանության գիծը մարտիկները պահեցին մինչեւ երեկո, մի քանի անգամ ետ շպրտելով թշնամու գրոհող վաշտի շարքերը:

Աւշ երեկոյան վերականգնվեց կապը զորամասի հետ և լրիվ կազմով ետ եկան մարտիկները յուրայինների մոտ: Ու պատմում էին բոլորը հերոս աղջկա սխրագործության մասին: Ամենից շատ պատմում էր այն կարմիրքանակայինը, որի վրա գոռացել էր Անաստասիա Շեշենկոն, երբ նա թույլ էր տալիս իրեն կովի ծանր բոպեներին թիթեամիտ ծաղրանքով խոսելու աղջկա հետ:

— Տեսնեմ, նայում է թշնամու կողմն ու ասում՝ կարող ենք, իհարկե, սպանվել, բայց մահից առաջ պետք է մի սխրագործություն կատարել. ես կատակում եմ, իսկ նա բարկանում է, լոի՛ր, պսում է, շաղակրատ... այ, մարտական աղջիկ, աղնիվ խոսք, իսկական հրաշք-հերոսուհի...

Այդ օրվա դեպքի մասին մեր զորամասում շատ խոսվեց ու գրեցին թերթերում, իսկ օրվա հերոսուհին, իր մարտական գործերի համար ներկայացվեց կառավարական բարձրագույն շքանշանով պարզեատրվելու:

### 3

Արել մայր է մտել: Հորիզոնի վրա դիզվել են արնով ներկված ամպերը: Փուլի է անհուն դաշտանկարը: Համատարած կանաչով ու երփներանդ ծաղիկներով պատած բլուրներն ու ձո-

բակները խլել են վերջալույսի բոլոր դուշները: Օրը գեռ լի է ուղղմի որոտներով:

Անտառի եզրին, կանաչների ու ծաղիկների մեջ Հավիտենական ու անդորր քնով քնել է երկրի դուստրը: Մենք մնանում ենք նրան ու խոնարհում գլուխներս: Դեմքը հանգչել է մեղմիկ հանդարտությամբ: Աշբերը փակ են: Թուխ խոպսպները փուլն են կանաչների վրա: Կարմիր մի կակաչ օրորվում է նահատակված աղջկա գլխավերնում: Խոտերի վրա շողում են շառած արյան շիթերը:

Ավ է այդ անանուն աղջիկը, որ իր երիտասարդ կյանքը դարնան զարթոնքի օրերին նվիրաբերեց հայրենիքին:

Մեզ հետ միասին նրա գլխավերեց կանգնած քույրը կուանում ու արձակում է հերոս աղջկա կրծքի կոճակները: Արնով է շաղախված շահել աղջկա իրանն էլ: Մոցի գրպանից հանում ենք մի նամակ: Այնտեղ աղջկա անունը չի հիշված:

«Իմ արևի շողը»...

Սյսպես է դիմել մայրն իր աղջկան: Ու պատմել իր նոմակում, որ գիշերները քուն մոտ չի դալիս իր աշքերին, գիշեր ու ցերեկ տառապում է հայրենիքի ու իր զստեր ճակատագրի համար, տեսնում է աղջկա սիրելի դեմքը, մարերի մեջ էլ իր զստեր պատկերն է գծվում, երազներում էլ, երբ բոպեներով փակվում են կոպերը, թվում է թե աղջկա ձայնն է լսում ու երբ թերը երկարում է գրկելու նրան, փարատվում է տեսիլը: Մայրը խնդրում է աղջկան, որ նա շբարկանա մայրիկից այդպիսի տխուր նամակ ստանալու համար: «Գու այնպես շնասկանաս ինձ, որ ես կցանկանայի տուն վերադառնաս գու: Ո՛չ իմ գրավիչ ասուցիկ, չէ որ առաջինը ես խրախուսեցի քո որոշումը՝ կամավոր կերպով թշնամու գեմ կովի գնալու: Գու հրեուհի ես և պարտավոր էիր: Դա քո իրավունքն էր: Ես էլ կգայի, թե որ տասը տարով քիչ լիներ հասակս: Այսօր իմ վաթսուն տարին լրացավ, բայց ես շատ ավելի ծեր կին եմ, քան վաթսուն տարեկանը: Գու այդ գիտես թե ինչու: Հիմա ուշ դիշեր է: Ես մենակ նստած եմ, սովորական անքուն գիշերներից մեկն է ինձ համար: Ու ամեն օրվա պես մտածում եմ էլի քո և քո բոլոր բախտակիցների հա-

կատագրի մասին: Թույլ տուր, իմ անուշ գառնուկ, աղոթեմ քեզ համար նկրայեցիների մեր հին լեզվով... ու ՅՈՒ ԱՐ ՀԻ ՄԱՆ ՀԱՄԱՐ ՊՐԵՏԻ ՎԵՐԱՎՈՐՎԻՐ ՔՈ ԺԵՐ ՄՈՐԻՑ ՆՐԱ ԼՐՈՇԱԿԱՆ ՆԱԽՍԱՎԱՉԱՐՄՈՆԲՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ինչպես ասում էիր դու միշտ, իմ կոմերիտուհի աղջուկ...»

Մարտիրոսված աղջիկը լուս է, բնած խաղաղ ու անվրդով, երկրի բուրմունքի մեջ: Նայում եմ նրան, նայում երկար ու անթարթ: Եվ նրա պատկերը մեծանում է իմ աշքերի առաջ, մեծանում է իմ երևակայության մեջ ու կանգնում ապագայի դիմաց, իր վեհության մեջ հոյակապ ու սրանչելի...

Եփրայեցիների եհովան շօդնեց նրան, ինչպես շեր օգնել այդ բազմատանջ ժողովրդին զարերի մեջ: Եվ եթե այսօր սուր է վերցնում հրեուհին և ընկնում է որպես նահատակ, դա նշան է, որ կապրի և Երբեք չի կորչի նրա նման դուստր ծնող ժողովուրդն էլ...

Անանուն աղջիկն ընկել է՝ վերը կրծքին: Հերոսական դյուցազներգությունները պատմում են, որ հին զարերում մենամարտերի ժամանակ, երբ բացվում էր դյուցազնունու կործքը և նրան գետնած հսկան տեսնում էր հանկարծ, որ իր ախոյանը կին է եղել՝ շողացող ստինքներով, թուզանում էին հերոսի ձեռքերը, նա ետ էր տանում հարվածն ու ներում խնդրում: Մեր այսօրվա թշնամու մեջ չկա ոչ մի մարդկային բան: Նա դիվային շարությամբ նշան է բռնում նաև աղջիկների մատաղ կրծքին, աղջիկների, որ ճակատ են եկել որպես զթության քույրեր...

Այդպես է վարվում այն հակառակորդը, որ չունի հաղթանակի հավատ, որի կեղտոտ սիրտը միայն արնով է հաղությ պահանջում:

...Արոտում է մեր հրետանիների համազարկը: Եվ դաշտերն ու անտառներն արձագանքում են ահեղադզորդ:

Դա քո հիշատակին է, անանուն աղջիկ, քո արյան կարմիր, կարմիր շիթերի համար վրեմի է կոշում այդ ահեղ որոտը թշնամու դեմ: Այդ վրեմն իրենց սրտում կրում են այն հրամանաւարներն ու մարտիկները, որոնց կյանքը փրկելու համար դու

\* ) Թող աստված քեզ տա երկար ու երկար տարիներ:

զուլի մեջ նետվեցիր ու քոնը տվիր փոխարեն։ Այդ վրեժն իրենց սրտում դեպի արևմուտք կտանեն քո միլիոնավոր եղբայրներն ու քույրերը։ Կհաղթանակեն այն վեհագույն գաղափարները, որի համար դու տվիր քո վերջին շունչը, ո՞վ անանուն եփրայուհի։ Զար թշնամու գնդակը դիպել է քո կրծքին, որ լի էր սիրով ու կյանքով և բարախում էր հայրենիքի համար։ Կապրի քո հայրենիքը և կծաղկի ու սերունդներն այդ ծաղիկներից պսակներ կդնեն քո հիշատակին, քո անունը կշուղա ժողովրդի սրտում և հերոսության ու սիրո երգերը, որ պիտի հյուսվեն քո մասին, գեղցիկ կլինեն ավելի, քան Սողոմոնի երգ-երգոցը և ավելի երկար կապրեն բոլոր գրական հուշարձաններից…



Իսկ ձեզ, թիւահոն, ջահել հայուհիներ, իմ քույրեր, թող հերոսություն ու արիություն ներշնչեն անուններն այն հերոսական աղջիկների, որոնց մասին պատմեցի այս ակնարկում ձեզ համար, Աննա Թելոստոցկայայի, Աննա Սելյուտինայի, Անաստասիա Շեշենկոյի անունները։ Անանուն աղջկա ոգին թող մայր առյուծի սիրո տա ձեզ։ Ձեզ համար գրեցի այս քաջ աղջիկների հերոսական գործերի մասին։ Հիշեցեք ձեր մայրերին, որ հին ժամանակներում զիտեին մոռանալ իրենց սեռի քնթշությունը և եղբայրների ու ամուսինների հետ թշնամու դեմ կուլի գնալ իրենց պատվի համար։

Եղեք նրանց արժանավոր դուստրերը, ապացուցեցեք կրկին ժողովրդական իմաստության ճշմարտությունը, որ՝

Առյուծն առյուծ է միշտ,

Թե էդ, թե արու,

Օգոստոս, 1942 թ.

Դարձագ Բանակ

## Փ Բ Կ Ի Զ Է

Պաղ՝ լուսաբացին իր վրանից դուրս եկավ կարճահասակ, ու ու խիտ հոնքերով մարդը, նայեց շուրջը, նայեց դաշտերին, որ վաղորդյան մշուշով էին ծածկված, ձախ ձեռքի մատներով շփեց, տրորեց հոգնած քումքերը, շնչեց լուսաբացի թարմ օդը և սկսեց քայլել զեպի վեր՝ տրորած խոտերի թարմ արահետով։ Հեռվոմ՝ հարավ-արևմուտքում լսվում էր խուզ դղիրդ, որ նույնքան խուզ արձագանքներ էր տալիս ձորերի մեջ։ Թվում էր, թե բոլոր դեղնող աշունների առավոտները միշտ էլ բացվել են այդ դղիրդով, որը դիսոնանս չէ բնության այս խաղաղության մեջ։ Մարդը սովորում է ամեն ինչի և ինչ որ սովորական է, անբնական չէ արյեւս։

Նրա երկարաճիտ կոշիկներն ու դինվորական գորշ շինելի դիշերը թրջվել էին թաց խոտերից։ Պաղ զեփյուռը շոյում էր մտաղբաղ մարդու հոգնած դեմքն ու քնատ աշքերը և սթափություն բերում։ Գիշերվա ընթացքում երկու ժամից ավելի շէր քնել նաւ Պառկել էր կես գիշերին և լուսաբացին արթնացել։ Ոչ ոք ձայն չտվեց, որ արթնանա, բայց թվաց թե մեկը կանչում է. «Արթնացեք, ժամանակն է, հորիզոնը շառագունել է, լսվում է հրետանու որոտը»... Հորիզոնը, իսկապես, շառագունել էր և որոտում էր հրետանին, բայց շքացավ այն մարդը, որ ձայն տվեց նրան։ Նա չէր էլ եղել։ Դա քնած մարդու արթուն միտքն էր, որ հիշեցքն նրան իր պարտականությունը։ Եվ նա լուր ու հնագանդ այդ ներքին ձայնի հրամանին՝ գնում էր իր պարտքի հետեւից։ Մարտն սկսվել էր։ Շուտով վիրավորներ էին լինելու Պետք

Էր պատրժաստ լինել նրանց կյանքը փրկելու: Դա էր այդ լուր և ինքնամփոփ մարդու խնդիրը ռազմաճակատում:

Կես ժամ հետո սեղանի վրա ձգված էր մարդկային մի մարմին, առողջ, թարմ մարմին, ծակծկված թշնամու գնդակներից ու արյունալվա: Վիրավորը դիմանալով ծանր ցավերին, զուրջն էր նայում: Ցոլակն էր նա, խարտյաշ, մշուշոտ հայացքը ծանոթ դեմք էր փնտում և թափառելով, ոչ մեկի վրա չէր հանգում: Սևադեմ մարդը վիրահատման դանակը ձեռքին մոտեցավ նրան: Այդ ակնթարթին հիվանդին թվաց, թե իր գլխավերնում սև թերով սավառնող մահը շքացավ վիրահատի դանակի փայլից և այլևս երբեք չի հայտնի: Նա նայեց բժշկին և հուսող ժպիտը խաղաց նրա դեմքի վրա: Բժիշկը հասկացավ նրան ու հարցրեց: — Զեր ազգանունն ինչպե՞ս է:

— Նաումով, — պատասխանեց վիրավորը, — ես ձեզ ճանաշում եմ, — ու նրա աշքերի մեջ ցոլաց բավարարված երջանկությունը:

— Ես էլ ձեզ եմ ճանաշում, — լսել եմ ձեր քաջությունների մասին, լա՞վ է գնում այսօրվա մարտը:

Վիրավորը գլխով դրական նշան արեց, բերանը փակեց, հազը զսպելու համար, որ ծանր ցավեր շղգա և հետո ասաց.

— Երեք անգամ նրանց հակագործները հետ շպրտեցինք, մարտադաշտում դիմագերմանացիների դիակներն են փռված:

— Լավ է, լավ է, — հավանությամբ կրկին ժպտաց վիրաբույժը, — վաղը երբ արդեն ձեզ լավ կզգաք, կպատմեք ինձ բոլորը, իսկ այժմ վմտահեցեք ինձ ձեր կյանքը...

Սկսվում է աշխատանքային օրը ճակատային վիրաբույժի համար, սկսվում է, իսկ թե երբ կվերջանա, նա ինքն այդ մասին չի մտածում: Ամեն ակնթարթի մեջ դեկավարում են նրան սթափուշդրությունը, քննող միտքը, որ արագ որոշումներ է ընդունում, իսկ ձեռքերն՝ հոգնություն շփտեն: Մա՞րդ... Բնության ամենահաշագործ ստեղծագործությունն է նա, թանկ է նա բնության մեջ ամեն բանից: Ել ինչքան մեծ ու վեհ է պարտք այն մարդու, որին հանձնարարված է փրկել ու պահպանել մարդկային կյանքը: Կարճահասակ, ու ու խիտ հոնքերով ճակատային վիրաբույժի մեջ արթուն է միշտ իր բարձր ու սրբասուրբ գործի գիտակցությունը, որ երբեք չի թուլանում և վառվում ու բոցկլտում է շարունակ: Մեծ մարդասեր է նա, ինչպիս ամեն-

ճշմարիտ բժիշկ, որի վրա դու պարտավոր ես նայել, ոիրելի բարեկամ, խորին երախտագիտությամբ և ակնածանքով: Թաղմի իշլացնող աղմուկների մեջ նա բացում է մարդկացին մարմնի ծալքերը, մկանային հյուսվածքների մեջ փնտռում վնասվածը, գտում է ավելորդն ու վնասակարը, որ այնտեղ է բերել իր հետ իշնամու գնդակը: Մեծ զգուշությամբ, բայց առանց դողի ու երշկուղի, ինչպես վարպետը, նա զննում է արնոտված թոքերը, մաքրում ու կարում է պատոված օրգանները, փնտռում է ականաների բեկորներն ու դուրս հանում մարմինների միջից: Նա սուր դանակը ձեռքին, մաքրում է մահվան դեմ, համառ, անկոտրում կամքով, իր ուխտին ու երդումին հավատարիմ, անդավաճան զինվորի պես, որ երեք նաշանջի ճանապարհ չի ճանաշում: Ու շունչ է տալիս անշնչացողին, ուժ ու կյանք՝ ուժասպառ ու արյունաքամ եղողներին, ժպիտներ ու պայծառ հայացքներ՝ գերմարդկացին տանջանքների մեջ բարձր ջերմից զառանցող հիվանդներին: Նա հաղթում է մահին, ամեն մի առանձին կյանքի համար գոտեմարտի մտնելով նրա հետ: Մարտիկն այնտեղ մի քանի կիլոմետր նրանից հեռու իր արյան գնով թշնամուց հետ է խլում հայրենի հողը, գրավում ամրություններ ու հերոսանում, նա էլ նույն սխրագործությունները կատարում է իր վիրահատման սեղանի առաջ և նույնպես հերոսանում է, ինչպես գնդացրորդն ու հետախուզը մարտիկը:

Սկսվում է օդային ոմբակոծությունն այն ժամանակ, երբ նո ծանր վիրավորի կրծքավանդակի վիրահատում է կատարում: Փշրվում են լուսամուտների ապակիները, պատերից թափվում են ծեփերը: Անմիջապես հիվանդն ու գործիքները ծածկվում են սպիտակ սալվաններով և գործողությունը տեղափոխվում է նեղը նահարկը: Թշնամին ողջ օրը ոռը ոռը միաներ է նետում գյուղակի վրա, բայց ճակատում կոփված վիրաբույժն իր աշխատանքը չի ընդհատում, չի դողում իր դիրքի վրա: Եվ շատ հաճախ այդ մարտական պայմաններում նա կատարում է այնպիսի բարդ վիրահատումներ, որ գիտնական մարդիկ միայն հնարավոր կհամարեին լավագույն կլինիկաներում: Նույն այդ օրը ն. ավանի այդ ներքնահարկում օդային ոմբակոծության տակ վիրաբույժը օպերացիաներ է կատարում որովայնների խոռոշում, կըրծքավանդակում, կատարում է ստամոքսի, աղիքային տրակ-

տերի, փայծաղի, թոքերի և վերջավորությունների վիրահատությունները: Քիչ դեպքեր չեն եղել, երբ այդպիսի օրերիս նա իր շղողացող ձեռքով գանգուղեղի բարդագույն վիրահատումներ է կատարել: Վիրավորը բերլում է ուշագնաց, արյունաքամ, դարձերակլո: Թվում է դադարած, սրտի բարախումները չեն զգացվում, բայց բժիշկը կյանք է տեսնում: Թուլացած մարմինների մեջ, շարժում՝ կատարյալ անշարժության մեջ, արյան փոխներարկումներից ուզքի է գալիս մարդը և նա խորին հավատով՝ իր դործի նկատմամբ՝ սկսում է աշխատանքն ու հետո վիրավորը բացում է աշքերը, հանգիստ շունչ է քաշում ու շշնչում է առաջին բառերը, ինչպես առաջին անգամ թոթովով երեխան:

— Մի քիչ զ՞ո՞ւր...

Եվ ինչքան մեծ երջանկություն է ապրում վիրաբույժն իր չիվանդի մեջ կյանքի առաջին նշուլները տեսնելիս: Ո՞ր արվեստագետը կարող է իր հաջող ավարտած ստեղծագործությամբ այդքան երջանիկ ու հպարտ զգալ իրեն: Արվեստագետը նկարներ ու արձաններ է ստեղծագործում, երաժշտական գլուխգործոցներ ու անմահ գրքեր: Այդ բոլորը մարդու հոգին թեթևացնելու ու ազնվացնելու համար են, նրա միտքը մշակելու և զգացումները կրթելու համար: Իսկ մեր հերոսն ինքը մարդ է ստեղծագործում, արարշական ձեռքով նրան վերադարձնելով իր կյանքը: Եվ ինչքան շատ են սրտաշարժ դեպքերն ամենօրյա աշխատանքի ժամանակ: Մի անգամ ներս բերեցին ծանր վիրավոր ու կրախնացի մարտիկ Վասիլի Մաշիկին: Բժիշկներն ինչքան խնդրում էին, որ հանգիստ լինի նա, վիրավորը գոռգոռում ու հայհոյում էր.

— Ես նրանց կջարդեմ բոլորին էլ, ես վաղը, հենց վաղը ճակատամարտի կվերադառնամ, ես Սովետական Միության հերոս պիտի դառնամ... Ծիծաղում եք, ես ցույց կտամ ձեզ, որ Նսնապարծ չեմ, որ ես սուս չեմ ասում...

Նա զառանցում էր ցավերի մեջ: Թույրերը շոյում էին մարտիկի ճակատը, փաղաքում, քաղցր խոսքեր ասում, բայց նա չէր լուսում:

— Ո՞ւ, սուս է, ես չեմ մեռնի, ես վաղը կոփվ կզնամ, զո՞կ, իմ ետեից, հանուն հայրենիքի, ուռա'...

Նրան նայելիս՝ ցավն ու հիացմունքը միասին էին խոսում  
Հոգուդ մեջ:

— Այո, դու չես մեռնի, դու անպայման կվերադառնաս  
կուիի, ես խոսք եմ տալիս քեզ,—ասաց վիրաբույժն ու դործի  
անցավ: Նրա խոսքերը հնչեցին որպես երդում: Երկու ամսից հե-  
տո մարտիկ Մաշիկը շարքերը վերադարձավ և կովեց հերոսի  
պես:

Թշնամու ականի բեկորները ջաբեկ էին նիկոլ Ղարիբյանի  
կրծքավանդակն ու թիակը, վնասել թոքի մի մասը: Երբ բժիշկն  
հաստատ հայտարարեց, որ նա ապրելու է, անպայման կապրի և  
միասին Հայաստան կվերադառնան, նիկոլի աշքերին արտասուք-  
ներ շողացին:

Վիրահատումից երկու օր հետո, երբ վիրաբույժ Պարթի  
Սմբատյանը հիվանդների մոտ մտավ, Ղարիբյանը նրան դիմա-  
վորեց աղբբեշանական բայաթիով: Բժիշկը մոտեցավ ու բարկա-  
ցած կարգադրեց լոել:

— Կուրծք երեկ օպերացիա արինք, այսօր երգո՞ւմ ես:

— Քեզ համար եմ երգում... բժիշկ ջան...

— Երբ որ ես առեմ կարելի է, այն ժամանակ կերգես, ես  
էլ ջութակ կճարեմ, կնվազեմ քո երգի հետ:

Աւ ճարում է նա երբեմն ջութակ էլ, գաշնամուր էլ: Նվազում  
է իր հիվանդների համար, հետո ուրախ բաներ պատմում նրանց,  
պատմվածքներ է կարդում, զվարթացնելով նրանց, ինքն էլ  
զվարթանում է նրանց հետ:

Հանգիստ է մարդու խիզն իր մտքի դատաստանի առաջ,  
բավարարված է հոգին: Սակայն ամենօրյա անձնվեր աշխատան-  
քը ուազմաճակատում իր մի ուրիշ կողմն էլ ունի: Նա հսկայա-  
կան փորձ ու նյութեր է կուտակում գիտական խորհրդածություն-  
ների և եզրակացությունների համար: Աշխատանքի կարճատե-  
ղադարների ժամանակ հրետանային կանոնադայի տակ նա իր  
փոստախորշում նստում է այդ նյութերի վրա մտածելու:

Հաճախ են ճակատային ընկերները հանդիպում վիրաբույ-  
ժին նրա գիտական այդ մտմտումների վրա, շեղում աշխատան-  
քից, Առանձնապես հաճույքով լսում են նրանք վիրաբույժի  
զրույցներն իրենց տոհմական պատմության վրա: Նա որդին է  
հայտնի մանկավարժ Սմբատ Սմբատյանի, թոռը՝ Մեսրոպ Սըմ-

բատյանի, որ առաջինը հավաքեց Հայաստանում ուրարտական բևեռագիր արձանագրությունները և մեր բևեռագրերի պատմության հայրն է համարվում։ Վաստակավոր մանկավարժի տանը միշտ հյուր են եղել մեր ժողովրդի ազգային շատ նշանավոր անուններ՝ Կոմիտաս, Մանուկ Աբեղյան, Դորդանյան, Ավետիք Իսահակյան։ Եվ պատանին մանկուց տեսելու լսել է նըանց, լսել է և այդ բոլորն օգնել են նրան, որ տառապի ուրիշների ցալերով և շանա օգնել նրանց, կյանքում իր մշտական ձգտման մեջ միշտ լինի ազնիվ ու բարեխիղճ քաղաքացի...



Աշխատանքային օրն սկսվեց ճակատային վիրաբույժ Պարթև Սմբատյանի համար մարտիկ Նաումովի վերքերի վիրահատումով, երբ դեռ արեօ չէր ծագել դաշտերի վրա։ Ողջ օրն անցավ վիրահատման սեղանի առաջ։ Երբ նա ավարտեց աջիսատանքը, լուսնյակ գիշեր էր արդեն։ Կարմիր, կանաչ ու կապույտ հրթիսներու երկնքում խաշաձևում էին իրար և ծիածանագույն լուսեր փռում երկնակամարդի վրա։ Նա տրորված խոտերի նույն արահետով քայլեց գեղի իր փրանք, այնտեղ քողարկված լուցսի տակ օրվա թերթերն ու նամակները նայելու Բացեց առաջին ծրարը։ Զեռագիրն անծանոթ էր, նայեց ստորագրությանը։ Դա իր հիվանդներից մեկն էր գրում իր ընտանիքի մոտից, ուր բուժվելուց հետո գնացել էր արձակուրդով։ «Թանկագին բժիշկ, — գրում էր նա, — ընդունիր մեր ողջ ընտանիքից չերմ բարեներ։ Բոլորս, որոնք ձեր խնամքը վայելեցինք, երբեք չենք մոռանա ձեզ։ Ձեր հոգատարությունն ու սերը գեղի մարդը մեղ հիացմունք էր պատճառում։ Վերջին օրը, հիվանդանոցից դուրս գալու օրը, բոլոր վիրավորներս ձեր մասին խոսեցինք։ Կային այնտեղ ոստաներ, ուկրաինացի, բաշկիր, վրացի և զազախ ընկերներ։ Բոլորս կովել էինք, արյուն էինք թափել։ Իսկ դուք հայ էիք, և ամեն մեկիս կյանքի վրա դողում էիք հավասար չափով։ Ես մտածում էի, որ թեկուդ այդ մեկ փաստը կարող է ընդհանրացում լինել մեր ազգերի անխախտ եղբայրության, հանուն որի պիտք է կովել և եթե պետք լինի՝ կյանքն էլ շխնայել։ Մայրս, կինս ու քույրս, լսելով իմ բոլոր պատմածները ձեր մասին, իրենց երախտագի-

տությունն են հայտնում ձեզ, կոչելով ձեզ փրկիչ... Այս, դուք խսկական փրկիչ եք, հարգելի Պարթև Սումբատիշ, ես կարծում եմ հայրենիքը երբեք չի մոռանա ձեր և ձեզ նման շատերի անձնվեր, հերոսական աշխատանքը։ Հայրենական պատերազմի պատմության մեջ սովորական վիրաբույժն իր պատվավոր տեղը կգրավի»...

Այսպիսի նամակներ երկրի զանազան ծայրերից ու զանազան զորամասերից շատ հաճախ է ստանում նա։ Դրոզները մնար եղբայրական ազգությունների արժանավոր ու հավատարիմ որդիներն են։ Վիրաբույժի ձեռքից իրենց երկրորդ կյանքն ստացած մարդիկ մտերիմ կապերով կապվում են նրա հետ, ինքն էլ՝ նրանց։ Ու հուշատերում բժիշկը խնամքով գրի է առնում հասցեներն ու անուններն այն մարտիկների, որոնց կյանքը խլել է մահվան ճանկերից, որ ինքն էլ հիշի, երբեք շմոռանա։

...Կոպերը ծանրանում են, քոմը հաղթահարում է, լրագիրը ձեռքից վար է ընկնում։ Բայց ահա մի վիրավոր իր արյունոտ ձեռքը պարզում է նրան, — բժշկիր, ծանր է վերքս...

Պատգարակների վրա բերում են փշրված անդամներով վիրավորների, որոնց վերքերը պետք է շտալ վիրահատել։ Լսում է նրանց ծանր տնքոցները։ Վեր է թռչում տեղից, արթնանում է, տրորում աշքերը... ոշինչ շկա, ոշինչ։

Հալուցինացիա է կրկին, որ առաջանում է հոգնածությունից։ Յերեկվա պատկերներն են կրկնվել նրա աշքերի առաջ։ Գալիս է այդ բոպեին սանիտարը, բերելով հրամանատարի երկտողը։ «Հարգելի Պարթև Սումբատիշ, արդեն մեկ ու կես ժամ է, որ քննել եք. նոր վիրավորներ են բերվել»...

— Զեկուցեցեք, որ հիմա ինքս արթնացա և հիմա կգամ, — տում է նա սանիտարին ու կարգի բերում տրորված հագուստը։

Դուրս է գալիս վրանից։ Լուսաբացի նույն ժամն է, ինչ որ երեկ։ Եվ նույն վաղորդյան պեյզաժը։ Դաշտերը՝ ցողոտ ու շաղոտ և հորիզոնի ծայրերին՝ դեռ շփարաված մշուշը։

Սնապտեմբեր, 1942 թ., Երևան

Քարծող Բանակ

## Ե Ր Գ Ը Ը

Գարուն է, գարուն...

Նրա շունչն առանք շաբաթներ առաջ. փշեց մի օր տաք քամի, ձյունն սկսեց հալվել, բայց սառնամանիքը հակահարձակման դիմեց: Հոսող առվակները մեկեն սառցե պսպղուն ժապավեններ դարձան, ջրերի կաթիլները ցած ընկնելու ակնթարթի մեջ սառեցին ճյուղքերից կախված: Զմեռը հետ գրավեց թողած դիրքերը և իր ժամանակավոր հաղթանակն էր տոնում, բուք ու բորան փռելով տափաստանների ու անտառների վրա: Գարունը, սակայն, պաշտպանության դիմեց: Քսան օր շարունակ նա պատրաստում էր նոր արշավի: Ու եկավ մեկեն, ինքնավստահ, հաղթական, բերելով սառած հողին թարմ բույր ու հրապույրներ, բերելով մարդկանց նոր եռուն սեր դեպի հայրենիքը և շողջողուն հույսեր՝ նրա բախտի նկատմամբ:

Եվ ահա կրկին անցնում եմ ես անտառի եզրով: Նոր, անծանոթ տեղեր են, բայց թվում է, թե իմ ճամբանները միջտ այս տեղերով են անցել: Քայլում եմ մտքերիս հետ: Ականջումս հընշում է գեռ արկերի շառաշը: Երազանքը երքեմն մոռացնել է տալիս զգուշությունը: Շուրջս շեմ նայում, բայց ողջ աշխարհն զգում եմ հոգուս մեջ: Թոշունները երգում են անտառում: Սառուցյանների բռնությունն իր վրայից նետած գետն հանդարտ հոսում է, խփելով իրար փշրված ուժի բեկորները: Ագահությամբ շնչում եմ հաճելի օդն ու երգում է սիրտս ինքն-իրեն, նկզբում լոին, ապա հետո լսում եմ ինքս իմ ձայնը... երգում եմ միայն ես, և թվում է թե, երգով է լցվում այսօր ողջ բնությունը...

Գարուն է...

Մեկն ուժեղ սուզում է: Կանգ եմ առնում: Գետնի տակից

դեմքիս առաջ հանկարծ բուանում է մի զինվոր ու պարզում է՝ ինձ հրացանը.

Սա հարցնում եմ բանալին։ Նա շշուկով պատասխանում է, այն ժամանակ հայտնում եմ օրվա գաղտնիքը և զինվորը ժըսկում ու ցույց է տալիս ինձ ճանապարհը։

Անտափի խորքն եմ մտնում։ Ամեն ինչ լուռ է։ Հոփն ու հանդարտիկ փովում է մթնշաղը։ Գլխիս վերև կապոված, բաց երկինքն է։ Քսվում է լողությանս հեռու, թույլ մի մեղեղի, ժանոթ մի երաժշտություն։ Հաճախ է այդպես պատահում։ Լողության պատրանք է, որ կրկնվում է մենակության մեջ, կարոտից, — մտածում եմ ևս ու շարունակում քայլել։ Բայց մեղեղին կը կընվում է։ Հեռվից է գալիս, թույլ է և մարում է մինչեւ ինձ հասնելը։ Եվ երազանքի պես գեղեցիկ է ու նրա պես անիրական։

Պատրանք չի այլև, խարկանք չէ լսողության։ Ես հմայված առաջ եմ գնում։ Ավելի ու ավելի հստակ է դառնում, ճանաշելի ու քաղցր։ Չեմ քայլում այլև։ Հենված ծառի խոնավ բնին, ականջ եմ դնում։ Փակվում են աշբերս։ Շրջապատը շքանում է, լողում եմ եթերի մեջ, թեթև, հեշտին։ Երգում է կախարդական մի ջութակ և երեկոն լցնում հաղար թրթիռներով, զվարթ, քնքագին։ Ո՞վ է նվագում այստեղ, կույի առաջին գծի վրա։ Ո՞մ սիրտն է այդքան կարոտագին մեղմիկ հնչյուններ արձակում, նրբին, որպես մթնշաղը եղենիների անտափ վրա։ Արդեն մոտիկ է, կարծես մի քանի քայլ է հեռու, ապա թուլանում է աստիճանաբար ու հանգչում վերջալույսի նման։ Ես շարունակում եմ իմ ուղին։ Անտառը նոսրանում է ու նշմարում եմ փոքրիկ բացատը, որի կենտրոնում կա սպիտակ մի տնակ։ Անտառապահի տնակն է։ Երեսում են մարդկանց կերպարանքները։ Մի քանիսը մոտենում են ինձ, ճանաշում են մթության մեջ ու ողջույնի խոսքերի փոխարեն շշում։

— Եկել է նվագախումբը...

Ներս եմ մտնում։ Անկյունում երաժիշտներն են տեղավորվել իրենց գործիքներով։ Խոնավ խոտերի վրա նստել են մարտիկները։ Հայտարարողը վերջացնում է իր զվարճալի պատմությունը և բոլորը սրտանց ծիծաղում են։ Ապա նա լուրջ դեմք ընդունելով, հայտարարում է։

— Այժմ լսեցեք հայկական ռապսողիա...

Տիրում է լուսթյուն։ Երաժիշտները պատրաստվում են. խմբի դիմաց կանգնել է կարճահասակ, թխաղեմ մի բանակային, զոտու մեջ՝ երկու նոնակ։ Զախ ձեռքում բռնել է նա ջութակը, աջով չափ է տալիս։ Ու նվազախումբն սկսում է, կլարնետն է առաջին մեղեղին գեղեղով։ Քուրդ բայաթի... Վախենում և շնչել աղատ, որ ոչ մի երանդ չկորչի, որ երգի բոլոր ոլորտները սրտիդ միջով անցնեն... Նրանից է արդյոք, որ դարուն է այսօր, վարպետությունից է երաժշտ զինվորների, թե՝ մի ուրիշ, անորսալի գաղտնիք կա, որ վայրկյանն այնքան լի է դարձնում վերամբարձ տրամադրությամբ։ Զգիտեմ... Ուզում ես ձայնակցիլ ինքդ էլ, ուզում ես փոել թներդ ու սավառնել դեպի հեռուներց, բայց լուսմ ես սրբազն դողով ու ականջ զնում։ Եվ աշքերիդ առաջով գալիս ու անցնում են ծանոթ, սիրելի պատկերներ, տեսնում ես հարազատներիդ, ընկերներիդ՝ մտերմական ժամաներն աշքերի մեջ։ Քուրդ բայաթի... Ահա նրա ստեղծագործողը, ծերունի երաժշտը, որը կարծես շի տեսնում միայն նրա համար, որ երգի... Ահա նրա գլուխը քանդակործ Արա Սարգսյանի աշխատանքի սեղանի վրա... Հիշողություններ, հիշողություններ...

Բայց երաժշտությունը միտխվում է։ Վերստին ծանոթ և մանկության պես քաղցր մի երգ է, որի կրկնություններն իրար հնանձնում կլարնետն ու ակլարդիոնը, ջութակն ու գարմոշկան։ Իսկ ուստի զինվորը մեր մայրենի լեզվով երգում է.

— Երևան բաղ եմ արել,

Նեյնիմ աման, աման,

Նեյնիմ աման, աման, սարի գյալին...

Զիգարս դաղ եմ արել...

Աւնկնդիրների մեջ տիրում է խլրտում։ Շուրջս եմ նայում։ Հարավի մարդկանց զեմքերին երանություն է խաղում։ Դա նվիրական զգացմունքների մի պահ է, թանկագին պահ, որ հավերժութենա կմնա անմոռանալի մեր կյանքում։ Թվում է, թե նվազախումբն աննկատելի աշխուժի է անցնում.

— Խորոտ է՞ր, մայլի տղեն,

Կոլոտ էր, մայլի տղեն...

Այս անգամ աշխուժ է առնում մարմինդ էլ, ուզում ես պարել, թոշկոտել, ճշալ խենթ ու խելառ պատանու պես։ Մի ակըն-

թարթ սթափվում ես վերստին: Կարծես զազում ես դեպի ծիածանը ու նա շքանում է հանկարծ, երեսում է ուրիշ կողմից և նոր գույներով: Զութակը նոր եղանակ է սկսում: Մյուս գործիքները կրկնում ու շարունակում են և երգիշ զինվորը քաղցրիկ ձայնով երգում է նոր երգ:

Հետո կրկին հայտարարողը զվարճալի բաներ է պատմում, կրկին ծիծաղում են լիաթոք: Ու լսում ենք հետո աղբբեջանական լապսոդիան, վրացականը, ուկրաինականը, լսում ենք ոսւսական ուրախ ժողովրդական երգերը, սրամիտ քառյակներ:

Գաղարում են ծափահարությունները: Նվազողները շունչ են առնում: Առաջ է գալիս բանակային կլյաշինը: Նա տրամադիր չէ այս անգամ կատակելու: Դողացող ձայնով հայտարարում է.

— Երգ հերոս կեղյանովի մասին... ընկավ նա հերոսական կովի մեջ մեր սրբազան հայրենիքի ազատության համար, ընկավ որպես հերոս դյուցազուն, անթառամ փառքով ծածկելով իր անունը. Հոգով ու մարմնով ուժեղ մի ոռւս երիտասարդ էր նա, առյուծի սրտով, քաջ Պետրոսյանի ստորաբաժանման արծիվներից... անհավասար կովի մտավ կեղյանովը թվով տաս անգամ գերազանց թշնամու գեմ, իր փոքրիկ խումբն առաջնորդեց սվինամարտի և, ընկնելով մահացու գնդակից, բացականչեց.

— Կեցցե մեր հայրենիքը, թող ապրի նա հավետ, փառք նրա հերոս որդիներին... կեղյանովի մասին ժողովրդություն շատ երգեր կհորինի, առաջինը մենք ենք հօրինել...

Թվում է, թե երգը տիսուր է, երբ պատմում է, բայց հետզետե պոռթկում է որպես արդար՝ զայրույթ ու հնչում է որպես ահեղ մարտակոշ: Սեղմվում են մարտիկների ձեռքերն իրենց հրացանների ու ձեռքի գնդացիրների վրա: Երգը կովի ու կլիմի է կոչում հանուն նահատակված ընկերների:

Սկսվում է հրետանային մենամարտը: Կրակում են մերոնք և թշնամին պատասխանում է:

Համերգն ավարտվում է: Դուրս ենք գալիս անտառապահի տնակից: Աստղագարդ, գարնանային գիշեր է, որի խաղաղությունը վրդովվում է արկերի ստեպ-ստեղ շառաշով: Խիտ եղենեների արանքում տեղ-տեղ սպիտակին են տալիս ձյան շերտերը, որ վաղը պիտի անհետանան:

ՄԵՆՔ իշնում ենք գետնափորը և խնդրում, որ ջութակահարը, շարունակի: Նա բարի ընկեր է չի մերժում:

Եվ ջութակը գեղգեղում է: Ո՞վ է հնարել այդ կախարդական գործիքը, կարծես նրա գեղգեղանքների միջից խոսքերն էլ եռ լսում.

— Չինա՞ր ես, կռանալ մի՞...

Երգը ողողում է Հոգիդ դյութական հնչյուններով: Աշքերիդ առաջ բացվում է հայրենի երկրի դաշտանկարը: Պապղում է մատաղ խոտը լեռների լանջերին գարնան ցողով ու շաղով: Ու երագում է սիրահար հովիվը.

— Աղջի անաստված,

Նստիր վրանում...

Բացվում է առավոտը լեռնալանջերում: Զնհալ է ու կատարեները ծածկված են գարնան մշուշով: Եվ թվում է ոչ թե ջութակն է նվազում, այլ լսում ես զվարթ, զվարթ մի համերգ առվակներու խոխոչի հետ, սարերից վաղող աղբյուրների ձայնին խառնված.

— Ամպի տակից ջուր է գալիս,

Դոշ է տալիս, փրփրում...

Փարատվում է մշուշը: Բացվում են պալատներ, գորգերի վրա նստած Սայաթ-Նովան է մորմորում իր տվայտանքների մեջ, մորմորում իր երգերը՝ լի սիրո տառապանքներով...

Ջութակը պատմում է հայ ժողովրդի ողբերգական կյանքի մասին Կոմիտասի սրտի լեղվով: Եվ թվում է ինձ, թե երեք, երբեք ոչ ոք այդպես շի նվագել.

— Գարուն ա, ձյուն ա՞ արել...

Ի՞նչ է հիշում երաժիշտը, ի՞նչ է ապրում նա այդ րոպեներին: Նա գլուխն հակել է ջութակին ու կախարդվել, երազում է: Կանգնել է գուցե նրա աշքերի առաջ իր աղեղնահոն ընկերուհին, բարակիրան ու բարեձև, իր աղնվական վեհության մեջ հպարտ ու գեղեցիկ, հին հայկական անունով... Տաթևիկ... Աշքերը փակած մտքով տեսնում է նա երկի իրենց զերմ սիրո քաղցր պառողը, որին Դավիթ կողեցին նրանք և որը հիմա քնած է մոր ննջարանում մանկան անվրդով քնով, ճիշտ այն պահին, երբ իր հայրիկը ուազմաճակատում գիշերվա լուսից անտառը լցնում է, թովշական հնչյուններով... գուցե մտքով վերադարձել է նա ես երեք տարով, այն օրերին, երբ սրբազն մայրաբաղաբը լսում

Եր իր ժողովրդի երգը... Ամեն ինչ այնպես պարզ է, այնպես հստակ ու գեղեցիկ վերակենդանում է հիշողության մեջ, կառծես այս առավոտ լիներ... Ահա բացվում է Մոսկվայի Մեծ թատրոնի վարագույրը: Բեմի վրա երգում է ընկերուհին Ալմաստի գերում: Օրենստրում նվագում է ինքը: Լսում է ողջ հարազատ Մոսկվան, լսում է նրանց ամբողջ աշխարհը... Ծափահարում է Ստալինը: Ահա և նվիրական կրեմլի Գեորգիեվյան դահլիճը... Հնչում է ընկերուհու ձայնը: Նա երգում է մեծ Միության բոլոր նշանավոր մարդկանց համար, երգում է ողջ աշխարհի համար: Օրեր ու տարիներ... նույն երազանքներն էին հուզում նրան գուցե երեկ էլ, երբ նա արկղներով փամփուշտ էր հասցնում կրակի դիմը...:

\*\*\*

Գարուն է... Շողում է արեք: Ես անցնում եմ գյուղերով ու գաշտերով և հնչում են իմ մեջ երեկվա երգերի արձագանքները:

Երգում են ամեն տեղ, երգը հնչում է գարնան հողմի պես զիլ ու զվարթ: Թշնամին զարմանում է հաճախ, թե դաժան կորիմների այս տարում ինչպես են այսքան երգում մեր բանակում:

Երգը հմայում է նույնիսկ գազաններին, բայց մեր թշնամու մեջ շարություն է գրգռում: Նրանք կրակում են այն անտառի վրա, ուր գեղղեղում է ջութակը:

...Չորամասը պատրաստվում է նոր մարտերի: Ի՞նչ զգացմունքներ ասես, որ չի ապրում մարտիկն այդ ժամերին և նոր այդ հերոսական տրամադրությունների պահին ստորաբաժանումներում հայտնվում է կարճահասակ, թխաշլա զինվորն իր երաժշտական խմբի հետ և հնչում է մեր հզոր, մեր մեծ երգը, սիրո և աղատության երգը, հնչում են սովետական հզոր ու մարտական քայլերգերը, և հոգուդ մեջ որոտում է մի ձայն, միայն մի ձայն, անկեղծ ու ճշմարիտ, ի խորոց սրտի.

— Դեպի մարտ, դեպի մարտ...

Գարուն է, լի հույսերով ու գեղեցկություններով: Եվ երգն ավելի թովշություն է տալիս բնության զարթոնքին:

Կես գիշեր է, աստղագարդ երկնքի տակ, եղենու անտառում գեղգեղում է կարմիր բանակային Հակոբ Սեպունու ջութակը...

Ապրիլ 1942 թ.

Գարծազ Բանակ

## ԵՐԻԱՐԴԻ ԸՃՈՒՆԲ...

Կրկին աշում է իշել դաշտերի վրա, դեղին, դեղին ոսկեգույն աշունը: Դաշտ ու ձոր, անտառ ու հովիտ լուսաբացին լցված են լինում թափանցիկ մշուշով: Հեռու հորիզոնին գործարանների ծխնելույզներն ու եկեղեցիների գմբեթները դուրս են ցցվում փարատվող մառախուզի միջից ու նկարվում անտառների ֆոնին, վաղորդյան գույների մեջ, ինչպես երուսաղեմի բերդերն ու գրմբեթները՝ Բաշինջաղյանի կտավի վրա: Արեք դուրս է գալիս գողտուկ ու աննկատ, դուրս է սահում և հարավի վրա հենված՝ զնում է, զնում ու հանկարծ հորիզոնի ծայրին խեղդվում է դաշտերի մեջ և ապա փուլում է աղջամուլջը եղերքից եղերք: Թվում է, թե չես զգում օրը, առավոտի, կեսօրի և նրենկոյն սահմանները ձուլվում են իրար, ուստական աշնան պեյզաժներն ու գյուղանկարը նման են դառնում երազի, թանկագին, նվիրական, կրկնվող երազի, որի պատկերները ծանոթ ու սիրելի են, ծանոթ հարազատության շափ, ծանոթ մանկության օրերից տեսած սրբապատկերների նման:

Հոգիդ լցվում է բուռն զգացումներով, ինչ-որ վերերկրային տրամադրությամբ, որի մեջ թիշ չէ թախիծը: Զգիտես ինչի՞ց է դա, որտեղից է գալիս: Ուզում ես բացատրել ինքո քեզ, չես կարողանում: Մտքերի ու զգացումների հախուն հորձանքը հաճախում արդու համբ է դարձնում: մարդկային հարուստ լեզուն խեղճ ու անկարող է դառնում: Մաքառում ես, մաքառում, հասնում երջանկության կատարներին ու սրտիդ անքննին ծալքերի մեջ էլի մի տիսուր անկյուն է մնում: Դա անցած ճանապարհի հիշողություններն են, որ սթափեցնում են քեզ և ասում. «Հաղթանակող, տիսուր սրտով մի պահ խոնարհիր գլուխոդ մարտիրոսա-

ցած ընկերների հիշատակի ու նրանց հեղված արյան համար և ապա հնչիր հաղթության փողը, դա քո պարտականությունն է և քո իրավունքը»...

Երրորդ աշունն է:

Ամեն գյուղ ու Հյուղ, ամեն թուփ ու պուրակ և՛ մառախուղն ու մեզը, և՛ անձրեները, և՛ ոստական աշունը վերածնում են հոգուդ մեջ դաժան օրերի այն անհուն դառնությունը, որ ապրեցիր այս դաշտերի մեջ և ամրացնում են քեզ դալոց օրնի մարտնչումների համար:

Տանը էր առաջին աշունը: Անվերջանալի անձրեներ, ցես, մշուշ և ամենից ծանր ու անտանելին՝ նահանջը: Քայլում էինք օրերով դաժան աշնան միջով, մեր կամքին ենթարկելով ընդարմացած, ջարդված մեր հոգերը, ժամերով պառկում թշնամու տեղատարափ կրակի տակ, նետելով մեզ ցեխաջրերի մեջ, ձուվելով հողին, խոնավ, թաց հողին, որի սառնությունն հասնում էր մինչև մեր արյան անոթները: Եվ անընդհատ ու միալար երկնքից թափվում ու թափվում էր անձրես, աշնան անձրես, բքախառն ու ցուրտ, որ մահվան շնչի պես դալկացնում էր մեր գեմքերը, կրսկիծի նման սողում մեր ոսկորների մեջ: Առավոտից առավոտ խրամատների մեջ մենք կրակում էինք հարձակվող թշնամու դեմ և լուսաբացին հող ու թուփի հետ ծածկվում սպիտակ եղյամով, որ իշնում էր անծայրածիր դաշտերի վրա, գյուղերի ու ավանների վրա, անտառների ու մեզ վրա, թնդանոթների, տանկերի և մեր զոհված ընկերների շիրիմների վրա ու ծածկվում ողջ տիեզերքը ձմեռնամուտի սառը շնչով... Իսկ ժամանակը երկարում ու երկարում էր, օրն ու ժամը դառնում էին անհատնելի հավիտենականություն: Համակ պազության մեջ չին սառչում միայն մեր սիրտն ու դիտակցությունը:

Եվ նրանք էլ փրկեցին մեզ ու մեր հայրենիքը:

Ով որ 1941 թվականին չի եղել ռազմաճակատում, նա չի վերապրի այն անկրկնելի ողբերգությունը, որ ապրեցինք մենք... Քչերը կարող էին երազել, որ կապրեն մինչև 1943 թվականը: Մենք հավատում էինք, այո՛, որ կդա հատուցման ժամը, որ մենք կհաղթանակենք, բայց կարծում էինք, թե այն ժամանակ ետ կդան դեպի արևմտսք մեր ընկերները, միայն նորերը և, մեր եղրայրական գերեզմանների վրա ծաղկեփնչեր դնելով, առաջ-

պանցնեն: Մեռնելու միտքը պարզացել էր. դարձել հեշտ ընկալելի ճշմարտություն և մենք հաշտվել էինք այդ պարզ ճշմարտության հետ: Մեր նամակների մեջ մենք գրում էինք այնպիսի տողեր, որ վազը հնչեին իրբեկ կտակի խոսքեր, մարգարեություններ, որ գալոց օրերին շողային հարազատների մտքում ճշմարտության լույսերի պես:

Ու հիմա էլ աշուն է: Երրորդ աշունը: Երեսուն երկու աշուն է անցել այն օրից, երբ ես աշք եմ բացել հերոսականությամբ, սրանչելիքներով ու ողբերգականությամբ լի այս աշխարհի վրա: Գուցե դեռ շատ աշուններ էլ գան ու անցնեն, բայց 1941 թվականը երբեք չի կրկնվի և 1943 թվականն էլ հավետ անմոռաց կմնա: Գնում ենք դեպի արևմուտք. ծանոթ դաշտերով ու ճամբաններով:

Վայրերը նույնն են, բայց չկան շատերն այն մարդկանցից, որոնց անվան, խոսքերի ու կյանքի հետ կապված են այս հովհատներն ու ձորակները մեր հիշողությունների մեջ: Նրանցից ոմանք ընկան կոփվների մեջ, որիշները հեռու-հեռու քաղաքներում բուժվում են ծանր վերքերից և մենք ետ ենք եկել նորերի հետ: Եկել ենք կարելով երկար և դժվարին ճանապարհ: Հաղթահարելով ժամանակը, անցել ենք երկու ծանր ձմեռվա, երկու կանաչ գարնան, երեք տառապագին ամռան և երեք աշունների միջով: Տեսել ենք անկումները մեր հերոսական քաղաքների և նրանց վերածնունդը մեծ երկունքից հետո: Մեր ճանապարհը ձգվում է մայր Վոլգայի ափերից մինչև Գնեպրի նվիրական եղերները:

Վայրերը նույնն են, բայց փոխվել է աշխարհն այն օրերից: Աշա այս բարձունքի տակ, ուր ջարդված ողնաշարներով ընկած են գերմանական «վագրերը»՝ ժանիքները փշրված, մենք առաջին մարտն ընդունեցինք: Ականջիս հնչում են դեռ այն հումկու բացականչությունները, որով հակադրուհի գնացին մեր ժողովուրդների որդիները թշնամու դեմ: Թվում է, որ լուս մնամ մի պահ, կկրկնվեն երկու տարի առաջ հնչած ձայները մտերիմ մարդկանց, կլսեմ այդ ձայների արձագանքը և իմ հոգին, դաշտերն ու տիեզերը կլցվեն վեհ հնչյուններով, որոնք կյանքի կկոչեն ծառ ու տերե, ողջ բնությունը, երկինք ու հող՝ մահվան դեմ: Ելնում են առաջս սրբազան պատերազմի նահատակների դեմքերը, իմ մարտի-

բոսված ընկերների ու բարեկամների ղեմքերը երանությամբ ու արևով ողողված: Այս հաղթական օրերին, երբ արդար վրեժինդրությամբ վառված, մենք ոչնչացնում ենք թշնամուն ու առաջ շարժվում, ուշ գիշերվա պահերին էլ, երբ փակվում են կոպերս, գալիս են նրանք ու շնչում. «Մենք էլ ենք ձեզ հետ, մենք միասին ենք վերադառնում, միասին ենք ետ նվաճում մեր հայրենիքը թշնամու բռնակալությունից»:

Ահա Սամվելը... Ծնվեցինք ես ու նա Ալաշկերտի հովտում, Եփրատի վտակի ափերին, ուր այսօր էլ հանգչում են մեր նախահայրերի գերեզմանները: Հայ ժողովրդի կյանքի վրա կախված գահճապետի թաթից արյուն էր կաթում մեր մանկության վրա: Բայց կյանք մտանք մենք ազատ հորիզոնների տակ, ազատագրության ոգով սնվեցինք և կուլի եկանք հին ոսոխի գեմ մեր օրերի հատուկ գիտակցությամբ և մեր ժողովրդի դարերի կուտակված ուժով:

Այստեղ, այս՝, ճիշտ այստեղ ընկալ Սամվել Բերբերյանը... Նա գնում էր իր վաշտի առջեից գրոհի ժամանակ: Նա գնում էր ամենից առաջ և ընկալ հերոսի մահով. թշնամու արկը կպել էր նրա հերոսական կրծքին: Զինվորները հավաքեցին իրենց հրամանատարի մարմինը մայր հողին հանձնելու, գտան աշ թևը, որ արդեն անկյանք, բայց պահել էր ատրճանակը ձեռքի մեջ...

Ես հիշում եմ Ալեքսեյ Պետրոսկիիսին: Բարձրանում է նրա կերպարանքը հաղթական ու հոյակապ, վիթխարի, որպես մարմացումը ուսւ ժողովրդի անսահման ու անընդգրկելի ցասման:

Ահա վեր է կենում նա ու առասպելական հանդարտությամբ թշնամու կրակի տակով քայլում դեպի իր նպատակը: Նրա կերպարն անմահ է, նա եկել է դարերի խորքից ու գնալու է մինչև ժամանակների անսահմանությունը:

Նա որոշել էր իր մահով վճռել այդ օրվա մարտի ելքը, իր մահով որոշել հայրենիքի բախտը, նա իր մարմնով փակել էր թշնամու գնդացրի ամբարազուրը...

Ալեքսեյ Պետրոսկիիս... մի խարտյաշ ուսւ տղայի անուն է սա, որ մարմնավորում է ուսւական մայր հողի ուժը, ժողովուրդների միությունը:

Եվ այսօր նրա ոգին դրոշի պես փողփողում է դեպի արևմուտք շարժվող մեր զորքերի վրա, դա հաղթության ու հերոսա-

կանության ոգին է, որ միշտ մեզ հետ է եղել ու երբեք մեզ չի լքի: Այդ ոգին էր, որ հերոսության մղեց հայրենիքի դուստր Ելենա Ստեմակովսկայային և նրա անունը դարձրեց Հաղթանակի նշանաբան:

Այդօհս դյուցազնորեն, մեծի մահով մեռավ Հաղթանակի մանապարհին քաջ լեյտենանտ Արամ Մամունցը, որի կովոծքը զարդարված էր երեք մարտական շքանշանով: Նրա հողաթումբը դեռ թարմ է:

Ի՞վել բոլոր նահատակների անունները մեկ առ մեկ, պատմել բոլորի մասին... Նրանք շատ են, որովհետև պատերազմը, որ դեռ շարունակվում է, մեծ է ու դաժան: Շատ են նաև անանուն հերոսները, որոնք իրենց արյունով ու կյանքով ազատություն բերեցին Հայրենիքին:

Վաղը նրանց շիրիմները կծածկվեն սպիտակ ձյան փաթիլներով: Ապա կգա զարունը. ապրիլին մանուշակները կծաղկեն նվիրական հողաթմբերի վրա, օգոստոսին անթառամ ծաղիկը կզարդարի նրանց գերեզմանները և ողջ ժողովուրդը իր հազարամյա գլուխը կիսոնարհի նրանց հիշատակի առաջ:

...Երրորդ աշունը նման չէ առաջինին: Յնդում է առավոտյան մշուշը և ողջ օրվա մեջ գեղին գույնները փոփով են աշբերիդ առաջ, բացվում են հովիտները լվացված գիշերված շաղից, շրջում են անտառների գեղնած սազարթները: Դեռ նոր է տերեւաթափն սկսվում: Երեկոնները երկինքն աստղադարդ է և խոր ու թափանցիկ և հստակ, ինչպես արդարությունը:

Դա ուկրաինական գիշերն է: Բայց խաղաղ չէ ուկրաինական գիշերը: Նա լցվում է ռազմի ազմուկներով: Երկինք է բարձրանում տանկերի դղրդոցը, հրետանու որոտը և ականանետների շառաւը: Երկնքից մայր հողին է հասնում ինքնաթիռների հորնդյունը և կործանիչների համազարկը թշնամու վրա, երկինքը փայլատակում է բոցկլտումներից և ուշ գիշերին միայն շունչ ու կարճ դադար է առնում, այն ժամանակ հեքիաթական գեղեցկություններով փոփում է աստղալույսի տակ անսահման տափաստանը, խոնարհվում է Ուկրաինայի վրա հազարացոլք երկինքը:

Ուկրաինան է սա, կենտրոնական Ուկրաինան: Շաբաթներ առաջ, երբ մենք ոտք դրինք նրա սահմաններին, ուկրաինական

ժողովրդի զավակ մայոր Բոկլանը քարտեզը գետնին փռելով,  
դիմեց շարված գումարտակին և ասաց.

— Հարազատ իմ եղբայրներ, ահա այդ գծից այս կողմ  
շորս քայլի վրա սկսվում է Ռվարախնան: Ով որ ցանկանում էր  
վերադառնալ կրկին այս հողը, ահա վերադառնում է. թող ալ-  
րի Սովետական Ռվարախնան: Չորս քայլ առաջ, մարշ...

Թոփելով հողը, մարտիկները շորս քայլ առաջ անցան:

— Այժմ դուք Ռվարախնայում եք...

Այդ օրից շատ ժամանակ շի անցել և մենք հիմա Ռվարախ-  
նա երկրի խորքերումն ենք, մեր ետևում թողնելով տասնյակ  
քաղաքներ ու հարյուրավոր գյուղեր: Քայլում ենք մենք հրդեհված  
երկրի միջով, մոխրացած տների կողքով, մեր ճանապարհը չեն  
կարող փակել թշնամու ջարդված տանկերը, ավտոմեքենաները,  
ինքնաթիռներն և գերմանական դիակների կուտերը: Մենք խո-  
նարհվում ենք ժողովրդի վշտի առաջ ու հաստատում շարունա-  
կում մեր ճանապարհը: Մենք գիտենք, որ շատ ժամանակ շի  
անցնի և կվերածնվի մեր երկիրը, մենք տանում ենք թշնամուն  
ահեղ հատուցում:

Իմ տպավորության միջից շի հեռանում մի պատկեր: Դեռ  
գյուղի շատ տներ մխում էին, որ իրենց այրված խրճիթի մոխիր-  
ների մոտ կանգնած, մի ծերունի իր պառավի հետ հյուզակիր  
դուն համար շեմ էր շինում, հանգիստ ու անշտապ սղոցնելով ու  
տաշելով փայտը: Պառավը ամուր բռնել էր փայտից, որ ծերու-  
նու համար հարմար լինի: Եվ նրանք այդ բանն անում էին հան-  
գիստ, առանց տափապի, կարծես ողջ տունը կանգում էր,  
միայն շեմն էր պակաս: Ես տեսա երկրի վերածնության շողերը  
ծերունիների ազատ հայացքներում, նրանց անալլայլ հանդար-  
տության մեջ:

Մեր զորամասերն առաջ են ձգվում, դեպի արևմուտք: Հեծ  
տախույզը գիշերով թշնամու դասավորության խորքն է գնում և  
իր հարազատ տունն է մտնում, մտերիմների հետ դեռ շգրկա-  
խառնված թշնամու ուժերի մասին է տեղեկանում ու վերադառ-  
նում իր զորամասը, որ վաղն իր գյուղը վերադառնա որպես  
ազատ տեր ու տիրական: Տանկիստը հակառակորդի պաշտպա-  
նությունը ճեղքելով, իր քաղաքի փողոցներն է խուժում, կրակի  
տակ առնելով փախչող գերմանացիներին, իսկ երբ արդեն քա-

դաքի տերն են մերոնք, նրա հզոր մեքենան շրջապատռում են ծանոթ աղջիկներն ու պատանիները և՛ լացն ու ծիծազը, և՛ ժպիտըն ու արտասուրը խառնվում են իրար:

Եվ փովել է ահա վեհ ու մեծ Դնեպրը մեր զորքերի առաջ, անհնաղանդ ու հպարտ գետը, որի ափին թաղված է մեծ Շեշենկոն, փովել է երրորդ աշնան արեմի գեղին ցոլքերի տակ ու հանդարտ վեհությամբ հոսում է, հոսում հպարտ Դնեպրը և նրա ալիքների քամին շոյում է երկար ճանապարհից խոնչացած զինվորների գեմքերը, ուժ, եռանդ ու կորով տալով նրանց, որ չհոգնեն նոր տարածություններ կտրելու:

1943 թվականի աշում, ինչքա՞ն խնդություններ բերիր գու և դեռ ինչքա՞ն երջանիկ վայրկյաններ, թանկագին պահեր կանքու մեջ: Չէ որ դեռ հոկտեմբերը նոր է սկսվում և նոյեմբերն էլ պիտի գա:

Ողջո՞ւյն, Դնեպր, միշտ հավերժ անմա՞ն կլինի քո ժողովուրդը, դու երբեք կապանքներ չես սիրել և ժողովուրդը երբեք կապանքներ չի կրի: Հոսիր երջանիկ ալիքներդ իրար զարնելով, նվիրական գետ, սրբազան անուն, ընդունիր քո կրտսեր քուրերի՝ Արաքսի և Արփաշայի ողջույնն ու շնորհավորանքները քո երջանկության օրին:

Նայում ես շուրջդ, նայում դեպի արևմուտք և երջանկությունը ալիքներ է տալիս հոգուդ մեջ ինչպես մեծ գետի ջրերը: Կյանքն ավելի ու ավելի քաղցր է դառնում, դաշտերն ավելի գունագեղ ու սիրելի, երկինքն ավելի պայծառ ու արդար, Դնեպրն ավելի վեհապանծ և աշունն էլ ավելի ոսկեղեն:

Այդ ամենը կյանքի վերադարձն ու հաստատումն են:

Փա՛ռք նրա համար նահատակվածներին:

2 Հոկտեմբեր, 1943

Դարձող Բանակ

## ԳՅՈՒԳՅՎԱՅԻ ՍՓԵՐԻՆ

Քայլում է հարազատ դաշտերով իր հողի որդին. աշնանացին խոտերի բույրը, տափաստանների ոսկեգույնն ու թափանցիկ հեռուները լցնում են նրա հոգին, վսեմ զգացմունքներով, ուժ ու թոփշը են տալիս նրա մտքին: Նա տեսնում է և այն տարածությունները, որ ծածկվում են հորիզոնի ետև, որ փակ են նրա հայացքի տակ այսօր, բայց վաղը այնտեղ էլ կլինի նա:

Երեք տարի առաջ, համարյա-անհայտ ու անանուն մի երիտասարդ զենք վերցրեց իր հայրենիքն աղատապրելու համար և այսօր արդեն ճանաչված հերոս է յուրայինների մեջ: Հայրենակիցները սիրով ու հարգանքով նրան տվին Գայլ Խեզզող անունը՝ համեմատելով նրան լատիշական հերիաթների ու լեգենդների դյուցազուն Լաշպլեսիսի հետ, որ մենամարտել էր արևմուտքից Լատվիայի վրա եկած Սև տապետի դեմ և միֆական Սամսոնի պես ձեղքեց նրան երկու մասի:

Լաշպլեսիսի ժամանակներից անցել է յոթ դար: Բայց Սև ասպետը թողել է սերունդներ, որ այսօր կրկին ոտքի են եկել Լատվիայի դեմ: Արթնացել է, սակայն, անհաղթ Լաշպլեսիսն էլ, նրան արթնացրեց Արևելքից եկող ավագ եղբայրը՝ Իլիա Մուրոմցը, որ երեկ բռնել էր մի ձեռքում վիթխարի գութանը, վարում էր հողը Վոլգայից մինչև Դնեպր, իսկ այսօր վերցրել է երկաթագամ գլխով մահակը և մաքրում է հողը գիշատիչներից:

Եվ արթնացան իրենց հողի հաղարավոր որդիներ, արթնացան՝ սրտերում յոթ դարու ատելությունն ու վրեժը խավարի ու բռնության դեմ: Նրանք կոփեցին փորձությունների մեջ, առնականացան: Ու ամենից բարձր երեաց մարտերի բոցերի ու ծխերի մեջ՝ Խուզով Տուրկը կերպարանքը: Նրան սիրեցին ըոլորք:

սիրեցին և այն բանի համար, որ որպես հսկա խեղդում էր նա հանդիպած թշնամուն մենամարտերի մեջ, և այն բանի համար, որ ամեն անգամ մարտի էր գնում, ինչպես խրախնանքի, որ այնքան բան գիտեր կյանքի մասին, իր ժողովրդի անցյալի ու ներկայի մասին և բարեկամների ու ընկերների առաջ այնքան գունագեղ կերպով նկարագրում էր Լատվիայի արևաշող ապագան։ Նրան սիրում էին, որովհետև տառապանքներով անցած, զիրավոր ու արյունաքամ, ամեն անգամ նա շարքերն էր վերադարձել՝ պահելով հոգու պայծառությունն ու խոսքի աշխուզժ գրավչությունը։ Սիրեցին և այն բանի համար, որ նա անգիր արտասանում էր հայրենի բանաստեղծների նվիրական դարձած ստեղծագործությունները՝ լի սիրով ու երախտագիտությամբ մայր հայրենիքի հանդեպ։ Արյունահեղ մարտերից հետո Ռուգովքը ուշ գիշերներին խոնավ գետնափորերում սիրո քնքուշ, խոսքերի պես շշնչում էր Յանիս Ռայնիսի տողերը՝ նվիրված հայրենի հողին, սրբազն գետ՝ Արևմտյան Դիմինային—Դառւգավային, որի ափերին կանգնած է երկրի սիրո՝ Ռիգա քաղաքը. «Հոսում ես, Դառւգավավա, արնոտ ալիքներով։ Արյունն է դա քո որդիների. օսուրը, դու սուրբ հայրենի հող, թանկագի՞ն, ինչպես դեմքը մայրական։ Եվ թող որոտա ահեղ ամպրոպի պես երգումը մեր և թող մահ սփոխ ոսոխի վրա՝ յոթդարյան մեր թշնամու...»

Քայլում է Ռուգովք Տուրկըսը անտառներով ու թփուտներով, զգուշ ու ճարպիկ, վստահ, ինչպես դաշտերի առյուծը, արթուն ու սթափ, ինչպես անմահ ոգին Լաշպեսիսի։ Նա հետապնդում է Մե ասպետին։

Սկսվում է երեկոյան աղջամուղջը, բարձրանում է ծուխը դեպի կապույտ երկինք, հառաշում է հողը կովի որոտներից։ Քայլում է նա ողջ հասակով՝ երբ կարելի է, սողում է թմբից-թումբ, ոստնում է թփուտից-թփուտ՝ երբ վտանգ կա։ Ահա արահետով քայլում է նա, թշնամին՝ սարսափից նայելով շուրջը, վախենալով ծտար գիշերից, օտար անտառների պատժող ոգուց։ Կարծես զգում է նա իր մահը, ինչպես շարագործն ահեղ դատաստանից։ Նա մոտենում է։ Եվ հանկարծ կարծես գետնի տակից կանգնում է նրա առաջ նա՛, դատավորը. «Կանգնի՛ր, հա՛լթ»...

Դա Ռուգովք Տուրկըսն է։ Նրա հրամանն ահեղ է, ինչպես մերկացած սուրբ։ Դժվար է հանցագործի համար այդպիսի ըս-

պառնական կերպարանքի առաջ պահել կեղծ արիություն։ Դա պողին տրված չէ։ Բայց նա ուզում է փրկել իր կաշին, ուզում է գուրս ցատկել ճարպիկ որսորդի ցանցից։ Նա գերադասութ է խայտառակ փախուստը։ Տուրկըսը հասնում է նրան։ Գայլի գըլ-խին իջնում է ճրացանի կոթի ուժեղ հարվածը։ Նա երերում է, ընկնում, կրկին ոտքի է կանգնում։ Ու սարսափից նետվում է հակառակորդի վրա։ Ավտոմատները ցած են ընկնում երկուսի ձեռքից էլ։ Գերմանացին շանգուս է եղունգներով, բայց Գայլ Խեղդողի երկաթե մատները սեղմում են նրա կոկորդը։ Նա պետք է կենդանի տաներ նրան, բայց մենամարտի փոթորկի մեջ մոռանում է իր որոշումն ու սեղմում թշնամու կոկորդը, այն թըշնամոն, որ յոթ հարյուր տարի շարունակ անհանգստացրել է իր ժողովրդին։ Վերջին անգամ մի խոփոց է հանում գերմանացին ու գերանի պես անշարժ ընկնում գետնին։ Թուգով Տուրկըսը վերցնում է ավտոմատները ու քարշ է տալիս հակառակորդի դիակը։

— Մինչև հ՞րբ պետք է շարունակվի սա, — կշտամբում է նրան հրամանատարը։

Այդ դիտողության մեջ կա և սեր գեալի հերոսացած մարտիկը և հիացմունք նրա ուժի ու քաջության առաջ, բայց նկատելի չ նաև նրա անկեղծ անբավականությունը, որ Տուրկըսը կրկին անձնատուր լինելով խելահեղ ոգեսրության, մոռանալով ինքն իրեն անզուսպ ատելությունից կենդանի գերմանացու փոխարեն կրկին քարշ է տվել հրամանատարի մոտ խեղդած գերմանացուն։

— Ինձ պետք է կենդանի գագան, որը մոթմոթալի, ինչ որ ևս հրամայեի, իսկ դու բերել ես այս լեշը, ինչի է նա պետք...

Գայլ խեղդողը խնդրում է։

— Թույլ տվեք գնալ մի անգամ էլ և թող գան ինձ հետ ևս երկու հոգի, որ զուսպ են ավելի, քան ես։

Եվ բայցում է կրկին ծանոթ արահետներով Լաշպեսիսը, իսկ նրա աջ ու ձախ կողմերից գնում են փորձված ու ինքնազուսպ գագանորսներ Սուրկովն ու Գլուտովը, որոնք վաղուց են վարպետացել իրենց արվեստի մեջ։

Խավար գիշեր է, փոքրիկ կրակների պես հեռվում ու շուրջը վառվում ու հանգչում են կայծեր, հրթիռները լուսավորում են գաշտերն ու երեւում են տարածությունների վրա մենավոր լորինե-

րը՝ բոցակարմիր սաղարթներով։ Ողջ գիշեր թափառում են նրանք թշնամու գասավորության մեջ, ականջ են դնում ամեն շշումնի ու հնչունի։ Մի քանի անգամ պտույտ են գալիս այն գյուղակի շուրջը, ուր ամրացած է թշնամու կայազորը բարձունքի վրա։ Աստղերն արդեն խամրում են, սկսվում է լուսաբացը։ Տների ու փոքրիկ գյուղերի շրջագծերը պարզվում են լուսաբացի դաշտերի ֆոնի վրա։ Վաղորդյան գույներով բացվում է հետախույզների առաջ լատիշական գաշտանկարը։

— Գեղեցիկ է մեր կատվիան, այնպես չէ՞,—հարցնում է Տուրկը իր ընկերներին, հիանալով հարազատ բնության սրանշելիքներով։

— Սքանչելի՛ է, սքանչելի՛,—պատասխանում են Սուրեկովն ու Գլոտովը՝ կռահելով, թե ինչ է տեղի ունենում իր հողի գավակի հոգում։

Հենց նույն այդ ժամանակ լսվում է մոտոռի հռնդյուն. երեքով էլ լուսում են, ձայնը գնալով մոտենում է. նրանք թաքնվում են ճանապարհի կողքին մի փոսի մեջ. ահա երևաց մերենան ճանապարհի վրա, գալիս է ուղիղ դեպի նրանց։ Մոտեցավ ու կանգ առավի ինչ-որ բան էր պատճել մոտոռին։ Քարշակից իջան շորս գերմանացի։ Մեկը նրանցից սողաց մերենայի տակ, երեքը բաց արին մի քարտեղ ու տեղանքին են նայում։ Որոտաց ավտոմատների համազարկը։ Երկուաը ընկան, մյուս երկուաը հանկարծակիի գալով՝ շփոթվեցին։ Այդպես էլ նախատեսել էին հետախույզները, որ դուրս թռան թաքստոցներից ու վազեցին դեպի գերմանացիները։ Մեկը ձեռքերը վեր բարձրացրեց, մյուսը փախավ։ Տուրկը վազեց նրա ետևից։ Տարածությունը նրանց միջև կարճանում էր, բայց գերմանացին չէր կանգնում։ Տուրկը ավտոմատը կարճ հերթազարկ տվեց, գերմանացին գրեց ծառի բումը, շուռ եկավ ու մեջքի վրա ընկավ ցած։ Վերադարձավ Տուրկը ընկերների մոտ։

— Իսկ այդ մեկը կենդանի՞ է։

— Ինչպես տեսնում ես։

— Փա՞ռք աստծու, ուրեմն այս անգամ ինձ շեն հայհոյի... Նոր էին նրանք վերադարձել համանատարի մոտ և նոր էին բարշակը հանձնել տանկիստներին, երբ հրաման ստացվեց գրոհել բարձունքին գտնվող գյուղակի վրա։ Գիշերային հետախու-

զությունն իր արդյունքներն էր տվել, վաշտը պիտի գնար գրոհի այն կողմից, ուր գերմանացիները պաշտպանություն էին կառուցել, իսկ գրոհային մի խումբ Տուրկըսի առաջնորդությամբ պիտի սողար զեպի գյուղը ճահիճների միջով ու սպասեր գրոհի ազգանշանին: Ու առաջ էր գնում Տուրկըսն իր համար սովորական այն հանդարտությամբ, որ արիություն ու ինքնավստահություն: Էր ներշնչում ընկերներին:

Մտորաբաժանումը գրավեց գերմանացիների խրամատների երեք շարքը: Սկսվեց թշնամու հետապնդումը և կրկին իշավ կապույտ, կախարդական զեղգալյան երեկոն:

Մարտիկները շունչ առան, հնչեց էլի լատիշական ժողովրդական երգը. *Տսյա, տսյա...*

Երգում էին հայրենակիցներն այն երգը, որ լսել է նա գուցե դեռ օրորոցում, որ երգել է ինքը մանկության օրերից, երգում էին մեղմ, երգում էին հոգով. «Հոսում է, հոսում է զետը, հարազատ զետը, հոսում է սրբնթաց, և խորն է նա»...

Ամեն տնից հետո հնչում էր կրկներգը:

Անցի՛ր, գետը, քա՛ջ ուազմիկ,

Անցի՛ր համարձակ,

Անցի՛ր վատահ, քա՛ջ ուազմիկ,

Քո ձին շի խեղդվի...

Հորիզոնը կարմրել էր հրացոլքից: Նահանջող գերմանացիներն այրում էին գյուղերը: Ռուդոլֆ Տուրկըսը երկու օրվա ծանրաշխատանքից հետո սրբեց ճակատի քրտինքն ու հառաշանքով նայեց այդ տիսուր պատկերին: Եվ նրան թվում էր, որ լսում է դարերի խորքից լատիշական ցեղերի առաջնորդ Վիսերտուսի առնական ձայնը. «Ռտքի՛ ելեք, զեղգալցիներ ու լադալցիներ, պրուսական խաչակիր շները դոփում են մայր Լատվիայի հողը, ոտքի՛ ելեք անհնազանդ գյուղազուներ, մեղ հետ է սլավոնական մեծ ժողովուրդը, մեղ հետ է արդարությունը»:

Ամեն անգամ, երբ նա մենակ էր լինում իր խոհերի հետ, լսում էր կարծես այդ ձայնը: Իսկ այսօր լսում է ավելի պարզ, ավելի հստակ: Իսկ Թիգան այսօր մոտ է, այնքան մոտ, որ թվում է վաղը այնտեղ կլինի, Դառւգավայի ալիքները շողում են նրա աշքերի առաջ...

Թիգա՛... Թիգա՛... այդ անունը հնչում է այսօր ամեն ուս-

սի — ուկրաինացու, սիբիրցու, կողակի և կովկասյան լեռների զավակների շրթումքներին, որոնց գետ հաղարավոր կիլոմետրեր է կտրել նա իր հայրենի հողը հասնելու, որոնք եկել են ազատագրելու նրա երկիրը: Ըիստա, այդ անունը հնչում է Ռուսութիւնում:

Մեկը իր ծանր ձեռքը դրեց նրա ուսին: Նա շուռ եկավ. դա վիշտամսն էր, վաշտի հրամանատարը:

— Վառվում է Լատվիան,— շնչաց նա տիտուր ձայնով:

Այսինչ չպատասխանելով՝ հանդարտ ոտքի կանգնեց Ռուսութիւնում Տուրկը, և նրանք մոտեցան իրենց հայրենակիցների խմբին: Ենչում էր նա լայն կրծքով, որի վրա թափսմանների պես ամուռ նստել էին երեք շքանշան: Ազգային երգը տարածվում էր դաշտերի ու Դառնագավառ գետի ալիքների վրա:

— Անցի՛ր վստահ, քա՛ջ ռազմիկ,

Քո ձին շի՛ խեղդվի...

Տարածությունների վրա փովել էր խորը մի խաղաղություն:

7 Հակոբեարերի, 1944 թ.

Դառնագավառ հայտ

## ԵՎԱՅՐԱԿԱՆ ԱՐՅՈՒՆ

Գույները փոխվում են ակնթարթների մեջ։ Բարձրահարկ շենքերի լուսամուտները շողում են արնավառ ծիրանիով։ Աչքիդ մեջ են ընկնում մանիշակագույն ցոլքերը և ճառագում է արևը, մեծ, բարի արևը կովկասյան այս հին քաղաքի վրա։

Աշինչ չկա բնության մեջ ավելի վեհ ու գեղեցիկ, քան արեվագափի այս պահը։ Գիշերվա լոին փողոցները լցվում են լույսով, աշխատանքի շտապող մենավոր մարդիկ խմբեր են դառնում, ապա բազմությունները հեղեղում են քաղաքը, հանգարտված շարժումն արթնանում է հանկարծ, և շառաշում է ափօրյան հնավանդ ու նորոգ քաղաքում, շառաշում է կյանքը։

Կարծես թե ծանր տարիներ շեն եկել ու անցել, այնքան թեթև ու հեշտին է օրը, այնքան լեցուն են ժամն ու վայրկյանը կյանքով։ Ժամանակը թեթևացնում է մարդու տառապած հոգին, ապարինում վերքերը, ուժ ու աշխուժ ներարկում երակների մեջ։ Բայց ժամանակը շի ջնջում մարդու հիշողությունից անցած օրն ու տարին, նա պարզում է քո մտքի ու հոգու աշքերի առաջ անցած ու գալոց օրերի մշուշը, բացում ամեն եղելության իմաստն ու խորհուրդը։

Քանի՛ անգամ է ծագել արևն այսքան գեղեցիկ ու այսքան վեհաբար ողողել իր լույսով դաշտ, անտառ ու լեռ, քաղաք ու գյուղ, ձյունածածկ տափաստաններ ու կանաչ մարգագետիններ՝ փոված հորիզոնից հորիզոն։

...Այն անգամ նույնպես ծագեց արևն այսպես բարի ժպիտներով։ Չորս տարի է անցել այդ օրից։ Հողը տնքում էր խորը ցավից, երբ փովեցին նրա վրա արշալուսի ճաճանչները։ Գիշերն

անցնում էր ծանր երկունքի մեջ, լի էր գիշերը տաղնապով ոչ հույսով, խոհերով ու կարոտով՝ այն ամեն սուրբ բաների, որ կանգնում են աշքերիդ առաջ, երբ մահվան շունչն այնքան մոտ է քեզ, երբ կյանքի ու մահու պայքարը քո շուրջն է ու քո մեջ և դու էլ նրա մեջ ես:

...Տեսնում եմ ահա նրանց դեմքերը, որոնց մասին ուզում եմ գրել: Նրանց սիրտը վաղուց դադարել է բարախսելուց: Այդպես են ասում մեռածների մասին: Բայց ոչ, այդպես չէ: Լուսմ եմ ես ահա մտերիմ այդ սրտերի բարախումը և զգում նրանց վառվող աշքերի ջերմությունը, նրանք ներկա են կյանքի մեջ, կան այս լուսաբացին և բոլորիս հետ միասին միանում են նրա պայծառությամբ...

Ներս է մտնում ահա գետնափոր տնակը Գերման Միքարերիձեն: Հանդարտ ու անայլայլ մեկնվում է հատակին դրված տախտակների վրա, մուշտակի մեջ փաթաթված իր բարեկամի կողքին:

— Վաղուց է հանգստանում կոմիսարը, — հարցնում է նա վառարանի մոտ նստած տարեց զինվորին ու պատվիրում, — մի ժամ հետո արթնացրու երկուսիս էլ, իսկ գումարտակի հրամանատարը գեռ թող հանգստանա:

Ու թվում է, թե փակվում են կոպերը, մոռանում է վայրկյանըն ու նրա նպատակը: Տարեց զինվորը նոր փայտեր է դնում վառարանի մեջ, որ հրամանատարները շմբսեն: Իսկ դրսում որոտ է, գիշերը լուսավորվում է հրթիռներով, գետնատնակի շուրջը պայթում են մեծ ու փոքր տրամաշափերի արկեր, առաստաղի թարմ գերանների ու ճյուղքերի արանքից հող է մաղվում քնածների վրա:

Մոտիկ, շատ մոտիկ պայթում է ֆուգասային սումբը: Յրնց վում է երկիրը, հանգչում է ճրագը: Գրանի լապտերը լուսավորում է գետնափոր տնակի հատակին պառկածների մարմիններն ու զինվորին՝ իր փոքրիկ վառարանի մոտ:

— Օդանավ է թոշում, — հարցնում է արթնացած կոմիսարը:

— Այո, անգղն է:

— Վախեցնել է ուզում, — ասում է կոմիսարը և շինելով զգուշությամբ ծածկում է Միքարերիձեն, որ շարթնանա: Բայց նա վեր է կենում, նստում:

— Քոնս շի տանում,—ասում է նա,—անգղթ... նա հենց այնպես, աննպատակ է պտույտ գալիս, հիմա ժամի 3-ն է արդեն, դեռ մեկ ու կես ժամ ունենք, գրոհի ժամը նույնն է, շեն փոխել, և ինչպես երեսում է, գերմանացիները ոչինչ չեն կուռում... Քնել շեմ կարողանում, փակում ես կոպերդ, ուզում ես քնել, բայց մտքերդ խանգարում են: Մի վայրկյան կարծես թե ննջեցի և երազում տեսա փոքրիկ աղջկաս, պայթունը խանգարեց, որ լավ տեսնեի: Ինչոր կանաչ հովհատում զբոսանքի էի տարել նրան, ծաղիկներ էր հավաքում, վազում էր զարմանալի արագությամբ, այնքան արագ, որ ես վախճանում էի թե ձորը կընկնի:

— Իսկ ես վազուց է երազ շեմ տեսնում,—ասաց կոմիսարը,—մի անգամ մի քանի ամիս առաջ միայն մորս տեսա երազում: Նա վազուց է մեռել, բայց տեսա ես նրան կենդանի ու պարզ ժպիտը դեմքին: Ներս մտա ես սենյակը, փաթաթվեց ինձ, համբուրեց ու ասաց.—Նահապետ, ինչո՞ւ շես սափրվում, աղջկեները քեզ շեն սիրի, մազերդ ծակծկում են: Իմ երազն էլ ընդհատվեց կրակոցներից: Ինչ է ասում գնդի հրամանատարը, օդանավեր տալո՞ւ են մեզ առավոտյան:

— Հազիվ թե, շեն խոստացել, ինչպես երեսում է, ուրիշ տեղից է գլխավոր հարվածը պատրաստվում, մննք միայն պետք է շեղենք թշնամու ուշադրությունը:

— Հեշտ շի լինի,—ասաց կոմիսարը,—բայց ինչ կարող ես անել, պիտի կովենք... Քանի՛ աստիճանի կհասնի հիմա ցուրտը:

— 30-ին երեխ մոտ է... իսկ մեզ մոտ Կովկասում տաք օրերը հիմա սկսված կլինեն:

— Իհարկե, հիմա արագիլներն էլ են եկել երկի, սարյակներն էլ: Մարտի առաջին օրերին արդեն վերադառնում է արագիւը... բարի թռչուն է...

— Իսկ գիտե՞ս ինչպես սիրել գիտեն նրանք իրար. Չութսիսիում մեր տան գիմաց զույգը բուն էր շինել: Էգին օձը խայթել էր որսի ժամանակ: Արուն մի քանի օր շարունակ մեռած ընկերունու մոտից չէր հեռանում, թևերով ծածկում էր նրա մարմինը, փաղաքում, սիրում, և այնքան տիսրություն կար նրա հանդարտ ու ընկճված տեսքի մեջ: Իսկ երբ մենք թաղեցինք էք արագիւն: արուն շաբաթներով տիսրու նստում էր բնի վրա, որսի չէր գնում, չէր երգում—կափկափում ու այդպես էլ մեռավ:

— Ասում են, որ և արուն և եղբ ընկերոջ մահից հետո էլ երբեք ամուսին շեն փնտռում, —ավելացրեց կոմիսարը, —ի՞նչ հավատարիմ թոշուններ են:

Վառարանը ցոլքեր էր նետել հատակին, հաճելի չերմությամբ լցրել գետնափորք:

Արթնացավ գումարտակի հրամանատարն էլ, բարձրահասակ, թիկնեղ, առնական ուսերով մի տղամարդ: Ականջ դնելով թշնամու ուժեղացող կրակոցներին, նա լարեց լսողությունն ու ասաց.

Կրակում են, որ քունները շտանի, —ապա նայեց ժամացուցին. —Մի ժամ է մնում, գնանք վաշտերը, բանակացինների հետ պետք է խոսել զրոհից առաջ, ինչ էլ լինի պետք է անցնենք երկաթուղագիծը... Եթե ողջ վերադարձանք մարտից, ես էլ ձեզ աղավնիների սիրո մի պատմություն կպատմեմ: Փոքր ժամանակում լսել եղբորիցս... Դե գնացինք, հետեւցեք ձեզ, անհպատակ կերպով ոիսկի շդիմեք...

Սկսվում էր մթնշաղը, երբ գումարտակը զրոհի դիմեց: Իսկ երբ արեկի վիթխարի սասը գունդն երևաց տափաստանի եղրին, երկաթուղային կիսակայարանի մոտից դեպի թիկունքը շարժվեց մի սահնակ, որի վրա մուշտակներով ծածկված հավիտենական քնով քնել էին երկու մտերիմները... Նույն այդ ժամանակ գումարտակի հրամանատար Բարթուլիս Պետրոսյանը հեռախոսով զեկուցում էր.

— Խնդիրը կատարեցինք. զոհվեցին կոմիսար Նահապետ Անտոնյանն ու պարտբյուրոյի քարտուղար Գերման Միքարերիձեն: Նրանք առաջին վաշտը զրոհի հանեցին և հասնելով երկաթուղագիծն, ընկան միկնույն արկից...

Սահնակը շարժվում էր համբ ու դանդաղ: Եվ դաշտերը և ձյունապատ տափաստանները շողում էին արեածագի շողերով: Պառկած էին սահնակի վրա դաժան օրերի մաերիմ ընկերները, սառած ձեռքները ճակատներին: Հորիզոնից հորիզոն կրկնվում էին ուղղմի որոտների խուլ արձագանքները: Պարզկայից ձիերի շունչը սառչում էր նրանց որոնգերում: Եղենիների կանաչ ճուղքերը ցած էին խոնարհվել ձյան ծանրությունից: Իսկ այդ ժամանակ հեռու հարավում այն երկրում, ուր ծնվել էին նրանք, արդեն բացվում էր գարունը, երգում էին սարյակները, սիրում էին իրար էգ ու արու արագիլները իրանց բների վրա:

Քնած էին ընկերները և չէին արթնանալու երբեք, որ լսեն իրենց հրամանատարի պատմությունն ազավիների սիրո մասին. Քնած էին այնպիսի քնով, որ չէին տեսնելու այլևս, թեկուղ երազում, մեկն իր սիրելի դստեր, մյուսը՝ վաղուց վախճանված մոր պատկերը:

Այդ օրվանից անցել է չորս տարի: Կարծես շեն եկել ու անցել դաժան ժամանակները: Օրը, ժամն ու վայրկյանը լեցուն են կյանքով: Բացվում են շքեղ, շնայլ արշալույսներ մեր երկրի քաղաքների ու գյուղերի վրա: Եվ օրն ավելի լուսավոր ու գեղեցիկ է թվում, կյանքն ավելի թանկագին, որովհետեւ վերադարձել է նա նահատակների արյունով, արևածագն՝ ավելի երփներանդ, որովհետեւ նրա գույների մեջ կան այն մեծ ոգիների շողքերը, որ լույս էին տալիս այն տարիների ծանր ու խավար գիշերների մեջ, նահապետ Անտոնյանի և Գերման Միքարերիձեի բոցե հոգիների շողքերը...

Դեկտեմբեր 1945 թ.

Թրիլիսի

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՃ ՕՐԸ

Մայիսի 8-ի սառն, բայց պարզ ու թափանցիկ առավոտին զուրանդական խոնավ անտառներում սկսվեց առաջավոր գծի սովորական առօրյան—հոհտանային փոխհրաձգություն, պնդացիր-ների ճարճատյուն, ավտոմատացին կրակոցներ։ Թվում էր, թե միշտ այդպես եղել է և միշտ էլ այդպես կլինի։ Տարիներ շարունակ գտնվելով ռազմադաշտում, մոռացել էինք, թե վասղաղ օրեր էլ ենք տեսել, առանց որոտի և առանց վառողի գորշագույն ծխի. սպասելով պատերազմի ճաղվական ավարտին, այնուամենայնիվ, չեխնը պատկերացնում, որ հանկարծ, մի ակնթարթում ողջ աշխարհում կլուն բոլոր հրանոթները։

Դեռ եղամը չէր վերացել։ Մայոր Սիդորովի հետ նստել էինք փայտաշեն, այրված տան փլատակների մոտ կարգալու գումարտակի հրամանատար Մերկուրովի հողվածը ռազմական վարպետության մասին։ Պայթեց հանկարծ գերմանական արկը։ Տնակից ոչ հեռու երկուսիս արանքով անցնելով, դիմացի տախտակը փշրեց ու գետին բնկավ մի բեկոր։ Հետո Սիդորովը վերցրնց ափով շափելու նրա ծանրությունն ու ցած նետեց։

— Տաք է դեռ, այրում է...

Աւ ինձ նայելով մտախոռն, ավելացրեց.

— Ի՞նչ անհեթեթություն կլիներ, վաղը կամ մյուս օրը գուցե վերջանա պատերազմը և մետաղի այս զանգվածը հիմա կառող էր վերջ դնել մեր կյանքին...

Քիչ հետո հայտնեցին, որ այդ պայթյունից սպանվել է սերժանտ Բորգենկոն, պատերազմի վետերաններից մեկը, որ 1941-ի հունիսի 22-ից մարտի մեջ էր եղել, անցել հազար փորձությունների միջով։

— Որտե՞ղ էր նա, —հարցրեց մայորը։

— Կվացվում էր առօին մոտ, փոքրիկ, շատ փոքրիկ մի բեմոր է կպել քունքին...

Թշնամու վերջին արկի պայթունն էր դա կուղանդական Պրիեկուլ քաղաքի մոտ: Հետո տիրեց անսովոր մի լուսթուած հակառակորդի դիրքերի կողմում: Մեր ոչ մի կրակոցին պատասխան չէր գալիս:

Օրն անցնում էր խաղաղ: Խոհանոցները ծխում էին անտառում: Մուտենում էր ճաշի ժամը: Մեկը նկատեց, որ առաջին խրամառներից դեպի մեզ է վազում մի զինվոր: Վազում էր և ամբողջ թափով, առանց կուանալու: Քամին թոցրեց զինարկը, Զինվորը նույնիսկ ետ էլ չնայեց:

— Ո՞ւր, ո՞ւր,—կանչեցին միանգամից մի քանի հոգի, — ո՞ւր ես վազում, ի՞նչ է պատահել...

— Եղբայրնե՞ր,—կանչեց նա քրտնակալած, հեալով, — ո՞ւր մանացիներն հանձնվում են...

— Ո՞վ ասաց, որտե՞ղ...

— Ես ինքս տեսա, մերենայով եկավ նրանց գեներալը, ապիտակ դրոշ պարզած...

— Ճի՞շտ ես սուսմ, Մատվեիչ, թե փշոց է:

Հասակավոր սազմիկը վրդովվեց, մի երկու թունդ խոսք ասաց ու ավելացրեց:

— Ե՞րբ եմ ես սուստ ասել, և կրակն էլ դադարեցրել են, չե՞ք տեսնում, և կարող է պատահել, որ պատերազմն էլ վերջանում է:

Նա ասաց «կարող է պատահել»... նա դեռ ոչինչ շգիտեր, բացի նրանից, ինչ այնպես անսպասելիորեն տեղի էր ունեցել իր գնդի դիրքերի մոտ: Մարդկանց սրտերը լցվեցին եկող բռպեի վեհությամբ: Նա, այդ մեծ բռպեին եկավ անակնկալ, ինչպես ձառագայթի փայլը տարերբի ու փոթորիկի պահին, որից հետո պիտի սկսվի լուսավոր, երջանիկ լուսթյուն:

Մարտիկ իվան Մատվեևիչ Սոկոլովը հավիտցան կմնա այն մարդկանց հիշողության մեջ, որոնք տեսան այդ վայրկանին ազնիվ խանգամավառությունից այրվող նրա գեմքը և աշքերի այն երջանիկ փայլը, որի մասին դժվար է պատմել, պետք էր միայն տեսնել ու զգալ: Ինչքա՞ն կյանք, ինչքա՞ն ցավ, տանջանք, երջանկություն, հպարտություն ու հույս կային այդ փայլի մեջ:

Բակ Երեկոյան արդեն առաջավոր գծերի վրա վառվեցիւր տասնյակ հազարավոր խարույկներ: Բոցերը մինչև երկինք էին բարձրանում, կայծերն ու բազմերանդ հրթիռները ծածկում էին հորիզոնը: Աստղերը խամրել էին երկրի կրակների լույսից:

Երբեմն մեկն ու մեկը կատակով կանչում էր.

— Լուս, քողարկո՞ւմ...

Եվ որպես պատասխան հնչում էր հարյուրավոր մարդկանց ուրախ քրքիջը: Ե'վ այդ քրքիջը, և' այդ կատակներն ու ծիծաղը, և' հազարավոր կանչերն ու հիշոցները հաղթանակող կյանքի հաստատումն էին: Վերջանում էր երկար, տանջալի դիշերվա մղձավանջը, որ շորս տարի տեսեց, բացվում էր այն արշալույսը, որին սպասում էին ժողովուրդները, որ բերեց սովետական զինվորը իր կյանքի, իր արյան զնովի: Այդ արշալույսը կլոավորի մեր ցնծության այս օրը ու գալոց բոլոր մեր ժամանակները:

Խարույկների շուրջը բոլորել են զինվորների խմբեր:

Ավել են նրանք:

Կրակի ցոլքերը լուսավորում են զինվորի դեմքը: Նա ծածկած է սպիներով: Հարյուր հազարներ են նրանք, որոնց և մարմինների, և' հոգիների վրա մնալու են պատերազմի վերքերը: Դաշտերը հորիզոնից հորիզոն լուսավորվել են կրակներից, անտառները կարծես շարժվում են ցոլքերի տակ: Կարծես թե «Ղջտիկներն է հրացոլքով ողողված»:

Ավել են վառել այդ լույսերը:

Զինվորները: Նրանք երկար ճանապարհ են անցել, որպես դյուցազուններ, ով գեպի արևմուտք է քայլել վոլգայի ափերից, կուրծքը կրակին ու փոթորիկներին դեմ արած, խոնարհեցնելով ժամանակն ու տարածությունը, ով սրբազն Մոսկվա մայրաքաղաքից, կամ Կովկասյան նախալիքներից: Նրանք Հայրենիքի ազատարարներն են. Ստալինգրադի, Մոսկվայի, Գրիմի հերոսները, սևաստոպոլիցիներն ու Լենինգրադի պաշտպանները, այն անընկճելի հերոսները, որ կուրլանդական ճահիճների մեջ օղակեցին թշնամու մեծագույն խմբավորումը: Խարւցիների շուրջը բոլորած, նրանք ցավով ու տիրությամբ հիշում են իրենց զոհված ընկերներին: Նրանց, որ ընկան 1941 թվի հունիսի 22-ին, առաջին օրը, Ստալինգրադի ու Լենինգրադի հերոսներին և նրանց, որոնք զոհվեցին այս առավոտ, շիմանալով որ մի քանի

Ժամ հետո որոտալու է Հաղթանակի լուրը ողջ աշխարհում... Մանր է, բայց այն գիտակցությունը, որ իզուր շանցավ բարեկամների թափած արյունը, միսիթարում է զինվորի սիրտը:

Մարտիկ Վասիլի Վիսոկին հիշում է իր ընկերոջը: Նիկոլայ Սիդորենկո էր անունը: Ստալինգրադում նա ծանր վիրավորվեց առանկացին գրոհը ետ մղելիս, արյունաքամ լինելով, վերջին բռպեին ասաց.

— Տղե՛րք, մեռնում եմ ևս, բայց Հավատում եմ, որ մենք կհաղթենք, եթե ողջ մնաք՝ հիշեցեք...

Մի ուրիշն ասում է.

— Սիրտդ ավելի է ցավում նրանց համար, որոնք ընկանայոօր...

Մի՛րտ: Շատ ցավ ու տառապանք է տեսել նա: Բայց բարձիել է լի Հավատով ու ստեղծարար ուժով:

Իրականացագի: Իրականացավ ամենը: Ե՛վ առաջնորդի մարդարեռթյունը, և՛ մարդկանց երազանքները, և՛ զոհերի կենդանի հավատը: Նրանք, մեծ նահատակները ողջ են, նրանց ոգին ներկա է այս բոցավառ խարույկների մոտ:

Ո՛չ ոք քնել չի կարողանում: Ո՛չ ոք այդ մասին չի մտածում: Կիշերվա ո՞ր ժամն է, ոչ ոք չգիտի: Երջանիկները ժամաշնակին չեն նայում:

Բարձրախոսները հանկարծ սկսում են ծանոթ աղդանշանները:

— Լոռություն:

— Մո՛ւա:

— Լոռություն:

Այժեն մեկը ուզում է, որ բոլորը լոեն ու դրանից էլ անվերջ կանչեր են լսվում:

— Խոսում է Մոսկվան...

— Խոսում է Մոսկվան...

Անկերերա՞ն Մոսկվա, ինչքա՞ն ցնծագին, ինչքա՞ն կհնառարեր լուրեր ես հաղորդում դու, որոնք ուժ են տալիս Հոգնածինք ավյուն ու եռանդ՝ զինվոր մարդուն, կյանք ու հույս՝ արյունաքամ հերոսին:

Կերմանիան անձնատուր եղավ... Մայիսի 9-ը հայտարարվում է Հաղթանակի օր...

ՄԵԼԸ կոկորդի ողջ ուժով կանչում է.

— Ընկերնե՞ր, պատերազմը վերջացավ, կեցցե՞ Հաղթանակը...

Աւ ամեն խարույկի մոտ գրկախառնվում են, Համբուլվում, սեղմում իրար ձեռք, ուրախությունից խփում իրար՝ ուղղուկներէ ամբողջ ուժով, գետնին գլորվում:

Պատերազմը վերջացավ... Այս խոսքերը հնչում են Հիմա մեծ պատերազմի բոլոր ճականներում, թոշում են այս բոպեին մեր մեծ երկրի մի ափից մյուսը, անցնում բոլոր գործարաններով ու դաշտերով, Հպարտ հնչում են եթերում և կտրելով օդային տարցածությունները, միլիոնների սրտերն իրար են միացնում, միացնում են զինվորի սիրտը նրա փոքրիկ աղջկա կամ մանշուկի սրտին, որոնք այս վայրկյաններին գուցե անվրդով քնած են իրենց մահճականներին, երբ նրանցից հեռու, հեռու երենց Հայրիկը լուսավոր գիշերին գրկում է իր զինվոր ընկերներին ու ասում.

— Պատերազմը վերջացավ... վերջացավ մեր Հաղթանակով...

Գուցե մայրիկը արթնացրել է նրանց, որ ասի այդ երկու լուսի խոսքերը.

— Պատերազմը վերջացավ... ու Հետո ավելացնի.

— Հայրիկը շուտով կդա տոմն...

Համազարկե՞ր, Համազարկե՞ր: Երեկ դեռ միայն Համազարկերսվ ողջունում էին մարտիկներին Մոսկվան ու ոսվետական մեծ քաղաքները, իսկ առաջավոր գծերում Համազարկերն ուղղվում էին թշնամու վրա: Հիմա ողջույնի Համազարկ են տալիս անծայրածիր ուազմաճակատում, ծովից ծով, Հորիզոնից Հորիզոն: Կրակում են «կատյուշաները», «իվան ահեղները», «Հայրենիքի դուստրերը», բոլոր հրետանիները, գնդացիրներն ու հրացանները, ավտոմատներն ու ատրճանակները: Ամեն մեկը կրակով ողջունում է պատմության մեծագույն օրվան, մայիսի 9-ին:

Մայիսի ի՞ննը... դա ամեն մեկիս ծննդյան օրն է... Մարդկության վերածննդի օրը...

Երեկ առավոտյան դեռ իր հունով էր գնում սովորական առօրյան առաջավոր գծերի վրա: Նշանառուն իր կրակն ուղղում էր դեպի գերմանական ամրությունները, սնայպերը սոտել էր

դարանում ու նշանացույցի վրա էր առնում գերմանացուն, գիտողը հեռադիտակով հետևում էր թշնամուն: Երեկ գեռ սնացպնք էնքոն Հակոբյանը հարցնում էր.—մինչև մայիսի վերջը Գեուժանիան անձնատուր չի լինի... Երեկ գեռ Սովետական Միա: Յան Հերոս Սարիբեկյանն ինձ ասում էր.

— Մեկ էլ Հայաստանը տեսնեմ, ինձ էլ մեռնել չկա...

Երեկ վերադարձի օրը թեև մոտ, բայց գեռ երազ էր:

Այսօր արդեն թշնամին ծունկի եկավ, ձեռքերը վեր բարձրացրեց:

Զինվորներից ամեն մեկը Հայարտությամբ պատմում է, թե վերջին օրն ի՞նչ է արել, ի՞նչպես է կռվել վերջին օրը:

Բացվում է մայիսի 9-ի առավոտը: Գերմանական դիրքերի վրա սպիտակ դրոշներ են բարձրացված, նշան պարտության, նշան հնագանդության:

Մեր վաշտերը շարժվում են դեպի Լիբավա քաղաքը: Գերմանացիները լուս ճանապարհ են տալիս: Նրանք զենքերը վար են դրել, նրանք վլուխները գետնին են հակել:

Մերժանատ ականաձիգ Միխայլովը փնտում է այն դիրքերը, որի վրա երեկ կրակել է ականանետով:

— Է՞յ, ֆրիցներ, ձեզնից ո՞վ ուստեքն դիտի...

Հայտնվում է երկարահասակ, նիշար մի գերմանացի ու հաճոյական ժպիտով մրթմբում.

— Ես... քիշ-քիշ գիտեմ...

— Այս թմբի մոտ երեկ գնդացիր կա՞ր, կրակում էր դեպի անտառի ա՞յ, այն եզրը...

— Կար, — ասում է գերմանացին:

— Ի՞նչ եղավ:

— Սպանվեցին ձեր կրակից և գնդացիրը փշրվեց, շորու սպանվեցին, մեկը վիրավոր է...

Մերժանատ դառնում է յուրայիններին ուրախ դեմքով.

— Տեսնո՞ւմ եք, ինչպես ասում էի, էնպես էլ կա, ախրինքս տեսա, թե ինչպես կրակոցներս տակն ու վրա արին ամեն ինչ...

— Նա գո՞ն է, նա երջանիկ է, որ վերջին իր կրակոցները նպատակին են հասել: Ու գերմանացուն ասում է.

— Այդ ես էի կրակում...

Գերմանացին թարգմանում է մյուսների համար: Լսում են, ոչինչ չեն ասում:

Զինադադարից մի քանի ժամ առաջ զուկասյանցի սնայպեր և վոն Հակոբյանն էլ սպանեց 59-րդ գերմանացուն: Եվ նա էլ է հպատանում վերջին օրվա իր աշխատանքով: Դա զինվորի իրավունքն է, օրինական հպատությունը:

Շարժվում են մեր շարքերը դեպի Լիբավա քաղաքը: Հայացքի առաջ մերձբալթյան բնության պատկերներն են: Մայիսն ամեն տեղ գեղեցիկ է: Փշում է ծովային քամին:

Զինվորներից մեկը հարցնում է ընկերոջը.

— Ժամի բանիսի՞ն հայտնեցին, որ պատերազմն ավարտվել է:

— 2-ին,—պատասխանում է ընկերը:

— Այ թե ինչ եմ մտածում ես,—ասում է կրկին առաջինը: — Այդ ժամին երեք շատ երեխաներ են ծնվել մեր քաղաքներում ու գյուղերում: Երջանիկ երեխաներ են, հը... ինչ կասես...

Ընկերն անխոս, բայց զգացված համաձայնում է երազում հայցքի արտահայտությամբ:

Անվերջ, անծայր շարքերով գալիս են հանձնվելու գերմանացիների զորամասերը: Կուրլանդիան սովետական հողի այն միակ կտորն-էր, որի վրա մնացել էին նրանք: Նեղ տարածության մեջ ճահճներն ու բնական տեղանքներն օդտափործելով, նրանք վերջին ուժերն էին լարում զիմանալու: Շատերն ուրախ են, որ անձնատուր եղան մեր գլխավոր հարձակումից առաջ: Քայլում են լուռ, ստվերների նման: Փորձում են պահել արժանապատվությունը, բայց մեր սպայի կամ զինվորի հայացքին հանդիպելով՝ ձգվում են: Հաղթված, նրանք քծնում են հաղթողների առաջ, զերմանական սպան մեր շարքայինի կողքով անցնելով, զապելով ատելությունը, ձեռքը բարձրացնում է, զինվորական ողջույն տալիս: Դա բավական է: Այդպես պետք է լիներ: Կար ժամանակ, երբ խոսում էին գերմանացու գոռողամտության մասին: Այս է այդ գոռողամտությունը: Ցնդեց նա, անհետացավ: Կյանքը միշտ պատժում է ագաճին ու շարին: Գերմանացին հիմա քծնող է: Պառել Շուլց անունով մի եֆրեյտոր ինձ պատմում էր իր մասին այն լեզվով, որ բոլորին հասկանալի է, ձեռքերի լեզվով:

— Ֆատեր բուխ... հայրը սպանված է,—կինդեր բուխ.

ֆրառու բուվս... սպանված են կինն ու երեխաները... Եվ հասկաց-նում էր, որ ընկել են ոմբակոծությունից...

Ու հիշոցներ էր ուղղում Հիտլերին, սպառնում էր բոռնցքով. երբ չկար խելագարն այլիս...

Ավագ սերժանտ փողհար Սարոկինը ինչ որ բան է ասում շարքով անցնող գերմանացիներին: Նրանցից մեկն էլ ինչ որ պատասխանում է.

— Ի՞նչ ասացին, — հարցնում են զինվորները սերժանտին:

— Ես ասացի «ամեն ինչ լավ է, երբ որ լավ է վերջանում», և ապատասխանեց. «Ճեզ համար լավ վերջացավ»...

— Է՞լու, ֆրից, ֆրի՛ց..., — Գլուխը թափահարելով ասում է մի զինվոր շարքերին նայելով, — ինչքան ստորություններ ասես, որ շարիք դուքք...

Իբրավա քաղաքը: Բոլոր փողոցներով անցնում են գերմանական շարքերը: Գնում են նշանակված տեղերը: Գնում են անձնական իրերը շալակած, սպաների իրերը բարձած սալակներին: Փողոցների անկյուններում երեսում են մենավոր զինվորներ կապույտ շինելներով:

Փողոցներով քայլում են մեր պարեկները ավտոմատներով: Կենտրոնական հրապարակում քաղաքային կամուրջի մոտ մի ժամ առաջ իր տեղը զրավեց բեխավոր զինվոր կարգավորողը: Նա հիմա շարժման հրամանատարն է: Նրա ազդանշաններով գերմանացիների շարասյուներն ուղղություն են ընդունում: Եվ նրանք չեն հասկանում, թե ինչ է ցույց տալիս ուստի զինվորը, այն ժամանակ նա կանշում է զորայան գլխավորին.

— Է՞լ, օֆիցեր, այս կողմով անցեք, շուտ, արա՛գ...  
Եվ ինքն իրեն մրթմրթում է.

— Համբ սատանաներ, լեզու չեն հասկանում...:

Երրորդ պատերազմն է սա, որին մասնակցում է մայկոպցի Գրիգորի Տիկալովը: 1916 թվին Գեորգիյան խաչ է ստացել նա թյուրքական ճակատում կովելիս:

Գնում ենք դեպի նավահանգիստը: Բալթիականի ափերը սպիտակ են, կարծես ձյուն է տեղացել: Ամեն ծով իր գեղեցկությունն ունի: Մարտիկները ճանապարհի փոշուց հետո լվացվում են ծովաչքով:

Մեծ երջանկությունից միշտ էլ մարդ 22մում է, խոսք չե-

գտնում իր ուրախությունն արտահայտելու։ Մեծ դեպքերի մեջ գտնվող մարդն էլ անմիջականությունից շի կարող ազատվել ու աեսնելով այդ դեպքերի մեծությունը, խոսք գտնել ընդհանրացումներ, գնահատումներ անելու։

Այդ վիճակի մեջ եմ ես էլ Հիմա։ Շտապում եմ, այնուամենայնիվ, ասել իմ խոսքը, դիմել իմ ժողովրդին։

— Ենորհավոր Հաղթանակիդ Օրը... Քո որդիները պատվով տարան իրենց բաժին ծանրությունը, հայ սովետական ժողովուրդ։ Եկավ ազատության օրը։ Ցնծա՝, թող սուրբ լինի զավակներիդ թափած արյունն ու օրինակ դառնա ազագա քու սերունդներին...»

9 Մայիսի, 1945 թ.

Լիբավա ժաղաբ. Լատվիա

## Գ Ե Ր Ա Խ Ն

(ՎԵՏԵՐԱՆԻ ՕՐԱԳՐԻՑ)

1 Մայիսի 1942 թիվ...

Հմայլիշ էր այսօր լուսաբացը: Շողում են մեր հայացքի տակ քնության բոլոր գույները: Երեկ թփուտների մեջ ու ձորակներում գեռ սպիտակին էին տալիս ձյան վերջին շերտերը: Այսօր արդեն արեկի ճառագայթների տակ փայլվլում է ուշացած գարնան մատաղ կանաչը: Վայրկյանը ծանր է թվում, իսկ ամիսներն անցնում են կարծես թե ավելի հեշտ ու թեթև: Համարյա մի տարի է արդեն, որ մեր կյանքն անցնում է խրամատներում: Երբեմն թվում է, թե ուրիշ կյանք չենք էլ ունեցել՝ ուրիշ մի կյանք՝ խաղաղ, անաղմուկ, առանց կրակոցների, ընկերներով ու հարազատ մարդկանցով շրջապատված: Չես հավատում, որ երբեմն քնել ես փափուկ, մաքուր անկողնում, առանց ա՞նի ու երկյուղիքանականությունը, սակայն, ասում է, որ այս, եղել են այդպիսի ժամանակներ: Հիշողությունը վերականգնում է մտքիդ մեջ լուսավոր օրերը, երջանիկ փայլը սիրելի, թանկագին մարդկանց հայացքներում և կարոտը, ծանր ու տառապագին կարոտը ճընշում է հոգիդ: Հիշում ես քո մանկությունը, պատանեկությունն ու փոթորկու երիտասարդության օրերը... Չեմ կարող ներել ես ինքս ինձ, որ երբեմն վիրավորել եմ այն մարդկանց, որոնք թանկ էին ինձ համար, ինչպես սեփական կյանքն ու ամենանը վիրական երազանքները: Ինչքան կուզենայի, որ Հեղինեն, իմ կյանքի սիրելի ընկերուհին իմանար իմ հոգու այսօրվա գգացմունքները, իմանար, թե ինչպես զղջում եմ ես այն բանի համար,

որ երեկոները երբեմն ուշ էի գալիս տուն, տեսնում էի նրան արտասուրբների մեջ, անհեթեթ կերպով խանդ էի բորբոքում նրա անձնվիրաբար սիրող հոգում: Նա խոնարհ ու հեղ, բայց սրտի խորին թափիծով հարցնում էր ինձ:

— Սուրեն, գուցե խևապես դու ինձ չե՞ս սիրում... մի թաղցրու, ճիշտն անա ինձ...

Մի տարի է ահա, որ այս խոսքերը հնչում են միշտ ականցում ամեն ազատ բոպեին: Սիրում եմ քեզ, սիրում եմ, սիրում, սիրում եմ քեզ, սիրելի իմ Հեղինե, լոռում ես դու, հասնում են քեզ պատասխանի իմ խոսքերը, սիրում եմ... Նա գրում է, որ վաղոց, վաղոց է ներել ինձ, բայց ես ինքս մոռանալ չեմ կարող այդ ամենը, խղճի խայթը շարունակ տանջում է ինձ: Երբեք շպիտի ներեմ ինձ, որ մի անգամ ծեծեցի եղբորս անհնազանդ տղային նրա հանդգնության համար: Սիրելի՛, շար Տիգրանիկ, դու կարո՞ղ ես իմանալ, թե ինչպես տանջում են ինձ քո արցունքուտ աշքերը: Իսկ նա գրում է: «Թանկագին հորեղբայր Սուրեն, բոլորս սպասում ենք քեզ, սպանիր գերմանացիներին ու շուտ տուն արի, մեզ մոտ արդեն գարուն է, այդիները ծաղկում են, լեռներն արգեն պատում են կանաչով»...

Այստեղ էլ է գարուն: Երգում են սոխակները Կուրսկի պարտեզներում: Հանգարտ հոսում է Սևվերնի Դոնեց գետը: Դաշտանկարները հիշեցնում են իմ մանկության հարազատ վայրերը:

Այսօր խաղաղ է կրակի առաջավոր եզրում: Երբեմն միայն կրակում է հրետանին, արկերն ընկնում են գետը, ջուրը երկինք է բարձրանում և ափերին փայլում են արծաթափոր, խլացած ձկները և թռչուններն էլ լուս են անտառներում: Ոչ, շպետք է անվերջ այսպես շարունակվի, շպետք է թույլ տանք, որ այսպես շարունակվի: Ծառ նահանջեցինք: Թողեցի ես Դնեպրը, թշնամուն հանձնեցի Պոլտավան, և Կալուգեցի անտառները, թշնամուն տվի Խարկով քաղաքը: Այդ բոլորը ծանր բեռի պիս նստել են խղճիս վրա: Տիրությունն ու թափիծը նշաններ չեն մեր հոգու թուլության: Կյանքի նկատմամբ անտարբեր մարդիկ հազիվ թե կարողանան սիրագործություններ կատարել...

Երեկ, երբ հաջող հետախուզությունից վերադարձա, գնդի հրամանատարը հայտարարեց, որ պարգևատրել են ինձ «հիգախության համար» մեղալով:

Այսօր կրկին պատրաստվում ենք հետախուզության գնալու

— Շնորհավոր ձեր մայիսի 1-ը, իմ բարեկամներ, շնորհավոր ձեր տոնը, իմ հեռավորներ...

1 մայիսի, 1943 թ.

Հիշում եմ, երկու տարի առաջ նույն այս օրը վերջին դասարանների իմ աշակերտների հետ մենք պատրաստվում էինք գնալ Գառնի՝ Տրդատի հեթանոսական տաճարում անցկացնելու դարնան տոնը։ Կարծես թե մի ամբողջ դար է անցել այդ օրից, մի ամբողջ հավիտենականություն։ Մինչդեռ այն ժամանակ ես 26 տարեկան էի, իսկ այսօր 28 տարեկան եմ։ Ուրեմն անցել է ըստամենը երկու տարի։ Երկու տարի... Ո՞ւ, ժամանակի թվարանությունը շոր, անսիրտ դիտություն է, նա չի կարող նկարել մարդու կյանքի պատկերը, նրա հոգու շարժումը... Ճիշտ է, եղան մտքի վայրկենական խավարումներ, բայց մեր դիտակցությունը կյանքի այլ հանգամանքներում չէր կարող հասնել այնպիսի բարձունքների և այնպիսի խորությունների, ինչպես այս երկու տարում։ Եվ մեր կամքն էլ երբեք այսպիսի լարվածության չէր հասել, և մեր սիրտն էլ չէր սիրել այսպիսի իմաստուն սիրով և մեր հոգին էլ չէր ունեցել այսքան մրրկածուփ ալեկոծություններ...

Այսօր երազում տեսա ես իմ որդուն, որ ծնվել է ուազմաճակատ մեկնելուց մի քանի ամիս հետո։ Հրեշտակի պես թեեր ուներ նա, սավառնում էր իմ գլխավերենում և ես չէի կարողանում բռնել նրան, «Մի հուզվիր, Սուրեն, նա ցած կիջնի»—շշնչաց ականջիս կանացի ծանոթ մի ձայն։ Շուռ եկա ես և տեսա Հեղինեին կողքիս կանգնած։ Նա իմ նույն շքնաղ ընկերուցին էր, ինչպես այն օրերին, երբ մենք վերջին բննություններն էինք տալիս համալսարանում և որոշել էինք սուրբ միտություն կազմել նույն հմայիլ ժպիտը տեսա նրա աշքերում, զգացի նրա հպարտ գեղեցկության բույրերը... Գեղեցկությունն, այո, բույրեր չէլ ունի։ Ուզեցի գրկել ես նրան, բայց մատով շարաձճիրեն սպառնաց նա ինձ, «Չի կարելի»... ու հետո ավելացրեց, «Սպասիր դեռ, համբերիր»... Սրանք այն խոսքերն են, որ ասում էր նա ինձ,

երբ դեռ իմ սիրած աղջիկն էր, երբ դեռ չէր դարձել իմ կինը՝ ես փորձեցի ուժով հնազանդեցնել նրան, բայց անհետացավ Հեղինեն աշքիցս ջրահարսի նման... Մեր խոհարար «Ճերովք» Եմելյան Բուտենկոն ասում է, որ երազս բարի է, նշանակում է թե երջանկությունը հեռու չէ, միայն պետք է համբերել...

Կարդացի անցյալ տարվա այս օրերի իմ նոթերը: Ինչքա՞ն ջրեր հոսեցին... Հակառակ մեր կամքի, նահանջեցինք մենք Սեվերնի Գոնեցից մինչև Վոլգա, անցանք հովիտներ ու տափաստաններ, նորանոր քաղաքներ թողինք թշնամուն: Շանր է այդ բոլորը հիշել: Հաճելի չէր այդ ձեռվ երկրի աշխարհագրությունն ուսումնասիրելը:

Հիմա մենք կրկին այն նույն տեղումն ենք, ուր որ էինք անցյալ տարի: Եկել ենք մեր բարեկամների ու ընկերների աճյունների մոտ: Սրտներիցս արյուն է կաթում: Վոլչանսկ քաղաքում հանդիպեցինք պառավ Եվդոկիային: Նա փաթաթվեց ինձ ու երկար, երկար լաց եղավ: Նրա թոռը, Վովան, ոմբակոծությունից կորցրել է իր աջ ձեռքը: Պատանին անճանաչելիության շափ փոխվել է, մտածեու, հանդարտ է դարձել: Ես համբուրեցի նրա թախծոտ աշքերն ու շկարողացա արցունքս զսպել... Չէ որ ես սիրում էի նրան և երես էի տալիս, ինչպես հարազատ որդուն: Ինձ թվում է, թե ես իմ տունն եմ վերադարձել և զգիտեմ խնդության զգացմո՞ւնքն է ավելի ուժեղ մեջս, թե տիրությունք; Երբ Վովային եմ նայում:

— Փառք աստծու, որ դուք ողջ եք, Սուրեն, փառք տիրոջն, իսկ մենք, մեղավորներս կարծում էինք, թե դուք չկաք այլևս,— ասում էր Եվդոկիա Ֆեոդորովան, փեշերով սրբելով իր աշքերը:

Ինչո՞վ կարող էի ես սփոփել այդ բարի կնոջ սիրութ, այդ խարտյաշ, լուսաղեմք պատասու վիշտը: Ես պատմեցի նրանց, թե ինչպես հատուցեցինք գերմանացիներին Ստալինդրադում, պատմեցի, թե ինչպես մենք ոշնչացրինք այնտեղ նրանց կեամիլիոնանոց բանակը, պատմեցի գերմանական զինվորների դիակների կույտերի մասին, գերիների կեղտու ու բաղցած բաղմությունների մասին: Զգում էի, որ պարտավոր եմ հաշիվ տալ այս կնոջը, իր աջ ձեռքը կորցրած այս պատանուն: Դա իմ բարոյական պարտքն էր: Ես պետք է արդարանայի նրանց առաջ ինչպես սեփական խղճի առաջ: Պատմեցի, թե ինչպես երկու

անգամ ծանր վիրավորվել էմ, պառկել հոսպիտալներում։ Պառավակ Եվդոկիան լսերով իմ պատմությունները, հուզվում էր։ Վուզայի աշքերը վասվում էին։ Երբ նկարագրեցի, թե ինչպես մենք շրջապատեցինք գերմանական դիվիզիայի շտաբը, ինչպես գերիցինք գեներալ Ֆոն Ռոդենբուրգին, որին զենքի տակ տարանք մեր գեներալին ներկայացնելու, վուլան նետվեց ինձ վրա և սկսեց խելաշնորհն համբուրել ինձ։ Ես հանգստացնում էի նրան։ «Բավական է վովա, բավական է»...

— Նա սիրում է ձեզ, — ասաց պառավ Եվդոկիան, — սիրում է և միշտ հավատացնել է ձեզ, միշտ հիշում էր...

Ես ավելի բարձր վարձատրության մասին չէի կարող երազել, քան այդ պահերը։

Ինդհատում եմ զրելը։ Ինձ կանչում են, պետք է նորեկ բանակայիններին պատմեմ հետախուզի արվեստի մասին։

...Գարունն այս տարի անցյալ տարվա պես շուշացավ։ Բելգորոդը մեզանից 12 կիլոմետրի վրա է։ Մազմաճակատում խաղաղ է, ինչպես միշտ՝ մեծ փոթորիկներից առաջ։ Պատրաստվում ենք, ինչպես երեսում է՝ մեծ ճակատամարտերի։

Կուզեի այս անգամ էլ ողջ մնալ...

1 մայիսի, 1944 թ.

Երկար զրել շեմ կարող։ Կանուովիան ինձ տապալեց։ Պառեկած եմ սանիտարական գումարտակում։ Պուշկինյան բլուբներից ոչ հեռու։ Սկսվում են սպիտակ գիշերները։ Անցյալ տարի այս օրերին Բելգորոդի մոտ էինք կանգնած։ «Հուլիսյան» օրերից հետո, երբ սկսվեց մեր հարձակումը, առաջ գնացինք, հասանք մինչև այն վայրերը, որ առաջին անգամ մարտի մեջ էինք մտել։ Դնեպրի ջուրը խմեցինք։ Այժմ էլ պետք է ազատագրենք Պուշկինի գերեզմանը և առաջ շարժվենք, միշտ առաջ։ Տեղում է անվերջ բարակ անձրեւ։ Դա լավ է հողի համար, որ պիտի մշակվի։

Հեղինեն գրում է, որ մեր որդին աճում է օրը օրին։ Կրծքում ծանր ցավ եմ զգում, աղմուկ ու ճարճատոց է գլխիս մեջ։ Բայց կանցնի...

• • • • • • • • • •

1 մայիսի, 1945 թ.

Այսօր պիտի ստանամ 7-րդ պարգևը: Մենք Գերմանիայումըն ենք, Արևելյան Պրուսիայում: Մեր ոտների տակ է երեկվա ահեղ, գոռող թշնամու հնազանդեցված հողը: Գերմանացիները խոնարհ են դարձել: Շատերը նույնիսկ ստոր ձեմբով հաճոյանում են:

Ես կարծում էի, թե երբեք չեմ խղճա այս մարդկանց: Այսպես դուքս չեկավ: Մերոնք մարտեր են մղում Բեռլինի փողոցներում, այսօր կամ վաղը կդրավին: Խելխոտագի վրա փողովում է Կարմիր դրոշակը: —Հիշում եմ 1941 թիվը, 1942, 1943, 1944 թվերը: Կովել եմ ես Ուկրաինայում, Կուրսկի և Վորոնեժի մարզերում. Դոնի տափաստաններում, Ստալինգրադում, անցել եմ Կալինինյան մարզի ճահիճներով, Լատվիայով ու Լիտվիայով, եղել եմ դրավել եմ արյունոտ պրուսացիների մայրաքաղաքը Քյոնիգսբերգը: Իսկ ո՞վ եմ ես, որտեղից հրապարակ եկա և ո՞ւր եմ գնում: Ի՞նչպես ելա այս լայն ճանապարհի վրա, այս ճշմարիտ ուղու վրա, որ տանում է դեպի մարդկային բոլոր առաքինությունները: Ի՞նչպես կարող են բացատրել դա իմ այս կցկուր նոթերը: Իմ ծնողները զոհվել են թուրք ժահիճների սրից: Հրաշքով ազատվել է միայն հորեղբարրս, որ հետո պատմի ինձ այն ամենը, ինչ որ այն ժամանակ իմ մանուկ միտքը չի ընկալել: Այնուամենայնիվ՝ աշխարհում արդարություն կա ու կլինի: Ահա տեսնում եմ ես նրա փայլերն իմ ավտոմատ հրացանի փողի վրա: Ես սովետական մարդ եմ: Այդ կողմանս մեջ գտա ես իմ փրկությունը և իմ ուժն էլ դրա մեջ է...

\*\*\*

30 ապրիլի, 1946 թ.

Մոտ նստիր ինձ, Հեղինե, գգվիր ինձ և կանչիր այստեղ մեր որդուն, մեր Դավթին և կանչիր եղբորս տղային, առնական տղամարդ դարձած մեր Տիգրանին, որին ծեծեցի ես մի անգամ նրա հանդգնությունների համար: Դուք բոլորդ մոռացել ու ներել եք ինձ հին մեղքերս, որ այնքան երկար տանջում էին ինձ ուսպանակատում: Հավաքվեցեք բոլորդ ինձ մոտ: Հոդիս երգել է

ուզում, երգել հաղթանակող սիրո երգը, առաջին ազատ դարնան  
երգը երկարատև ու ծանր փորձություններից հետո: Կյանքը կըր-  
կին իր իրավունքների մեջ է: Մաղկել են պարտեզները, զարդար-  
վել դեղձենին ու ծիրանի ծառերը, բուրում է խնձորենին: Արբած  
եմ ես գարնան բույրերով և երգել եմ ուզում, հողի գովքն իմ  
ուզում երգել, մեր քաղաքի, նրա լազուր երկնքի գովքը, մեր գար-  
նանային մոլեգին գետերի, մեր լեռների հավերժական գագաթների  
գովքը և աշխատանքի գովքը, որ աղբյուրն է մեր կյանքի, երջան-  
կության ու սիրո...

Մաղկիր, հարազատ աշխարհ, բուրիր շքնաղ զարուն...

30 ապրիլի, 1946 թ.

Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

հշ


(1) Բարեկամություն	3
(2) Մի կնոջ պատմածից	23
(3) Որդու վերադարձը	36
4. Կյանքի հաղթանակը	44
5. Խոհեր և երազանքներ	53
6. Երկու տարի հետո	60
7. Թնացքում	67
(8) Դենքերալիքույթը	77
(9) Սրբազն ուխտ	84
10. Ծարավ	99
11. Թանկագին ավար	109
12. Եղբայրներ	116
13. Վերադարձ	122
14. Ռուս մարդու տունը	130
(15) Մեք քույրերը	142
16. Փրկիչը	161
17. Երզը	168
18. Երբորդ աշունը	174
19. Դառւգայայի ափերին	181
20. Եղբայրական արյուն	187
22. Պատմության մեծ օրը	192
22. Գարուն	201

Պատ. խմբագիր՝ Հ. ԱԽՐԱՅՈ

Վ. 12471 Պատ. 585 աիրամ 4000, 13 տալ. մամա

Սառըագրված է տպագր. 10/XII—46 թ.

ՀՅԱՆ ՄԻՆԻՍՏՐ, Մովեսին կից Պալեզ, և Հրատ. Վարչ, № 3 տալ. Երևան 1946



[In 504]

